24358

ՀԱՅ. ԱՄԵՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Բ. ՀԱՏՈՐ

ՍԻՐՈՅ ՔԵԱՐ

891.99-192
Բ-82

137 0 - Կ. Ք.

ԸՐՍԷՆ ՎԱՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՖՐԷԶՆՈ, ՖԻԼԻՓՓՈՐՆԻԱ

ՀԵՅ - ԸՄԵՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

№ 2003

891.99-192
Թ-82

413

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Յատկապէս պատրաստուած սիրաբանելու, նշանտուքի, հարսանիքի, ընկերական և քաղաքական խնջոյքներու կամ խրախնաւիքներու, և ուրիշ բազմազան ուրախարիք խմբումներու մէջ միայնակ և խմբովին երգելու, կամ պարելու համար։

Հեղինակ

ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

❖ Բ. ՀԱՏՈՐ ❖

Կը բովանդակէ

Սրբազան Շարականներ, Սիրալին Տաղեր, Հարսանեկան Երգեր Ժողովրդական Պարերգներ և Խմբերգներ, Զաւեշտական Խրախճանական և ուրիշ զանազան երգեր։

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ
Տողատիպ Տպագրատուն
Պ. Ռ. ԹՈՐՈՍԵԱՆԻ
Հօպօքըն, Ն. Ճ.
1918

13083

ԷՐՄԻՆ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Աշխատասիրութիւն

ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆԻ

Երկրորդ Տպագրութիւն

Վերաքննուած, Ճոխացուցուած և Աւելցուած։

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԽՕՍԻԼ, ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ

դիւրին սովրելու համար

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԷԿ ՀԱՏԻԿ Է։

Ինքնուսուցչին մէջ հարիւրաւոր բառեր կը գտնուին որոնք ցարդ հրատարակուած ոչ մէկ Անգլիերէն և Հայերէն Բառարանի կամ Զրուցատրութեան մէջ կան։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉԸ հարուստ է

Ոճերով, Բացատրութիւններով, Խօսակցութիւններով։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՉԻ սովրեցնելու մէթոտը

Մանկավարժական և Գիտական է.

արդիւնքը Գործնական և Անմիջական։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՉՈՎ սովրողը չը կրնար չը սովրիլ.

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՉՈՎ սովրածը չէ կարելի մոռնալ։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉԸ առնել և թղթատելն անդամ հաճոյալից զբօսանք մը՝ և Հայերէն նորանոր բառեր սովրելու միջոց մ'է։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉԸ անմրցելի է իր տեսակին մէջ

Հոգ չէ թէ Անգլիերէն սովրեցնող քանի գիրք ունիք,

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՉԻՆ միշտ պէտք ունիք։

ԾԱԽՈՒ ԳՆԵՐ. — Ոսկեզօծ, կաշեկազմ (Նուէրի համար) $5.00

Լաթակազմ $3.00, Թղթակազմ (Օտար ել կիրն'ը ղրկելու) $2.25

ՄԵՐ ԲՈՎ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ ՆԱԵԻ

Ամերիկեան Քաղաքացի (Վարչագիտութիւն սովրելու համար) $1.00

Ս. Ծննդեան Շարականներ, Գանձ և Տաղեր . . .10

Ս. Յարութեան Զատկի Շարական, մեծադիր, Եւրոպական նօթաներով (Հայերէն և Անգլիերէն) .25

Երազահան և Վիճակարան (Դանիէլ Մարգարէի) .30

Հայ Ամերիկեան Ազգային Նոր Երգարան (Ա. Հատոր) կը բովանդակէ 300 հատ ամենէն շատ երգուած երգեր

Թղթակազմ 75 սենդ Լաթակազմ $1.00

Ա. և Բ. Հատորները միասին (Լաթակազմ) . . $2.00

Աւելի ծանրամասնութեանց և վկայութեանց համար դիմել առ

B. R. TOROSSIAN 68 - 70 Hudson Street, HOBOKEN, N. J.

COPYRIGHT 1918
BY
B. R. TOROSSIAN

93237-ԱՀ
(967-6)
1358-2002

ՅԱՌԱՋԱԲԱՆ Բ. ՀԱՏՈՐԻ

«Երբէ՛ն՝ ոմէն օտար ղէ՛ս-ս-ոնէր
Սրբո՛ւ-ս է իր ջինջ աղբիւ-ր-ներ-ով.
Եւ՝ ոմէն հոգ, վիշտ պատ-ա-պանդ-ներ
Կը նո՛-ա-ղին իր դիմ-ա-դրո-ւ-թիւ-ամբ։»

Մ. Փ.

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆԻ սոյն Բ. Հատորի հրատարակման նպատակն ու չարժառիթն արդէն բացատրուած է Ա. Հատորի Յառաջաբանին մէջ այսպէս,

«(ա) Այս օտար հողին վրայ, մեր Մայրենի Լեզուի (ՀԱՅԵՐԷՆԻ) դոյութեան պահպանմանը սատարել, և Հայրենիքի ու մերայնոց սէրը վառ պահել։

«(բ) Մեր ազգը բնաջինջ ընող Թուրքի լպիրշ թուրքիները կանչելու սովորութիւնը, (ինչ որ ներկայիս մեզ ամենամեծ ամօթ ու նախատինք մը կը կազմէ) արմատախիլ ընել։»

Աստ կ՚արժէ բացատրել որ մարդկային անհատական և ժողովրդական հոգեբանութիւնն, որ նոյն է Հայու մը և Հայութեան համար ալ, կ՚ապացուցանէ թէ ամեն մէկ անհատի՝ իր մանկութեանը լսած կամ սովրած մէկ եղանակը, իր կատարելութեան ատեն լսած պահուն շատ աւելի կ՚ազդէ իր վրայ և զինք աւելի բուռն կերպով կը յուզէ, քան ուրէ երաժշտագէտի մը գլուխ գործոցը։ Այս ճշմարտութիւնը ճանչնալով, և Հայոց բնական ու հոգեկան վիճակին իրազեկ ըլլալով, մեզ նուիրական պարտականութիւն մը սեպեցինք այնպիսի երգերու հաւաքածոյ մը բովանդակել սոյն հատորին մէջ, որով հնար ըլլայ Հայերէնով երգել Թրքական այն եղանակներն, որոնք ժամանակի և պարագայից բերմամբ անուշ, յուզիչ և հոգեզմայլ դարձած են Հայոց համար։ Աւելի դիւրութեան համար, բազմաթիւ երգերու խորագրին հետ նշանակած ենք նաև Թրքական ի՞նչ եղանակով կարելի է երգել։ Ուրիշ դիւրութիւն մը տալու համար ալ, խտորև կը զետեղենք Թրքական նուագերգութեան կարգացոյց մը. իւրաքանչիւր եղանակին առջև նշանակելով անոր մէկ տողի վանկերուն թիւը. ինչպէս տիվան՝ 15 խորեաթ՝ 7, ևն.։ Այս ցուցակն աչքի առջև ունենալով, ուրէ երգող պիտի կրնայ սոյն հատորին մէջէն տողը 15 վանկնոց ոտանաւոր մը

ընտրել և երգել տիվանի, Անէմի, կամ հինազի վրայ. նոյնպէս տողերը 7 վանկնոց բանաստեղծութիւն մը երգել իբր խորեաթ, Շիրվանի, Քարքուտ, Պէշիր, և ն., և ն.:

Պարերգներու և խմբերգներու եղանակներն կարելի է բերնէ բերան սովրիլ:

Սոյն հատորն ուշի ուշով աչքէ անցնող մը, շուտով պիտի կրնայ կռահել թէ սոյն հատորի հրատարակման (գ) նպատակ և շարժառիթ մ՚ալ կայ, որ է — Սէրը՝ Հայ ազգին մէջ, սրբացնել և ազնուացնել:

Ընդունուած սովորութեանց համեմատ, Հայոցս մէջ, դեռ ևս սիրոյ վրայ խօսիլ և խորհիլն անգամ ոչ միայն մահացու մեղք ճանչցուած է աղջկանց համար, այլ և ամենամեծ ամօթ մը երիտասարդաց համար: Բայց որովհետև բնութիւնը աննկճելի է սովորութեանց դէմ, հետևանքն այն եղած է որ Հայ երիտասարդը բնազդէ դրդուած կը գտնէ սիրոյ ժպիտը օտար աղջկայ շրթանց վրայ, սիրոյ հմայքն՝ օտար աղջկայ աչքերուն մէջ. սիրոյ գորովը՝ օտար աղջկայ բազկաց մէջ. սիրոյ երգը՝ օտար աղջկայ շրթներուն վրայ և օտար լեզուով. և հուսկ ուրեմն օտար աղջկան սիրահարելով, անոր հետ կ՚ամուսնանայ. անդին թողլով ամբիծ, պարկեշտ, տնտեսազէտ և չքնաղ Հայ կոյսը անմխիթար տանմնայ դառնայ, որովհետև անոր միակ աններելի թերութիւնն էր իւր հաւատարմօրէն չափազանց ամօթխածութիւնը: Ասոր հանդէպ՝ խոստովանինք որ Հայ երիտասարդին քով ալ կը պակսի Հայ օրիորդի սէրը հրահրելու արիութիւն և նախաձեռնութիւն:

Ահա սոյն հատորը կուգայ՝ սէրը սրբացնելու և ազնուացնելու համար, Հայ կոյսին ու Հայ երիտասարդին սիրոյ Հայերէն լեզուն մատակարարել. որով հնար ըլլայ Հայ համեստ կոյսին և ազնիւ երիտասարդին, իրենց ամօթխածութիւնը չափաւորելով, դերազնիւ սիրոյ բուռն և յորդ զգացումներն փոխադարձաբար իրարու արտայայտել. և անով հիմը դնել նորանոր Հայ ընտանիքներու կազմութեան. և որով մինչդեռ մէկ կողմէն մեր նոր սերնդի այլասերման առաջքն պիտի առնուի, միւս կողմէն Հայ ազգի ապագայ գոյութիւնը պիտի երաշխաւորուի. որ առեն և մենք ալ զմեզ վարձատրուած պիտի համարինք, սոյն հատորով կրցած ծառայած ըլլալով մեր սիրելի և մարտիրոսացած ազգի կենսական և ստիպողական մէկ պէտքին — իր գոյութեան պահպանմանը, և սուրբ ու ազնիւ սիրոյ ընդհանրացմանը:

Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք ներկայիս ամեն անոնց որոնք որևէ կերպով մեզ ձեռնտու եղան սոյն հատորի հրատարակութեան գործին մէջ:

ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԿԱՐԳԱՑՈՅՑ ԹՐՔԱԿԱՆ ՆՈՒԱԳԵՐԳՈՒԹԵԱՆ

Բազմականաց Խնջոյքի (Մէջլիս) համար

(*Ըստ Թ. և Մ. ՈՍԿԵՐՉԵԱՆ ԵՂԲԱՐՑ*)

Դիմաւորութիւն (Կէլէրէֆ)

Նուագ, Տափ և Տիկ — Նուագածուք Տանը բակին մէջ

Հրաւիրեալք հասնելէ վերջ, նուագածուք բազմականաց սրահին մէջ

Նուրբ Նուագներ — Ջուրբակ կամ Վիոլ, Գանոն, Սազ, Սանթուր,

Ընկերակցութեամբ Տափի կամ Տմպակի, Պուլկարիի և Զիլլի Մաշաի

Ա. ՄԱՍ (Ֆասըլ) *Երեկոյեան*

	Վանկ
Թագսիմ — Փէշրոֆ Հիւսէյնի	
Տիվան	15
Քէսուբ	15—16
Առազպար	7
Անէմ	15
Տուկեահ	7
Դադար	
Բ. ՄԱՍ (Ֆասըլ) *Դիշերային*	
Թագսիմ Փէշրոֆ Հիճազի	
Ռասթ	15—16
Ղազալ	15—16
Էրզրրում	11
Ղարիպի	11
Խորեաթ	7
Շիրվանի	7
Քարքուտ	7
Իսրահիմի	7
Աւճ	7
Պէշիր	7
Աւճիրախտ	7
Նէվրուզի	15—16
Հիճազ	15—16
Պայաթի	15—16
Թէճնիս	11
Վարսաղ	11
Դադար	
Գ. ՄԱՍ (Ֆասըլ) *Առաւօտեան*	
Թագսիմ — Փէշրոֆ Սապայի	
Սապա	15
Թէմնիտ	15
Եէնի Գարու	15

Երբաք բարեաՀ — Նուագ, Տափ և Տիկ

Նուագածուք բակին մէջ, կամ ասանը դրանը առջև փողոցին մէջ

Սէկեահ — Մայա — Մասանի

ԾԱՆՕԹ. — *Վերոյգրեալ բոլոր եղանակները մեներգի յատուկ են. որոց ամէն մէկին կը հետևի անոր յատուկ խմբերգը* (շարգին):

Զուզեցինք, հա՛յ թամամեցինք, Զխաչն ի վրէն բաղմեցուցինք։ 105
Շնորհաւո՛ր, շնորհաւո՛ր, հազար շնորհաւո՛ր։
Այս նոր հարս, փեսի պսակը շնորհաւոր։

Պլպուլ եմ վարդ մ'կուզեմ, եամանի ջան
Զիս սիրող եար մը կ'ուզեմ. եամանի ջան

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Ա. ՄԱՍ

ՍՐԲԱԶԱՆ ԵՐԳԵՐ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԱՇՏԱՄԱՆ ԳԻՇԵՐՈՑ
(Արքալոյսի խմբերգ — Սապայի Շարգի)

Զարթիք փառք իմ, զարթիք, և ես զարթեալց առաւօտուց. ալէլուիա։
Զարթիք ընդ զուարթունս, ճանկունք վերինըն Սիօնի. ալէլուիա։
Զարթիք որդիք լուսոյ, 'ի յօրհնութիւն Հօրըն լուսոյ. ալէլուիա։
Զարթիք փրկեալք արեամբ, և տուք ըզփառս փրկողին. ալէլուիա։
Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա։
Զարթիք հարսունք հոգւով, սպասեալք գալոյ սուրբ Փեսային. ալէ։
Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալէ։
Զարթիք պատրաստեցէք իւղ լապտերաց զՔերմ արտասուս. ալէ։
Զարթիք և մի նընջէք, նրման լինար կուսից նիրհէք. ալէլուիա։
Զարթիք երկիրպագցուք և արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա։
Զարթիր, ընդէ՞ր նընջես. Տէր, մի մերժեր ըզմեզ խսպառ։
Արի, Տէր, օգնեա մեզ. տացուք անուանդ քում ըզփառս։
Այժմ և յաւէտ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ամէն։
Զարթուցեալքս 'ի դրսղմանէ զիշերային հանդստենէ։
Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս
Ահիւ և դողութեամբ կացցուք 'ի յաղօթս։ [Եկեղեցւոյ։
Եկեալ խոստովանեսցուք ըզ յանցանս
Եւ գթացուք 'ի Քրիստոսէ զքաւութիւն և ըզ մեծ զողորմութիւն։
Յաւիտեանս յաւիտենից. ամէն. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։
Ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Երգ Աղօթական Ի Դէմս Սրբոյ Երրորդութեան, Նաև Իւրաքանչիւրոյ Դէմի Երրորդութեանն Առանձնակի

Ամաւօտ լուսոյ,
Երեգակն արդար,
Ո՛ իս լոյս ծագեա:

Բղխումն 'ի Հօրէ,
Բղխեա 'ի հոգւոյս,
Բան քեզ 'ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գտող զիս արա:

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց.
Դասեցո վերնոցն:

Երբեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Ե՛ ինձ ողորմեա:

Զարթի՛ր, Տէր յօղնել,
Զարթո զթմրեալս,
Զուարթնոց նըմանիլ:

Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Ի միշտ Սուրբ Հոգի:

Ընկալ զիս զթած.
Ընկալ ողորմած.
Ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող.
Թող ինձ ըզյանցանս:

Ժողովող բարեաց,
Ժողովեա և զիս,
Ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր, հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ բըժըշկութիւն:

Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող,
Խաւարիս չնորհեա,
Խորհուրդ լուսաւոր:

Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ըստուերաւ,
Ծագեա լոյս փառաց:

Կենարար Փրկիչ,
Կեցո ըզմեռեալս.
Կանգնեա զգլորեալս:

Հաստեա հաւատով.
Հաստատեա յուսով.
Հմեցո սիրով:

Ձայնիւս աղաչեմ.
Ձեռօքս պաղատիմ.
Ձիր բարեաց չնորհեա:

Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո:

Ո՛առագայթ փառաց,
Ո՛անապարհ ինձ ցոյց,
Ո՛եպել 'ի յերկինս:

Մի ածիներդ Հօր.
Մոյծ զիս յառագաստ,
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ դաս փառօք,
Յահագին աւուրն,
Յիշեա զիս Քրիստոս:

Նորոգող հնութեանց,
Նորոգեա և զիս,
Նորոդ զարդարեա:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն.
Շնորհեա զթողութիւն:

Ուրախացո Տէր,
Ուրախս փրկութեամբ,
Ոչ վասն եմ 'ի սուգ:

Ձար մշակողին,
Ձար սերմանց նորին,
Ձորացո զպտուղն:

Պարգևիչ բարեաց,
Պարգևեա իմոց,
Պարտեացս թողութիւն:

Ջուր չնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ զարտասուս,
Ջնջել ըզյանցանս:

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո.
Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճնչեա,
Սիրտ իմ քարեղէն:

Վասըն գըթութեան.
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո:

Տենչալոյդ տեսլեամբ,
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Ր՛աբունդ երկնաւոր,
Ր՛ոտեա զաչակերտս,
Ր՛ամից երկնաչնոց:

Ցօղ արեան քո Տէր,
Ցօղեա 'ի հոգիս.
Ցնծասցէ անձն իմ:

Խուծեալըս մեղօք,
Խուծեալ աղաչեմ,
Խուսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել,
Փորձութեանց մեղաց:

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս,
Քեզ երգել ըզփառս:

ԵՐԳ
ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ ԳԻՇԵՐԻՆ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՆ

ԱՅՍՕՐ անճառ լուսոյն ծագումն
Ի փրկութեան մեր կատարուն,
Խոնարհի ի վերնատունն,
Ի ստուերական տօնից լրումն.
Նախ քան զընթրիսըն խորհրդոյ,
Սփածաւ ղենջակ արկողն լուսոյ.
Եւ ջուր առեալ ծառայաբար
Զոտքս լուանայր զաշակերտացն:

Բանին Հօր փառաց լուսոյ
Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր.
Այնըմ ձեռաց որոյ են գործք
Երկնից երկինք և երկրաւորք.
Որով կուրաց աչքք բացան,
Խուլք և համերք արձակեցան.
Որ վերածեաց զինքն ի ծովէն,
Սաստեաց ալեացն և լրեցին:

Գալիլոյն ընտրեալ հօտին փոքու,
Սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ,
Որով դառնայր և հնազանդէր,
Զոտս և զգլուխս մաքրել մաղթէր.
Գալիլոյդ՝ ասէ, չէ ինչ պիտոյ
Լուացումն ջրոյ, զի լուացեալ է.
Ոտիցդ պէտք են մաքրութեան,
Ցօդիլ ի գլուխս սրբրութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց,
Զոր նախ բանիւ վարդապետեաց,
Այսօր գործով ըզծայրագոյնն
Եցոյց յինքեան զխոնարհութիւն.
Սպասաւորեալ հողեղինաց,
Այն որ անտեսն է հրեղինաց,
Տարեալ պաշտօն իւր ծառայիցն,
Այն որ պաշտի ի սրովբէից:

ԵԹԷ ՏԷՐս, ասէ, էից,
Եւ վարդապետս բոլորից,
Զաշակերտաց և զծառայից
Զոտքս լուացի ի հնոյ աղտից.
Միմեանց և դուք համարնութեամբ
Ցուցէք զնոյն խոնարհութիւն.
Բարձրացելոյն ի կործանումն,
Եւ անկելոյ բնութեան կանգնումն:

ՕՀՈՐ մաքրեցեր յաւազանին
Մաքուր ձեռօք զոտս նոցին,
Եւ ուսուցեր խոնարհութեամբ
Ցաղթող լինել չար հպարտին.
Եւ զիմ լուա զտիղմն մեղաց,
Աղաչանօք սրբոյ դնդին.
Եւ ըզգընացս ուղղեա զոտին
Խոնարհութեամբ ելիւք յերկինս:

(Էլից զօրէնսէն մինչև վերնական
բրն կամ էէն մինչև վ տեսնել
ժամագիրբ)

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց,
Ոտք ընդ ոտից ընթանալեաց.
Փայտ ընդ փայտի դառըն պտղոյ,
Կեանք ընդ մահու փոխարկելով.
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց,
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց,
Բայց ի միոյն յաւազակաց:

(Ցաջորդ երեբ համարներուն համար, Ր, Ց, Ի, տեսնել ժամագիրբ)

Փարելի բարբառ ընդ իմ
Էլի, էլի, առ Հայր գոչէր.
Զհոգին կամաւ Հօր աւանդէր,
Զհոգիս մարդկան նոյն ընծայէր.
Երկիր հիմամբք սասանեցաւ,
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ,
Վէմք ի յինքեանց պատառեցան.
Եւ գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեացս
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ
Մերով բնութեամբըս մեռանի,
Աստուած անմահ խոստովանի.
Կըրկնավտակ կողին աղբերբք
Եկեղեցի իւր հաստատի.
Ջրրովն մաքրի, զարիւնն ըմպէ,
ԶՈրդի ընդ Հօր փառաւորէ:

ՇԱՐԱԿԱՆ ՈՏՆԱԼՈՒԱՑԻ

Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի թողութիւն մեղաց մերոց:
Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտաց և պատուիրէր զայս ասելով,
Մի ոմն ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ և որոշի յաշակերտաց:
Զայն լուեալ Պետրոսի, ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ո՞վ իցէ դաւաճանողն Վարդապետին:
Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր աշակերտսն. և խռովեցան ամենեքեան:

❖ ԿՈՒՍԻ ՊՍԱԿ ❖
ՀԱԼԱՒ ՕՐՀՆԵՔ
ՇԱՐԱԿԱՆ

Բկ. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից Հոգին էջ 'ի սուրբ վերնատունն. որով նորոգեցան դասք առաքելոցն:
Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցնծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ երարձ զՀոգին 'ի մարդկանէ մարմին եղելոց, դարձեալ վերըս տին ըզնոյն պարգևէ:
Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զդալուստ Սուրբ Հոգւոյն. որով զարդարեցան 'ի զգեստս լուսափայլս և գերապայծառս. երգեն ընդ սրովբէսն զերեքսըրբենին:
Որ զմիաբանեալսն յաշտարակին բաժանմամբ լեզուացըն քակեաց. այսօր ըզբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ 'ի սուրբ վերնատունն. ամենայն հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ:

Որ էջ Հոգին Տեառն և առաջնորդեաց երկոտասան ցեղիցն Իսրայելի 'ի յանապատին. այսօր երկոտասան առաքելոցն առաջնորդէ 'ի յԱւետարանն. ամենայն հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ:

Որ ելից Հոգին Տեառն ըզԲեսելիէլ ճարտարապետ խորանին. այսօր շինէ զմարդիկ խորան սուրբ Երրորդութեանն. ամենայն հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ:

Մայր լուսոյն Մարիամ անհարսնացեալ, օրհնեալդ 'ի կանայս:
Զլոյսն անընտուեր յարգանդի կրեցեր, օրհնեալդ 'ի կանայս:
Մի դաղարիր վասըն մեր բարեխօսել, օրհնեալդ ի կանայս:

Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի. ըզսա պահեա 'ի խաղաղութեան:

Որ շնորհեցեր ողորմութիւն 'ի բնակարանըս հրեշտակաց և մարդկան քաւարան. տուր սրմա զանչարժ քո զխաղաղութիւն:

Ի տաճարի փառաց սրբութեան քոյ քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութիւն:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սիրոյ անմահ փեսային եղեր դու մայր Մարիամ. բարեխօսեա վասըն մեր 'ի յայնմ աւուր ահեղի:

(Հարսի տանը մէջ, Հարսն ու փեսան իրարու քով բերելով, և Քահանայն Հարսի աջ ձեռքը Փեսայի աջ ձեռքին տալով, կ'երգեն)

ՇԱՐԱԿԱՆ

Գկ. Նայեա 'ի մեզ և ողորմեա մեզ Քրիստոս. որ ունիս բազում զբթութիւն:

Որ Հայրդ ես որբոց և դատաւոր այրեաց Քրիստոս. որ ունիս բազում զբթութիւն:

Որ պսակիչդ ես սրբոց. լուր և մեզ աղօթիւք սոցա Քրիստոս. որ ունիս բազում զբթութիւն:

Մայր և կոյս աղախին Քրիստոսի որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. Քեզ երանեն ամենայն ազինք:

Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ, տաճար և աթոռ Աստուծոյ բանին. քեզ երանեն ամենայն ազինք:

Քև հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս, և քև մերձեցաք 'ի փայտն կենաց. քեզ երանեն ամենայն ազինք:

Ցաղթող և զնոր օրհնութիւն միշտ 'ի բարձունս երգեսցուք թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք:

Որ եկն 'ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի. և պըսակեաց սուրբ խաչիւն. նըմա ըզփառս երգեսցուք:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Այսօր և մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ Խաչին. և փրկողին մատուսցուք փառք և պատիւ յաւիտեան:

(Եկեղեցւոյ դրան առջև, դարձեալ Քահանայն Հարսի աջ ձեռքը Փեսայի աջ ձեռքին տալով և ըստ օրինի խրատներ, հարց ու պատասխաններն և մաղթանքներն ընելէ վերջ, կ'երգեն)

ԱՄԵՆԱԶՕՐ Տէր Թագաւոր Թագաւորաց,
Թագաւորին մեր զգեցո հանդերձ փառաց:
Մայրդ կենաց Կոյս Թագուհին Աստուածածին,
Ըզթագուհիս զայս զարդարեա շնորհիւ Քոյին:
Որ զարդարեացդ մեծափառօք Հարսն առաջին,
Եւ զայս նոր Հարսն արժանացո պատուոյ նորին:
Ըստ աւետեացն Աբրահամու Նահապետին՝
Զաւակս սոցա որպէս զաստեղս բազմացո:
Ըստ Յովսեփու դեղեցկատիպ սուրբ պատկերին,
Սերունդ սոցա շնորհազարդեալ պայծառացո:
Այս Թագաւորս որ մտանէ ընդ դրունս Քոյ,
Սա նմանեալ Թէոդոսի Թագաւորին:
Այս Թագուհիս՝ որ մտանէ ընդ դրունս Քոյ,
Սա նմանեալ Աշխէն Տիկնոջ մեծ Թագուհւոյն:
Այս փեսաւէրս՝ որ մտանէ ընդ դրունս Քոյ,
Սա նմանեալ Քաջ Մուշեղին Զօրավարին:
Այս քահանայս, որ մտանէ ընդ դրունս Քոյ,
Սա նմանեալ Մելքիսեդեկ Քահանային:
Այս ժողովուրդս՝ որ մտանէ ընդ դրունս Քոյ,
Սա նմանեալ Եփեսոսի սուրբ ժողովոյն:
Ուրախացիր և զուարճացիր Եկեղեցի,
Բերկրեալ ցնծա՛ Մայրաքաղաքն Երուսաղէմ:

(Եկեղեցւոյ դռնէն ներս մտնելով, դպրաց դասը և ժողովուրդը վառած մոմեր ի ձեռին բռնած թափօր կը կազմեն և հետևեալ մեներգներէն ու խմբերգներէն մի քանին (փոփոխակի մեներգ, խմբերգ, մեներգ, խմբերգ, և ն.) երգելով

և Հարս ու Փեսան շատ կամաց (նորհարսի քալուածքով) քալեցնելով, կը հասցնեն խորանին առջև, ուր ի կարգին կ'սկսին երգել իստորև գետեղուած շարականները)

ՁՕՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

(Մեներգ)

Քեզով փեսայ Եկեղեցւոյ երգեմք հոգւով. ալէլուիա:
Ուստի յերկնից խոնարհեցար ի մեր բնութիւնս. ալէլուիա:
Ի կուսական որովայնէ ծնար մարմնով. ալէլուիա:
Սուրբդ սրբոց ի Յորդանան, եկիր մկրտիլ. ալէլուիա:
Տարածեցեալ վասն իմ ի խաչ, հեղեր զարիւնդ. ալէլուիա:
Որոյ թաղման և Յարութեան, և Հառնարձման. ալէլուիա:
Սահմանեցեալ Քո Գալստեան զքննութիւն. ալէլուիա:

(Հետագայ տաղերէն մեծ մասը ի գիր առնուած են Ուէսդ Հօղօքընի Դպրապետ ՄԿՐՏԻՉ ՈՍԿԵՐՉԵԱՆի երգածներէն:)

ԽՄԲԵՐԳ (Իպրահիմի Շարգի)

Ի փեսայէդ տարանջատեալ,
Այրի հոգիս սիրով Քոյին է խոցոտեալ:
Տէր իմ, իցէ՞ արդեօք զՔեզ տեսանեմ,
Առ իս եկեալ սիրով փարեալ, ողջագուրեալ:

Այս և յաջորդ խմբերգներուն հեղինակութիւնը կը վերագրուի առ հասարակ Տիգրանակերտի հոչակաւոր Մկրտիչ Վարժապետ Տիգրանեանի, որ ծաղկած է իւր ծննդավայրին մէջ ԺԹ. դարու առաջին երեք հառորդներուն մէջ. և շուրջ 1885ին առ Աստուած փոխուած է իւր 110 տարեկան հասակին մէջ:

Կ'աւանդուի թէ սոյն խմբերգները Մկրտիչ Վարժապետ ԺԹ. դարու կիսին յատկապէս հեղինակած էր երկու նպատակով, (ա) Այն ատենի Հայ ժողովրդի ուշքն ու ուրուշքը Թրքական լկտի և անբարոյականացուցիչ երգերէն աւելի բարձր, վեհ ու գեղեցիկ գաղափարականի մը դարձնելու:

(բ) Ժողովրդին սիրելի դարձած եղանակները փոխանակ Թուրքերէնով երգելու Հայերէնով երգեն և ասով իրենց Մայրենի Լեզուն ապրեցնելով, ապրեցնեն և Հայութիւնը Տիգրանակերտի բազմազան ազգերուն մէջ:

Ծ. Հ.

ՁՕՆ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

(Սոյն տաղին ամեն մէկ երկեակ տողերը, իբր ուրոյն Մեներգ կ'երգուի հետագայ մէջ մէկ Խմբերգէն վերջ:)

ՍՈՒՐԲ փեսային հարսն անարատ աննման, Սէր իմ աննման:
Գեղոյ վերնոյնքն Սիոնի դու նման, Սէր իմ դու նման:
Ծառ խնկաբեր եդեմաբոյս անթառամ, Սէր իմ անթառամ.
Աղբիւր կնքեալ ի պարտիզի քաղցրահամ, Սէր իմ քաղցրահամ:
Կայծ կարկեհան և դահանակ ճշմարիտ, Սէր իմ ճշմարիտ.
Արփիագեղ և ծովային մարգարիտ, Սէր իմ մարգարիտ.
Պարտէզ պճնեալ փառօք լուսոյ գովելի, Սէր իմ գովելի.
Աղբիւր կենաց գեղ գեղ չնորհաց հրաշալի, Սէր իմ հրաշալի
Ի Քեզ իջեալ անմահ արքայն նազելի, Սէր իմ նազելի:
Կազմեաց պսակ յոյժ հրազան տենչալի, Սէր իմ տենչալի:

ԽՄԲԵՐԳ (Հիւսէյնի—Շարգի)

ՆՇԻՆ ծաղիկ, նշան Գարնան, Մարիամ,
Ընձիւղեցար ի մէջ Ձմրան, Մարիամ,
Նարդոս, քրքում, վարդ կարմրերփեան, Մարիամ:
Ետուր Փրկիչ դու մարդկութեան, Մարիամ:

ԽՄԲԵՐԳ (Բասդ—Շարգի)

(Եղանակ — «Սեաստափոլընտէ վէգիր էմ վէգիր, Վէգիրլէր իչընտէ օղմանամ բէգիլ»)

ԾԱՌ կենաց ծաղիկ անթառամելի,
Լուսեղէն խորան, տաճար գովելի.
Հաճեցաւ ի քեզ Տէրն բոլորից,
Սուրբ կոյս Մարիամ, մայր Մանուէլի:
Սուրբն Գաբրիէլ, պետն հրեղինաց,
Սուրբ կոյս Մարիամ, պարծանք կուսանաց:

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ

ԽՄԲԵՐԳ (Անէմ—Շարգի)

(Եղանակ — «Պագ շու ճէլլատ եանաղի կիւլ լալէլէր»:)

Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր աշխարհի,
Եւ ուրախութիւն երկնի և երկրի.
Զի Աստուածն ի բարձանց յերկիր խոնարհի,
Ի Խնդիր և այց իւրում պատկերի.

Որ ահա ի կուսէս այսօր ծնանի,
Եւ ի յօրօրօց եղեալ օրօրի.
Վասնորոյ երգեսցուք օր օր օր օր,
Իմ Աստուած որդւոյս ասեմ օր օր օր:

(9667-61)
1358-2002

(ԽՄԲԵՐԳ)

(*Եղանակ — Իպրահիմի — «Հիւսնիւնտէ վառ իֆէն օլ ափիք ապլն»։*)

(*Հայ կաթոլիկ Գպիր* ՊԵՏՐՈՍ ՊՈՒՐՈՒՋԵԱՆԻ *երգածներէն*)

ՅԱՆԿԱ *Ի վերնոց դասուց հրեղինաց,*
Սուրբ կոյս Մարիամ, պարծանք կուսանաց.
Յարգանդիդ տարար զտուողն կենաց,
Գովեալ, զրուատեալ, պատուեալ յերկնայնոց.
Միշտ երկրպագեալ գովեստիւք երգոց։

(ԽՄԲԵՐԳ)

ՏԱՂ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

(*Եղանակ — Նէվբուզի — «Նէ չէ մէն նէ սէյայի կիւլ,*
Նէ պուհար, նէ սէմանի պիւլպիւլ»։)

ՄԱՐՏԻՐՈՍՔ, *երանեալ վկայք,* (կրկ.)
Փառաւոր Սիովնի պսակք, (կրկ.)
Որք ի մահ կամաւ նուիրեալք
Վասն անուան Տեառն կատարեալք։
Ընտրեալք, փառաւորք, հոգւով զօրաւորք,
Ահեղ զրահաւորք, Յիսուսի զինուորք,
Լերուք միշտ առ Տէր բարեխօսք,
Զխաւարեալքս ածէք միշտ ի լոյս։

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

(Մեներգ)

ՀԱՒՈՒՆ *հաւուն արթընացեալ, դիտելով զհեթանոսս։*
Զայներ ձայներ տատրակին, սիրասընունդ սիրելւոյն։
Դարձիր դարձիր սոմնացիդ, առ վիմին ընդ հովանեաւ։
Եկ հարսնուհի 'ի լերանց- ընծայ 'ի դաշտաց այծեմանց։
Եկեալ եկեալ տաւաղին, յեփրայիմ բեթելին։
Այսօր այսօր անթառամ, ծաղկեցաւ լուսափայլ։

ԽՄԲԵՐԳ (ԱՆԷՄ—Շարգի)

(*Եղանակ — «Կէլ էյ փէյրի, հուրի մէլէք հէփ կիւզէլլէր սուլթանի»։*)

ԱՅՍՕՐ *անհաս և անսկիզբն, անեղ ծնունդ հայրական,*
Զուլեալ մարմնով Աստուածային եկեալ ի սուրբ Յորդանան։
Լուանալով զմեղս Ադամայ, շնորհեաց մեզ սուրբ աւազան.
Գետ Յորդանան յորդորական ձայնիւ երգէր Կարապետ։
Այսօր Փրկիչն ի Յորդանան կամաւ ի ջուրն մկրտեալ,
Եւ Սուրբ Հոգին աղաւնակերպ, հայր ի վերուստ վկայեալ։

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԽՄԲԵՐԳ (Մուխալիֆ—Շարգի)

ՅԱՅՆԺԱՄ *սիրով տիրական լրցեալ կանանց խընդութեամբ,*
Գան առ Պետրոս Յունանեան և սիրեցեալն Յովհան։
Պատմեն զտեսիլն ահագին զլուսափայլ հրեշտակին,
Որք աւետեաց գոչէին եթէ յարեաւ կենդանին։
Ճեպեալ յընթացս վիմին 'ի գերեզմանն անմահին,
Եւ յառաջեալ սիրելին խանդաղատէր 'ի վիմին։

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԽՄԲԵՐԳ (Բայաքֆ—Շարգի)

ԵԿԵԱՆ *Մարիամ Մագդաղենացին յայն առաւօտին Միաշաբաթին։*
Մըտեալ և տեսին զոէրուսեան տեղին ունայն 'ի մարմնով Յիսուսի Փրկչին։
Արտասուօք լային հառաչմամբ սրտին, զի ոչ էր մարմինն 'ի գերեզմանին։
Տեսեալ զՊարտունին 'ի մէջ պարտիզին և կարծիս առին այն պարտիզպանին։
Տեսեալ Պարտունին զարտասուս նորին, ձայնեաց Մարիամ զի լաս զկենդանին։

ԳԱՆՁ ՈՏՆԱԼՈՒԱՅԻ (Քանի մը Տուն Վերջին Հատուածէն)

ԽՄԲԵՐԳ (Բասդ—Շարգի)

ՍՐՈՎԲԷ *մարմնային,*
Քնարդ երկնային,
Քաւիչ Եւային։
Սուրբ Աստուածածնին,
Ծնող Միածնին,
Մայր անճառ բանին։ ..
Հարսն հրեղինին,
Փառք Իսրայէլին,
Կեանք Հեթանոսին։
Պատակ Մկրտչին,
Թագ Ստեփաննոսին,
Լոյս Լուսաւորչին։
Ազգաց համայնին,
Որ զքեզ դաւանին,
Սուրբ կոյս տիրածին։

Տուր խաղաղութիւն,
Բարեաց լիութիւն,
Եւ առողջութիւն։
Մեծ Հայրապետին,
Եւ քաջ արքային,
Եւ զօրաց նորին։
Խոստովանողին
Ապաշխարողին,
Եւ հաղորդողին։
Հասցես յօգնութիւն,
Տացես սրբութիւն,
Ընդ քեզ միութիւն։
Գանձիս ասողին,
Տէր Մխիթարին,
Թող զմեղս անձին։

ՏԱՂ ՑԱՐՈՒԹԵԱՆ
(ԽՄԲԵՐԳ)

(*Եղանակ — Առազպար — «Նիճէմ պէճիմ պէշիկիմի սալլաթսըն»։*)

(Գրի առնուած Տիկին ՄԱՐԻԱՄ ՁԱՆԳԱԼԵԱՆԻ երգածէն)

ԴԱՍՔ *զինուորացն պարառութեամբ նստէին, պահէին առ շիրմին Յիսուսի Քրիստոսի.*

Զի ընդ առաւօտն իւղաբերիցն կանխելով ոչ գտին զմարմին.

Զահի հարեալ և խոնարհեալ իւերկիր հայէին, դոչէին, զի իսկոյն երևեալ հրեշտակին,

Որ քարոզէր թէ զի՞ խնդրէք, ընդ մեռեալս զկենդանին։

Զէ աստ Խաչեալն, յարեա՛ւ, յարեա՛ւ ձայնէին, ասէին, դուք զի՞ լայք, ցնծացէք, խնդացէք.

Ընթանալով ի վերնատունն, առ եղբարցն պատմեցէք ըզՅարութիւնն Քրկչի։

ԽՄԲԵՐԳ (ԱՆԷՄ—Շարգի)

Եղանակ — «Գարա տէնիզ եալըսնտէ պիր ատա»։)

ՍԻՐԱՀԱՐԵԱԼ *ի գեղ տեսոյդ Քրկիչ իմ,*

Ի պարտիզիդ խելագարեալ դեգերիմ, աւա՛ղ, աւա՛ղ։

Հաշտեաց ձայնիւդ արդ ում ի ձեռս մեռանիմ,

Տխուր դիմօք, տրտում սրտիւս վարանեալ, աւա՛ղ, աւա՛ղ։

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ
ՎԱՍՆ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՎԱՍՆ ԵՐԿՆԱՑՆՈՑ ՁՕՐԱՑՆ
(ԱԷՆ մինչև Մ և ՆԷՆ մինչև Ք տեսնել ժամագիրք)

ՅՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՍ *անզրաւական*

Ի հարսանիսն անապական.
Զձեզ առաքեաց Հայրն փառաց
Հրաւիրատուք տրտմականաց.

Սուրբ հարսանեացն այն հայցեցէք,
Ընդ ձեզ լինել մեզ պարակից.
Տացուք հրաշից ներգործողին,
Պատիւ և փառս անեղ Բանին։

ՇԱՐԱԿԱՆ

Բկ. Ճառագայթ փառաց Հօր, որդիդ միածին. որ ըզլոյսդ անվայրապակ մարմնով պարագրեալ. այսօր 'ի Թափոր փառօք փայլեցեր։

Որ անտես սրովբէից անհաս 'ի վեր քան ըզբան. ծառայի կերպիւ պարածածկեալ ըզլոյսդ անըստուեր. այսօր 'ի Թափոր փառօք փայլեցեր։

Որ հրեղինացն անմերձենալի հուր Աստուածութեանդ. ի հողէղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր 'ի Թափոր փառօք փայլեցեր։

Գձ. Ուրախ լեր սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ Խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք։

Ընդդա յոյժ դուստր Սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ և Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բընակիլ 'ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն վեր առեալ տօնեմըք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքննին քո խորհրդով։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ուրախ լե՛ր, բերկրեա՛, հարսնացեալ սուրբ Եկեղեցի, պայծառացո՛ զմանկունս քո յօրհնարանութիւն ծագողին ըզչող լուսոյ 'ի քեզ մայր Եկեղեցի։

(Պսակի Արարողութիւնը կատարուելէ և Նարօտները Կապուելէ վերջ)

ՇԱՐԱԿԱՆ

Բկ. Ով երանելիդ ամենեցուն տիեզերական իշխանութեամբ ընկալար 'ի Քրիստոսէ ըզթագ պարծանաց. ո՛վ Աբգար, մեծ թագաւոր, վասըն մեր բարեխօսեա առ թագաւորն երկնաւոր։

Որ քոյին սուրբ աղօթիւքդ վանեցեր ըզթըշնամին, կոխելով զսատանայ ընդ երկնայինսըն դասեցար, ո՛վ Տրդատ, մեծ թագաւոր, վասըն մեր բարեխօսեա առ թագաւորն երկնաւոր։

Ուստի և մեք հաւատացեալքս տօնեմք զքո յիշատակս, օրհնութիւն առաքելով ըզքեզ պըսակողին. ո՛վ Աշոտ, մեծ թագաւոր, վասըն մեր բարեխօսեա առ թագաւորն երկնաւոր։

Մայր լուսոյն Մարիամ անհարսնացեալ, օրհնեալդ 'ի կանայս։

Զլոյսն անըստուեր յարգանդի կրեցեր, օրհնեալդ 'ի կանայս։

Մի դադարիր վասըն մեր բարեխօսել, օրհնեալդ 'ի կանայս։

Խաչն կենարար որ եղև մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։

Որ 'ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ 'ի յերկրի, և գաւազան զօրութեան հաւատացելոց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ 'ի յօգնութիւն ընդդէմ թըշնամւոյն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցիս. ժողովուրդք, զՔրիստոս բարեբանեցէք:

Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած, քանզի չիջոյց զխաչթոց մահու խաչին իւրով սրբով. ժողովուրդք, զՔրիստոս բարեբանեցէք: Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ- ևն.

Յարեաւ Աստուած. և տիեզերք ամենայն նորափեսուր զարդարեցան. և մանկունքն հաղորդեցան մարմնոյ և արեան Կենարարին. ժողովուրդք, զՔրիստոս բարեբանեցէք:

ԵՐԿՆԱՒՈՐ *փեսայ անբաստուեր լոյս իմանալի, որ 'ի յերկնից իջեր, 'ի սէր հարսին քո եկեղեցւոյ, զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրքն քո Յովհաննէս, սորին մաղթանօք ողորմեա:*

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Փեսայի տունն երթալով կ'երգեն ՇԱՐԱԿԱՆ — «*Արեգականն արդարութեան ծագման*» *և կամ «Թագաւոր դոլով քո յաշխարհ»:*

(Պսակը վար առնելու պահուն կ'երգեն)

ՇԱՐԱԿԱՆ

ԳԿ. *Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ բերկրին ընդ առաջ Տեառն Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: Զայն 'ի յերկնից վկայեալ ասէ. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգորդք երկնից խորանացն: Լցէք ըստեղի անկելոցն ապըստամբողական թշնամւոյն, որ 'ի յերկնից վայր անկեալ:*

(«*Մայր և կոյս աղախին Քրիստոսի*» *և «Յաղթող և զնոր օրհնութիւն»* հատուածներուն համար տեսնել երես 14)

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ, ևն.

Անթառամ պըսակըն ձեզ աւանդեալ մընայ քան զկանըս պատուականըս զերազոյն հրաշիւք. որք վանեալ ըմբշնամին խորտակեցիք:

(Արշալոյսի խմբերգ — Սապաի շարգի)

(Եղանակ — «ՊԷՆ պէնիմ կէօյնըմ պէն պիլմէզ միյըմ»:)

Զինուորեալ մանկունք,
Փայլ փայլեալ ակունք,
Փայլեցարուք դուք այսօր
Յուսով Յարութեան,
Փրկչին մերոյ մի միայն. ո՛հ:

Ելէ՛ք իշաւիղ,
Ի ձեռին տաւիղ,
Տեսէք երկրորդ Սողոմոն,
Փառօք պերճացեալ
Փրկչին մերոյ մի միայն. ո՛հ:

Ե. Գ. ԶԷՐՉԵԱՆԻ յիշածներից

ՏԱՂ ԱՊԱՇԱՒԱՆԱՑ

ԽՄԲԵՐԳ (Հիւսէյնի—Շարգի)

(Եղանակ-Պայաթի-«Ալտի ագլըմ պիր պագըշ'լէ դամգասի ափաք»:

Ի ԴԷՋ մեղաց յառեալ աչօք յոյժ ահարեկիմ (կրկնէ)
Ի յուշոյ թափեալ խելագար, հողմակործան անձն իմ տատանի
Ժամ է հատման յուսոյս թելի ընդ այնմ սասանի,
Զի՞նչ գործիցեմ ես եղկելիս, որ կամ անկեալ ի գործս մեղաց.
Մեռեալ հոգւով, խոտան մարմնով, ինձ յոյս չմնաց:

ԽՄԲԵՐԳ (Հիւսէյնի—Շարգի)

Արբանեակք չարին լուծան,
Վերածնին համակործան. ո՛հ.
Շառաւիղ այն քաջ Վարդան
Որ չէ այժմուս ի Հայաստան. ո՛հ:

Աւանդել զոր չէ արժան,
Լինել Հայոց Որմզդդաւան. ո՛հ.
Արի՛, արի՛, անձն իմ արի.
Է՞ր սգաւոր նստիս այրի. ո՛հ:

ԵՐԳ ԱՌԱՋՆՈՅ ԱՒՈՒՐ ՄԻԱՇԱՒԱԹԻՆ, ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆՆ, ԵՒ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Նորաստեղծեալ Բանն յանէից
'Ի սկզբանէ զերկինս երկնից,
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեացն զուարթնոց,
Եւ ըզգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի,
Երրորդութիւնն անճառելի:

Սէրըդ սիրով խոնարհեցար,
'Ի փրկութիւն մեր մարմնացար.
Նովին մարմնովն խաչեցար,
'Ի գերեզման մահու եղար.
Այսօր յարեար Աստուածաբար,
'Ի հրեշտակաց քարոզեցար.
Եկայք փրկեալք, ևն.:

Երեքսըրբեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ Աստուութիւն
Լոյսն որ անեղ արարչական,
Ասաց լինել լոյս եղական.
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ Կիրակէին, Որով ևն.

Երեւեցար խնկաբերիցն,
Յողջոյն կենացն ուրախալից.
Եւ 'ի լերինքն Գալիլեա
Առաքելոց մեռասանից.
Արժանացո զմեզ ընդ նոսին
Զքեզ տեսանել յօրըն վերջին.
Եկայք փրկեալք, ևն.:

Բարունօրէն բացատրեսցուք,
Զծածկեալ խորհուրդն ծանիցուք.
Զի լոյսն անտես իմանալի
Մաքուր հոգւոց տեսանելի.
'Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սր. ճառագայթ.
Եկայք փրկեալք, ընդ զարթնոյն,
Տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սիօնի որդիք, զարթիք.
Հարսին լուսոյ տուք աւետիք.
Եթէ փեսայն քո յարուցեալ,
Յաղթեաց մահու իշխանութեամբ.
Գայ պսակէ զքեզ փառօք.
Եւ ընդ առաջ պըճնեալ զարդուք.
Երգեա երգ նոր յարուցելոյն,
Ննջեցելոց կենաց պտղոյն:

ՆԵՐՍԻՍԻ ԵՐԳ

Նայեաց սիրով Հայրըդ գըթած,
'Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ ըզբանակս հրեշտակաց
Տուր պահապան մեզ տկարացս.
Փրկեա զանձինս 'ի փորձանաց,
'Ի խաւարի չրջող դիւաց,
Զի 'ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլըռելի:

Լին անեղ անըսկըզբան
Ծընունդ անճառ Որդի և Բան,
Որ արարեր ըզտիւ գործոյ
Եւ ըզգիշեր 'ի հանգիստ քնոյ,
Տուր 'ի ննջել աչաց մարմնոյ
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ,
Զի 'ի տուընջեան, ևն.:

Բաբուն հոգւոց բանաւորաց,
Աղբիւր լուսոյ բաշխող չնորհաց
'Ի փակել դրանց բնութեանց
մարմնոց՝
Լոյս տուր աչաց սրտից մերոց,
Ի գիշերաց առ քեզ կանխել,
Ընդ հրեղինացն օրհնաբանել,
Զի 'ի տուընջեան, ևն.:

Սուրբըդ սրբոց Երրորդութիւն,
Ըզմեզ մաքրեա քեզ բնակութիւն
Շնորհեա ընդ մանկանցն առա-
գաստի,
Հանդչել ընդ քեզ 'ի յանկողնի.
Տուր ըզհայցուած բարեկամին
Ըզփոխ երից նկանակին, զի, ևն.

Երևելի լոյս ըստեղծեր,
Զաւիւ և զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ Տէր, 'ի գիշերի,
Ըզճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աչ քո հովանի. Զի,
Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝
Բորբոքեսցի ի հոգիս մեր.
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ.
Ի քնոյ մահու մեզ զարթուսցէ,
Զմիտս բոցով քո վառեսցէ, զի, ևն

Լքեզ նայիմք լոյսդ անմատոյց,
'Ի ղդայական ծածկեալ լուսոյ.
Որ վասն մեր եդար 'ի գրի
Եւ նընջեցեր 'ի տապանի,
Առ մեզ ննջեա արթուն բնութիւն,
Հերքեա զչարի ներգործութիւն. Զի

Լիդ լուսոյ անըստուերի,
Պաղատանօք կամք առաջի,
Որ փակեալ դըրամբք յերեկոյին
Երևեցար մետասանին.
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք.
Տէր և Աստուած զքեզ դաւանեմք.
Էջ և առ մեզ յերեկոյիս,
Եւ տուր զողջոյն քո 'ի հոգիս:

Բամեալքս ըզքեզ Տէր, աղաչեմք.
Մեզ յօգնութիւն նայեա հայցեմք.
Պահապանդ Իսրայելի,
Անձանց մերոց լեր հովանի.
Օթեա առ մեզ խաղաղարար,
Եւ ննջեսցուք անխռովաբար,
Զի ընդ առաւօտս կանխեսցուք
Օրհնել ըզքեզ ընդ Հօր հոգւով՝

Գոչման փողոյն Գաբրիելի,
Որ 'ի վերջնումն գիշերի,
Լըսել արա զմեզ արժանի
Եւ աջակողմն օդեաց դասի.
Անչէջ վառեալ լոյս լապտերաց
Ըստ իմաստուն հինգ կուսանացն,
Զի ընդ փեսայիդ 'ի յառագաստ
Հարսունք հոգւով մտցուք իփառս՝

Բ. ՄԱՍ

ՍԻՐԵՐԳՆԵՐ

ՀԱՑՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

ՀԱՑՈՑ աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտքս էք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ.
Ա՜խ, սիրտըս խորւում, ցաւիս չկայ վերջ:
Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վրայ առաջս է դրած՝
Աչքըս ակամայ վըրան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:
Տեսնում եմ և, ա՜խ, միտքս է մոլորւում,
Դառն արտասուքով աչքըս պղտորւում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մըթնեց.
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:
Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնիմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնիմ,
Էն սև սև աչերն՝ սև ունքով պատած,
Կարծես երկնային դալամով քաշած:
Էն սև աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին դժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կըրակի էրած, խորոված:
Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր կարմիր թըշերը տեսնում:
Բըլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թրռչում է, թրռչում, ամպերում կորչում,
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում:
Հայոց աղջիկներ, ինչ անուն տամ ձեզ.
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բեղամաղ կ'անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
Հայոց աղջիկներ, դուք էք աննըման:
Ձեր սէրն է միայն սըրտումս պահուած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս՝ կեանքս մաշուած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

ԳԷՈՐԳ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

ՍԱՅԼՈՐԴԻ ՍԷՐԸ

ԱՀԱ սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում,
Եւ Վալդալի տխուր զանգակը
Կամարի տակն է զօղանչում:
Արթուն աչօք դէմ գիշերուայ
Իր վիճակի վրայ տըխրեց,
Եւ սիրուհու աչաց կարօտը
Նա տըխրագին ձայնով երգեց:
«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կըարիճիս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոսոխներ,
Ինչո՞ւ սըրտերս բաժնեցիք:
«Մընաս բարեաւ իմ սիրական,
Մընաս բարեաւ իմ տուն հօրական,
Ես կը հանգչեմ զերթ բոց կըրակին՝
Այս անբընակ դաշտի միջին:
Արևիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհում էլ որբ եմ ես.
Սըրտիս կարօտը աղջկաս տեսնելու
Մինչև ի մահ գրկած եմ ես»: —
Այս որ ասաց՝ շարժեց մըտրակը,
Երեք ձիանց մէջքին խըփեց.
Իր սիրուհու պարզ ցիշատակը
Այսպէս երգով նա փարատեց:

ՍԻՐԵՐԳ

ԱՀԱ ԵԼԱՒ լուսինն արծաթ,
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ,
Դուրս սահեցաւ ժայռերէն:

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր բիւր-բիւր ալիք:

Նաւակին մէջ իմ գեղուհին,
Փռուած անփոյթ լուսնի տակ.
Կը ճայնակցի իր կիթառին,
Հնչուն ձայնով մը յստակ:

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ:

Ձայնով կ՚երգէ սէր ու գըգուանք,
Հմակ յուզում ու սարսուռ.
Ալ թող աղջիկ երգդ ու նուագ,
Բոց աչերդ ինձ դարձուր:

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ:

ՇԱՆԹ

ԲԱՌԱԽԱՂ

ԱՂԻՒՈՐ լուս երեսդ խելքըս առեր է,
Քեզի համար կ՚ըլլամ Լ, Ա ու Ց.
Կը տեսնես քաշածըս, է՞ր չես կըսկըծար,
Գիշեր ցերեկ աչքս է՝ Թ և Ա ու Ց:
Քեզի ուր որ տեսնեմ, գիտեմ, կու ճանչեմ,
Այն ատեն եռեռդ ալ կու հառաչեմ.
Լալկան եմ եղեր, կուլամ, կ՚աղաչեմ,
Ողորմէ՛, սա դուռըդ Բ և Ա ու Ց:
Թշնամիին ծօտիկ՝ ինչ հեռացար,
Խօսք մը տուեր էիր, խօսքէդ ալ դարձար.
Դու իմ երախտիքը է՞նչպէս մոռացար,
Որ կերար իմ ձեռքէս շատ Հ, Ա ու Ց:
Ըրածիդ պէս գտնես, հալեցուցիր զիս,
Այսչափ աղաչեցի՝ դու չեկար խօսքիս.
Մէյ մ՚ալ այսուհետև մի՛ կենար աչքիս
Դ և Ի դի, Մ և Ա ու Ց:

ԱՑՆ սէրը՝ որ բարեխառն է՝ փայլ չունի.
Կիսամեռ կրակի նման՝ տապ չունի.
Սիրահար ա՛յն է, որ ամ ու ամիս, ցայգ ու ցերեկ՝
Դիւր ու դաղար, կեր ու քուն չունի:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

ԵՐԳ, (ՍԻՐԱՀԱՐԵԱԼՔ) ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ

ԱՆԱՆԿ սէր մը կապեր եմ
Որ ըրածըս չըգիտեմ,
Գիշերները չունիմ քուն
Եւ ոչ ալ հանգստութիւն:
Կ'ըսեն թէ արդէն եմ ծեր
Եւ չորս ալ զաւակի տէր,
Սակայն միտքըս դըրեր եմ՝
Այն աղջիկը ինձ առնեմ:

Անանկ սաստիկ բան է սէր
Որ իրաւունք չըգիտէր,
Զիս կը տանջէ անդադար.
Իմ սէրս ալ անանկ մեծ է,
Սա անտառը կը վառէ:
Բարեկամք, ինծի եկէ՛ք,
Ըսածիս լաւ ուշ դըրէ՛ք,
Զի ես միտքըս դըրեր եմ՝
Այն աղջիկը ինձ առնեմ:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԱՅՆ առաւօտուն լուսուն ձայնըն դայ դարնան ձագերուն,
Ա՜յ իմ փոքրիկ ձագեր, ձայն անուշ է քանց ամենուն.
Զաղ մի կայ՝ պուլպուլ կ'ասեն, զինչ կ'ասէ՝ ամենըն սիրոյ,
Զայնիկն ակնճռվս ընկաւ, չի դադրիր աչերս ի լալու:
Ա՜յ իմ նուռ ու նուշ բերան, նուռ ու նուշ ծաղիկ 'ւ ըռահան
Դու հազրեվարդի նման, կու բանաս դու մարդու մատան
Պակունքդ է լիմոն նման, մարըն չէ բերել քեզ նման.
Լեզուդ է պլպուլ նման, կը գովէ զինչ դարնան նման:
Հա՛յ իմ փոքրիկ շամամ, քո ծոցուդ, ա՜մ, ե՞ըր տիրանամ.
Քո ծոցդ է ի ծով նման. ծովն դեղ կ'ասեն ի ջերման.
Փոքրիկ մտերմիկ լինամ ու մտնում ի ծոցդ ու լ՚ղամ.
Ծովերուդ ալ ի դուրս ելնում՝ ուներուդ շուքն քնանամ:
Լուսի՛ն, պարծենաս, ասեն, «Լուս կուտամ աստվորիս»
Ահա հողեղէն լուսին ի դրկիս 'ւ երեսն երեսիս.
Թէ չես աւտալ այս գերուս, յետ տանիմ ըզփէշ կապալիս.
Վախեմ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստվորիս:
Սուտ է որ կ'ասեն, եղբա՛րք, թէ ընտանի կաքաւ չի լինի.
Մէկիկ մ'ես երէկ տեսայ, էրնէկ է զիր տէրն որ ունի.
Իր օնքն էր դալմով քաշած, իր բերանն շաքրով ի լի.
Զմեռելն 'ալ ի գիրկն առնու՝ ի ծոցուն է կենդանի:
Թուխ աչք ու թուխ ունք ունիս, թուխ մազեր, կուլակդ ի հոգիս.
Շալայ կարճկըտուր լինիս թէ չի դաս գիշերն ի մօտիս.
Թէ դաս գիշերն ի մօտիս, դընեմ երեսդ երեսիս,
Երեսդ երեսիս դնեմ որ դպնու քու չունչդ իմ չնչիս:

Ո՞ւր էիր, ո՞ւսկից եկար, անծանօթ ըզիս սիրեցիր.
Կրակն ի թէզնիքդ ունիր, ի ծոցիդ ի վար թափեցիր.
Քու սէրդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր
Դարձար զան հալխայ արիր 'ւ իմ սրտիս ականջն անցուցիր:
Կարմիր ու կանանչ հագնիս, զէդ նըռան հատիկ նմանիս:
Այնժամ ինձ աղւոր թվիս՝ երբ ի ձեր դուռն կանգնիս.
Դուռն ալ կիսաբաց անես, ցած հայիս մանտր ծիծաղիս,
Աչօքդ ունովդ անես, զիմ տխմար խելքս կու տանիս:
Թուխ աչք ու ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես,
Այդ ճերմակդ որ դուն ունիս, զչամամ ծիծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անդին երթաս՝ զայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ առնես.
Զամեն որդերն ուտեն. դու է՞ր զիս մահրում կու պահես:
(Կրճատուած) ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Ո՞ՆՑ ԴԻՄԱՆԱՄ

ԱՍՈՒՄ ԵՍ՝ գիմացի՛ր, ո՞նց գիմանամ, մի՞թէ ես եմ քար,
Դարտիս արա՛ մէկ ճար:
Կեանքըս մաշել ես բոլորովին, ամենը խսպառ,
Էս ցաւն է դըժուար:
Էսքան նեղութիւն ինձի մի՛ տար անողորմարար,
Ո՛վ դու իմ սիրահար:
Շատ վախտ է քաշումեմ կարօտդ, չես գալիս երես
Մինչ ե՞ըր գիմանամ ես:
Իմ անբաղդութիւնը ինձի բաւ է՝ մի՛ անիլ այդպէս,
Կեանքս արեցիր կէս:
Ողորմութիւն արա՛ աղքատիս, քաշի՛ մօտըդ տա՛ր,
Տանջիլ մի՛ չարաչար:
Վախտ որոտումես, վախտ ամպումես, վախտ մըթնումես շատ,
Անձրևումես կաթ կաթ,
Վախտ բարկանումես, վախտ նեղանումես, կամենումես ինձ չար,
Սարսափումէ աշխարհ:
Զարակամների խօսքերն քեզ խրատ ես արել,
Խիստ շատ վատ ես արել:
Ուրիշների հետ սէր անելը ատադ ես արել,
Ինձի եատ ես արել:

Ես իմ բաղդից եմ գանգատաւոր միշտ և մուղարար,
Ինձ չի տալիս դադար։
Անգին պարգևիցդ պարգևեա՛ ըստ քոյոց զքոյս՝
Բողբոջ ես նորաբոյս։
Ե՛կ, սէր իմ ազնիւ, աղաչումեմ, խղճա՛ խղճալուոյս
Տո՛ւր բաւականին յոյս։
Էլի ինքըդ էս անտանելի ցաւին գըտի՛ր հընար,
Ինձի մի՛ Թողուլ անճար։
Ցաւերդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ,
Ինձ է՞ս է քու խէրըդ։
Ինձնից աւելի, ասա՛ տեսնեմ, ո՞վ է քու տէրըդ,
Ինձ նա տայ քու սէրըդ։
Դու քու դարդերըդ լաւ գիտես, խեղճ Աղամ — Աղբար,
Խալխն ի՞նչ է խապար։

ԱՍՈՒՊ ՄԸ

ԱՑԴ աղջիկը երէկ տեսայ, Հազիւ գողցայ ակնարկ մը վառ-
Հե՛ղ մը միայն, ա՛ն ալ վերջին։ Սև աչքերէն իր տենչարծարծ,
Կարծես ասուպ մը դիւրասահ, Ու ժպի՛տ մը, որ այտէն վար
Որ կը կորչի աչքիդ առջին։ Ինծի նետել ուզեց յանկարծ։

Հազիւ դիպայ քնքուշ Թաթին
Հըրաժեշտի պատըրուակով,
Ու ըզգացի քայլ մը անդին
Սըրտէս բան մը մընաց իր քով։

ՇԱՆԹ

ՆԱԶԼՈՒԻ ՍՈՒԳԸ

ԳԱՐՈՒՆԳԸ բացվել ա, դաշտեր կանաչել,
Ծառերը ծաղկել, սարեր զարդարել,
Բլբիւլն իր վարդի սիրովն կըշտացել.
Հէնց ես, ա՛խ, սիրոյդ կարօտ մնացել. ա՛խ կարօտ մնացել։
Ինչ քար տեսնումեմ, դու ես առաջիս,
Ինչ խոտ կոխում եմ, դու միտըս գալիս.
Աղբըրի ջուրն էլ քու համն ա տալիս,
Անդի ծաղիկն էլ իմ օրը լալիս. ա՛խ, իմ օրը լալիս։

Աչքիս լիսն էլ, ա՛խ, լալով փըճացաւ,
Ա՛խ վա՛խ քաշելով, լերգըս չորացաւ.
Ո՞ւմ սիրտս բանամ, ո՞ւմ ասեմ իմ ցաւ, [կ՝տայ ցաւ։
Ասեմ էլ, եարաղ, ո՞ւմ սիրտն կ՝տայ ցաւ, ա՛խ ո՞ւմ սիրտն
Ձեմ ուզում աչքըս երկինքը քըցեմ,
Լիսնակն, արեգակն ինձ հաւար կանչեմ.
Սի՞րտ ունին նրանք, որ իմ դարդս ասեմ,
Արի՛, արեգակ իմ, քեզ կարօտ եմ, ա՛խ, քեզ կարօտ եմ։
Եարաղ, քո սիրտն էլ հետըս ցաւո՞ւմա,
Եարաղ անունըս միտըդ գալիսա,
Թէ չոր քարերը ձէնս ու սուգս լսում, [առնում։
Ո՛չ հետըս խօսում, ո՛չ սիրտըս առնում. ա՛խ, ո՛չ սիրտս
Էդ սուրբ երեսդ մէկ էլ ես տեսնիմ,
Մէկ էլ մօտդ նըստիմ, մէկ ճըտովդ ընկնիմ,
Թո՛ղ էն ժամանակն ես տամ իմ հոգին,
Մեռնիմ արևիդ՝ էդ ոտիդ տակին. ա՛խ, էդ ոտիդ տակին։
Նազլուիդ աչքը ճամբան մի՛ Թողար,
Նազլուդ մի՛ սպանիր, Նազլուդ ջըրատար.
Քեզ դուրպան ըլի, հասի՛ր նրան հաւար,
Հասի՛ր, հողը դի՛ր, հոգին հետըդ տա՛ր. ա՛խ, հոգին հետըդ տա՛ր։

Խ. ԱՐՈՎԵԱՆ

ՍԻՐԱՀԱՐՆԵՐ ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

ԼՈՒՍՆԱԿ գիշեր բոլորովին քուն չունիմ.
Ինձ տեսնողը կարծում է Թէ տուն չունիմ։
Ննջարանս սենեակիդ պատի տակն է
Կեանք խնդութիւն պարզ գիշերուայ լուսնակն է։
Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար ունքերուդ.
Արտասուքը վնաս կուտայ աչերուդ։
Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին.
Ամուսնանանք ալ չըսպասենք մեծ պասին։

ԴԻԺԱՐ հիւրնտուկ եմ ես, ա՛ռ խընծոր, արի՛ ե՛կ գիս տե՛ս.
Հազար զենեհար կուտամ որ օտար հաքիմ չը բերես.
Օտար հաքիմ ի՞նչ անեմ, իմ ամեն տարտըս դու գիտես.
Եկո՛ տամ ծոցուս բալնին, բա՛ց սրտիս դուռը մուտ ի ներս։

(Վերագրելի ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻՆ)

ԱՉԵՐ ՍԵՒՈՐԱԿ

(«Ակնապիշ անձայն»ի եղանակով)

ԱՉԵ՛Ր սեւորակ, աչե՛ր սեւորակ,
Ձեր մէջ վայլում է մի վառվառ կայծակ.
Դուք իմ սրտիս մէջ կրակ էք թափում.
Դուք էք իմ տէրը ձեզ եմ ես պաշտում:

Սեւորակ աչեր, սեւորակ աչեր,
Ձեզ մէջ տեսնում եմ մի երկնային սէր.
Դրանց սիրելու եմ մինչև իմ դագաղ,
Դոցա պէտք է ես լինիմ զոհ մատաղ:

Դուք սիրուն աչեր՝ դուք քնքուշ աստղեր,
Սև էք դարձրել իմ պայծառ օրեր.
Դուք մաշում էք ինձ անողորմագին
Եւ չէք խնայում հասակիս ծաղկին:

Շողում էք սիրով մինչ ի մահ գրաւիչ,
Լցուած էք շնորհով հոգեհան աչեր.
Ինչո՞ւ ձեր միջից այդպէս կախարդիչ
Թափվում են տաք տաք բոցեղէն կայծեր:

Քանի՛ ըսպանիչ ցանում էք վիշտեր
Սրտիս մէջ անփորձ և դեռատաղիկ.
Քանի տրտմութիւն, քանի դառն վէրքեր
Ազդում էք նորան անբոյժ, թափանցիկ:

Թափեցէ՛ք ուրեմն, բըռնաւոր աչեր,
Ձեր ողջ թունաւոր նետերն իմ վերայ.
Թո՛ղ այրեն, ուտեն իմ կեանքիս թեւեր.
Երջանիկ վայրկեան իմ համար չըկայ:

Բայց կը մոռանամ, կոյս դու նազելի,
Այն խաղաղ պայծառ ժամեր սիրալի,
Երբ մեք ձեռն ի ձեռն, լուսնակ գիշերով
Զբրուցում էինք անոյշ երգերով:

Երբ ուսիս վրայ գլուխդ խոնարհած
Իբրև մի քնքուշ, սրտակից ընկեր,
Համբուրում էինք միմեանց ցընորուած,
Խոստանալով սէր և ոսկի յոյսեր:

Դեռ չէ թառամել քո վարդն ինձ տուած,
Ի նըշան անմեղ գրկախառնութեան.
Ինձ դու մոռացար, անգութ անաստուած,
Այո մոռացար և պարտք սրբութեան:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԲԼԲՈՒԼԻ ՀԻԴ ԼԱՑ ԻՍ ԷԼԻ

ԲԼԲՈՒԼԻ հիդ լաց իս էլի, էրէսդ է չամս ու դամար,
Վարդի նըման բաց իս էլի, Ջանըս դուս գուրբայ քիզ ամար.
Վարդաջրով թաց իս էլի, Մէջքիդ ունիս օսկէ քամար.
Թաց իս էլի. Օսկէ քամար.
Զկայ քեզի նման, չկայ քեզի նման. Զկայ քեզի նման, չկայ քեզի նման
Քիզ նման, քիզ նման. Քիզ նման, քիզ նման. —
Դո՛ւն իս աննըման: Դո՛ւն իս աննըման:
Սիրունութիւնդ էլաւ արբաբ. Հաքիդ զարըն՝ ալ էս արի.
Մազիր ունիս սիմ ու շարբաբ. Բըլբուլի հիդ լալ իս արի,
Քի սազ գուրբայ զուշլու զարբաբ-Բարե էրէսիդ խալ իս արի, —
Ղուշլու զարբաբ. Խալ իս արի.
Զկայ քեզի նման, չկայ քեզի նման. Զկայ քեզի նման, չկայ քեզի նման.
Քիզ նման, քիզ նման. — Քիզ նման, քիզ նման. —
Դո՛ւն իս աննըման: Դո՛ւն իս աննըման:

Դարդըս ասիմ՝ կուլան սարիր.
Էս ի՞նչ բան էր որ դուն արիր. —
Սայեաթ-Նովուն՝ ջունուն արիր, —
Ջունուն արիր.
Զկայ քեզի նման, չկայ քեզի նման.
Քիզ նման, քիզ նման. —
Դո՛ւն իս աննման:

ՍԱՅԵԱԹ—ՆՈՎԱ.

ԳԻՇԵՐ ու ցորեկ կուլամ, ամսի իմ եարն կու լսէ՞.
Այնչափ ողորմուկ կուլամ, աչերուս արիւն կու կաթէ,
Ա՞յ, իմ հեռացած եարէն ով ինձի խաղար մի բերէ,
Հաշուէ զիմ ելած հոգին զարձուցեր 'ւ ինձի կ'բերէ:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԶԱԻԱԽՔԻ ԴՈՒՍՏԸՐ

Էն տեսակ կին
Ես իմ հոգին
Թէ աշուղն էլ ունենար՝
Առանց զէնքի,
Առանց զօրքի,
Շահերի դէմ նա կը գընար։

Սիրոյ հընոց՝
Կըրակ ու բոց՝
Էնպէս աչեր թէ ժըպտան՝
Մարդու համար
Օրուայ պէս վառ
Դիշերները լոյս կը տան։

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն՝
Էլ քեզ ո՛չ Շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ զէնք ու զօրք կը յաղթեն։

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԻՂՁԻ

Թէ ես թռչուն մ՚ըլլէի,
Երկրէ երկիր թռչէի,
Լեռներ, ձորեր կըտրէի,
Եարոջ խընդիր ելնէի։

Թէ թիթռան թևն ունէի,
Անոր խըցիկն ինկնէի,
Բարձիկն 'ի վեր նըստէի,
Բարձիցն 'ի վեր վազէի։

Թէ ես հողմունք մ՚ըլլէի,
Զով զեփիւռ կը փըչէի,
Անոր մազերուն մէջէն
Երեսիկն համբուրէի։

Թէ արև, լուսով պայծառ,
Մարմնոյն վրայ զերթ դոհար
Ճառագայթներ սըփռէի,
Հանց որ ճերմակ փալփըլար։

Թէ լուսին, եմ ամօթխած
Սիրահար՝ դիմօք ծածկած,
Ոստոց, տերևոց միջի՝
Ծաւուած աչերով կանգնած։

Զերթ թռչուն թիթեռն ու հով,
Թև թեթև, արագ ուռով,
Օրն 'ի բուն պէս արևու,
Շուրջ եկայ եարոջ հետով։

Դիշերն պէս լուսնեկի
Սիրեցի մենակ դաշտեր,
Մենակ խորշերուն միջի՝
Փաթթեցի գըրկացս 'ի վեր։

Մ. Ց. ՀԻՍԱՐԼԵԱՆ

ԵՐԳ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒ
(Տիվան)

ԶԻՍ քո սիրուն ո՛վ նազելի, հովերն առեր կը մաղէ,
Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր՝ զիս կը տաղէ.
Այդ քո սիրոյդ չի դիմացուիր, միշտ իմ հոգիս կը քաղէ.
Դէպ 'ի յայգին իմ բաղձալուոյն առնէր տանէր հովըն զիս,
Դէպ 'ի գոգն իմ սիրելուոյն փըչէր տանէր քամին զիս։

Խըղճալի այն և ցաւալի թըռչնակին ես նըման եմ,
Որ սիրոջը իմ կարմիր վարդի՝ յարակ 'ի սուդ մըտանեմ,
'Ի հող 'ի ջուր շըրջաբերիմ, խընդրեմ և ոչ գըտանեմ.
Դէպ 'ի յայգին իմ բաղձալուոյն, ևն.։

Սլաթև թըռչնակ լինէի, թըռչէի ուր և կամէի,
Դէպ ի ծոցն իմ սիրելուոյն փըչող քամին լինէի.
Թեթևիկ ամպեր լինէի, հովերու առաջն իյնայի,
Դէպ 'ի յայգին իմ բաղձալուոյն, ևն.։

(Գրուած 1880էն առաջ։ Հեղինակն անծանօթ)

ԷԳՈՒՑ

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շուրթերդ վարդանման,
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս.
Մէկ ջերմանջերմ, մէկ սառ վազում է քիրտը
Զօրութիւնս հատաւ ինձնից, սիրական։

Էգուց, էգուց լըսում եմ քու բերանից,
Ցոյսըս հատաւ, հատաւ էսքան խաբուելից.
Քունս փախաւ, փախաւ իսպառ ինձանից,
Դե՞ւ ես դու չար, թէ հրեշտակ ե՞ս անմման։

Էլ մի՛ խաբիլ ու մի՛ խաբուիլ, անձկալիս,
Էգուցները միշտ նման չեն յետ գալիս.
Վա՜յ թէ էգուց աղի արցունք թափելիս,
Դու ինձ ճամբես դէպի մըթին գերեզման։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՅՈՒՍԱՀԱՏ ՍԻՐԱՀԱՐԸ

(Տիվան)

ԳԻՇԵՐ ցորեկ կը հառաչեմ ա՛խ օրիորդ քո սիրոյդ.
Սև աչքերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ ի՞նչ օգուտ.
Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մազերուդ
Միայն քեզի սա կաղաչեմ որ ունենաս քիչ մը գութ:

Գիտես անգութ, որ իմ սրտիկս չի դիմանար այս ցաւուն,
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունքն օրն ի բուն.
Քեզի միայն կը յիշեմ, թէ քուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միտքս կուգաս, նոյնպէս և առաւօտուն:

Շատ ազուորներ թէև տեսայ, սիրաս միայն քեզ սիրեց,
Ո՞հ չեմ դիտեր, ըսէ ինծի, թէ քո սրտիդ ո՞վ տիրեց.
Ա՛խ քո խաթուն բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց,
Գերի կըլլամ քո մօրկանդ եթէ դիս զուրկ չի ձգեց:

Ուրախ էի, դիտե՞ս, օր մը ես քեզ նստեցուցի,
Սա ներսի դիս ինչ կայ չի կայ ամենն ալ հասկցուցի,
Անուշ բոյրդ դիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,
Այն ի՞նչ օր էր, ի՞նչ ժամ, խելքս գլխէս թըռցուցի:

Ո՞ւր էր որ այն աղուոր աղջիկն ըլլար ինծի ամուսին,
Եւ երջանիկ իշխանաց պէս ապրէինք մենք միասին.
Կըլորիկ, թօմպուլիկ զաւակներնիս մեր չորս դին,
Ես ծխէի իմ սիկառը, ասղնագործէր իմ տիկին:

Քեզի համար թափառական մերկ ու թշուառ եղեր եմ,
Քեզի համար հալեր մաշեր, ոսկոր ու մորթ դարձեր եմ,
Այ հերի՛ք դիս խոցես, ահա ոտքդդ ինկեր եմ,
Ըսէ՛ ինծի բառ մը երջանիկ թէ «Ես ըզքեզ կը սիրեմ»:

Ժամանակ մը ասանկ երթանք, նայինք ի՛նչ ընես պիտի,
Ուրիշի մը սիրտ պիտի տաս, վախնամ դիս ձգես պիտի,
«Ե՛լ գնա, ասկէ վերջ տէր ունիմ» ըսես պիտի,
Ըսել է այս սիրականդդ վերջը մեռցընես պիտի: Ն. Զ.

ԵՐԿՈՒ մարդ կան խղճալու, Մէկն է անկեղծ սիրողը,
Լոկ խղճալու և լալու. Մէկն է հոգին տուողը:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԴՈՒ ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ ՈՐ ՔԵԶ ԵՄ ՍԻՐՈՒՄ

«Ա՛խ Վասպուրական»ի եղանակով

ԴՈՒ չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում
Թէ դիշեր ցորեկ անքուն անհանդիստ,
Միայն քեզ համար մտածում եմ միշտ
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:
Թէ քու վառ սիրով ես հիւանդ պառկայ
Ուժս սպառած, լեզուս չորացած.
Ասեմ քո սիրուն հոգիս կաւանդեմ,
Դու չե՞ս հաւատում թէ քեզ եմ սիրում:
Բայց եթէ յանկարծ ես խելագարուիմ,
Ձեռներս ծոցիս փողոցներ շրջիմ.
Եւ սիրոյ երգը երգեմ սգալով
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:
Վերջապէս թէ քո սիրտը յաղթելով
Սպաննէ յանկարծ վերջին շունչս տալով,
Քեզ համար միայն արիւնս թափեմ
Դու չե՞ս հաւատում թէ քեզ եմ սիրում:
Թէ սառ դիակս ամփոփուած լինի
Մի քանի չոր չոր տախտակների մէջ.
Ընկերներս տանին դագաղս գրկած
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:
Ամենք դառն արցունք թափելով պիտի,
Ինծի համբուրեն հրաժեշտ տալով,
Դու չես մօտենար դէթ վերջին անգամ
Բարևդ տալու մինչև յաւիտեան:
Ծնողք, բարեկամք, երկինք և երկիր.
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,
Որ սիրեմ անկեղծ, դու էլ ինձ սիրես
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:
Երբ արև, լուսին խաւարին յանկարծ,
Երբ ինձ իջեցնեն խաւար դերեզման,
Գերեզմանիցս էլ մի ճիչ կարձակեմ,
Որ քեզ եմ սիրում, է՞լ չես հաւատում:

Օր. Վ. ՆԵՐՍԵՍԵԱՆԻ երգածներէն

ՇԻՆԱԿԱՆՔ

Աղջիկ

Ինձ աննման առիթ մըն է,
Չի փախցունենք ասի ձեռքէ.
Նըստինք սա հովանուոյս տակը,
Քեզի պատմեմ պատահածը։
Շարաթ մըն է սըրտիս մէջը
Անտանելի կը զգամ ցաւ մը.
Սըրտէս կ'ելլեն հառաչանքներ,
Ասանկ բան մ'ինձ չէր պատահէր։

Տղայ

Ինչ որ կը զգաս՝ հոգըդ մ'ընէր,
Բան չէ՝ կ'անցնի, ցուրտ ես առեր.
Տաք լաթով մը սիրտըդ դոցէ,
Քըթէդ 'ի վեր պաղ ջուր քաշէ։
Հազալ փոքնդտալ թէ որ կուգայ,
Չի հազաս նէ կ'անցնի կ'երթայ.
Քիթդ ու բերանդ ուռեցեր է,
Սրտիդ ցաւը հարբուխէդ է։

Աղջիկ

Իմ ցաւս այդ չէ։
Երբ քեզ տեսայ՝ անցաւ ցաւըս,
Ազդեց հըրճուանք մը իմ սիրտըս.
Բայց դուն ինձմէ երբ հեռանաս,
Ցաւեր կուգան իմին վըրաս։
Ոչ հաց կ'ուտեմ, ոչ կը խնդամ,
Միս մինակուկ կուլամ, կ'ողբամ.
Պատճառն ի՛նչ է, ես ալ չիյտեմ,
Բայց լաւ գիտեմ որ հիւանդ չեմ։

Տղայ

Տո՛ւր ձեռքդ ինձի, լեզուդ հանէ՛,
Լայնկէկ չունչ ա՛ռ, չիտակ կայնէ՛
Բան չէ՝ կ'անցնի, ցուրտ ես առեր
Ըստամոքսըդ շատ է լեցուեր։
Մեղրէն, մխէն ըզգուշացի՛ր,
Շարաթ մ'ամբողջ ապուր խըմէ՛.
Բայց ասոնցմէ առաջ քեզի
Մաքրողական դեղ մը պէտք է։

Աղջիկ

Իմ ցաւս այդ չէ։
Երբ դուն կ'երգես հովտին մէջը,
Սիրտս է անոր արձագանգը.
Տխրութիւն մը զիս կը պատէ,
Քու ահըդ զիս կը սթափէ։
Գլխուս տաք պաղ ջուր մը կ'ինկնայ
Ջիղերս բոլոր կը սարսըռայ.
Ուժէ ինկած ու անըզգայ՝
Ոտքըս ձեռքըս կը դողդողայ։

Տղայ

Հարցուցածիս պատասխան տո՛ւր,
Ըսէ՛, կուգա՞ս վըրադ սարսուռ.
Աչքըդ շուտ մը կը պաղի՞ մի,
Լալու ատենդ կը խնդա՞ս մի։
Ցանկարծ մէկը կը կանչե՞ս մի,
Բարձր ձայնով կը պոռա՞ս մի.
Աս չէ՝ ան չէ, հապա ի՞նչ է,
Աս բացէ՝ բաց խենդութիւն է։

Աղջիկ

Իմ ցաւս այդ չէ։
Դիշերները չեմ քընանար,
Քեզ կը տեսնեմ ես անդադար.
Երբոր քիչ մը աչքերս դոցեմ,
Ահով դողով վեր կը ցատկեմ։
Սիրտըս ուժգին կը բաբախէ,
Սաստիկ կրակ մը գլուխս կ'երթէ.
Ա՜հ բարեկամ, ըսէ՛ ինձի,
Այս ցաւերուս պատճառն ի՞նչ է։

Տղայ

Թըշուառական, հիմայ գըտայ,
Քու ցաւըդ աղէկ մը հասկցայ.
Մի՛ դանդաղի՛ր քաղաք վազէ՛,
Սոլֆաթոլի դեղ ա՛ռ, խըմէ՛։
Ջերմդ կ'անցնի, շուտ կ'ըընտանաս,
Գոմէշի չափ ուժ կ'ունենաս.
Միտքըս չեկաւ երկու ժամ է,
Քու ցաւդ ամբան սաստիկ ջերմ է։

Աղջիկ

Իմ ցաւս այդ չէ։
Թէև այդպէս ախտեր չունիմ,
Սակայն գիտեմ՝ պիտի մեռնիմ.
Դերեզմանըս ձեռքովդ փորէ՛,
Եւ զիս մէջը տեղաւորէ՛։
Դըթա՛ ինձի, ա՛հ, սիրելիս,
Կեանքս, դանձս, արևս, հոգիս.
Ջեզ կը խնդրեմ միշտ քեզ կ'ողբամ
Ախտըս սէրն է, ա՛լ լաւ կը զգամ։

Տղայ

Այդ քու ախտիդ խելք չի հասնիր,
Դընա՛ հինդ ժամ լիճը մըտի՛ր.
Թէ որ ատով ալ չանցընես,
Ուղես չուղես՝ պիտի քաշես։
Կը զարմանամ թէ ինչ է սէր.
Մինչև հիմայ չէի լըսեր.
Ըզգացածդդ չուտով պատմէ՛,
Գուցէ սաստիկ կաթուած մըն է։

Աղջիկ

Իմ ցաւս այդ չէ։
Տո՛ւր ձեռքդ ինձի դի՛ր սրտիս վրայ
Տե՛ս թէ ինչպէս կը դողդըղայ.
Մի թէ քեզ ալ ատանկ չը՞լար.
Զիս որ տեսնես բան չե՞ս ըզգար։
Մէկդի ձըգէ՛ այդ դեղերը,
Եկո՛ւր, գըրկէ՛ զիս անգամ մը.
Կ'անցնին ցաւերս, կ'առողջանամ,
Ուրախ զուարթ տուն կը դառնամ։

Տղայ

Թէ որ ատով կ'ըընտանաս նէ,
Այս շատ դիւրին ճամբայ մըն է.
Եկո՛ւր ամեն օր քեզ գըրկեմ.
Բայց չէ՝ կեցի՛ր, ես ի՞նչ կ'ըսեմ։
Ինքիր գլխուս բան չեմ ըներ,
Գուցէ գըրկելն օգուտ չըներ.
Երթանք հարցնենք մեր բըժըշկին,
Սըխալ բան մը չընենք կըրկին։

Աղջիկ

Քահանային։

Գ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

Երեկ տեսայ քեզ պարտիզում,
Ծաղկած էիր վարդի պէս.
Եւ քո պատկերդ հոգուս մէջում
Նըկարուեցաւ լուսատես։

Այն տեղ ո՛վ կոյս ինձ զերեցիր,
Այն տեղ ես քեզ սիրեցի,
Այն տեղ հոգիս ջերմ, սիրալիր
Ես քեզ ընծայ բերեցի։

Այժմ չունիմ մի ուրախ ժամ,
Տըխուր է սիրտս իբր դաղաղ.
Ես մեռանել մինչև անգամ.
Ցանկանում եմ, ո՜հ, աւա՜ղ։

Որպէս օձից ժանտ թունաւոր
Դու ինձանից փախչում ես.
Տեսանելով ինձ սըգաւոր՝
Ծիծաղում ես, խընդում ես . . . ։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԳԱՐԵԳԻՆ

Զօնուած ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂԻՇՅԵԱՆԻ
վաստակաւոր Ծանօթ Յեղափոխական Հերոս 1883-93 թուականներին
կը ճանչցուի նաև ԳԱՐԵԳԻՆ ԵԱԶՃԵԱՆ և
ԳԱՐԵԳԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ անուններով։

«Անդին ծաղիկ դեռ նոր բացուած»ի եղանակով

ԵՍ ՔԵԶ տեսի բանտին խաչուած,
Աղաչեցի առ Տէրն Աստուած,
Որ տեսանեմ քեզ ազատուած.
Անկեղծ կարիճ ես միշտ սիրուած։
Բօլորդ բարձր սէրվի չինար,
Աչքերդ կապոյտ, ընքուերդ կամար.
Դու ծնուած ես ազգիդ համար,
Անկեղծ կարիճ ես միշտ սիրուած։
Սիրտդ նման է հրեշտակի,
Զէնքերդ քեզի կը յարմարի.
Նպատակիդ հասնիս պիտի՝
Դու այդ մասին լեր անկասկած։
Թուրք տանջում է քեզ բանտին մէջ,
Նետ է ձրգում մեր սրտի մէջ.
Փոյթ չէ՛ բնաւ, մօտ է իր վերջ,
Նա կործանւում է անկասկած։
Գիշերները տխուր նստած,
Մենք քեզ յիշում ենք խիստ տրտմած.
Աղօթում ենք որ քեզ տեսնենք,
Հրացան ուսիդ նժոյդ նստած։
Դէմքդ տեսնող քեզ սիրում է,
Քեզի սիրող փրկւում է.
Քեզ հետևող երկնքում է.
Անկեղծ կարիճ ես միշտ սիրուած։
Խիստ տխուր են մեր օրերը,
Կենսամարտի մէջ է Հայ ազգ.
Ծախենք մեր թանգ շորեր, եղբարք,
Տանք զէնք գնենք, լինինք զինուոր։

Ուրախ սրտով քեզ տանջում է,
Այդ անիրաւ լկտի ազգը
Մեր սիրտ ջիգեար արիւնում է.
Հայի վրէժն է խիստ ուռած։
Ահա բացուել է արշալոյս,
Քիչէն ծագում է ջերմ արև,
Իրագործւում է քո սուրբ յոյս՝
Հայ ազգ լինում է ազատուած։

ՎԱՆԵՑԻ ՎԱՐԺՈՒՀԻ

ԱՐԵ՛, ԵԱՐ, ԱՐԵ՛

(Գօշմայ)

(Վանի գաւառաբարբառով)

(Տղու կողմէ)

ԾՈՎՈՒՆ խաւք մը կեր, անունն էր արոր.
Վըզիկն էր էրկէն, սըրտիկ սեաւոր.
Կապեմ պէզարէն, էրթամ խետ-ինոր,
Էն իմ տարդ գիտե, ես էլ գէօ ինոր։
Արե՛, եա՛ր, արե՛, խըռով մի՛ մընա,
Աստուորիս մալ ձիկ, քե չի մնայ։
Ես վէրի ոչխար վէր ցասման քարին,
Թըվանքով զարկին պըրինտար արին.
Խապրիկ մը տարէք իմ Սոնա եարին,
Թո՛ղ առնի զարման, գայ վէր իմ եարին։
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.։
Պոստան մ'եմ դրե վէր էնա դարին,
Աստուած, աւիրէր էս տարուան տարին.
Չէ, լաւ մէկ շամամ օրօխկիցի եարին,
Շամամ թոռոմաւ, իմ եար խըռովաւ։
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.։
Էրկինքն ի տմպե, կուգայ մարմար ձիւն-
Կուգայ կը թափի վէր մալուլ մարդուն.
Մէկ ե՞ս եմ մալուլ, թէ աշխարհ պիթուն,
Աստուած աւիրէր նամարտ մարդու տուն։
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.։

(Բ. Հատուած Նոյն Եղանակով)

Էս օր ի՞նչ օրի — Ուրբաթ ի պաս է,
Աղջի՛կ, քեռ գըլուխ արծըթէ թաս է,
Խորոտ եար մ՚ունեմ, սիրուն նորխաս է,
Խորած վարդապետ կասի չըխասի:
Արե՛, եա՛ր, արե՛, խըռով մի՛ մնա,
Աստնուորիս մալ ձիկ քե չի մնայ:
Իմ խէրանց իգին վարդ խազար թավուր,
Մէջ էն վարդերաց իմ վարդն ի քեաֆուր:
Շահ պըլպիւլն ինձաւ վեր իմ վարդին խիւր,
Ու երգեց անուշ տաղ խազար ու բիւր:
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.:
Էլեր ես իգին, աւուղ ջուր կուգայ,
Քեաֆուր վարդ բացուե, անուշ խոտ կուգայ.
Կարմիր չապիկով չօրօր ման կուգաս,
Վարդի խովին տակ մէկ պաչիկ ինձ տաս:
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.:
Մըտեր ես իգին, խեաղող կը քեաղես,
Շամամ ծրծուերով շաքար կը մաղես,
Ալմաստ խէնջարով սրտիկս կը տաղես,
Աչքով, ընքերով դիւ ձիկ կը մաչես:
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.:
Ծրծուերդ էր ուռե, ես ասի նուռ էր,
Արի ձեռ պարզեմ, դիւ ասիր ժուռ էր.
Թէ ժուռ թէ խոսուն, մօտ ձիկ կապուլ էր.
Քաղցր լեզուին մեռնեմ — անուշ պըլպուլ էր:
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.:
Քեամբախ Պուլանըդ, ի՞նչ անուշ տեղ էր,
Մէջ քեռ էրկու ծոց քընելու տեղ էր:
Իրկուն չում առտու զով քամի փչէր,
Իմ նազլու եարի երեսն պաչպչէր:
Արե՛, եա՛ր, արե՛, ևն.:
Աչքերդ ի թուխ թուխ ընքուերդ փարիշան,
Իմ մատի մատնիկ կուտամ քե նիշան.
Որ չես աւատար, կէօհան սուրբ Նշան,
Թարթըվներդ ի կըռընկու ճիվան: Արե՛, ևն.:

(Գ. Հատուած Նոյն Եղանակով)

ՂԱՐԻՊԻ ԵԱՐՈՋ ԵՐԳԸ

ԾԸԾՈՒԵՐՍ եումրուղ էր, զարիպս ճամբխեցի,
Ծամերս ճերմկաւ, ճամբախն աչքեցի.
Էս օր թող ձիւն գէր, վէր ձեան կարկուտ գէր,
Իմ եար թող տուն գէր, ծիկ անուշ քուն գէր:
Արե՛, եար արե՛, մալուլ մի՛ մնա,
Ղուրպաթ ես ինկե, արե՛ մի՛ մնա:
Ըստամբոլ քաղաք վէր Սև Ծովերաց,
Կարիպ եմ ճամբխէ խուռ սարերաց.
Ղարիպիս մեռնեմ, ուր ճամբխներաց,
Կարօտ մնացի թուխ-թուխ աչերաց:
Արե՛, ջան արե՛, հեռու մի մնա,
Սուտ-փուճ աստնուոր ծիկ քե չմնա:
Քեամբախ Պէյօղլի, բլէր Իւսքիւտար,
Որ չ՚անէր իմ եար վէր ծիկ դարբէդար.
Իմ զարիպ նստէր մէջ օտար փուղցին
Ա՞խ ու վա՞խ քաշի իր խոր խէրանին:
Կանչեմ, ջան արե՛, սարեր լացուցեմ,
Քե էլ զարիպի ճամբխէն դարձուցեմ:
Էլա պանձր էօտէն, ինկեա անուշ քիւն,
Կոտրաւ սրտիս սուն՝ էլա էրէրուն.
Խըեալով կացի՝ զարիպիս սիրուն,
Գիշեր ցերեկով մնացի արթուն:
Արե՛, ջան արե՛, հեռու մի՛ մնայ,
Աստնուորիս մալ, ծիկ, քե չմնա:
Ինկեայ թաղէ թաղ, ախչէ մ՚ճարեցի,
Տուի թապաղէ մ՚ թղթիկ գնեցի.
Աչքիս արցունքներն թանաք արեցի,
Շողշողուն մատքերս կալամ արեցի,
Կանչեմ, եար արե՛, խռով մի՛ մնայ, ևն.:
Իմ սրտի դարդերն ինե գըրեցի.
Վանայ չում Պօլիս ես էօրէօխկեցի,
Իմ կարիպ կարդա, սիրտն Հոգին թնդայ,
Պէյլի օր մ՚օրանց իր սև տուն դառնայ:
Կանչեմ, ջան արե՛, սարեր լացուցեմ.
Խոցերս ի խասե, վա՞խ պիտի մեռեմ:

ԱՆՆՄԱՆ ՋԱՆ

ԹԱՄԱՄ աշխարհքումս չկայ մին, աննման ջան քեզի պէս,
Ճակատը մէջրան քեզի պէս,
Ունքերը քեաման քեզի պէս,
Աչքերը մաստան քեզի պէս,
Պռոչն մարջան քեզի պէս,
Սուրահ կեարտան քեզի պէս.
Կին ո՞նց է կարող ծնանիլ մարալ ու ջէյրան քեզի պէս։

Քեզ տեսնողը ասում է սա հողեղէն չէ, հրեշտակ է
Կերպարանքդ արեգակ է,
Հուր թուչն մի լուսնակ է,
Աչքերն վառած ճրագ է,
Լեզուն դժոխքի կրակ է,
Բուխազն մեղր ու կարագ է.
Որքան վարավուրդ եմ անում, չկայ էլ ինսան քեզի պէս։

Երեսիդ մտիկ անողն ասում է քաշած պատկեր ես,
Ոտից ցգլուխ դիպ սէր ես,
Ամեն բանից գեր իվեր ես,
Իմաստալից գլխի տէր ես,
Արարիչդ թէ կը սիրես,
Սխալմունքս պիտի ներես.
Որ կամենում եմ ասել, չկայ միհրիբան քեզի պէս։

Ինչ տեղով որ անցնում ես, ասում են եարաբ սա ով է,
Հանդերձն դիպ կարմիր մով է-
Երեսն մախմարի խով է,
Հանդարտութիւնով մին ծով է,
Բերան պէտք է որ գովէ,
Անպատմելի շնորհքով է.
Կենացս մէջ չեմ տեսել սուլթան ու խոզան քեզի պէս։

Գեղեցկութիւն բաժանողից շատ փայ ստանող դու ես,
Միշտ ուրախանողն դու ես,
Ամակ իմանողն դու ես,

Դատաստան անողն դու ես,
Մարդոց ջան առնողն դու ես,
Սէյլեաղն սպաննողը դու ես.
Քամանդարների միջումն չկայ մին որսկան քեզի պէս։

Պ. Տ. Յ. ՄԱԴԱԹԵԱՆ

ՆԷՐԱ ՀԵՏ

ՀԱՄԲՈՐՅՐ մ'առի նէրանէ,
Համբո՛ւր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շողք մարէին
Հորիզոնին վերևի։

Ձեռքըս տարաւ կուրծին՝ հոն
Սիրոյ երկին մ'որոտար,
Թռչնեցայ դիրկն ես իբրև
Համբոյր մ'անհուն դալկահար։

Նէ զիս իր քով նստեցուց՝
Գորգի վրայ դալարեայ.
Հուսկ ճաճանչ մը պըլպըլար
Նէրա դիմացը վերայ։

Թոթովեցի . . . դողացի . . .
Առկ համբոյր անհամար,
«Խօսինք», ըսա՝ — ո՛հ, խօսիլ
Հատնի՛լ է լոկ ինձ համար։

Աչերու բոցն երբ մարի,
Դաղրի տրոփքն երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզօր շուրթերքն խօսին։

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փրթթեցան.
Համբոյր մ'առի դարձեալ ես
Ցանուն աստեղց ցիր և ցան։

Նէ թողուց որ վարսքն ազատ
Սիւգը դէպ զիս բերելով
Միշտ հովահրէ բըռընկած
Ճակատըս զով բոյրերով։

Ո՛հ, այն ժամը ոսկեղօծ
Անչուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերէն երկաթէ։

Մեր համբոյրներն պահեցին
Տերևներն խարշափմամբ,
Եւ շողերու տուին շուք
Աստղերն երկնից այն անամպ։

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդողացին աստղերն ալ
Մեր երդումէն ահարկու։

Լսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնութիւնն եղաւ պսակիչ՝
Մեզ պսակեց աստղերով . . . ։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԶՆԷ ՊԱՇՏԵՄ

ՃԱՌԱԳԱՅԹԻ ու վարդի
Փըթթումներով վեհասպանծ՝
Ես չը սիրեմ սա դէմքը՝
Սիրոյ ժըպտով մը օծած։

Ես չը սիրեմ՝ երբ կուսի
Մ՝աչերը զիս բուրվառեն,
Զերթ հուր ամպոց զոյդ մը հիւս
Ցօնիցը տակ մեղմօրէն։

Գիսաստղի պէս հերաբաձակ՝
Ես չը սիրեմ սա վըճիտ
Կոյսն, ոյր դէմքէն կը փըթթին
Լուսնի գալուկն ու ժըպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կոյսի մը հեզանազ,
Որ եղեմ մը կը բուրէ,
Վառէ երկինք մը երազ։

Ես չը սիրեմ սա կապոյտ
Զոյգ մը երկիններն գինովցած՝
Ոյր մէկուն մէջ պաշտի նա,
Եւ միւսին մէջ ալ Աստուած։

Ես չը սիրեմ սա ամպոյտ
Ծոյգ մը երկիններն գինովցած՝
Ոյր մէկուն մէջ պաշտի նա,
Եւ միւսին մէջ ալ Աստուած։

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները յուսաչող՝
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրտի անդունդը ծածկող

ԵՍ կը պաշտեմ զիս Պ . . . .
Ինձ կը բաւէ իր սրտին
Մէկ ճառագայթը միայն,
Եւ մէկ վարդը իր ժպտին։

Թէև սև աչքն հեղեղեն
Անթիւ աստեղց միշտ բոլոր
Իր սև ցօնից շուքին տակ
Զորս ութ օրն է նա գծեր։

Լուսինը ոչ Ներա վարսն
Եւ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը Ներա.
Ճառագայթում սիրոյի։

Ես դողդողամ իր վըրայ
Նէ իմ վըրայ դորովի,
Իսկ թէ մոռնայ զիս օր մը . . .
Ա՛հ, այն օրը քար կըտրի . . .

Պ. ԴՈՒՐԵԱՆ

Լռիկ աստղերն հեզ հայեացքով
Անապատին են նայում.
Եւ անապատն խոր թախիծով
Հոգուս մէջն է ծաւալում։

Ես խորհում եմ լռութեան մէջ, —
Խորհրդաւո՛ր ու անձա՛յն։
Եւ այն աստղերն վէրքերի պէս
Հոգուս խորքում կը տըրպան

Մայիս 17, 1917 Օր. Ա. Շ.ի Ցիշատակներից (դըրվան)։

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԿԱՐՄԻՐ վարդ կանաչ թփով, կանաչ թուփ կարմիր խնձորով,
Քանի՞ լամ ու քեզ ուզեմ, արթնանամ հոգոց հանելով.
Եթէ սիրում ես անկեղծ, ասա՛, լի եմ քո կարօտով,
Եթէ անկեղծ չես սիրում, Սուրբ Սարգիս, Աստուած քեզ խռով։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

ՇԱՂԻ, չողի ժամք էին,
Վարդից հրդեհ կար յերկինն՝
Փոխան ամպոց հուր հիւսքի
Տեղա՞ր մարգրիտ և ոսկի։

Թաւուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նուաղկոտ՝
Կը հեայիր դու տըժգոյն,
Ամրան սիւգի մը հանգոյն։

Աչերդ սիրոյ Ատրուշան . . .
Եւ մատներովդ զերդ շուշան
Կը փետտէիր ծաղիկ մը,
Ցառած չողից աչքդ երկնի։

Հիանալի թէ ի՞նչպէս
Փետտել թերթեր վարդին վէս,
Եւ թափթըփել ի քո դիրկ
Զօրէին մատունքըդ դիրդ։

Եւ նըւաղկոտ այդ աչեր
Նըշուլէին նո՞ր եթեր,
Եթե՞ր մ՝աստեղց,ուր փոխան
Հրաշէկ սըլաքք կը չողան։

Ըրիր աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ զիս գերին,
Շըղթայեցիր զիս, ա՛նգութ,
Նշոյլներովն վեհ հոգւոյդ։

Թո՛ղ սիրաս, ինձմէ գնա՝ հեռի,
Զուզեմ հոգւոյս թագուհի,
Քեզ՝ որոյ կուրծն վարդի թերթ
Այլ կրանիտ սիրան է դէթ։

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սրտերու վէրք փորել,
Եւ կը սիրես՝ երբ կարի՞
Քեզ պաշտող սիրան արիւնի։

Թաւուտքի մը չուք նըստեմ
Երբ որ մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գտնես զիս,
Տերևներէն կը խօսիս։

Երբ առուակին մէջ փաղփուն
Կ՝ուզեմ մոռնալ դէմքըդ, դուն
Դարձեալ հոն կը գըտնես զիս,
Ալիքներէն կը ժըպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Զախչախել սիրաս ու քընար,
Հովին մէջէն միշտ հընչես՝
Թէ բնաւ զիս սիրած չես։

Գըրկեմ սրտովս արդ ցուրտ հող,
Դ՝ ալ չը դիպիմ քեզի թող,
Կոյս մ՝է նաև գերեզման . . .
Կա՞ յ խորունկ սիրտ մ՝անոր նման։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԱՐԵՒ փախչում է սարից
Ահա ծագեց իմ լուսին.
Նա դառնում է աղբիւրից,
Կարմըրում է կուժն ուսին։

Տերևի տակ կոլորակ
Հասած խնձորն օրօրաց.
Եարիս ծիծը խոտորակ
Շըմաթի տակ չորորաց . . .

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՀՐԵՇՏԱԿԱՆՄԱՆ

ԿԱՊՈՑՏ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը·
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
է արեգակը:
Կանաչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ,
Բայց և ոչ մինը
Վարդի նման է·
Նա է բնութեան զարդ:
Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամեն տեղ կան շատ,
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման:

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՑ

ԿՈՒՍԱՆՔ Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք 'ի դաշտ Շաւարշան·
Պայծառ պատկեր կուսանաց,
Հայոց պըսակ պարծանաց·
Ճակատն 'ի քոյ խորոտիկ
Ի հով տուած խոպոպիք,
Տատրակ տոտամբ մանտրուքայլ
Ման գայ ի դաշտ ցողափայլ,
Մեղրը կաթէ շրթներուն·
Փայլկտան աչքըն սիրուն·
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք 'ի դաշտ Շաւարշան:
Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց դեղեցիկ
Արևանման հայելի
Արքայադըստրիկ նազելի
Սիրասընունդըն Սանդուխտ
Որում արևելքն ու մուտ
Փափաքէին սըրտմաշուկ՝
Հա՛րսն է եղեր շնորհաշուք·
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք 'ի դաշտ Շաւարշան:
(Կրճատուած)

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԵԹԷ հրամայեմ անյատակ ծովին
Եւ ծովը ամբողջ դառնայ սև թանաք,
Թէ յանկարծ գըրչի փոխուի լիովին
Բոլոր շամբերի եղէգն անքանակ:
Օ՛, չեն բաւական սիրտըս պատառող
Սէրն ու վըշտերը արտայայտելու·
Բիւրաւոր գիտուն ճգնեն, չեն կարող
Ինձ թափանցելու, սիրտըս կարդալու:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԱՂՋԿԱՑ ԵՐԳ

ՀԱՆԳԻՍՏ իմ անուշ
Անցար գնացիր·
Միայն վէրք անբոյժ
Սըրտումս թողուցիր:
Սոխակն դեղեցիկ
Կանաչ պարտիզում·
Երգելով քաղցրիկ
Ինձ չէ դրաւում:
Քեզանով միայն
Երջանիկ էի·
Տիկին ինքնիշխան
Ինձ կարծում էի:
Ցերեկը մենակ,
Փակուած սենեակում
Ողբում եմ անչադ —
Ոչ ոք չէ լսում:
Գիշեր է գալիս —
Մահիճ եմ մտնում·
Տըրտնում է հոգիս·
Քունըս չէ տանում:
Մազեր թուխ երկայն,
Աչեր գրաւիչ·
Ի՞նչ հասակ, ի՞նչ ձայն
Ի՞նչ հոգի կորիճ:
Ո՞հ սիրտս այրուած
Ողջ քեզ է կանչում·
Ողջ քո անմոռաց
Անունդ է լիշում:
Անգութ ինձ խաբեց,
Ուրիշին սիրեց,
Ա՜խ նա ինձ դեռ վա՛ղ
Պատրաստեց դագաղ:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ՍԻՐԱԿԱՆ
(Ծիծեռնակի եղանակով)

ՍԻՐԱԿԱ՞Ն, սիրակա՞ն,
Դու իմ սէր պատուական,
Մինչև ե՞րբ վըշտահար
Ես մաշվիմ սիրավառ:
Ա՜խ, մինչ ե՞րբ ես այսպէս
Մինչև ե՞րբ անընդհատ
Տաղնապիմ սառակապէս·
Հառաչեմ յուսահատ:
Սիրակա՞ն, սիրակա՞ն, ևն.:
Գիշերը քուն չունիմ,
Ցերեկը վիշտ ունիմ·
Բոլոր կեանքս անհանգիստ,
Ինձ չըկայ կաց ու նիստ:
Սիրակա՞ն, սիրակա՞ն, ևն.:
Քու սէրը ինձ մաշեց,
Եւ կեանքս խարշատեց·
Մի՞թէ դու, ո՛վ անգութ,
Չե՞ս ըզգում սիրոյս ուխտ:
Սիրակա՞ն, սիրակա՞ն, ևն.:
Մի՞թէ դու սէր օտար
Կը պաշտես քո սրտում,
Իսկ և ինձ այդ կ'առնես՝
Սեաւ մահուան դագաղում:
Սիրակա՞ն, սիրակա՞ն, ևն.:
Ո՞հ, խղճա՛, սիրակա՞ն . .
Տո՛ւր ինձ յոյս հարսնական·
Թո՛ղ կապվինք մի հոգւով,
Վայելենք սէր՝ սիրով:

Յ. Դ.

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԻՐԵՐԳ

ՏԱՆԻՔՆ ելլեմ, ի՞նչ ընեմ,
Դարվար նայիմ, ի՞նչ ընեմ.
Ես փմփուլիկ հարս մի եմ,
Մօրւօք էրիկն ի՞նչ ընեմ:

Ծառին վրայ նուշ կ՚ելլայ,
Պաղ մը տաս նէ ի՞նչ կ՚ելլայ.
Պիտի տաս նէ այսօր տուր,
Վաղուան մնայ, ուշ կելլայ:

Տանիքն ելլալս կուգայ,
Դարվար նայելս կուգայ.
Էլին տղան իմ ի՞նչս է,
Գրկել պառկելս կուգայ:

Թութ, պաստեղ, կարմիր կտաւ
Լուսընկան մարը մտաւ.
Էլին տղան իմ ինչս է,
Զբլպբխցաւ ծոցս մտաւ:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԵՐՇՆՉՈՒՄ

(Վանեցւոյ «Արի՛, եար, արի՛, խռով մի՛ մնար»ի եղանակով)

ԲԱՐՈՎ, բիւր բարով գարունն է եկել,
Եկել ու հազար ծաղկունք է բերել,
Առնեմ սէրս գնամ սար ձոր ի հանդէս,
Պճնուած բնութեան գնանք մենք ի տես.
Արի՛, սէր արի՛, բիւր ծաղկունք քաղեմ,
Քաղեմ փունջ կապեմ կուրծքդ զարդարեմ:

Գարնան հետ խօրոտ նշենիկ բացեր,
Կաքաւներ իրենց բոյնէն դուրս եկեր,
Բարձր քար թռին կակըպա կանչեն,
Ձերդ նոր հարսնացուք բիւր նազանք անեն.
Արի՛ հոգի, սէր, կաքաւ նազդ քաշեմ,
Նշենու ոստից դափնի քեզ հիւսեմ:

Անտառն է հագեր դալար գեղեցիկ.
Գլգլան առուք խոխոջն անուշիկ,
Ձեփիւռն շշնջէ, սօսափն հեշտալից,
Թռչունք գեղգեղեն երգեր բերկրալից.
Արի՛, սէր, մտնենք անտառին խորը,
Հոն հոգին խաղաղ պաշտէ իր սէրը:

Այս ի՞նչ ամիս է ամիսն է Յունիս,
Պլպուլն երգում է, վարդին սէր տալիս,
Մայրիկ ո՞հ ո՞ւր է իմ սէրն անուշիկ,
Ա՜խ, գտնեմ պաշտեմ զի՛մ սէրն քնքուշիկ.
Արի՛, հոգիս սէր, ես էլ քեզ երգեմ,
Վարդի թփին տակ օրօր քեզ մնջեմ:

Այս օր ի՞նչ օր է — Օրն է Կիւրակէ,
Տէրտէրն ի ժամուն կը պատարագէ
Առնեմ սէրս գնամ սուրբ Եկեղեցի
Վառեմ մոմ ու խունկ, գուցէ պսակէ.
Արի՛, սէր նախշուն, նարօտ ոլորեմ,
Տէրտէր թէ պսակի ճիտդ կը կապեմ:
Մուրատ կանչեցի լինի ինձ քեռւոր,
Ասաց տնաքանդ դու ես մեղաւոր,
Խորած վարդապետ հալպէթ չպսակի,
Աղջիկ սիրուն ի, չը հաս է իսկի.
Արի՛, սէր, փախենք, գնանք Հայաստան,
Հարսնիք ընեմ քէ իմէջ վարդաստան:
Հին Հայաստանի դրախտ Եդեմական,
Ընեմ հարսնեաուն քեզ, իմ սիրական,
Գեղգեղող թռչունք, ընտանի արջառ,
Հաւաքուին, կազմեն հարսանեաց կաճառ.
Արի՛, սէր, լսիր բնութեան նուագներ,
Որք են գերազանց քան Շօփին Վակներ:
Բլբուլ, դեղձանիկ կանչեմ սիրացու,
Սարկաւագ լինի փիլիսոփայն բու,
Ագռաւ ու անծեղ քաշեն ձայն բամբ վառ,
Սիրամարգն հագնի զիւր սիրուն չուրջառ.
Արի՛, սէր, մէկ տես, հոն վարդ մանուշակ,
Խնկան փոխարէն, բուրեն անուշակ:
Վաղ արշալոյսին վեր ցատկենք մէկտեղ.
Մինչ պլպլան աստղեր վառին զերդ կանդեղ.
Ծածկեմ հարսնութեան սնդուս քօղ ճերմակ,
Թև թևի տուած բարձրանանք Վարագ:
Արի՛, սէր, հոն թող ծերուկ ճգնաւոր
Օրհնէ քեզ թագ՚հի և զիս թագաւոր:
Արևագալին արև ու լուսին,
Վրկայ լինին մեր սիրոյ սուրբ ուխտին,
Այնուհետև մենք ամոլք սուրբ սիրոյ
Վայլենք սէր ու մեղր լուսին սիրահրոյ:
Արի՛, սէր փառք տանք, սիրոյ ստեղծողին
Կեանք ՝ՏԵՐՋանկութիւն մեզ պարգևողին:

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ԵՐԳ ՍԱԹԵՆԻԿԱՅ

ՈՂՈՐ մոլոր Կուրն էր գալիս Կովկաս սարերէն,
Մի աննըման ձայն էր գալիս այն միւս ափերէն։

Փախէ՛ք, աստղեր, արև ծագեց Կովկաս սարերէն,
Սաթենիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնեակէն։

Հայո՛ց քաջեր, վար դրէք զէնքեր չուտ ձեր ձեռքերէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիք դուք իմ սիրոյ սրէն։

Թեզ եմ ասո՛ւմ, քա՛ջ Արտաշէս, դո՛ւրս եկ վըրանէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ սև սև աչերէն։

Տաք տաք արիւն զուր մի թափեր անմեղ սրտերէն
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ կարմիր թշերէն,

Մի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս դունդերէն
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ սիրուն ունքերէն։

Մի՛ խրոխտար քո յաղթական սէգ սէգ քայլերէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ փունջ փունջ մազերէն,

Բա՛ց չուտ չղթան գերի բռնած եղբօրս ոտներէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս դու իմ բլբուլ յեռուներէն։

Բէն մի պահիր, վրէժ մի ուզեր իմ Ալաններէն,
Բարձր է Կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն,

Ձայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դուրս եկ մէջտեղ, թէ չես վախնում սիրոյս նետերէն։

ԱՐՏԱՇԷՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ալա՜ն, Ալա՜ն յաղթութիւնը առիր իմ ձեռքէն,
Ո՞նց դիմանամ, հալուում է թուրս քո կրակներէն։

Ալա՜ն, Ալա՜ն, փառք ու պսակս առիր իմ գլխէն,
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն։

Ա՜յ, դու ա՛նդութ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
Ո՞նց դիմանամ, չես զովացնում Կուրի ջրերէն։

Տուր չնճ թեւերդ, քո մօտ թռչեմ Կուրի վրայէն
Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճրագի լուսէն։

Հազար կըտամ, տասը հազար անթիւ դանձերէս,
Դեղ ինձ կ՚առնեմ հարս-թագուհի քաջ Ալաններէն,

Ոսկւոյ անձրև չող կըտամ քո գլխի վրայէն
Սէլ կը գնայ մարգարտէ քո ոտքի տակերէն։

Կը թափեմ Կուրը լայքա ոսկի կարմիր մորթերէն,
Ծածկուի գետը ընծայարեր բարձած ուղտերէն։

Ասաց, հեծաւ արի արքայն իր սև ձիերէն,
Արծուի նման, ճչեց անցաւ Կուր գետի մէջէն։

Հասաւ, հանեց իր կարմիր թոկ, օղն ոսկեղէն,
Ձգեց, ընկաւ Սաթենիկի մէջքի մէջ տեղէն։

Թո՛ւր, փախիր, իմ գեղեցիկ սև ձի հրեղէն,
Մէջքիդ մատաղ, որս եմ բռնել Կովկաս սարերէն,

Թո՛ւր, փախի՛ր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թևիդ վրայի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն։

ՍԱՄՈՒԷԼ ԴԻՒԼԶԱԴԵԱՆՑ

ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

ՊԱՂ աղբիւրի մօտին
Կանգնած Հայ աղջիկ-
Սափորը ուսին
Ինքն էր գեղեցիկ։

Պաղջի մօտէն անցայ
Տեսայ իմ եարին
Պառկած չուքի տակ
Գլուխն ի քարին։

Առաւօտուն թոնիր վառ
Ես մայիլ եմ քեզ համար,
Նման ես կարմիր խնձոր
Ուրի ուրի, նուրի նուրի։

Մայր իմ, զարնուեցայ
Սիրում եմ նրան,
Մի փոքր ակնարկով
Արաւ զիս վէրան։

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Սիրեմ զայդ սիրուն երեսդ, որ լուսին ի մօտն է գերի,
Պագնեմ զայդ բարկուկ պուկունքդ, որ չէքերն ի մօտն է լեղի։
Թուխ աչք ու կամար ունքերդ քան զծովն կու զարնէ ալի։
Բերնիկդ է ի շիշ նման որ վարդին ջրովն է ի լի։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՍԷՐ

Սէր՞ իմ, ով սէ՛ր, սէ՛ր,
Ա՜խ, դու անգութ սէր,
Տարար խելք միտքս՝
Գլխիս եղար տէր։
Ո՞վ իմ սիրոյ կոյս,
Հատոր իմ հոգւոյս.
Առանց քե՛զ, մի ժամ
Կեանքից չունիմ յոյս։
Մարդիկ անհամար,
Ինձ խենդ խելագար,
Կոչում են այժմուս,
Դո՛ւ եղար պատճառ։
Մինչ ե՞րբ դու այսպէս,
Ինձ պիտի տանջես,
Մինչ ե՞րբ դո՛ւ ճրագ —
Այրուող թիթեռն ես։
Ե՛կ առ իս, ե՛կ առ իս,
Գոնեա՛, առ հոգիս,
Սիրով կը բաշխեմ՝
Քեզ իմ հրեշտակիս։

Գուցէ քեզ համ.ը՝
Գրիչն արդար,
Ինձ նշանակեց —
Զոհուիլ չարաչար։
Ասա՛ դու, Լոգման,
Գիտե՞ս դու դարման,
Սիրահար սիրոը,
Բուժելու միայն։
— «Ո՛հ, չունի՛, չունի՛,
Նա դարման չունի,
Սիրահար սրտին՝
Սէրը դեղ կ՚անի»։
Սուրբ ես դու ով սէ՛ր,
Քեզ ստեղծող Տէր —
Երկնից և երկրի,
Արեց հէր և մէր։
Ես էլ քո պաշտօն՝
Առի անտրտունջ,
Միշտ սէրը պաշտել,
Մինչև վերջին շունչ։

ՐԱՖՖԻ

ԱՌԱՋԱՐԿԸ

Աչս տողերն ալ նուէր քեզի.
Զի կը սիրեմ սրտէ քեզ.
Թող անունս ալ քուկդ ըլլայ,
Բաղդս, հոգիս, սիրտ մը հեզ։

Զայն ընդունիլ կրնա՞ս արդեօք,
Կամ թէ թոյլ տալ կը հաճի՞ս,
Որ ասկէ վերջ անուանեմ քեզ
«Իմ Հոյակապ Պաշտելիս»։

Նոյն իսկ բոլէ մ՚ես պիտի չ՚ըլլամ
Հանգիստ՝ մինչև որ ըսես —
«Նուէրներդ քո պատուական
Պիտ՝ ընդունիմ սիրով ես»։

Ինձ թոյլ տուր խօսիմ ազատ՝
Գիտնան աշխարհ ու մարդիկ,
Թէ ասկէ վերջ ես քեզ դերի,
Դու՝ իմ սէրս մէկհատիկ։

Դ՚ի ինչ անհամբեր պատասխանիդ
Պիտ՝ սպասեմ, չուտ գրէ.
Բառ մը միայն բաւ է ինձի,
Հեգուած երեք Հայ գրէ։

Ինծի երեք վարդեր գրէ
Նշան անկեղծ ջերմ սիրոյ՝
Մէկին վրայ Այբ մը գծէ,
Մէկին Ցի մը, վերջնոյն Ո։

Սիրուն վարդեր կը գրկեմ քեզ,
Մէկին մէջը Այբ մը կայ.
Մին Ցի մ՚ունի, վերջինը՝ Ո,
Իսկ փունջին մէջ սիրտ մը կայ . . . :

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԿՈՅՍ ԼՈՒՍԱԳԵՂ

Յերկուի ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ ել ի տուն,
Մի՛ հարցընէք — ո՞վ էր նա
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ։

Անօթն գնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ի՞նչ օր էր, և ի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր։

Լիաճըրագ յայնմիկ տան,
Ի մարդաչատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտիս կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տուն
Զոգիս դրաւեալ լիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտափայլ մարմին էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմաց չքեղ երևոյթ,
Յօնից, աչաց, այտից գեղ.
Շրթանց լեզուին համանուէշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

ՍԻՐԱՀԱՐ ԿԻԿՕՆ

Բլբուիլ թռաւ բարձր քեսրին,
Կուլայ գարտեր իւր ջիկերին.
Ես լէ խուրպան կեղնիմ եարին,
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին։

Սիփնա տարեր դուման մըժ է,
Ես ա՞խ կենիմ, էն լէ փոշ է,
Կասեն արախ դարտին խոշ է.
Էլպէթ Կիկոն ճիպ սէրխոշ է։

Սիրուն վարդեր կը գրկեմ քեզ,
Մէկին մէջը Այբ մը կայ.
Մին Ցի մ՚ունի, վերջինը՝ Ո,
Իսկ փունջին մէջ սիրտ մը կայ . . . :

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԿՈՅՍ ԼՈՒՍԱԳԵՂ

Յերկուի ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ ել ի տուն,
Մի՛ հարցընէք — ո՞վ էր նա
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ։

Անօթն գնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ի՞նչ օր էր, և ի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր։

Լիաճըրագ յայնմիկ տան,
Ի մարդաչատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտիս կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տուն
Զոգիս դրաւեալ լիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտափայլ մարմին էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմաց չքեղ երևոյթ,
Յօնից, աչաց, այտից գեղ.
Շրթանց լեզուին համանուէշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

ՍԻՐԱՀԱՐ ԿԻԿՕՆ

Բլբուիլ թռաւ բարձր քեսրին,
Կուլայ գարտեր իւր ջիկերին.
Ես լէ խուրպան կեղնիմ եարին,
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին։

Սիփնա տարեր դուման մըժ է,
Ես ա՞խ կենիմ, էն լէ փոշ է,
Կասեն արախ դարտին խոշ է.
Էլպէթ Կիկոն ճիպ սէրխոշ է։

Ես սէրխոշ եմ սիրով էնջախ,
Քօռ ու ջահնամ աղնի արախ.
Եար դու մարես իմ տան օջախ,
Քեզնից մահրում կէնիմ ա՞խ-վա՞խ։

Եարս որ կելնէր կիջնէր պախչան.
Կու սառսռար ճայտին մարճան.
Աչից չողքէն խովցաւ իմ ջան,
Իմ հեշտ կեանքի տուեց վախճան։

Կիգեամ, եար նստե վերը խոտին,
Շուշան ցանեմ ես քեզ ոտին.
Թևքս կեղնիմ մէջիցդ գոտին
Տէրտէ կօխնա մեր նարօտին։

ՈՉ ՈՒ Է ՆՄԱՆ

ՍԻՐԵԼԻՒ՝ օգնութեան հասէ՛ք,
Նաչար գըլխես ճար տեսէ՛ք,
Սրտումս է սիրոյ բոցը,
Շատ խոր է նորա խոցը.
Հանգցնելու հնար չի կայ,
Լուցնելու ճար չի կայ:

Բաղչից վարդ քաղել ուզեցի,
Փըշով ձեռքս ծակեցի.
Անյոյս սիրով վառուած եմ,
Բընաւորից տաղուած եմ:

Այլխարհք աչքիս սևցել է,
Հոգիս մէջը դևցել է.
Ժամ, պատարագ, սրբութիւն
Ինձի էլ չեն փրկութիւն:

Աշխարհքումը մի կին էլ
Եարիս թայը չի ծնել,
Ո՛չ Սառա, ո՛չ Շամիրամ
Եղել են Զանանիս նման:

Երկայն բոյը չինարի,
Ինքը տասնըվեց տարի.
Նախշուն աչքը ջէյրանի,
Քեզ պաշտողին երանի:

Ոչ Յուդիթ և ոչ Եսթեր,
Ունեցել են քո թուխ ունքեր,
Սիրուն, նազելի Զանան,
Աչխարհքումը աննըման:

Ո՞ր թագաւոր քու սէրէն՝
Վար չի դալ իւր աթոռէն,
Ծընկովըդ չի փաթաթուիլ,
Քու սէրը չի պաղատիլ:

Աշխարհքումը չէ՛ բաղդը
Նստել արքայի թախտը.
Ձեմ ուզում ես դանձ ու թագ,
Տուէ՛ք անձկալուս մենակ.
Ոտնահողիդ ես զուրպան,
Անդին գոհար իմ Զանան:

ՎԱՐԴՆ Ի ԲԱՑԻԷ (Վանի Գաւառաբարբառով)

ՎԱՐԴՆ ի բացւէ Վանայ քեռդքի էդէստար,
Աստուած սիրես, մէկ օրօխկի դու ձիկ տար.
Քեա՛ նազերով, քեա՛ խորօտիկ, դու վի՞րն ես.
Աշխարհ գիտի, ալամ գիտի՝ դու իմն ես:

Վարդն ի բացւէ, առաւտըման խաւ խուսոց,
Իմ եար պախչէն կայնէ, երկու ձեռն ի ծոց.
Քեա՛ նազերով, ևն.:
Վարդն ի բացւէ առաւտըման շաղերով,
Իմ եար պախչէն վարդ կը քաղի մաղերով.
Քեա՛ նազերով, ևն.:
Վարդն ի բացւի Վարդէվըրան Կիրակին,
Քո սէր ինկէ մէջ իմ սրտի պուրակին.
Քեա՛ նազերով, ևն.:

ԱՐՄԷՆՈՒՀԻՆ

Ընչալոյսին էր գարնան մի օրուան,
Տեսայ մի քնքուշ էակ աննման.
Յաւերժահա՞ս թէ երկնային հրեշտակ,
Իջած վաղորդեան անապատայ բակ:

Ոսկէներ անցան, այդ սիրուն հրեշտակ,
Տխուր էր նստած կապոյտ երկնից տակ,
Աչ արմուկն ծնկան, ափը ծնօտին,
Աչքեր սևեռած, ալևոր Մասսին:

Որ սիրո՞ւն կարօտ, թէ եղբօր զէնքին,
Հարուստի փո՞ղին, թէ քաջի փառքին,
Անրոյ, անկրակ հուր վառի սրտում,
Դեռատի կեանքն ողջ ողջ խորովում:

Այդ ի՞նչ խորօտ դէմք, ի՞նչ ադու նայուածք,
Աչտերուն վրայ քեափուր վարդ բացուած,
Շրթներն կեռասի, ատամք մարգարտի,
Մազերն խոպիխոպ նման մետաքսի:

Նրա սև յօնքերն դալամով քաշած,
Մեծ Ռաֆայէլի ձեռքով նկարած.
Սև աչերն հրավառ, երեսն է պայծառ,
Վանուհւոյ նման դեղանի կայտառ: —

Ո՞վ ես դու, հոգի՛, ասա՛ դու ո՞վ ես,
«Ունի՞ս մի անուն, թէ չէ անկոչ ես»
Գանձ ոսկի անհուն զոհ կըտամ ես քեզ,
Թագ ու գաւազան նուէր բերեմ քեզ:

Դ ակունք պատուական և թանդ մարգարիտ,
Անդուս ու բեհեղ տամ քեզ ես օժիտ.
Ինձ դարձո՛ւր աչերդ, պատմի՛ր քո ցաւեր,
Հոգերդ մեծ մեծ տանին թող հովեր:

Երի՛ք, ալ հերի՛ք, տրտում հառաչես,
Վերջ տո՛ւր ցաւերուդ, որուն արժան չես.
Յոյսդ լինի Աստուած, և քեզ պահապան,
Հոգւոյդ մխիթար Սուրբ Աւետարան:

Լ՞ոնչ վեհ հայեացքով վերցուց իւր գլուխ,
Աստղիկ մ՝էր յուզուած, այն ինչ սրտաբուղխ
Առեց իւր քնարն ածեց տաղ յուզիչ,
Եւ այսպէս երգեց նա ձայնով գրաւիչ։ —

Ո՛վ դու, անփորձ պատանի,
Հարցերով զիս մի՛ տանջի.
Հայուհի մ՝եմ տարաբաղդ,
Արմէնուհին եմ դժբաղդ։

«Մայր մ՝ունէի ես միայն,
Ան ալ գնաց գիրկ մահուան.
Անմխիթար թողուց զիս,
Գերեզմանաց պահապան։»

Տուն մ՝ունէի ես ի Վան,
Ան ալ եղաւ քար ու քանդ.
Բիւր անէծք բռնաւորին,
Աչխարհն ըրաւ ինձ մի բանտ։

Սէր մ՝ունէի ես Հայկեան,
Զինուոր էր ազատութեան.
Հայրս խլեց զիս իրմից,
Մարեց ճրագս յաւիտեան։

Ակ, մարգարիտ ունիմ ես,
Թագ գաւազան չուզեմ ես.
Տո՛ւր ինձ իմ սէր սիրական,
Ամբողջ աշխարհն լինի քեզ։

Ոսկի արծաթ ոչինչ են,
Սնդուս բեհեզ կարող չեն
Սէր տալ կորած սիրոյս տեղ,
Ցոյր գերեզման զիս քաշեն։

Աստուծոյ ես կ՝աղօթեմ,
Քրիստոս ես շատ կը սիրեմ,
Աւետարան մխիթար
Սիրոյս կարօտովն մաշուեմ։

1907 ԱՌԶՈՒՆԻ

(Օր. Ա. Շ.ի Ցիշատակարանից)

ԲԱՂԴ

Ո՛Չ մի խօսք, ընկեր, ոչ մի հառաչանք,
Թո՛ղ քեզ հետ միշտ լուռ, միշտ հանր մնանք . . .
Այդպէս լուռ ու մունջ թեքուած են դեսին
Եւ ուռի ծառեր չիրմի եզերքին։

Եւ միայն այդպէս գլխակոր, տրտում
Կարդում եմ և իմ ճակատագրում
Եւ կս ցին բաղդի օրեր լուսաւոր,
Եւ որ այդ բաղդը — էլ չըկայ այսօր . . .

(Օր. Ա. Շ.ի Ցիշատակարանից)

ՁԱՐԺԵՐ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

(Թէնինիս)

ՀԵՐԻՒ վառիս էշգով, ախ քաշիս ներսանց,
Գէտահվա եառի մը ուղրին, Մխիթար.
Հիտիդ կ՝առնէ կ՝իտայ կը խնտայ դրսանց,
Սբտով շատ հեռու է քզնէնդ, Մխիթար։

Կուռքիս էրի, գէր ցորիկ կը պաշտիս,
Խնկով, մոմով դէմէ գուրպան կը կոբիս.
Ինք վրադ կը խնտայ, դուն կենայ խենիս,
Լայրդ մի է ըսի չանիդ, Մխիթար։

Էս ՝ասրի աղկիկնիրէ պախթ չունին,
Իշվալիին խիլքիդ կ՝առնին, դուրթ չունին.
Քումնինք կըսին, թէզ կը պաղին սոն չունին,
Սօնսուզներու ուղրին մերվի, Մխիթար։

Եառ էնի է մննակ քզի էղնայ Լաս,
Սրտանց սիրէ, չէղնայ խային ճիլվաքեար.
Ճավահիր է չը գտնուած անգին քար,
Նանցի ուղրին կ՝արժէ էրուիս, Մխիթար։

ԹՈՎՄԱՍ ՁԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

ՀԱՅՈՑ աղջիկներ, պալիպալամ, լ՞ոնչ անուն տամ ձեզ,
Հրեշտակ չեմ տեսած, հոգի ճան, հրեշտակ ասեմ ձեզ։

Աստուածածնայ պասի շաբթուն ես քեզի տեսայ,
Դուն խոստացար ինձ հարս լինիլ, ես քեզի փեսայ։

Մի լար դու մի լար, մեռնիմ կամար ունքերուդ,
Արտասուքներդ վնաս կուտան քու սև աչքերուդ։

Գիշերն ու ցորեկ, պալիպալամ, կ՝չըլնիմ քուն չունիմ,
Զիս տեսնողը կարծում է թէ տուն չունիմ։

Արի՛ նստենք, պալիպալամ, խորհենք միասին,
Ամուսնանանք ու չ՝սպասենք մեծ պասին։

Հաւաքեց ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ԷՆԴԷՆ Մ'ՕԼԲՈՒԻ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԱՆՈՒՇԻԿ եառ, մաղիդ խուլդով սանտրիրիս,
Հուսակ հուսակ ճէջքէդ ի վար թափիրիս.
Իշվաներով խիլքիս գլխէս առիրիս,
Բօլաղ կ'եղնամ էրիսդ էնդէն մօլբրի:
Ահ ու զառովդ դըշիր ցորիկ կը խորվիմ,
Ախ ու վախով հասրաթ քաշիմ կը մեռնիմ.
Շնորք ըրէ վարդ էրեսէդ պաղ մ'առնիմ,
Հոգւոյդ ղուրպան էրիսդ էնդէն մօլբի:
Կիրակի մ'էր ժամէն դարձած տուն կիգիր,
Վրադ կանանչ կէգի քուրք մի հագիրիր,
Պիճոնիրդի պայծառ ճակտիդ թափիրիր,
Պիճոներուդ ղուրպան էնդէն մօլբրուի:
Սէր չենք գինի, սիրոյ գերի էրեցիր,
Մաղ մաղ կրակ գլխուս վրան թափեցիր.
Անուշ աչքովդ սիրաս ու հոգիս էրվեցիր.
Անուշ աչքիդ ղուրպան էնդէն մօլբրուի:
Մէկէն իմէկ սիրաս ճանչցաւ գիմագիծդ,
Ժամ վազեցի մոմ վառեցի, սիրաս ամրիծ.
Խնդրեց Տէրէն մաս ունենալ համբուրիցդ,
Վառ աչքերուդ ղուրպան էնդէն մօլբրուի:
Ախ, չեմ կրնար ալ քո սիրոյդ տանիլ ես,
Սրտիս խայծերն բացուած վէրքեր հրակէզ,
Գթա՛ ինծի անուշ աչքովդ նայէ թէզ,
Հոգիս մատաղ, էրիսդ էնդէն մօլբի:
Սուրբ օր մի էր նորէն քեզի ժամ տեսայ,
Սրտանց ըսի դուն հարս եղի ես փեսայ.
Մում վառեցի, խունկ ծխեցի Սուրբ Մինասայ,
Վարդ այտերուդ ղուրպան, էնդէն մօլբրուի:
Սալվի պօյովդ կեցած էիր աղօթքի,
Տուտի լեզուով կը հեռէիր մաղթանքի,
Քնքոյշ մատներդ խաչեր հանէր ժամ պատարագի,
Հրեշտակ տեսքիդ ղուրպան, էնդէն մօլբրուի:
Խաչխաչ խնծուր բուսած էին թշերդդ,
Վարդի փունջեր կը թափթփէր այտերդդ,

Մուշկ ամպարի հոտեր կուգար ծոցերդդ,
Թուռունճ ծըծիդ ղուրպան, էնդէն մօլբրուի:
Ալ չեմ կրնայ տարտէդ ապրի, հերիք է,
Սիրաս մարիր հոգիս կ'առնի, չէ ճիղք է.
Խօսք տուր իդամ գլխուդ ծածկիմ ալ քողքէ,
Գլխուդ լեզուիդ ղուրպան, էնդէն մօլբրուի:

Յ. Տ.

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՏԱՓ, ՍԱՆԹՈՒՐ ՈՒ ՍԱԶ

(Թէննիս)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԳԱՐՈՒՆ իգէր հիտիդ խմենք, նազլի եառ,
Զարկուէր չալղնիր, տաֆ, սանթուր ու սազ.
Ցնճնիրէ ֆըռ ֆըռ դառնեն սազ ու սօլ.
Օթմշեր խաղերով տաֆ սանթուր ու սազ:
Պրկիչ հանենք դաթ դաթ չինով մազանիր,
Թուրլի բօհիր չարենք ալ կանանչ կարմիր.
Աթլազ տօշկի վրայ հրամիր նստիր,
Զնկրտէր գիլերով տաֆ, սանթուր ու սազ:
Ցանենք վարդեղուրէ ծխուէր հուսլպան,
Կիւլապտանն ոսկիէ արծաթ պուխուրտան.
Բարով էկար ըսենք, դուն եառ սիրական,
Օթմշին պլպուլնիր, տաֆ, սանթուր ու սազ:
Ըմմըն խօսքիդ հմմէ հըրամմէ ըսենք,
Փարվանանիր քիմի բոլուրդ օլրվէնք.
Համ խմենք էշգիթի համլէ խմցնենք,
Զ'կայնէր, զարկուէր տաֆ, սանթուր ու սազ:
Կարմրէր վարդ քիմի թշիրդի ալ ալ,
Քաղենք մէկ մէկ հատիկ, տարտիս էնենք ճար.
Հասրաթն էլլէր սրտէս կ'ըսէ Մխիթար,
Զարկուէր ծափերով տաֆ, սանթուր ու սազ:

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՕՂԻՏԱՅ, ՆԱԶԼԻ ԵԱՌԻՍ ՕՂԻՏԱՅ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԽԵՒՑԻՐԻՍ սալթ կը կանչիմ շաքար շարպաթ, Օղիտայ,
Զարկուկիմ բարակ մէջքիդ, սալվի պօյիդ, Օղիտայ·
Կոլրուիս իշվա կենիս բահնի տալիս, Օղիտայ,
Քընց լուսին մահիթապան, լուսու աստղիս, Օղիտայ·
Թշերուդ վարդ է շարուեր խաշխաշ խնծուր, Օղիտայ,
Սաղէդ մազանիր առնիմ, դառնամ սօլիդ, Օղիտայ·
Գլխուլենք լալիմ էղի, պալքէ օթնչիմ, Օղիտայ·
Գուտրաթէն աչուքներուդ քաչուիր ծարիր, Օղիտայ,
Որ հիաս խիլքէ կ'առնիս ճատուգառիս, Օղիտայ,
Մազիրդի հուսակ հուսակ թափիր վզիդ, Օղիտայ,
Գշերնիր չունիմ գարար կիլամ կանչիմ, Օղիտա՛յ·
Եա սիրտ տուր, եա հոգիս առ, քօլադիմ ես, Օղիտայ,
Մխիթար հերիք քաչէ ահուգարիդ, Օղիտայ:

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՄԻԶՆԱՅ ՎԱՐ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԽՈՐՈՏԻԿ եառ, տենիր էլի օլրուի,
Սալվի պօյիդ դուրպան էղնամ, մ'իջնայ վար·
Աղկեկնիրէ բոլուրդ առայ զբրուցէ,
Տուտի լեզուիդ դուրպան էղնամ, մ'իջնայ վար:
Շահմարան մազիրդի խուլդով սանտրիրիս
Հուսակ հուսակ կէս մէջքէդ վար թափիրիս·
Լուսու աստղիս կը չողշըղաս, կոլրուիս,
Իշվաներուդ դուրպան էղնամ, մ'իջնայ վար:
Կարմիր թշիրդի էղիր ալ վալայ,
Գինաս գարուն էկիր բացուիր վարդ լալա,
Խեցիր է Մխիթար, էղիր պուտալայ,
Եանաղներուդ դուրպան էղնամ, մ'իջնայ վար:
Ծուցիդի խնկման լուսեղէն խորան,
Արծթէ չութ զանտիլ կախուիր է վրան,
Ուխտ իգամ մոմերով կանչեմ կոյս Մարիամ,
Մատաղ կարիմ, դուրպան էղնամ, մ'իջնայ վար:

Մտիրիս տասնրհինգ տարիդ, հերիք է,
Ահուգարովդ էրվիմ, ա՛խ քաչիմ, միղք է,
Էկոյ խօսք տուր, գլխուդ ծածկեմ ալ քօղէ,
Նօշնօշներուդ դուրպան էղնամ, մ'իջնայ վար:

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐ

(Թէֆերլէմէ)

ՀԱՅ օրիորդներ, զուրպան եմ ձեզի,
Մի սիրէք օտար մարդ, Հայ ծներ էք դուք
ստեղծողին տուրք·
Ստեղծողին տուրքն էք տեսքով գեղեցիկ,
Հայ կորիճներու միայն սեփհական
սրտի սիրական
Սրտի սիրական էք, ունքերնիդ կամար,
Աստուած ինքն է քաչեր զալամով բարակ·
Սև սև աչքերնիդ քընց ծով անյատակ,
Կը ծփան ծածանին, կը քաղեն հոգի,
դութ չունին ըսկի:
Ըսկի դութ չունիք, հրեշտա՞կ էք թէ մարդ,
Սպիտակ թշերով շուշա՞ն էք թէ վարդ·
Խեցեր է Մխիթար ինկեր անապատ,
Մի լինէք անողորմ, տարտին արէք ճար
չը մնայ խեղճ:

1895 ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԻՄ ՀՈԳԻՈՑՍ հոգեկ եա՛ր, ա՛մ, քանի որ քովէդ գընացի·
Հոգիս ի մարմնոյս ելաւ, ի մահուն դուռն գընացի·
Առտընօքն մինչ իրիկուն կուլայի ու զքեզ կ'ուզէի,
Գիշերն մինչև լուսանայր, քո սիրոյն ես քուն չընայի:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԿԱՆՉԻՄ ԸՍԻՄ ԱՐՈՒՍԵԱԿ

(Տիվան)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԴՈՒՆ աղկիկ, անուշդ աղկիկ, մէկ հատիկիս, Արուսեակ,
Անուն կնքողիդ դուռպան, լուսու ատաղիս, Արուսեակ.
Սօեով սօփով անգալատ պայծառ լուսին, Արուսեակ.
Խիլքիս գլխէս առիրիս, կիլամ կանչիմ, Արուսեակ,
Էկո խօսք տուր, ինն էղնաս, հերիք, մեղք է, Արուսեակ.
Մխիթար քօլաթ էղնէր Հայոց սուլթան, Արուսեակ,
Մէկ օրուայ ատանվուր է, փուչման կեղնաս, Արուսեակ:

ԹՈՎՄԱՍ ԶԱԻԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՎԱՐԴԱՆՈՒՇ

(Տիվան)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԶԱՐԿՈՒԿԻՄ բարակ մէջքիդ, չալանկ պօյիդ ես, Վարդանուշ.
Կը քելիս, իշվա կենիս, բահնի տալիս, դուն, Վարդանուշ.
Քընց լուսին մահիթապան ստեղծողիդ էղնամ զուրպան.
Խնծուրէ եօխսէ լալա, չարուիր թշերուդ, Վարդանուշ:
Գուտրաթէն քաշուիր գինաս սիւ աչվընեերուդ ծարիրնիր,
Որ հիաս խիլքէ կ'առնիս, գերիդ եղածին նեչանիր,
Զարկիրիս խանչրներով սրտիս բացիրիս եառանիր,
Կը մեռնիմ, մեղնա արնատէր, միդք է հոգուդի, Վարդանուշ:
Ծուցիդի լուսու խորան, Աստուածածին հանդչիր վրան,
Արծթէ ջուր գանտնիր սաղ սօլ կախուիր էղնամ հայրան.
Ծունկ չօքիմ, արցունք թափիմ, տիլակ էնիմ ինք անկուման,
Մուրատիս իտայ պալքէ, էղնաս ինծի եառ, Վարդանուշ:
Մազիրդի քընց շահմարան կը շողշողան կէս մէջքէդ վար,
Սանտրիրիս վարդի ջրով, անուշ հոտով միսք ու ամպար,
Հալգայէ վիզիս ձգէ, պալքէ խելօքնայ, Մխիթար,
Հերիք է, մ'եղնայ գալըմ, միդք է հոգուդի, Վարդանուշ:

ԹՈՎՄԱՍ ԶԱԻԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԵՐՇՆԶՈՒՄ

ԳԱՐՈՒՆ է եկել, սար ու ձոր պճներ,
Դաշտ ու հովիտներ դալար են հագեր.
Տարագնաց թռչունք դառնան շարիշար,
Գառ ու ուլ մայեն հովիւք իյնան պար:

Նշենին բացուեր, դեղձին է ծաղկեր,
Բնութիւնն զարդարուած նոր հարս է դարձեր.
Մեխակ, նունուֆար, նարգիզ մանուշակ
Վարդ փթթած քնքուշ բուրեն անուշակ:

Գարունն է եկել, փչեն զով հովեր,
Սօսափեն ծառներ, կրկռան դորտեր,
Գլգլան առուք զիլ զիլ խողխոջեն,
Արածող նախիրք խուն խուն բառաջեն:

Գարուն է եկել, բերել՝ տաք արև,
Մանկունք ցատկռտեն, վազեն հև իհև.
Գարուն է եկել, բերել՝ վարդ, շուշան,
Գինեբուսուկ, կակաչ, ծաղկունք աննման:

Գարուն է եկել, սոխակ սիրահար,
Զիւր վարդին ի տես երգէ անդադար.
Գեղգեղող թռչունք բռնեն իրեն ձայն,
Դիւթէ հմայէ զերթ սիրոյ մուսայն:

Գարուն է եկել, տատրակ ծիծեռնակ,
Մնջեն, ճռուողեն, փնտռեն իրենց թառ.
Կոտ կոտ արագիլ՝ մէկ ոտին կանգնած,
Լաղ լաղ է երգում, գլուխն չեռ ձգած:

Գարուն պճնուած նոր հարս է եկեր,
Աշխարհ նոր հարսին ի տես է ելեր,
Ուտեն ու խմեն, ցնծան, վայելեն,
Բնութեան Արարիչն զԱստուած միշտ օրհնեն:

Իմ սիրան ու հոգին միայն տխուր մնայ,
Զ'ուզէ ոչ գարուն ոչ ուրախանայ.
Զ'ի իւր սէր խլեցին, տարին չատ հեռու,
Զինք թողին մինակ աւերակաց բու:

Ա՜խ, դու նազելի, իմ սէր, դու քնքուշ,
Ճակատս էր դրուած քո անուն անուշ,
Դժբաղդութեանց մէջ հերոս եղար դու,
Քեզ համար դ՝ըձայ ես ալ վայրոյ բու։

Արի՛, սէ՛ր, արի՛, հոգիս քեզ մատաղ,
Սիրուս դու սէր տո՛ւր, սիրաս ըրէ՛ խաղաղ,
Բիւր անէծք քո հօր, քեզ ինձ չտուաւ,
Իմ կեանքս քանդեց, ինձ խելառ ըրաւ։

1907 ԱՌԶՈՒՆԻ

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ԻՄ ՕՐԱԳՐԻՆ

ԶՈՒՆԻՄ ես դանձ, ակ, մարգարիտ
Քեզ պարգևեմ, Նազելիս,
Գանձս սիրտ է, անկեղծ մի սիրտ,
Եւ այդ սիրտն եմ քեզ տալիս։

Առ այդ պարգևն, ոսկին կեանքում
Երջանկութիւն չի տալ քեզ.
Բայց դու սիրող սրտիս խորքում
Եւ բաղդ և դանձ կը գտնես . . . ։

Մայիս 5, 1907 ԱՌԶՈՒՆԻ

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ԻՄ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ

Ինչ անեմ ես դանձ մարգարիտ
Զուգեմ ակունք պատուական
Որոնք չկարեն հրավառ սրտիս
Լինել մի քիչ օգնական։

Դանձ մարգարիտ, հարուստին
Պալատ զարդարեն շող շող։
Իմ սիրտն հոգին սէր է փնտռում
Սէր անձնուէր և անհուն։

Մի սուրբ օրին խաչելութեան
Փրկչի ցաւոց ու դառնութեան,
Գտայ մի սէր վեհ ու անգին,
Դանձ մարգարիտ թանկագին։

Այդ գեղեցիկ պարզ գիշերի,
Փարիլուն աստղանց կամարի
Ներքև ուխտող սիրտն եմ ուզում,
Որ հանդիստ տայ իմ հոգուցն։

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԳԱՐՈՒՆՆ է եկել բիւր ծաղիկներով
Թռչունք ճռուողեն իրենց երգերով,
Ծիծառն նորադարձ չինէ իւր բնիկ,
Սոխակն որոնէ զիւր վարդն անուշիկ։

Հայ կարիճն՝ ասես վառած տաք սիրով,
Գտնէ Հայ աղջիկն կարմիր թշերով.
Լռիկ մրմնջէ, ե՛կ դու անուշիկ,
Քընց սոխակ ծիծառ չինենք մեզ բնիկ։

Ե՛կ, դու քնքուշիկ գնանք մէկ պարտէզ,
Դիտենք ծաղիկներ թռչուններ պէս պէս
Զերթ սոխակ ու վարդ մենք էլ սէր կապենք,
Նազ մի՛ ըներ տէ, նշանտուք խօսենք։

Դառնանք ու գնանք պտտենք փողոց,
Հայ շաքարավաճառից գնեմ քեզ շարոց.
Ծամոն թէ ասես պէս պէս համադամ,
Զօֆլէդ բազմազան, գնեմ ամեն բան։

Խանութպանն փայլուն, զերթ զուարթ դարուն,
Ծախէ խարկած կուտ սիսեռ փխրտուն,
Նուշ, կաղին, պիստակ, ընկոյզ խրխրուն
Նշանտուքի հարսնից մոմեր զարդարուն

Հոգիս Հայ աղջիկ, ասա ո՞ւր ուզես
Շաքար թէ մոմեր խանութպանն տայ քեզ
Գնենք մենք տուփ տուփ շաքարներ մոմեր,
Գնանք ի ձեր տուն վառենք ճրագներ։

Կանչենք հարսնևորք դու ես պսակուենք
Վերջ ուտենք խմենք երգենք ու պարենք
Ցիշենք վարդն սոխակ, նորեկ ծիծեռնիկ,
Դիրենցմէն աղէկ չինենք մեզ անիկ։

Պ. Թ.

ՎԱՂ-ՎԱՂ քընից վերկացայ, որ գնամ, եարիս տամ բարև
Եարըս ինքը դէմս ելաւ, իր երեսն էր վարդ ու տերև։ —
Վարդը լաւ լազաթ ունի, երբ ծէգին գիպչում է արև.
Իր կանանչ կարան հանում, կարմիրը հագնում է վերև։

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՋԱԿ

ՍԻՐԱՆՈՒՇ, ԻՄՆ ԻՍ ԴՈՒՆ
(ԹԷՆԻԿ)
(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ՍԻՐՈՒՆ աղջիկ իմ սրտիսի սունն իս դուն,
Մէջքիդ բարակ պօյիդ աղկիկ իմն իս դուն.
Այսքան տարի համբերեցի չատ անուշ,
Աղուոր թէ վատ ինչ և իցէ իմն իս դուն:
Պօյիդի լաւ էրկնցիրէ տուր ընծի,
Մէջքիդի լաւ բարկըցիրէ տուր ընծի.
Ծիծերդ լաւ խոշրցիրին տուր ընծի,
Շատ աղուոր իս խիստ գեղեցիկ իմն իս դուն:
Եօթն օր ես քեզ գրկենք պառկենք չատ անուշ,
Պագնենք սիրենք հուտիդ առնենք վարդ մանուշ.
Մէջիդ քընենք չաքար շարպաթ Սիրանուշ,
Գարնան վարդի նման բացուած իմն իս դուն:
Երբեմն սիրուն դէմքիդ երբ կը նայիմ,
Գոյն տաս առնիս, վարդի գոյն իս կ'զմայլիմ.
Ես «Աչըդ»նիմ քում սիրուդի կը մեռնիմ,
Շատ աղուոր իս խիստ գեղեցիկ իմն իս դուն:

Փէթըրսըն (Հաւաքեց Ե. Գ. ԶԷՐԶԵԱՆ)

ՍԷՐՍ

ՍԻՐԵՑԻ մէկին,
Սիրով անմեղին.
Ըսի ես իրան,
Սիրաս քեզ խորան:

Նէ սէրս առաւ
Ի մէջ իր սրտի,
Դրաւ ծիրանի
Որ շուտով ծաղկի:

Բայց թեւեր առաւ,
Երկինքը թռաւ
Իմ սրտէս մի ձայն
Գոչեց ա՜խ ու վա՜խ:

Հոկ. 4, 1917 Ե. Գ. ԶԷՐԶԵԱՆ

ԵՐԵՍ ունես՝ լուսին բոլոր,
Սև խոպոպներ՝ գիշեր խոլոր,
Աչտերդ՝ զոյգ դրախտանմոր,
Աչքերդ՝ ծով խորհրդաւոր:

Ունքեր ունես՝ աղեղ լարած,
Թարթիչներըդ՝ նետ սիրասլաց,
Բացուած կակաչ՝ փոքրիկ բերան,
Մարգարիտէ մէջը շարան:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՀԱԼԱԾՈՒԱԾ ՍԷՐ

ՏԽՈՒՐ ես, այ սէր, երբ անհամարձակ
Դու դողդողում ես սիրող սրտերում.
Որպէս փոթորկից հալածուած թռչնակ,
Որ կուչ է գալիս դալար թփերում:

Եւ ո՜րքան ծանր է զսպել արտասուք,
Երբ մարդ տանջւում է թագուն սիրելով
Օ՜, ի՞նչու հոգեակ, բաղդը չարաչուք
Կապեց մեր սրտերն այդ տխուր սիրով . . . :

Սրտամաշ մի վիշտ, ծանր քարի պէս,
Ճնշում է հոգիս, նազելի՜ ընկեր
Երբ մտածում եմ, որ այդ սէրը մեզ
Աւա՜ղ, չի բերել լուսազարդ օրեր . . .

Սիրել ու տանջուել կեանքում հալածուած,
Ահա երկուսիս սև ճակատագիր.
Բայց ես կը տանջուեմ . . . և չա՜տ եմ տանջուած,
Երանի՜ միայն դու չը տանջուէիր . . . ու ինձ մոռնայիր:

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ԻՄ ՕՐԱԳՐԻՆ

ԱՅՍՔԱ՜Ն չարութիւն, այսքա՜ն անողոք
Բաղդի հալածանք և թոյն տանջանքի
Անմեղի արցունք, անզօրի բողոք . . .
Օ՜, մի՞թէ այս է կամքը երկնքի,
Մի՞թէ լոկ ծաղրի համար ես Աստուած,
Խեղճին, տկարին դու կեանք պարգևած:

(Օր. Ա. Շ.ի Յիշատակարանից)

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԵՍ աչք, դու լուս, ա՜յ հոգի, Զըկան ջուրը թէ փոխես,
Զէ՞ որ անլուս աչքն է կուր. Կ'ապրի նորում նա ազատ,
Ես ձուկ, դու ջուր, ջա՜ն հոգի, Բայց բաժանեն ինձ ու քեզ,
Ա՜խ, ո՞նց ապրի ձուկն անջուր: Ճար չը կայ ինձ մահից զատ:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԳԱՐՈՒՆ ԵՒ ՍԷՐ, ՊԼՊՈՒԼ ԵՒ ՎԱՐԴ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԳՈՒՆԱՏ դէմքէդ ու աչերէդ պալի կ'էնէ պլպուլ դուն,
Տղմղալով մնացիրիս ամբողջ գիշերը անքուն.
Ռոպէ մ'առաջ տեսնես խիզմի բացուի վարդիդի սիրուն,
Է՛յ, դարուննէ քու զատիկիդ կ'իտայ էրէսիդ խնդում:
Առաւօտեան աստղէն առաջ լեզուիդ կապէ արձակուիր,
Զունքըմ անուշ հոտով բացուիր պաշտած վարդիդի կարմիր.
Կը պլպլաս քալաշ ձէնդի վարդանոցը լեցուցիր,
Միշտ դարուն է քու զատիկիդ, կ'իտայ էրէսիդ խնդում.
Սիրահարիդ հոտուրտալով կը լեցընիս կարօտիդ,
Միշտ դառնալով բոլորտիքէ կ'առնէ գլուխէդ խելքիդ.
Կը հիանաս ու կը զգուիս ձգիս վրան աչերիդ.
Թևերովիդ ծափ կը զարկիս, կ'սքանչանաս դու պլպուլ:
Ցագաթ քարամ էրէ քիչ մը, կը պաղատիմ պլպուլ ճան,
Խնդիրք մ'ունիմ կատարելու մըն փափաքիս փութաջան,
Էն ատին դուն հեղիկ սրտիս կ'եղնաս ընկեր բարեկամ,
Համբերութեամբ դադար տալով մի քիչ ձայնիկիդ պլպուլ:
Դեռ արևի ծագելուն շատ ժամանակ կայ պլպուլ ճան,
Համբիրք ըրէ վայրիկ մը ալ առ հանգիստիդ մի անդամ.
Զվրդովի նազելիս քաղցր քունը պատուական,
Ինձի համար հոգ չէ անքուն մնալ քեզի պէս պլպուլ:
Երբ արթննայ իմ պաշտելիս և ծագէ արևն փայլուն,
Եւ երբ հրճուի Ցաւակին ալ տխրիկ սիրտը սիրազուն,
Կ'սկսիս ալ մելամաղձիկ պլպլալու դարձեալ դուն,
Վարդն ու դարուն երջանկագոյն ու լաւ կեանքդ է պլպուլ:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

«Ես եմ կարծրը՝
«Քարի նման, որին դալար չի բուսնի.
«Ես եմ բարձրը՝
«Ամպի նման, որին մարդը չի հասնի:
«Ինձ գերողն է՝
«Քաջ նետաձիգ անյաղթելի դիւցազուն.
«Ինձ սիրողն է՝
«Վեհ ու չքնաղ անզուգական սիրասուն»

Այդ քո ստեղծողիդ համար, երբ քալես՝ զուներդ մի՛ շարժեր
Այդ քո աչերուդ խնճերն շատ մարդու արիւն է խմեր,
Խօշ եար, արևուդ համար, որբուկ եմ, դիս մի՛ լացներ.
Տղայ եմ, չեմ ի կենար, զի ի քո կրակդ մի՛ ձգեր:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԳԱՐՈՒՆ ԵՒ ՍԷՐ, ՊԼՊՈՒԼ ԵՒ ՎԱՐԴ

(Սապա)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ԻՆՉՈ՞Ի տխուր կ'իլաս էվլըմ դուն պլպուլ,
Չ'եղնայ կորսըուիրէ սիրուհիդ սիրուն.
Արցունքիդ եազուդ է, կ'իդայ թէդ զարուն,
Կը հանիս մուրատիդ էվլըմ դուն պլպուլ:
Թող չ'եղնայ լեզուդի բերնիդ մէջէ լալ,
Կ'իդայ թէդ զարունէ, կը բացուի վարդ ալ,
Կը տեսնաս թէդ նորէն պաշտելիդ քալաշ,
Կը հասնիս մուրատիդ էվլըմ դուն պլպուլ:
Մի՛ խենդենար մէկէն կեցիր քի ըսիմ,
Տեսնանք ո՞ր տարա շատ է, թող ելլէ բացուիմ,
Շատոնց կը տապկուիմ էնով կը խորուիմ,
Կ'սպասեմ իր ժպտին քեզի պէս պլպուլ:
Անհամբեր կը նայիմ իմ գոնջան բացուի,
Իր մեղր խօսքերէն սիրտիսի լցուի,
Քանի որ լուս է հոգիս կը խոցուի,
Իմ սիրալէ կոտրուկէ քումուն պէս պլպուլ:
Չ'եկիր քաննի գարուն, կարնաս դուն նորէն,
Առնիլ պարտօք քիչմի իմ սիրականէն.
Քնքուշիկ թշերէն, վարդ զամղաներէն,
Կը զմայլիս, կը խնդաս, էվլըմ դուն պլպուլ:
Նստի մօտ սենեկին, խօսէ երդէ դուն,
Թող խնդա քալաշիս էրիսէ ժպտուն,
Ճարահլէ զդայ քիչ մի խնդութիւն,
Երդելուդ հիտ մէկտեղ թայի գայ գարուն:

ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

ՀԱՄԵՍՏ աղջիկ, ինձ մի՛ տանջեր չարաչար,
Չարաչար, սիրուն ջան, չարաչար:
Հոգիս հոգւոյդ մատաղ լինի ամեն ժամ,
Ամեն ժամ, սիրուն ջան, ամեն ժամ:
Ես Հայ դու Հայ, մեր մէջ չկայ խորութիւն,
Խորութիւն, սիրուն ջան, խորութիւն:
Նազլո՛ւ, նազլու, ինձ մի՛ քցեր սարէ սար,
Սարէ սար, սիրուն ջան, սարէ սար:
Մատաղ կեանքումս ինձ մի՛ դներ գերեզման,
Գերեզման, սիրուն ջան, գերեզման:

ԻՄ ՆԱԶԵԼԻ

ՀՈԳԻ կուտամ, հոգի տո՛ւր ինձ,
Իմ նազելի աչագեղ,
Սիրտս — գիշեր, սէրդ — վառ-աստղ
Թո՛ղ շողշողայ նա այնտեղ.
Սիրտս — սև արտ, սէրդ — ալ-վարդ,
Ա՛խ, թող ծաղկի նա այնտեղ:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

ՍԱՐԵՐԻ հովին մեռնիմ,
Իմ եարի պօյին մեռնիմ,
Էս օր օրան օր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ:

Ա՛խ էնիմ արուն կուգայ,
Սև սըրտիս դարուն կուգայ:
Ի՞նչ էնիմ ես էն եարը,
Պըտրտուի տարուն կուգայ:

Ա՛խ, նանի ջան նանի, Վա՛յ նանի նանի ջան:
Եա . . . ը, եա . . . ը, Եա . . . ը նանի ջան:

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

ԼՈՒՍԱԴԷՄԻՆ առուտաձորից
Աղջկերքն են կչկըչում.
Սիրեկանը էն բոլորից
Անուշիկ էր քրքըջում:

Էրնէ՛կ, ով էս լուսաբացին
Բաղցր քընից նոր զարթնում,
Պինդ կըսկել է եարի ծոցին,
Պաչ է տալի, պաչ առնում:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Մ'ԵՐԹԱՑ ՏՈՒՆ

(ՔԷՌԻՖ)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Էն քու էշգիդ էրվիր խորվիր եսի հայրան քըզի մ'երթայ տուն,
Է՞ր չիս բանայ նուռ բերանդի էվլըմ առաւ եսի ղամ,
Էկո մ'էնի զալումութին ինձի աղէկ քըզի համ,
Ակար մընաս էն տեսակէ կ'եղնամ ցաւագար վարամ,
Պէտք է փորիս քու ձեռքովդի ընձի համար գերեզման,
Քաղցր լեզուէդ չեմ կչտանայ հայրան քըզի մ'երթայ տուն:

Կեցի հիմամ սալվի պօյիդ հայրան քըզի մ'երթայ տուն,
Էն ի՞նչ քալաշ մազեր ունիս հովեր գտած իրանց խաղ,
Քանի մէկ ես սիրուդ համար ըմըն տագայ քաշեմ ա՞խ,
Անքեզի օր ես չունիմ, հէչ կ'անցնին օրերս աւա՞ղ,
Ես խորհելով ալ մաշիրիմ դարձիրիմ ոսկուր կմաղ,
Կեցի հիմամ սալվի պօյիդ հայրան քըզի մ'երթայ տուն:

Կեցի իմնամ խունի ձէնդի հայրան քըզի մ'երթայ տուն-
Զէնդ իմնողէ կ'եղնայ չըլղուն կ'էնիս ընքի խելագար,
Զեռքէ կըմնայ ալ երեսին կեանքէ կ'երթայ դարիվար,
Կը լըմննայ հանդիստ օրէ կ'ուղէ դանայ մատաստ ճար,
Բաղդէ բերէ իմնայ ձէնդի պալքաթ էղնայ վայլիտար,
Կեցի իմնամ խունի ձէնդի հայրան քըզի մ'երթայ տուն:

Ես ցաւակնիմ ալ կը մեռնիմ էն քու պայծառ արևուն,
Էկո նստինք խիստ քովէ քով խօսինք քաղցր ես ու դուն,
Պլպուլ լեզուէդ չեմ կչտանայ հայրան քըզի մ'երթայ տուն:

Դէմքիդ չափդէ ճրագ մի է հայրան քըզի մ'երթայ տուն,
Լուսցուցիրէ էս մըճլիսէ դարձուցիրէ քընց դրախտ,
Սէր էնողներ ուրախ սրտով նստածին սուսիկ ըրհաթ,
Միտքիդ դնիս բաժնուելու էլլաս մեկնելու ֆագաթ,
Սրտիր կոտրուկ դուն մըն թողիս, մըն դառնան տրտում դժբաղդ,
Դէմքիդ չափդէ ճրագ մի է հայրան քըզի մ'երթայ տուն:

(ԵՂԻՇԷ Գ. ՉԷՐՉԵԱՆԻ Հաւաքածներէն)

ՀՐԱՆՈՒՇ

(Տիվան)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

ՔՈՒ անունիդ քոզ կրակէ կ'երվէ մարդի, Հրանուշ,
Հրեղէններ թոփուածին դրած անունդ Հրանուշ,
Բոլուր աշխարհ գիտցիրէ քի չատ աղկիկիս, Հրանուշ,
Թլրսմիդ է պաշտուելու չափ դուն տեղ ունիս, Հրանուշ,
Էրէսնիրիդ բացուիր լալա եօխսէ վարդիր, Հրանուշ:
Որ մի մէկէ նազլ էնիմ էռաջ ճերմակ կիարտանդի,
Կեծակի պէս մարդ կը զարկէ խոշուր սեւուկ աչքիրդի:
Զուտ արմատին եօխսէ երկնից պայծառ աստղիր, Հրանուշ:
Փէյրինիրէ տուած են քու ճիլվանիրդի, Հրանուշ,
Զան կ'ենիս քի գոնջա մի է բացուած ատեն պրկունքիդ,
Մարդիկ կ'եղնան միշտ քիւլ ու մահվի էն ճլվլուն քիշվայիդ,
Բանձր պօյիդ նազլմումէ եօխսէ սալվի, Հրանուշ:
Քելուածքիդի հէչ խօսք չիկայ, տատրակ մի իս, Հրանուշ,
Տեսնողնիրէ թէզ կըմայլին փափուկ ձեռքիդ, Հրանուշ:
Էն քարկահի նդչէ մընակ քու մատներուդ յարմարէ,
Դիցուհի իս եօխսէ տուտի, նազլի խաթուն Հրանուշ:
Ղամզանիրիդ քալաշ քնքուշ խորոտիկին, Հրանուշ,
Համլէ սատայ ծիծաղ ժպիտ հէչ չի պակսի քու դէմքէդ,
Պա մազերուդ հուսակնիրէ քի թափթըփած վար մէջքէդ,
Ա՜խ, աճապա կիլապտունին եօխսէ սըրմայ, Հրանուշ:
Էն ի՞նչ խոնարհ դուն սիրտ ունիս հայրան կըմնամ, Հրանուշ,
Իրկուն կընուխ ինծի խօսաս չեմ կշտանայ խօսքերէդ,
Ցաւակնիմ ես, ճարտար ըսեմ կը խենդենամ հանճարէդ,
Ա՜խ քու լեզուդ շաքար է՞ մի, եօխսէ մեղր, Հրանուշ:

(ԵՂԻՇԷ Գ. ՉԷՐՉԵԱՆԻ Հաւաքածներէն)

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԹՈՅՆ կը տամ կընոջ. որ նա մեղանչի պայմանով միայն,
Որ նա այն ծընի, ինչ ծընեց մէկ օր դեղ Օլիմպիան. —
Նա ծընեց որդի, աշխարհի սարսափ, վիշտապատիծին,
Աշխարհի սարսափ, հայրենիքի փայլ Ալէքսանդր Մեծին:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՔՈՒ ՀՈԳԻՈՑՆ ՄԱՏԱՂ

(Թէենիս)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Է՞Ր իս տրտմի սիրական, քու հոգուն մատաղ,
Ըսէ ինծի միտքիդի, սիրտիդ շուտով բաց,
Գինաս քի ես չեմ ուզի աչքիդ էղնան թաց,
Զաթան չատոնց էղիրէ թէզ ինծի իմաց,
Է՞ր իս տրտմի սիրական, քու հոգուն մատաղ:
Ինչո՞ւ խռովեր հոգիդ, քու հոգուն մատաղ,
Համբիրքսի ալ հատցուցիր, խնդրեմ բաց սիրտիդ,
Ի՞նչնէ հանգստութիւնէ խանգարիր մտքէդ,
Ա՜խ, պանդէ պիլայ նետիր քու պայծառ դէմքիդ,
Է՞ր իս տրտմի սիրական, քու հոգուն մատաղ:
Զ'եղնայ միտքիդ ընկիրէ քու հոգուն մատաղ,
Էն գեղեցիկ ու վճիտ լուսնակ իրկունէ,
Ա՜հ քի տարիրէր մէկէն աչքերնուս քունէ,
Կը խնդէր տեսնելու մեր ուրախութիւնէ:
Ա՜խ, է՞ր իս տրտմի սիրական քու հոգուն մատաղ:
Գինամ չիս կարնայ մնայ, քու հոգուն մատաղ,
Դուն առանց եսի հանդիստ չունիս օր մի հէչ,
Մինձ տեղ մի բռնիրիմ ես քու սրտիդի մէջ,
Զկայ մէկմէկէն փրթիլ մինչ մեր կեանքին վերջ.
Ալ մի տրտմի սիրական քու հոգուն մատաղ:
Ցաւակնիմ նորէն թող տուր խնդում չրթունքիդ,
Տնամ սատայ էռջուան փայլէ երեսիդ.
Շատ մի մղի դուն, օր մի կ'եղնանք մենք հանդիստ,
Կը լցուի թէզ էն ատին փափաքէ սրտիդ,
Հիեայ խօսքիս սիրական, քու հոգուն մատաղ:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

Ա՜Յ մեր թաղի նոր բընակիչ, ի՛մ աննըման նռնախաչաս,
Եկար, նոր սէր բերիր քեզ հետ և գըցեցիր կրակը վերաս.
Աղաչում եմ ես Աստծուն, երբոր եկար, չ'երթաս էլ յետ,
Դընեմ երեսս քո երեսին, որ մոռանաս եկած ճամբէդ:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԳՈՎԵՍՏ ԱՐԱՔՍԻ ԴՍՏԵՐՍ

ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ինձի լոյս չէ հարկաւոր,
Քանի որ քեզ ունիմ, իմ ազնիւ հոգեակ,
աչերդ արեգակ·
Թէ ունիմ ցնծութիւն, քեզ եմ պարտաւոր,
Դու ես ինձի համար ամեն ժամանակ·
կենդանի ջուրթակ:
Բախ լինելուս պատճառը քեզ եմ համարում,
Որ տալիս ես սրտիս լարին ընդհարում,
Քիչ կը ճարուի քեզի նման այս դարում,
Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,
սիրուն աղաւնեակ:
Այտերդ անթառամ պարտիզի ծաղիկ·
Շրթունքդ շաքարից, մեղրից անուշիկ·
Վերջապէս ինձ համար, ով իմ գեղեցիկ,
Չկայ ողջ աշխարհը քեզի նմանակ,
դուն ես միայնակ:
Բաղցրախօս թռչնիկներ անհամար, անթիւ,
Անուշ ձայնիդ համար քեզ կուտան պատիւ·
Պատկերդ գրաւիչ, անունդ ազնիւ,
Դու առաւօտեան պայծառ արուսեակ,
ուշիմ ընդունակ:
Սէրդ սուրբ է միշտ անարատ ինձ համար,
Դուն համեստ ես, աւա՜ղ ես եմ անկատար·
Քեզ կը սիրեմ բոլոր կեանքիս հաւասար,
Համոզմունքս է որպէս մաքուր պարզ վտակ,
վիշտ, անապակ:
Է՞ր եմ տխուր արդեօք, քանի որ դու կաս,
Քեզ ունեցող մարդը ի՞նչ ունի պակաս·
Յուսամ չԱստուած պիտի ապրիս անվնաս,
Ջիւանիիս համար բախտով յաջողակ,
սիրելի տատրակ:

1880

Լաւ է սիրով առածը,
Քան խաչով պսակածը:

Մօր գովածը դիր փախի,
Դրկեցի գովածը առ փախ

ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՇԻԿ կոյս, բարի բախտի քու արժան լինելդ տեսնեմ·
Հոտաւէտ ծլած ու ծաղկած բուրաստան լինելդ տեսնեմ·
Բարով Աստուած կամենայ փափագիդ հասնիս, սիրուն աղջիկ,
Բոլոր չքնաղներու մէջ զարմանազան լինելդ տեսնեմ:

Սիրածդ փեսայի թեւին թեւդ տաս օղնելու մտքով,
Համեստ, առաքինի, տնտես, ժրաջան լինելդ տեսնեմ·
Դրացուդ փարթամութեան վրայ երբէք դու չը նախանձիս,
Ամենայն ժամ վիճակէդ գոհ, բաւական մնալդ տեսնեմ:

Սիրես պէտք է քու ընկերդ, քու անձիդ պէս Տիրոջ կամքով·
Շարունակ նրան հսկող քաջ պահապան լինելդ տեսնեմ·
Կաղաչեմ Ջիւանս, Աստուած, քիչ արև պարգևէ ինձի,
Զը մեռնիմ ես սիրուն դստրիկ, վարդ շուշան լինելդ տեսնեմ:

1899

ՍԻՐԵՐԳ
(Տիվան)

ԵԱՐ, քու հշխիդ կրակովը հրուում եմ փարուանի պէս,
Ինձ դու արել ես քեզ աւճի սարերու ջէյրանի պէս·
Սպիտակ բիլօռ բոխախդ տեսնողը հոգի կուտայ·
Կարմիր, բարակ պռունկներդ եաղուտի, մարճանի պէս:

Քա՞նի կարոդաւոր մարդիկ մեծ բեկ ու հարուն դարուն·
Դուանդ ծառայ են դարձել եղել են խեղճ ջունուն·
Ի՞նչ ունիս քու աչքերիդ մէջ, ի՞նչ զօրութիւն կայ թաքուն,
Դիմացդ դառի են փոխուում քաջերը ասլանի պէս:

Առանց քեզ ապրել, Ջիւանուն, գիտեցիր անհնար է·
Երեխայեն մօրը կաթից կտրելու չափ դժուար է·
Եար, քու տուած յիշատակդ կեանքիս հետ հաւասար է,
Սրտիս վրայ պահում եմ միշտ ընտիր արմաղանի պէս:

1902

Գեղէն չեն առնի որ պաղած ա,
Դրսէն կ՝առնեն որ կէսն տարած ա:

ԳԵՂԵՑԿՈՒՀԻ

Ա.ՐԵՒԻՑ ես ծնե՞լ, թէ լուսնիակից,
Որ այդքան չքնաղ ես, նազելի աղջիկ,
Վարդից ես հոտ առե՞լ, թէ մանուշակից,
Կամ թէ վարդի շաղ ես, նազելի աղջիկ։

Դիմացդ յաւերժահարսները պարում են,
Դափնեայ պսակներով քեզ զարդարում են.
Արևն ու լուսինը մերթ խաւարում են,
Դու անշամանդաղ ես, նազելի աղջիկ։

Ինչքան տխուր լինի քեզ տեսնող մարդը,
Յանկարծակի կը դառնայ անյաջող մարդը.
Կ'ուրախանայ մօտդ հանդիպող մարդը,
Շատ գեղածիծաղ ես, նազելի աղջիկ։

Ջիւանին կեանք կառնէ թուխ ունքերիցդ,
Նայելով չի յագեր քու պատկերիցդ.
Սմպած ժամանակդ բոց աչքերիցդ,
Մարդարիտ կը մաղես, նազելի աղջիկ։

1900

ԻՍԿՈՒՀԻ

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ առանց քեզ՝ տարտարոս է ինձ համար.
այց քու հետդ դժոխքումն էլ լինիմ, փառք է ինձ համար.
Երեսիցդ լոյս կը կաթէ, հոգի՛ս, ամեն առաւօտ,
Իսկուհի, ճերմակ ճակատդ արևելք է ինձ համար։

Իմ անուշիկ, առանց քեզի աշխարհը աւեր է ինձ.
Ուրիշի խօսքը, զրոյցը, վէրք բացող սուսեր է ինձ.
Երբ դու չը կաս աչքիս առաջ, ցերեկը գիշեր է ինձ,
Երկնային պայծառ արևը չուտ կը մթնէ ինձ համար։

Քեզանով հոգի են առնում հարսանիքն ու նշանը,
Սոխակի պէս ճավտալով զարդարում ես սեղանը.
Քանի որ դու չես երևում, տխուր է խրախճանը,
Քաղցր երգ ու նուագարան վատ կը հնչէ ինձ համար։

1901 ԱՇԸԳ-ՋԻԻԱՆ

ՆՈՒԷՐ

Իմ Թոռ Լուսիկին

ԴՐԱԽՏԻ տունկ, խնկի ծառ ես, Լուսաբեր,
Անուշահոտ մէկ բուրվառ ես, Լուսաբեր.
Ի՞նչ ասեմ քեզ, ի՞նչ անուն տամ, հոգեակս,
Ոսկուց ձուլուած գեղափայլ ես, Լուսաբեր։
Ծնողացդ նոր, անդրանիկ նպարը,
Նրանց անգին մարգարիտը, գոհարը,
Դու աստղերու աշխարհից ես վար իջել,
Նրա համար շատ պայծառ ես, Լուսաբեր։
Դու Գալատեանց շառաւիղ ես, մատաղ կոյս,
Ստեփանեան բուրաստանից նորաբոյս.
Արաքս գետի ալիքներից գոյացած,
Սիրոյ ծնունդ աշխոյժ գառ ես, Լուսաբեր։
Արարիչը քեզ մի եղբայր կամենայ,
Ընկեր լինի, հետդ կարդայ ու խաղայ.
Լինիս խելօք շնորհալի օրիորդ,
Համեստ քոյդ չը պատառես, Լուսաբեր։
Ջիւանուց էլ մի մաս ունիս անուշիկ,
Լևոնեանց տան արևնակից շատ մօտիկ,
Սովորում ես մօրդ լեզուն խնդալով
Թոթովելով կը բարբառես, Լուսաբեր։

1902

ԳԱԼԷՆՏԷՐԻ

ՀՐԴԷՀ գոյացաւ աչքերիցդ, ո՛վ սիրուն աղջիկ,
Աչքեց ու լափեց իմ իրանս, հայկազուն աղջիկ.
Հ՛ամեստ ու բարի ծաղկափթիթ սրբասուն աղջիկ,
Ա՛չխոյժ, ւ՛եղեցիկ, սիրտ դրաւող զգայուն աղջիկ։
Երանի նրան, ով քու դրախտիդ մէջը կապրի,
Ջ՛մեռ է թէ գարուն՝ ոչ կը չոգի, ոչ էլ կը մրսի.
Խ՛ենթ ճգնաւորը թող դնայ սարերումը ճգնի,
Թող զրկուի քու տեսութիւնից, մեծանուն աղջիկ։
Ղրկէ, օրիորդ, քու նկարդ մարդիկը տեսնեն,
Թող խնդրէ ձեռդ աղաչելով իշխանի որդին,
Բովից, քուրայից դուրս եկած ես, ոսկի ես անգին,
Նորհքի առատ ընծաներով զարդարուն աղջիկ։

Իմաստնուհի կոյս, հոգապարար տեսք ունիս հաստատ,
Սիրոյդ կրակին չեն դիմանալ երկաթ ու պողպատ,
Հարուստը դէմդ դառնում է հեք, խղճալի աղքատ,
Այնքան ուժեղ ես, բարոյապէս, վառվռուն աղջիկ:

Նախնիք քեզ համար սրբութիւնը թողել են օժիտ,
Վատդ ուզողը վայրախօս է, անմիտ է, անմիտ,
Կոյս անտառի մէջ հիանալի, տենչալի հովիտ,
Կանաչ, նորահաս, մատաղաշիթ, դալարուն աղջիկ:

Էր չես երևում, ո՞րտեղ ես դու նազելի այծեամ,
Երգիչ Զիւանուն էլ չես լիշում, մոռցեր ես անդամ,
Զմեռ կենացս կեանք նուիրող նոր գարուն աղջիկ:
1900

ՆՈՐ ԵՐԳ

ԵՕԹԸ տարի պաս պահեցի քու մասին,
Որ ես ու դու ընկեր լինենք միասին,
Ինձ խաբեցիր գտար ուրիշ ամուսին.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք, անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:
Ադաւին ի՞նչ պէտք է սիրել աղաւնեակ
Խարդախ մարդը չըգիտէ սէրն անապակ,
Քեզ չար դևիդ ես կարծեցի հրեշտակ.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք, անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:
Մինչ չըթողնես քու պատուի հետ խաղալդ,
Լոկ խօսքերով չի ուզղուիլ սխալդ,
Այսուհետև ուշ է քու ինձ սիրտ տալդ.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք, անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:
Սուր դանակ է քու երկայրի բերանդ,
Գործդ նման չէ հոչակուած անուանդ,
Ո՞ւրտեղ մնաց ինձ հետ արած պայմանդ.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք, անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:
1893

ՀՈԳՈՒՍ ՀԱՏՈՐԸ

(Փոխադրութիւն Թուրքերենից)

ԵՐԲԵՄՆ հոգուս հատորը կուլ տալիս նեկտարի ջուր,
Նուաղած աչքերովը ինձ նայում է խեղճ ու տխուր.
Բոցանիշ թերթիչները որպէս սլաք, երկայրի սուր,
Բաց ու խուսի արած միջոցին կարծում ես, թափում է հուր:

Սիրոյ սուրբ վերմակի տակը ննջում է գովականս,
Լռէ, բըլբուլիկ սիրուն, թող քիչ քնի աննմանս.
Կայծահան վառ աչքերից չանթ կարձակէ սիրականս,
Բաց ու խուսի արած միջոցին կարծում ես, թափում է հուր:

Իսկապէս սիրականիս անչէջ կրակ են աչքերը,
Կայծն ու բոցը դադարում են, քանի փակ են աչքերը,
Երբ ուրախ է հոգեակս, ատրճանակ են աչքերը,
Բաց ու խուսի արած միջոցին կարծում ես թափում է հուր:
1902 ԱՇԸԳ-ԶԻԻԱՆ

ԴՈՒՐ Զ'ԵԿԱՒ

ԶԸ նեղանաս գեղեցիկ, արարքդ ինձի դուր չեկաւ,
Այլասեռուած ես երևում, վարքդ ինձի դուր չեկաւ,
Ոչ մի սիրուն քու ունեցած գործերիդ պէս գործ չունի,
Գործ դրած կանոններդ, քու կարգդ ինձի դուր չեկաւ:

Կեղծ լացդ տուն կաւիրէ, հոգի կը հանէ ծիծաղդ,
Նման է տարտարոսին օթևանդ, կեցած թաղդ,
Զեմ կարող մօտդ մնալ, սիրտս չսիրեց կենցաղդ,
Արտաքուստ փայլուն, չինովի, սարքդ ինձի դուր չեկաւ:

Դժուար է մէկին ճարել աշխարհի մէջ քեզ հաւանող,
Հարճի պէս ոտքդ լիզող, դերու նման նազդդ տանող,
Որդիքդ արիւն խմող, ծառաներդ մարդ կլանող,
Քու սիրած հայրենիքդ, աշխարհքդ ինձի դուր չեկաւ:

Կերպարանքդ թառամեցաւ, անցկացաւ բանը բանից,
Սիրուհները դուրս հանեցին քեզի իրանց շրջանից,
Սառուցի վրայի գիր է շուտ կը խլուի քեզանից,
Ստացած կեղծ պատիւդ, արարքդ ինձի դուր չեկաւ:
1897 ԱՇԸԳ-ԶԻԻԱՆ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԷՄ ԱՐԻ

Թէ պիտի դաս, ո՛վ սիրելի, երեկոյեան դէմ արի·
Շատ մի ուշանալ, նազելի, երեկոյեան դէմ արի·
Ցերեկը փակուիր սենեակում, մի երեսար ոչ ոքի,
Շատ շատերուն չես հաճելի, երեկոյեան դէմ արի։
Սրեր նախանձելով այրել կուզէ քու պատկերդ,
Զգուշացիր, երանելի, երեկոյեան դէմ արի·
Ես ու դու, Աստուած միայն գիտնանք սրտի մեր գաղտնիքը,
Էլ չեմ ասում քեզ աւելի, երեկոյեան դէմ արի։
Գիշերը հանգիստ խաղաղ նստենք մի տեղ զրոյց անենք·
Իմ գեղեցիկ, իմ գովելի, երեկոյեան դէմ արի·
Շողերին դուրս է գալիս իւր ընթացը վատ սողունը,
Թունաւոր օձը դարչելի, երեկոյեան դէմ արի։
Թող օդը քիչ մեղմանայ, քաղցր զեփիւռը թող փչէ,
Բարձրապատիւ երևելի երեկոյեան դէմ արի·
Տարածէ բազուկներդ եղբօրդ՝ Զիւանու վզով,
Սպիտակ շուշան փարելի, երեկոյեան դէմ արի։

ՀՐԱՒԷՐ ՍԻՐՈՅ

Մի՛ այդպէս անգութ, նազելի՛ աղջի՛կ,
Ո՞հ մի սրբորեր իմ մաշած սրտիկ,
Թէ սիրտ կը կրես՝ մի՛ արհամարհեր
Իմ մելամաղձիկ դալկահար պատկեր։
Ժրպտէ՛ յայս ճակատ, նազելի՛ հոգեակ,
Յոր խոժոռեցաւ բաղդը դըժընդակ·
Յողէ՛ ու գովէ՛ խանդակաթ սիրով
Հոգւոյս անապատ՝ որ կ՝այրի քեզմով։
Սէրըդ դեղ դարման սրտիս կարեւէր,
Սիրովդ արբշիռ՝ մոռնամ իմ ցաւեր,
Ապրիմ քեզ համար՝ սիրովդ երջանիկ,
Պաշտեմ ջերմեռանդ ըզքեզ Հա՛յ աղջիկ։
Թո՛ղ իմ տրրտընջող հեծեծող քընար
Սէրըդ խայտալով երգէ խանդավառ·
Թող սէրդ մըրմընջէ հոգւոյս ամայի
Ճոխ ճոխ իմաստներ իրեն արժանի։

Թէ անկեղծ սիրովդ կ՝ուզես ըսփոփել,
Կեանքս դառնաղէտ, ուխտէ՝ դիս սիրել.
Նոյն կ՝ուխտեմ ես էլ, սիրուն հրեշտակ
Զի սիրել սիրուիլ, ա՛յս է իմ փափաք։

Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՍԻՐԱՀԱՐԻՆ ԵՂԵՐԵՐԳԸ

ՔԵԶՄՈՎ չէնցաւ, ծիծեռնի՛կ,
Լուսամուտիս կից բունիկ·
Պիտի չէնցա՞յ ա՞խ, մէկ օր,
Մաշած սրտիկս վիրաւոր։

Ի՞նչ կայ դուրսը որ այդպէս
Զուարթ երգովդ կ՝ողջունես,
Գարո՞ւն թէ սէր՝ դե՛հ, զրուցէ՛՝
Հոգւոյդ խանդը կը յուզէ։

Դարձի՛ր նայէ՛ դէպ ի ներս,
Սիրո՛ւն թըռչնիկ, տե՛ս ցաւերս·
Նայէ՛ ինչպէ՞ս աստ ան՝տես
Ցաւերս կ՝ուտեն որդի պէս։

Դալկութիւն մը դիս զարկաւ,
Ծաղիկ հասակս չորացաւ·
Իմ ցաւերուս ողորմ ձայն
Մօտաւոր մահն իմ կ՝ողբան։

Այլ ցաւերուս անտարբեր
Զուա՛րթ թըռչնիկ կ՝երգես դեռ·
Երգէ՛ երգէ՛ անընդհատ
Տարփելիդ ծոցին տակ։

Իմ սիրուհին չատ հեռի
Ո՞հ, կարօտովս կը հալի,
Զուարթ երգովդ կ՝ողջունես՝՝
Նոյն կը հալիմ ես աստէն
Զուրկ իր սիրոյ զըզուանքէն։

Կ՝երգուընցնեմ քեզ, թըռչնի՛կ,
Թըռի՛ր ներա քով մօտիկ·
Զուարթ ձայնիւ ողջունէ՛
Եւ երգերովդ ըսփոփէ՛։

Փոմ լըճացեալ արտասուքէ
Կըտցովդ ժողվէ՛ ու ցողէ՝
Իմ տարփելւոյն մաղին վրայ
Անչէջ սիրոյն իմ ընծայ։

Պատմէ՛ թէ, ի՛մ ծիծեռնակ,
Զունի հրապոյր ինձ այս կեանք·
Լոկ իւր սիրով կը շնչեմ,
Քանի՛ չընչեմ՝ կը սիրե՞մ։

Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

— ՁԵՐՄԱԿ ծոցըդ սուրբ տաճար է, լուս ծրծերըդ՝ կանթեղ վառ,
Պիտի դառնամ ես ժամկոչ, դամ էդ տաճարի լուսարար։
— Գընա՛, գընա՛, տխմա՛ր մանուկ, չեմ ուզում քեզ պէս լուսարար —
Կ՝երթաս դուրսը կը խաղաս, թողնելով տաճարըս խաւար։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Ո՛Վ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

ԱՇԽԱՐՀՆ ընդհանուր քո սիրոյդ համար քաշում է վախք
ո՛վ սիրուն սիրուն
Զի լինիլ քեզ պէս ամենայն երկիր փայլուն արուսեակ
ո՛վ սիրուն սիրուն.
Կստանա՛ս համբաւ, քիչ էլ սպասէ, կուգա՛յ ժամանակ
ո՛վ սիրուն սիրուն.
Փառք ու պատիւդ քեզի կը յանձնեն քոյրիդ նմանակ
ո՛վ սիրուն սիրուն:
Եղեմեան ծաղիկ, հայրենի հողով սնուած մանուշակ
ո՛վ սիրուն, սիրուն.
Հոգիդ անարատ, տեսքդ դեղ ազանց, մէկ հատ օրինակ
ո՛վ սիրուն, սիրուն:
Սրտիս ու հոգոյս մխիթարութիւն քեզանով է միշտ
ո՛վ գեղատու կին
Ցոյսս դրած եմ ես բոլորովին սիրելոյդ վերայ աշխարհա-
տիկին:
Ազնիւ Թագուհի, շնորհօք լեցուն, այցելութիւնդ է մեզ
կաթոգին
Զարդացած մտքով Եւրոպացու պէս, թէև ասում են
քեզ Ասիածին.
Փնտռում են քեզի շատ սիրահարներ աշխարհիս մէջ
սրտով լալագին
Բացի քեզանից թէ լո՛յս էլ լինի, չէ՛ մեզ ընդունակ
ո՛վ սիրուն, սիրուն:
Ի՞նչ կըլնի արդեօք արժան համարես դէպի մեր կողմը
դաս այցելութեան
Փափաքդ քաշող տեսնում ես, շատ կան, պատկերդ ցոյց տուր
լինինք բաւական,
Քեզ սիրողներուն դու մի չարչարեր, քիչ խնամք արա
անուշ սիրական.
Լուր պաղատանքս, ով իմ սիրուհի, վիրաւոր սրտիս
տուր դեղ ու դարման.
Ոչ դու մեզի պէս կարող ես դանել, և ոչ մենք քեզի
մէկ համանման.
Դու մեզ Թագուհի մինչև յաւիտեան՝ մենք քեզ հպատակ
ո՛վ սիրուն, սիրուն:

Ա՜խ, պիտի տեսնե՞մ ես քու երեսդ, թէ՞ պիտի մեռնիմ
թերի փափաքդ՝
Այրում ես դու ինձ ամենայն միջոց անարատ սիրոյդ
անչէջ կրակով.
Գոնէ ամիսը լուր տուր մի անգամ, տեղդ իմանանք փոքր
նամակով.
Քեզի է կապուած մի մեծ ընտանիք հաստատուն յուսով
բախտով վիճակով.
Հասկացիր միտքս թէ ի՛նչ եմ ասում, քեզի խնդրում եմ
ինչ նպատակով.
Խօսքիս համեմատ շարժուիր դեղեցիկ, գործէ շարունակ
ո՛վ սիրուն, սիրուն:

Իշխանուհիներ աշխարհիս շատ կան՝ բայց մեզ անօգուտ,
իմացիր հաստատ
Նոքա օտար են, չեն սիրեր սրտով, կեղծ ու պատիր են
արտաքին և վատ
Ուրեմն մօտ եկ ,դու իմ սիրելի, իմ արենակից տիկին
հարազատ
Քո սէրդ սուրբ է, ո՛վ սիրուն անմեղ, բարքով ու վարքով
սրտով անարատ.
Տացէ Արարիչ մնաս անխափան միշտ վեհ անունով
անկախ ու ազատ,
Խղճալի երդիչ Զիւանուս համար մնաս յաջողակ,
ո՛վ սիրուն, սիրուն:

1881

ԳԵՂԵՑԿՈՒՀՈՒՆ

ՇԱՌԱԳՈՑՆ վարդ, այտերդ խնձոր են դրախտային.
Համեստ վարքդ տեսնողը քեզ չի կարծեր հողածին.
Նրան այնպէս կը թուայ, հրեշտակ ես երկնային.
Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման դեղեցկուհուն:

Հիւանդը կառողջանայ պատկերիդ մտիկ տալով,
Ծաղկունք բարև կը բռնեն, երբ տեսնեն քեզ մանդալով.
Թռչունները դէմ կուգան, երգելով, պար խաղալով,
Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման դեղեցկուհուն:

Հոգեբուղխ բերանիցդ կենդանութիւն կը բուրէ·
Կեանք տուող, անունդ տուող կաղդուրիչ կերակուր է·
Պռունկներիդ կաթիլը անմահութեան սուրբ ջուր է,
Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Քեզ սիրում եմ սուրբ սիրով, պիտի սիրեմ, գեղեցիկ,
Ա՛խ թէ դուն էլ ինձ սիրես, ես կը լինեմ երջանիկ·
Ատամներդ մարգարիտ, շրթունքդ ակ մեղեսիկ-
Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Բոլոր մարդիկ եղբայր են քեզ համար, համեստ սիրուն·
Դու խորութիւն չը գիտես, չես ջոկել ազգ ու անուն·
Սիրոյ վճիտ պարզ ջուրը և աղբիւրը դո՛ւն ես դուն,
Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

1899 ԱՇԸԳ-ՋԻՎԱՆ

ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԲՈՂՈՔԸ

Ով, որ ինձ չի սիրել, խնդրում եմ, ասէ՛ք,
Ես նրան ո՞նց սիրեմ կամ լինիմ ընկեր·
Զէ որ ստիպելով մեզ կը վնասէք,
Շատ կը թշուառանայ յետոյ կեանքը մեր:

Փեսան ինձի՞ է պէտք թէ քեզի, հայրի՛կ,
Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ,
Երբ սիրով կապուած չեն տղայ ու աղջիկ,
Նշանը անհիմն է, պսակն անվաւեր:

Հայրի՛կ, քու բաղձանքդ բարի բաղձանք չէ,
Այդ քու տուած կեանքդ ինձ համար կեանք չէ·
Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,
Փող չահելու առարկայ չէ օգտարեր:

Տո՛ւր ինձ այն փեսային, որին կը սիրեմ,
Գնամ ուրախ սրտով կեանքս նուիրեմ·
Այնուհետև հաստատ ես պարտադիր եմ,
Քեզ համար աղօթել ցերեկ ու գիշեր:

Դու ինձ մի տար մեր թշնամու զաւակին·
Չեմ կարող դիմանալ ես այդ կրակին·
Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,
Ո՞վ ունի նրա պէս գեղեցիկ պատկեր:

Ես չեմ զատուիր իմ Հայկակից յաւիտեան,
Ինձ համար մեռած է քո ընտրած փեսան·
Կը սպանեմ ես ինձի՝ չեմ գնար նորան,
Ծնող ես, մի՛ դառնար որդուդ գլխակեր:

Մի աղջկայ բերնից լսել եմ հաստատ,
Այս խօսքերը հօր դէմ խօսում էր ազատ . . .
Թէ տեղը չը գտաւ մի աղջիկ արմատ,
Շուտով կը թառամի որպէս վարդի թեր:

1884 ԱՇԸԳ - ՋԻՎԱՆ

ՍԻՐՈՒՆԻԿ

ՄԱՔՈՒՐ նազելի կոյս, տեսքդ վառվռուն —
Ծաղիկներն են տուե՞լ, թէ աստղերը քեզ·
Հայրըդ է պարգևե՞լ, թէ մայրդ սիրուն,
Այդ կրակոտ, փայլուն, սև աչքերը քեզ:

Կուրծքդ Էլբրուսի սպիտակ ձիւն է,
Արիւնդ իշխանի մաքուր արիւն է·
Դա մի չնաչխարհիկ հարստութիւն է,
Փառքի կը հասցնէ քո պատկերը քեզ:

Դու Զիւանու հարսնացուն ես, ո՛վ քոյրիկ·
Մի՞թէ պիտի դառնաս ուրիշին հարսիկ·
Մրցում են իրար հետ քու մասին, աղջիկ,
Աշխատում են տիրել օտարները քեզ:

1902

ՆԱԶԵԼԻ ՍԻՐՈՒՀԻՍ

ԳԱԶԷԼ

ՆԱԶԵԼՈՅՍ ամպ է իջել արևի պէս վառ երեսին·
Սգաւորի պէս սև շղարշ է ծածկել պայծառ երեսին·
Աչքերի և ունքերի սևութիւնը չէ՞ր բաւական,
Որ նոքից մութ քող է առել կոյսը կայտառ երեսին:

Կաթնաբուղխ բերանը փակ, աչքերըն արդէն դալկացած,
Խաւարը գիշերի պէս պատել է պատկառ երեսին·
Մէկ տարի կայ, չեմ գիտեր, հիւանդ է, ինչ է տիրուհիս,
Կարել է, վերացել է ժպիտը խոպառ երեսին:

Մարտը դարուն գիտնալով զգույշ չը պահեց ինքնիրան,
Գոյնը որ թոթափել է, ցուրտըն է պատճառ երեսին.
Տապալեց յոյզ օդապարիկի նման, Զիւանի,
Հարաւից յանկարծ փչեց ահռելի թաթառ երեսին:
1885

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ

ՅՕԺԱՐ եմ, ինչ որ կուզէ թող անէ իմ սիրականս.
Մարմինս սուր սուսերով թող կտրատէ աննման.
Ինձի սպանելու կամք է ունեցել գովականս,
Գնալով կաղաչեմ վիզս ձգելով պատանս:

Դու միայն քու ծամերդ, սիրուն, արա ինձ կախաղան.
Աչքիս արտասուքի նման աչքէս ելաւ աշխարհը,
Ես կը քաշեմ, թագուհի, իմ ձեռքերով իմ պարանս,
Բացի Աստուած չէ կարող ոչ ոք լինել օգնականս:

Զի իմանալ եթէ մտնեմ մրջիւնի աչքումը ես,
Այնքան որ բարակացել, նիհարացել է իրանս.
Ես գինետան անկիւնը չեմ փոփոխել աշխարհի հետ,
Ժլատի չինծու դրախտից լաւ է իմ կեցարանս:

1886 ԱՇԸԳ-ԶԻՒԱՆ

ԱԶՔԵՐԴ

ՇԱՐԺԵՑԻՆ սառած իրանս վառ հրաբուխ աչքերդ,
Այրեցին երակներս, դուրս հանեցին ծուխ աչքերդ.
Ես կուզէի աշխարհը թողնել ու գնալ անապատ,
Մէկ հայեացքով ուղղութիւնս փոխեցին թուխ աչքերդ.

Քո որսկան թերթիչներդ սլաք ու գնդակ արձակող,
Հոլանի բազուկներդ մահատու նիզակ արձակող,
Երկու հրեղէն վիշապ են չանթ ու կայծակ արձակող,
Դարձրել են չատերին սև գոյնի ածուխ աչքերդ:

Բացի մէկից՝ Զիւանը բնաւ ուրիշին չէ սիրել,
Թառամած ժամանակս դու ուզում ես ի՞նձ էլ տիրել,
Հոգեհան ակնարկներդ բազում տներ են աւերել,
Զոհել են չատ հարկաւոր պիտանի գլուխ աչքերդ:

1903

ԵԱՐ-ՄԱՐ

ՅՈՒՐՆՏԻԿ-ՄՈՒՆՏԻԿ, կոկիկ-մոկիկ եար,
Սևիկ-մևիկ վառ աչերիդ կարօտ եմ.
Խորոտիկ-մորոտիկ, մանրէ մնրիկ եար,
Շեկլիկ-մեկլիկ քու պատկերիդ կարօտ եմ:
Նազ ու մազ մի անել թուխուչ-մումուչս —
Լեզկ ու մեզկ խօսքերով անուշ-մանուշս.
Պստի մստի կաքաւ, պուպուչ-մումուչս,
Խաղիդ մաղիդ, պարիդ մարիդ կարօտ եմ:
Բերան մերան երես մերես կլորակ,
Գանգուր մանգուր խուզոպներդ ոլորակ,
Գլուխ-մլուխ, ճակատ-մակատ բոլորակ,
Կամար-մամար կեռ ունքերիդ կարօտ եմ:
1902 ԱՇԸԳ - ԶԻՒԱՆ

ՆԱ ԻՄՍ Է, ԵՍ ՆՐԱՆՆ ԵՍ

Էլի միտքս վեր սլացաւ, վառ սիրով տարուած պէս.
Հոգիս քնից նոր է զարթել, աչքերը հարբած պէս.
Զըկայ ուրիշ մէկ գեղեցիկ իմ սրտիս սիրած պէս,
Նա իմս է, ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք մէկ մէկու:

Մտայ սիրելիս այգին, վարդ է բացուել վարդի մօտ,
Վառուած երգում է սոխակը աշխուժուչ վաղ առաւօտ
Ես հոգեակիս կը որոնեմ նա էլ գիտեմ ինձ կարօտ.
Նա իմս է ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք մէկ մէկու:

Երկրպագանի ապարանքի լուսամուտին եմ նայում,
Սիրտս տխուր սղտասում եմ նազելիս չի երևում,
Առանց նրան լոյս ու արև ինձ համար չէ աշխարհում,
Նա իմս է ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք մէկ մէկու:

1902 ԱՇԸԳ-ԶԻՒԱՆ

ԴԻԻՊԷԻՏ

Ի՛Մ ՍԻՐՈՒՆ, հագած հալաւդ
Գեղեցկութեանդ յարմար չէ.
Տարածուել է քո համբաւդ,
Աւա՜ղ, որ քեզի համար չէ:

Մի՛ ձդեր այլոց դլխին քօղ
Որ տեսնելու չըլնին կարող.
Զըկայ քո լուսիդ կարոտող,
Հիմա դարը շատ խաւար չէ:

Կորուցիր թանդ ժամանակդ,
Զըճանաչելով վիճակդ.
Իմանում եմ նպատակդ.
Գաղափարդ գաղափար չէ:

Քանի չի իմացուել լուրդ,
Տեղը դիր դաշոյնդ, սուրդ.
Քո կերցրած կերակուրդ,
Ախորժակի օգտակար չէ:

Ցայտնի է գործած դարանդ,
Ո՞վ չի գիտեր ծուռ է բանըդ.
Զի՛ համոզուի ստութեանդ,
Հոգի՛ս, Ջիւանը յիմար չէ:

ԱՇԸԳ-ԶԻԻԱՆ

1875-1876

ԿՕԶԱԼԻ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

Կօզալն ալ ի խօսք ելաւ, իր եարուն գանգատներ արաւ,
— Հանց մի որ սիրես դու զիս, ինձ ասէ՛ որ ես գիտնամ.
Ես ալ քընար պիտէի, զօրն ի քո գիրկըն կենայի,
Կամ ապըրշըմէ գօտի, քո մէջա՛ցըդ դիրկ ածէի.
Կամ աղբըրական ջըրիկ, գայի քո բերանդ մըտնէի.
Կամ գարնանային ցօղիկ, ես ի քո վըրադ ցօղէի.
Կամ ապըրշըմէ լալեր, քեզ հետ պէսպէս խօսէի,
(Զականջըդ դու չիս արա՛ ու լըսէ ըզիմ գանգատնիս).
Կամ քաղցր նըռան գինի, զօրն ի քո չիշան կենայի.
Դէմ գայի զլեզուդ պաղնէի,
Ես ծիծեռնիկ պիտէի, բունըս ի ձեր տանըն դընէի,
Զաղ հանէի, ճըռվըռայի, ու սիրովդ կըշտանայի,
Ի առունէն մինչ իրիկուն ի երեսդ ի վար հայէի.
Իրիկունը երբ որ մթնէը գայի քո ծոցըդ մտնէի.
Գիշերն մինչ որ լուսանայը, ես ի քո ծոցըդ պառկէի.
Երբ որ առաւօտանայը, ես ի բունըս ճըռվըռայի.
Երբ որ լուսըն լուսանայը, աշխարհիս վրայ ժուռ գայի:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՎԵՐԳԻՆԷ

Վառ վառ աչքերով Աստղիկ մը գտայ,
Երկնից էր ինկած երկրիս այս վրայ.
Բարունիի պէս ճառէր ու խօսէր,
Գարնան զերդ սոխակ երգէր ու մնջէր:

Ի՛նչ նայուածք աղու, ի՞նչ ժպիտ անուշ
Նրա այտերին վարդ փթթած քնքուշ.
Էդ բոսոր շրթնից մեղր կը ծորէր,
Նրա մէկ նայուածք քեզ ուժդին վառէր:

ԱՌԶՈՒՆԻ

ՍԷԼՎԻՆԱԶ

ՁԻՆԱՐԻ պէս պօյդ, պուսրդ, Սէլվինազ,
Հաքնիս կապես դէմս իլվան կենես կը.
Սիրես կը խաղ ու տաղ, քեմենչէ ու սազ,
Կերթան պաղչաները սէյրան կենես կը:
Փէնճէրեցէն կանչես, դաւաթ կենես տուն,
Էչխիդ զարնուողին չես թողնի մաղպուն.
Հազար էրնէկ կուտամ էն տղամարդուն,
Օր դու կուզես, ջանիդ ջանան կենես կը:
Յերեսդ տեսնողին պէտ չէ հաց ու միս,
Պաչարի ամբար ես ամեն ինչ ունիս.
Իսմրը կ՝աւելցնես ում հետ օր էղնիս,
Սրտով էխտիարին ջիւան կենես կը:

ԱՇԸԳ-ԶԻԻԱՆ

1896

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

ԵՐԵՍԴ է լուսին նման ու զիլֆերդ ի դատիր գիշեր.
Քնքեր բեհեշտի խնծոր 'ւ ի ծովուն տուած քեզ աչեր.
Ուներ կեռումեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր,
Բերանդ է լալէ ֆըղան՝ մէջն ի լիք է մարգարիտներ:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԷՎԼԸՄ ԴՈՒՆ

(Տիվան)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Ա՛հ ցաւիրէ տուման գլխուս չունին դադրում ի՞նչ էնիմ,
Գանկիս մէջէ հուր կը տեղան հէչ չին դադրի ի՞նչ էնիմ.
Ալավ մի է բանկիրէ կը վառէ գիս ի՞նչ էնիմ,
Աման մէկէն պիտի պայթի դարման չկայ ի՞նչ էնիմ.
Հոգւոյս հատոր, պարլըմ ձեռքիդ դիր ճատկիսի էվլըմ դուն:

Հէչ հանդարտ չէ սիրտիս, վախնամ սիւ անցնի իմ օրիրէ,
Կը նեղուիմ չատ սատիկ կերպով էս ի՞նչ դժբաղդ օրիր է,
Ա՛հ ու զարովիդ կեցիրիմ, գիս կը մաշէ էս օրիրէ,
Ամաղ աչքիս թէդ մըն տըսնայ միր հարսնըքի օրիրէ.
Հոգւոյս հատոր, նեղուած սիրտիս մխիթարէ էվլըմ դուն:

Իմ հոգիսի խռովիր է- չկայ խղճուկ ինծմէ զատ.
Կեանքիդ հետէ սիրական մըլ ունի՞ս ամաղ ինծմէ զատ.
Քըզի համար սատայ խորհող չկայ մէկմըլ ինծմէ զատ,
Գլուխդ ցաւցած ատին չկայ նստող լացող ինծմէ զատ.
Հոգւոյս հատոր, խռով հոգիս հանդարտեցու էվլըմ դուն:

Թէդ կը չորնայ ծաղկէ կեանքիս ա՛հ մի մնայ անտարբեր,
Ժամանակն է ամուսնանալ ալ մի խորհի անտարբեր,
Կ՝անցնին անգին միր օրիրէ կենալու չիս անտարբեր,
Ամաղարէ քանի կ՝ապրիմ, մի մտածի անտարբեր.
Հոգւոյս հատոր, ծաղկէ կեանքիս, շուտ ձեռք ձգէ էվլըմ դու

Հոգւով սրտով բռնուիրիմ, էղիրիմ քեզ հարազատ,
Փնտռելով ես որոշեցի անձիդ միայն հարազատ,
Գողտրիկ սիրտիդ դարձիր խորան ինծի համար հարազատ,
Քեզ կը պաշտիմ անմեղօրէն, կ՝աղօթեմ միշտ հարազատ,
Հոգւոյս հատոր, սիրտդ ու հոգիդ-նուիրէ ինձ էվլըմ դուն:

Ախ ու վախով մըն անցնի ուրախ օրեր չըմնաց ալ,
Զաթան պառկած հիւանդ մի եմ, ճար ու չառայ չըմնաց ալ.
Վրաս գալու դարմանելու բժիշկ թապիպ չըմնաց ալ,
Ալ կը մեկնիմ էս աշխարհէն, ցոյս ապրելու չըմնաց ալ.
Ճարահնիմ ես՝ ինծի, հոգիս, կեանք մըն իտաս էվլըմ դուն:

(ԵՂԻՇԷ Գ. ՉԷՐՉԵԱՆԻ Հաւաքածներէն

ՍԻՐԵՐԳ

Կը լըսե՞ս, ինչպէ՞ս ամեն ինչ կ՝երգէ,
Մամուռն ու ճրճին, թռչունները ամեն,
Զեփիւռն ու վրտակ, ծաղկունք նըկարէն.
Վաղ վարդակարմիր առաւօտուընէ՝
Կը լըսե՞ս, ինչպէ՞ս ամեն ինչ կ՝երգէ:

Ճամանչներուն տակ պայծառ արևուն
Ինչպէ՞ս ամեն ինչ կ՝արձակէ շողեր,
Եւ նըշդարիկին մարգարտէ ցողեր
Ինչպէ՞ս կը փայլին ճիշդ ոսկւոյ հանգոյն
Ճամանչներուն տակ պայծառ արևուն:

Ինչպէ՞ս ամեն ինչ կը սիրեն զիրեար,
Եւ ի՞նչ համբոյրներ սիրոյ գգուանաց
Փոխանակել միշտ կուգան իրերաց
Երկինք և երկիր խանդիւ սիրավառ.
Ինչպէ՞ս ամեն ինչ կը սիրեն զիրեար:

Ի ծոց ոսկեշող ճառագայթներին
Սրտեր ըզմայլած զուարթ երգերով,
Արբշիռ հեշտանոյշ հառաչանքներով՝
Սիրե՛նք մէկըզմէկ, սիրե՛նք սըրտագին
Ի ծոց ոսկեշող ճառագայթներին:

(Թարգմ. Գաղղիերէնէ) Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԱՌ ՆԷ

Այս ափերին համբոյր տուող ջինջ ալիքներ
Ի՞նչու տըխուր կը մըրմընջեն անդէն յեզեր.
Ինչո՞ւ սիրուն վարուժանին համբուրին տակ
Տըխուր վու վու դեռ կ՝արձակէ միշտ տատրակ.
Ցափրշտակիչ ժըպիտին մօտ աղու աչքիդ
Ինչո՞ւ արդեօք կը փայփըլայ արտասուաց շիթ.
Կարծեմ թէ քու դիւրազգացիկ հոգին Եափած՝
Գեղազուարճ այս ժամերուն մէջ սիրարծարծ՝
Կ՝աւաղէ, ո՜հ, դեռ չատ կանուխ լըռիկ մընջիկ
Մեր հաճոյից փախուստ կարի վաղասըացիկ.

Տըխուր խոհեր, իմ Սիրանոյշ, ո՞ն անդը ի քէն,
Փութա՛ լուծել ջերմ սիրոյս մէջ հոգերդ ամեն.
Սիրե՛նք զիրեար սիրով յաւէտ, սիրով արբշիռ՝
Մոռնանք այժմիկ մեր անողոք ճակատագիր,
Ինչպէս թեթև զեփիւռ արբած բուրմամբ անուշ,
Կը մըրափէ պահիկ մ՝ ի ծոց վարդին քընքուշ:

(Նմանողաբար) Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԱՂՋԿՆԵՐՈՒ ԳՈՎԱՍԱՆՔ

ԶՈՐՍ հատ աղջիկ ունիմ տանը,
Անեն մէկը ոսկի գոհար.
Շրջեմ բոլոր Հայաստանը,
Փեսացուներ գտնեմ յարմար:

Սօփիան մէկ գառն է անմեղ,
Ճարտարախօս, լեզուն համեղ.
Նահանգի մէջ քաղաք թէ գեղ,
Չի ճարուի նորան հաւասար:

Արփենին մէկ լսի կտոր,
Դէմքը գրաւիչ, զօրաւոր.
Աչքը, ունքը աղեղնաւոր,
Սիրտ գողացող մագնիսաքար:

Աստղիկը աստղ է լուսատու,
Ձայնը քաղցր, խօսքը ազդու,
Հանդիպի յարմար փեսացու,
Ուրախ սրտով ապրի երկար:

Արևահատս աննման,
Հաստատ գովելու է արժան.
Խնծորի ծառ է պատուական,
Նորատունկ է կանաչ դալար:

Նրանց մայրիկը Հռոսիկ,
Պարգևել է ինձ չորս աղջիկ,
Մէկ մէկ սիրուն հոտով ծաղիկ,
Եղեմական այգու նուագար:

Կարապետ Պետրոսեանցս քիչ
Գտայ սրտիս մխիթարիչ,
Խնդրեցի՝ և մի Հայ երգիչ.
Գրեց այս երգը ինձ համար:

ԱՇՐԳ - ՋԻՎԱՆ

1902

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

(Թէնիս)

Քու ծոցդ Աղամայ դրախտ, մանուի խնծոր քաղէի.
Քո երկու ծրծին մէջին պառկէի ու քուն ըլլայի.
Քո գունոմը գինի պիտէր խմէի ու հարբենայի.
Հոգիս պարարկան էի գրօղին, լօք թող գայ ու առնու տանի:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Գ. ՄԱՍ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Շնոփո՛ւր, չընոփո՛ւր,
Հըզար չընոփո՛ւր,
Էս միր նուր փէսի
Հարսնիքէ չընոփո՛ւր:

Շընոփո՛ւր, Շընոփո՛ւր,
Հըզար չընոփո՛ւր.
Էս միր նուր հարսի
Հարսնիքէ չընոփո՛ւր:

Ո՛վ դուք, ամուրիներ,
Վաղվուն երիտասարդներ,
Կեցցէ՛ք:

(Տիգրանակերտցւոց Հետևողութեամբ)

Շնորհաւո՛ր, չընորհաւո՛ր,
Հազար չընորհաւո՛ր.
Այս նոր փեսայի
Հարսնիքը չընորհաւո՛ր:

Շընորհաւո՛ր, չընորհաւո՛ր,
Բիւր բիւր չընորհաւո՛ր.
Այս մեր նոր հարսի
Հարսնիքը չընորհաւո՛ր:

Ո՛վ դուք, ամուսնացածներ,
Փորձառու ամուսիններ.
Կեցցէ՛ք:

(Ակնայ Գաւառաբարբառով)

«Աստուած շնորհաւոր անէ,
«Աստուած շնորհաւոր անէ,
«Շնորհաւորն Աստուած անէ:»

ՓԵՍԱՅԻ ԳՈՎԱՆՔ

Ելիր կայնէ, թագւոր աղբար,
Ես քեզ գովեմ գլխուդ ի վար:
Առաջ ես քու հասակդ ըսեմ,
Որ չինարի ծառ կը (ն)մանի:
Անկից ես քու երեսն ըսեմ,
Որ լուսնկի կայլ կը (ն)մանի:
Անկից ես քու մազերն ըսեմ,
Որ առիւծի բաչ կը (ն)մանի:
Անկից ես քու աչքերն ըսեմ,
Որ չահէնի աչք կը (ն)մանի:

ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳԵՐ

(Ակնայ Գաւառաբարբառով)

Մենք ա՞յ աղուոր աղջիկ, եկեր ենք ձերը,
Քեզ հազար նազերով 'տի տանինք մերը.
Շարէն չապիքով, ազիզ լաթերով,
Խաթով լաթ ենք բերեր, կոնակդ անցուր,
Քեզ տանել ենք եկեր, մայրիկդ լացուր,
Ոաքդ խատէմլի է դուն մեզ խնամացուր:
Աղջիկ, քեզի բերեր եմ Ֆիլտիչի սանտը,
Սրմաթել մազերդ հիւսուած է մանտը,
Սէվլի պօյիդ վրայ սէվայի ծանտը,
Աղջիկ մըն ալ կու տանին ալով ու լալով,
Ծամերն ալ են հիւսեր սրմայի թելով,
Գլուխն ալ են ծածկեր լահօռի չալով.

Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինծի,
Եախութ՝ զիւմրիւթ՝ անգին քար եղիր ինծի:

Հարսնուկ, քու հագածդ ալ է,
Ելիր խալուն վրայ քալէ.
Քալէ ու մանտրաիկ քալէ,
Ալուկ փեշերդ վեր ծալէ:

Ներւրտաքրդ հիւսեն մազրդ,
Տալրտաքրդ քաշեն նազրդ.
Նազ ըրէ, նազդ վերցնեմ,
Ալայ թօղ չաքար կերցնեմ:

Առաւօտուն կ'ելլես, արև կուգաթէ,
Բերանտ ուր կուբանաս, մեղրը կուկաթէ,
Եկուր նատինք, անուշ անուշ խորաթէ,
Եկուր, աղուոր աղջիկ, հարս եղար մեզի.
Եախութ, զմրութ- անգին քար եղար մեզի:
Առաւօտուն կ'ելլես պաղ պաղ հովերուն,
Պիւլպիւլ չաքրը զարկեր՝ վարդին բոլորուն.
Որը վարդէն կ'առնէ որը քովերուն,
Եկուր, աղուոր աղջիկ, են.
Առաւօտուն կ'ելլես, երեսդ վրա,
Էպիշում մազերտ դրեր ես հինա.
Ամ աղուոր երեսդ պաղ մի տուր հրա:
Եկուր, աղուոր աղջիկ, են.

ՀԱՐՍՆՑՈՒԻ ՄՆԱՔ ԲԱՐՈՎԸ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Զարկեցէք սազ,
Հիւսկեցէք մազ.
Եկէք ազպընիր (ամուրիներ),
Քաշեցէք նազ:

Հիննան չաղեցէք
Մոմիր տնկեցէք.
Էկէք ազպընիր
Առուսն (հարսն) հաննեցէք:

Կանչեցէք մայրէ,
Սիրտէ թող չայրէ.
Տեսնէ իւր դառէ,
Լինի չնորհաւոր:

Մամիկ դուն հէլալ,
Էրէ ընծի հէլալ.
Կաթիկդ եմ կերի,
Էրէ ընծի հէլալ:

Պապիկ դուն հէլալ,
Էրէ ընծի հէլալ.
Հացիկդ եմ կերի,
Էրէ ընծի հէլալ:

Աղբէր դուն հէլալ
Էրէ ընծի հէլալ.
Զրիկդ իմ խմի,
Էրէ ընծի հէլալ:

Քուրուկ դուն հէլալ,
Էրէ ընծի հէլալ.
Նիշածդ եմ հագի,
Էրէ ընծի հէլալ:

Խալէ (մօրաքոյր) դուն հէլալ,
Էրէ ընծի հէլալ.
Հաւնածդ իմ հագի,
Էրէ ընծի հէլալ:

Ամմէ (հօրաքոյր) դուն հէլալ,
Էրէ ընծի հէլալ.
Զեւածդ իմ հագի,
Էրէ ընծի հէլալ:

Ճամբիկսի փուշ է,
Սիրտիս քնքուշ է,
Կ'երթամ չիմ կայնի,
Էրիկն անուշ է:

Կ'երթամ չիմ կայնի,
Իմ հէլալ հացին.
Իմ տան ու տեղին.
Արդար պատկին:

ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳԵՐ

Աղջի հարսնառդ եկաւ
Վերի կալերէն
Քեզի հիննա բերաւ
Թղթի ծալերէն:

Ախբէր, արի՛ ախբէր,
Եզները բառնանք,
Էրթանք դարիր երկիր,
Թէզօք չետ դառնանք:

ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐԳԵՐ

Աղջկայ Մնասբարեաւը Հօրը

Աղջիկը — ԱՐԻ հայրիկ, արի իմ կեանք,
Մնաս բարեաւ, ես գնում եմ.
Անուշ ծնող բարի իմ կեանք,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը — Ունեցիր խելք, չնորհք ու չէնք,
Գնա՛ որդիս, Աստուած քեզ հետ.
Ամուսնութիւնն է սուրբ օրէնք,
Գնա՛ որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջիկը — Էլի ամեն հոգսէ ազատ,
Տանդ մէջ անմեղ անարատ,
Օրհնէ ինձի, հայր հարազատ,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը — Փեսայիդ հետ սուրբ պայմանով,
Ուրախացիր միշտ նրանով.
Տէրը օրհնէ իւր բերանով,
Գնա՛ որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջիկը — Ի՞նչպէս ջոկնուիմ, քեզանից,
Մեծ ես ինձ համար իշխանից.
Բաժինս կարաւ այս տանից,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը — Կեսերդ ու կեսարարիդ արժան,
Պատուէ հօրդ, մօրդ նման.
Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,
Գնա՛ որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջկայ Մնասբարեաւը Մօրը

Աղջիկը — Քաղցր մայրիկ, հոգոյս հատոր,
Օրհնէ ինձի, ես գնում եմ.
Քեզ հետ ապրեցայ բախտաւոր,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը — Լրացաւ քու ժամանակդ,
Դուստր իմ, գնա, մի լար, գնա՛,
Վայելէ թագ ու պսակդ,
Գնա որդիս, մի լար, գնա՛:

Աղջիկը — Բեր համբուրեմ ձեռքդ, մայրիկ,
Կերել եմ կաթդ անուշիկ.
Երանի չը լինէի աղջիկ,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը — Մի գնար վատ դրացու տուն,
Խելք ու մտքով եղիր արթուն.
Ունեցիր միշտ բարի անուն,
Գնա որդիս, մի լար, գնա՛:

Աղջիկը — Կարեցիր քունդ ինձ համար,
Օրօր ասելով անդադար.
Ո՛վ իմ ճշմարիտ բարերար,
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը — Եկաւ փեսան դու ոտքի էլ,
Է քեզանից նա առաւել.
Նորան քեզ Տէրն է կամեցել,
Գնա որդիս, Աստուած քեզ հետ:

1876 ԱՇԸԳ-ԶԻՒԱՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
(Արևահատից)

ՈՏՔԻԴ տակին վարդեր բացուեն, Քո ժպիտը վարդի նման,
Զարս կողմդ փուի մանիշակ, Արտասունքդդ մարգարիտի,
Բարով հասնիս քո մուրազին, Ուր որ գնաս, Աստուած քեզ հետ,
Գլխիդ տեսնեմ թագ ու պսակ: Օձ ու կարիճ քեզ չը խայթի:
Քո խրճիթը պալատ դառնայ,
Ողջ սիւները անգին քարից,
Պատ ու յատակ ոսկի, արծաթ,
Առաստաղը գոհարներից . . . :

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ՊԱՌԱԻ ՕՐԻՈՐԴԻ ԵՐԳԸ

ԹԱՔ տանէին, տանէին.
Ցախաւելը թագաւոր էնէին,
Թաք տանէին, տանէին.
Գոմէշը կէսրար էնէին,
Մատակը կէսուր էնէին,
Օսկու տեղ փուշ դնէին,
Իշու պոչը փիւսկիւլ էնէին,
Թընդրին չուլը քօղկ էնէին,
Նալերը պօղմախ էնէին,
Դաղէ չապիկ հագցնէին,
Իշու կաշին գուլպայ էնէին,
Ճէճիմը խրխայ էնէին,
Ձլօփը գոգնոց էնէին,
Փատէ պաշմաղ հագցնէին,
Թընդրին խուփը բարձ էնէին,
Իշուն չուլը գոշակ էնէին,
Թաք տանէին, տանէին.
Խըսիրը եօրդան էնէին
Գոմշին խոտոշը զուռնա էնէին,
Ալըրմաղը դըմպլիկ էնէին,
Էշը տաուլճի էնէին,
Նախլը հարսնառ էնէին,
Կատուն սարկաւագ էնէին,
Խորոզը ժամկոչ էնէին,
Քուզան կոլոտ էնէին,
Խաչերկաթը խաչ էնէին,
Խոտէ խալի փռէին,
Խըսրի տեղ դնէին,
Մէյմունի տեղ խաղցնէին,
Վեց-օխտ օր ծում պահէին,
Օրը տաս ժում ծեծէին,
Թաք տանէին, տանէին:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

(«Ազատն Աստուած»ի եղանակով)

ՀԶԱՐ էրնիկ էն օրէ,
Երբ էրթանք ժամու դռռէ.
Զեռքիդ ձեռացսի խտայ
Փալախ մօրուք տէրտէրէ:
Տէրտէրն հագնի նուր շուրջառ,
Ըսէ դըպլիս քէօռ քէշէլ.
Զեղնայ սիրտիդ խառնուի,
Պըն համբերիս չառ նաչառ:
Քաջ Մուշեղ զօրավարին,
Ճասդայով ֆընտիր վառին.
Քեզով փեսայ երգելով,
Զուրս բոլբրնիս օլբրուին:
Սաղ քովիս առնիմ քէղի,
Սօլ քովիս ընդաւուրսի.
Մանտր մանտր քեզելով,
Սուրբ խորան հասնինք հարզի:
Վերէն իջնայ տէր պապէ,
Գլխնուս պսակ կապէ.
Աղջիկ, չեղնայ փուշնիս,
Սոնէ պըն կտրիս թոպէ:
Ըրախտըման ալ ձիյնին,
Թէք թէք մեզի հեծցնին.
Ջուխտակ ջուխտակ մաշհըլնիլ
Զուրս բոլուրնիս լուսցնին:
Տաֆ, թուլուղ ու քէմանին
Զարնելով, խաղան, երգին.
Շարդի, մայա կանչելով,
Թաղէ թաղ օլբրցընին:

Պըն էլլայ մէյտան չուշան,
Խմին էղնան փէրուշան.
Դրացնիր տէնտրէ տէնիր,
Պըն թափքին մէր թամաշան:
Կնուխ ուտին հացերնին,
Մէկ մէկ չնոֆօրցնին.
Աստուած իրանց հիտն էղնայ,
Սեպին էրթան տներնին:
Էն տտինէ (պըն ը)սիս տատա,
Աստուած քըզի կեանք խտայ.
Երկնքի մէջ փնտռածսի,
Երկրի վրայ ես գտայ:

Պետրոս Մուրաֆանեանի երգածներէն

ՓԵՍԻ ՄԷՐ

ԹԱԳԻՒՈՐԻ մէր տես էլի քէյ ի՛նչ վի՛նչ եմ պերե,
Քեաղցր ու բաղարջով արե, արաղի փարջով արե.

Թագաւորի մէր տիւս արե, ճրագ մոմերով արե,
Քեաւորկներով արե, բարեկամներով արե:

Թագաւորի մէր տիւս արե, ձեռըդ խենայ դիր արե,
Աչքերդ տեղ տիր արե, թայլիկ սօլերով արե.

Թագաւորի մէր տիւս արե, արե, արե, տիւս արե,
Քէյ ինչըվինչ եմ պերե, տախտ աւելող եմ պերե:

Թագաւորի մեր տիւս արե, արե, արե տիւս արե,
Քեյ ինչըվինչ եմ պերե, գլէօխ լվացող եմ պերե ևն.

Քեյ նուշ ծաղիկ ենք պերե,
Քեյ կէօլի կաղ ենք պերե,
Լվաց արող ենք պերե,
Գրդնակ արող ենք պերե:
Ծառ թափթփող ենք պերե,
Կաղալ աւլող ենք պերե,
Քեափանք արող ենք պերե,
Ծմիչ ժողվող ենք պերե:
Տախտ աւելող ենք պերե,
Կարկտան արող ենք պերե,
Ծամ խատրկող ենք պերե,
Սօլեր չիտկող ենք պերե:
Ոչխար կըթող ենք պերե,
Պիւրդ կտրող ենք պերե,
Զախրակ մանող ենք պերե,
Քեյ վարդ ըռահան ենք պերե:
Թօներ վառող ենք պերե,
Տեղջիւլ խկող ենք պերե,
Խեռ ու խեռնակ ենք պերե:
Քեոյ գլէօխ ամփող ենք պերե,
Էք բարև, հայէ՛ք բարև,
Թագաւորին չատ բարև:

ԵՐԳ ԹԱԳԱՒՈՐ ՀԱԳՑՆԵԼՈՒ
(Ակնայ Գաւառաբարբառով)

Ան բարձրը լեռներն ի վար, ձեզի բարկ արև մին է ցաթեր
Ընձենուն երդիքն ի վար, ձեզի դուռն ի ներս է ճառագեր.
Ընենդ ի վրայ եկէք, թագաւորին կապան կարեցէք.
Լուսնկան աստառ արէք, արեգակն երես ձևեցէք.
Ան մոյ (մանր) ու խոշոր աստղեր թևերուն կոճակ կարեցէք:
Հայ իմ պզտիկ թագաւոր, կլորեր ես մէջ ծներուն.
Ճուերդ ի երդիքն է ելեր- կախուեր է խոշոր ճիշերուն:

ՔԱՇ ՀԱՐԵՆ

Ա՛յ իմ հարսակ դաբրիկ,
Ծոցդ եղի (այգի), ծառդ արմաւենի:
Արմաւդ քու ծառդ կու լընի,
Պիւլպիւլը քու ճեղդ կու թառի:
Քու ծառն ու ճեղդ ոսկի,
Քու տերևը վարդ կու մանի:
Ես քու ծոցուն տէր պիտէի,
Ճըղերէդ արմաւ քաղէի:

Հարսնո՛ւկ, քէ խրատ մի տամ.
Թը տէօվլէթ ունիս նէ մոէ (համբերէ):

Զէդ ականջդ իս արէ՛,
Զինչ ըսիմ նը ան ըրէ:

Ուր դան ու հաղար ըսին,
Հազրէն մէկ խօսքունկ մի խօսէ:

Ան ալ՝ չի գիտիմ ըսէ՛.
Դուն հաղար չարէ խալըսէ:

Մեր տունն Աստուծոյ չինած.
Աստուծու չիած 'ւօրհնած:

Հայը Աբրահամի քարուկը
Մեր տան թէնէն (հիմն) է դրած:

ՀԱՐՍՆՑՈՒԻ ՄՆԱՔ ԲԱՐՈՎԸ

Մի՛ լար, մարիկ, մի՛ լար. ես ալվի (նորէն) տիգամ.
Ակի տասնըհինգ օր արկովս (էրիկիս հետ) տիգամ:

ԵՐԳ ՀԱՐՍԻՆ

Շէնկիկ- մի՛ ժաժա.
Ես եմ ժաժալու,
Շուշան տանելու:
Տախթիկ մի՛ թընտա.
Ես եմ թընտալու,
Շուշան տանելու:
Հոզիկ, մի՛ սրոտ.
Ես եմ սրոտալու,
Շուշան տանելու:
Ծառուկ, մի՛ գոզա.
Ես եմ գոզալու,
Շուշան տանելու:
Տերուիկ, մի՛ թափի.
Ես եմ թափելու,
Շուշան տանելու:
Արև, դուն մ'ելնի.
Ես եմ ելնելու,
Շուշան տանելու:
Արև, մի՛ պատի.
Ես եմ պատելու,
Շուշան տանելու:

Լուսին, դուն մ'ելնա.
Ես եմ ելնելու,
Շուշան տանելու:
Լուսին, մի՛ պատի.
Ես եմ պատելու,
Շուշան տանելու:
Աստղունք մ'ի ցոլաք.
Ես եմ գոլալու-
Շուշան տանելու:
Կըռունկ, մի՛ կըղա.
Ես եմ կըղալու,
Շուշան տանելու:
Մէրիկ, դուն մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու:
Հէրիկ, դուն մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու:
Աղբէր, դուն մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու:

Զմէրիկ խաբեցին թօփ մը շիլով.
Զհէրիկ խաբեցին կուռէ մը գինով.
Զաղբէր խաբեցին ջուխտակ մը ճըզմով.
Զքուրիկ խաբեցին մատիկ մը հիններով:
Զդրամի հանդուրց արձակեցին,
Զաղջիկ մամուց ջոկեցին:
Մէրիկ, մի՛ ուլի զտախթիկ,
Որ չաւրի քու աղջկայ հետիկ.
Թող մնայ քեզի նմուշիկ,
Որ հանիս զքու հասրաթիկ:
Զչամիչ մաղով մաղեցին,
Աղջկայ ճիպեր լեցուցին.
Ղարիպ ճամբայ ուղարկեցին:

Հ. Գ. Վ. ԱԼԻՇԱՆԻ Հաւաքածներէն

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ
ՊՍԱԿ ԳՆԱԼՈՒ
(Ակնայ Գաւառաբարբառով)
Օրիորդ ԼՈՒՍԻԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ երգածներէն
(Մաանի կամ Մայա)ի եղանակով

Ցածցէ՛ք, ցածցէ՛ք, լեռնե՛ր, բացուեցէ՛ք, ծովե՛ր-
Եարիս ճամբայ տուէք որ չուտ-ինձ հասնի.
Ոչափ ալ չուտ հասնի՝ դարձեալ կ՚ուշանայ,
Օրը տարի եղեր, դիշերը դարեր:

Գիշեր ցերեկ հիշ չես ելլեր մտացս,
Գլխուս որ բարձ դնեմ կուգաս երազս.
Հէրամ ըրիր կերածս ու խմածս,
Ամէպ օր արլլա որ առնեմ մուրատս:

ՊՍԱԿԷՆ Վ ԵՐԱԴԱՐՁԻՆ

Ոլբրեցար, բոլբրեցար,
Աղուո՛ր, ճամբան մոլբրեցար.
Մոլբրեցար ու ներս եկար:

Ողջոյններ Հարսին Ուղղուած

Բարի լուս, աղուո՛ր, բարի լուս,
Բարի լուսուն բարին վերադ,
Որ ցաթէ արևն ի վերադ:
Այ իմ- այ աննման աղուոր,
Ձկայ քեզի նման աղուոր:

Ողջոյններ Փեսային Ուղղուած

Առաւօտուն թէզ մի արև.
Թագւորը տայ մօրը բարև:
Բարով եկար դուն բարկ արև,
Ցաթեցիր մեր տանն ի վերև:
Այ իմ, այ աննման, ևն.:

ՀԱՐՍԻ ԳՈՎԱՆՔ

Հա՛յ իմ հա՛յ, աննման աղուոր,
Ձկայ քեզի նման աղուոր:
Աղուոր՝, քեզ ո՞ր մարն է բերեր,
Ան թուխ աչուի մարն է բերեր.
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար,
Շալ ինք բերեր պօյիդ համար,
Քեզ ալ տանինք մեզի համար:
Ա՛յ իմ, ա՛յ աննման աղուոր,
Ձկայ քեզի նման աղուոր:

ՈՂՋՈՅՆՆԵՐ ՀԱՐՍԻ ԿՈՂՄԷՆ

Բարի լուս, հայրի՛կ, բարի լուս,
Բարի լուս, մայրի՛կ, բարի լուս:
Բարի լուս, աղնիւ կնքահայր,
Բարի լուս- կնքամայր անուշ:
Բարի լուս, աղնի՛ւ հօրեղբայր,
Բարի լուս, աղնի՛ւ մօրեղբայր:
Բարի լուս, սիրո՛ւն եղբայրներ,
Բարի լուս, քոյրեր անուշիկ:

Փեսային Կողմէ Հարսին Ուղղուած
(Ակնայ Գաւառաբարբառով)

Նազ արէ՛, նազ արէ՛, նազդ վերցնիմ.
Այս քեզի նուշ ու շաքար կերցնիմ.
Հագցնիմ- կապցնիմ, մարոնցդ խրկիմ:
Մի՛ լար, աղուոր աղջիկ, աչուիդ կ՚աւրրուի,
Քեզ պզտիկ կարգողին տնակն աւրրի:

Խնամոնց Մնաք Բարովը

Խնամի՛, տունդ չէն կենա.
Այս՝ դռնակդ բաց կենա.
Ջխտուկ որդեկդ ապրած կենա:

Երգ Հարսանեաց Փեսայի

Օրհնեալ բարերար Աստուած.
Կամքն օրհնեալ մեր արարողին (երիցս)
Ջուգեցինք, հա՛յ թամամեցինք,
Ձխաչն ի վրէն բազմեցուցինք (երիցս):

Գացէք բերէք զթագւորի մէր,
Իգայ նստի դարպաղ էնէ.
Ծընտրիկ զարկէ սուրբ սեղանին,
Խէրն ու բարին մեր թագւորին (երիցս)
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէք բերէք զթագւորի հէր,
Իգայ բանայ դուռ մաղազին-
Հանէ զխպչվոկ նոր, պահունի,
Բերէ, բաշխէ մեր թագւորին:
Գացէք բերէք զթագւորի մամ,
Իգայ նստի դարպաղ էնէ. ևն.:
Գացէք բերէք զթագւորի պապ,
Իգայ նստի ևն.:
Գացէք բերէք զթագւորի աղբէր,
Իգայ նստի ևն.

Գացէք բերէք զԹագւորի քուր,
Իգայ նստի ևն.:
Գացէք բերէք զկռունկն ի չոլէն-
Իգայ նստի սէյրան անէ.
Ծընարիկ զարկէ սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր Թագւորին (երիցս)
Գացէք բերէք զբադն ի կոլէն,
Իգայ նստի սէյրան անէ. ևն.:
Գացէք բերէք զկաքաւն ի սարէն,
Իգայ նստի սէյրան անէ. ևն.:
Գացէք բերէք զԹագւոր՝ քաւոր,
Քառասուն քիսայ առնէ, բերէ,
Այս Թագ գնէ, առնէ, տանէ,
Բերէ, բաշխէ մեր Թագւորին:
Աստծու բարին մեր Թագւորին (երիցս):

ՓՈԽ

ՄԵՐ Թագւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց
— Ծաղիկն ինչէնի՞ պիտէր ծաղկունաց
Ծաղիկ պալասան պիտէր ծաղկունաց,
Որ փԹըԹէր ծառն ու ծաղիկ հետ իրրաց:

Մեր Թագւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց
— Ծաղիկն ինչէնի՞ պիտէր ծաղկունաց:
Ծաղիկ ճընծաղիկ պիտէր ծաղկունաց.
Որ փաԹըԹէր ճուղն ու տերև հետ իրրաց:

Մեր Թագւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց
Ծաղիկ անԹառամ պիտէր ծաղկունաց.
Քաղենք, բերենք մեր Թագւորին,
Որ փաԹըԹէր ճուԹն ու տերև հետ իրրաց:

Ծաղիկ նռնենի, նունուֆար, վարդենի, ևն

Սուրբ Կարապետին զօրուԹենով, հա՛յ զօրուԹենով,
Խաչերես Թագաւոր մը կի դէր:

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ Հաւաքածներէն
Բաղդատութեամբ ԿՈՄԻՏԱՍ Վ.ի և Մ. ԱԲԵՂԵԱՆԻ Հաւաքածներին

ՓԵՍԱՅԻ ԳՈՎԱՆՔ

ՄԵՐ Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Պըսակն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Շապիկն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Զուխան էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Մաշիկն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Գրտակն էր բուխար,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Շալվարն էր կապոյտ,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Գօտին էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Գուլբան էր նախշուն,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ.
Կոզբանդն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր Թագւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղէն,
Թագւորն էր վըրէն:

Մեր Թագւորն էր խաչ, մեր Թագւորն էր խաչ.
Խընծորն էր կարմիր, արևն էր կանաչ:
Մեր Թագւորն էր խաչ, մեր Թագւորն էր խաչ.
Բըճերն էր նըշխուն, արևն էր կանանչ:

Ելէք ուր առջևն երԹանք,
Ուր ճէհլիկ խաԹրիկ չի մընայ:

ՄԵՐ Թագւորին ի՞չ պիտի: —
Մի քաԹան չապիկ պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի մահուդ չուխա պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի մահուդ չալվար պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի քիրման գօտի պիտի:

Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի ջուխտ լաւ գուլպա պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի ջուխտ լաւ կօշիկ պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի բուխար գըլխարկ պիտի:
Մեր Թագւորին ի՞նչ պիտի: —
Մի լաւ խաս փէշքիր պիտի:

ՓԵՍԱՅԻ ԳՈՎԱՆՔՆԵՐ

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր
Որ թագը չուռ դէր։ —
Ս. Երրորդութիւն յաջմէ կայնէր,
Որ թագիկ չուռ դէր չուռ ու մուռ,
Բարով իւր տուն դէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր
Որ թագը չուռ դէր։ —
Էջմիածին յաջմէ կայնէր,
Որ թագիկ չուռ դէր չուռ ու մուռ,
Բարով իւր տուն դէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր
Որ թագը չուռ դէր։ —
Սուրբ Կարապետ յաջմէ կայնէր,
Որ թագիկ չուռ դէր չուռ ու մուռ,
Բարով իւր տուն դէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր
Որ թագը չուռ դէր։ —
Լուսաւորիչ Գերեզման յաջմէ կայնէր,
Որ թագիկ չուռ դէր չուռ ու մուռ,
Բարով իւր տուն դէր։

ԹԱԳԻՒՈՐ բարով, հազար բարով
Դու վարդ ես կանաչ տերևով.
Էջմիածին զարևդ օրհնէ,
Մէկ Աստծու զօրութիւնով։
Թագուոր բարով, հազար բարով
Դու վարդ ես կանաչ տերևով.
Երուսաղէմ զարևդ օրհնէ,
Մէկ Աստծու զօրութիւնով։
Թագուոր բարով, հազար բարով
Դու վարդ ես կանաչ տերևով.
Սուրբ Կարապետ զարևդ օրհնէ,
Մէկ Աստծու զօրութիւնով։

Մեր թագուորին էլ ի՞նչ պիտէր,
Որ թագը չուռ դէր։ —
Թագուորամէր կայնած պիտէր,
Որ թագը չուռ դէր։

Մեր թագուորին էլ ի՞նչ պիտէր,
Որ թագը չուռ դէր։ —
Թագուորահէր կայնած պիտէր,
Որ թագը չուռ դէր։

Մեր թագուորին էլ ի՞նչ պիտէր,
Որ թագը չուռ դէր։ —
Թագուորաքոյր կայնած պիտէր,
Որ թագը չուռ դէր։

Մեր թագուորին էլ ի՞նչ պիտէր,
Որ թագը չուռ դէր։ —
Թագուորաղբէր կայնած պիտէր,
Որ թագը չուռ դէր։

Մեր թագուորին էլ ի՞նչ պիտէր,
Որ թագը չուռ դէր։ —
Թագուորքաւոր կայնած պիտէր,
Որ թագը չուռ դէր։

ԹԱԳԱՒՈՐ, թագն ի գլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Էջմիածին Երևանցին —
Իւր մուրաղը տէր։
Թագաւոր թագն ի գլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Սուրբ Կարապետն էր Մըշեցին,
Իւր մուրաղը տէր։
Թագաւոր թագն ի գլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Երուսաղէմ մէջ աշխարհքին,
Իւր մուրաղը տէր։

ՓԵՍԱՅԻ ԳՈՎԱՆՔՆԵՐ

ԹԱԳԻՒՈՐ ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Անթառամ ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Բալասան ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Համասփիւռ ծաղիկ, որ կը ծաղկի
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Դիներբուկ ծաղիկ, որ կը ծաղկի
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Սիրուն մանուշակ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Դարնան վարդենիս, որ կը ծաղկի
Ծաղկէր քո արևուդ նըման։

ԹԱԳԻՒՈՐ, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Անուշ ռէհան, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Շուշան ծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Նարգիզ ծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Դեղին կակաչ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Սարի սուսուն, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Աղբրանց-արիւն, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։
Թագուոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նըման.
Ոսկեծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։

Էս թագիկ ո՞ւմ թագի նման էր,
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր։
Էջմիածնայ թագ յաջմէն դադրէր,
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր

Էս թագիկ ո՞ւմ թագի նման էր,
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր։
Լուսաւորչու թագ յաջմէն դադրէր
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր

Էս թագիկ ո՞ւմ թագի նման էր,
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր։
Տրդատ թագաւորի թագ աչմէ կայնէ
Որ թագիկը չուռ դէր,
Շուռ ու մուռ դէր կանաչ ու կարմիր

ԹԱԳԻՒՈՐ, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Ծիրանի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նման։
Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Խընձորի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նման։
Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Դամոնի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նման։
Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Խաղողի ուռ կոճակ կապէր,
Պըտկէք դուք էլ էնոր նման։
Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Գընտուկի ծառ պրտուկ կապէր,
Պրտկէք դուք էլ էնոր նման։
Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
— Քո կանաչ արև քեզ նման.
Ընկուզի ծառ պտուղ կապէր,
Պըտղէք դուք էլ էնոր նման։

ԵՐԿՆԻՑ դեռնից սուրբ զօրութիւնով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։
Էջմիածնայ սուրբ զօրութիւնով,
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։
Լուսաւորչի սուրբ զօրութիւնով,
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։

ԳՆԱՑԷ՛Ք, ասէ՛ք,
Թագաւորամէր,
Թագաւորամէր,
Ծառըդ գոված է.
Սէլ մի սեղան,
Խոյ մի խորվու,
Ծառ գովողինն է։
Գնացէք, ասէք,
Թագաւորահէր,
Թագաւորահէր,
Ծառըդ գոված է.
Եզ մի խորվու,
Տիկ մի դինի,
Ծառ գովողինն է։
Գնացէք, ասէք,
Թագաւորաքոյր,
Թագաւորաքոյր,
Ծառըդ գոված է.
Ուլ մի խորվու,

Գառ մի դինի,
Ծառ գովողինն է։

Գնացէք, ասէք,
Թագաւորաղբէր,
Թագաւորաղբէր,
Ծառըդ գոված է.
Երկու ճընճուղ,
Մէկ դարեհաց,
Ծառ գովողինն է։

Գնացէք, ասէք,
Թագաւորահարս
Թագաւորահարս
Ծառըդ գոված է.
Զորս ջուխտ դուլպայ,
Մի թաշկինակ,
Ծառ գովողինն է։

ՓՈԽ

Էն դիղան բէտ բէտ դիղան, տեսէք թէ էն ո՞րն է.
Էն դիղան բէտ բէտ դիղան, դեղի համբէքն է։
Առիւծներ մըրմըռալէն, տեսէք թէ էն ո՞րն է.
Առիւծներ մրմռալէն, վարդապետներն է։
Կաքաւներ կըղկըղալէն, տեսէք թէ էն ո՞րն է.
Կաքաւներ կըղկըղալէն, էն երիցներն է։
Ճընճղներ ճըլրըստալէն, տեսէք թէ էն ո՞րն է.
Ճընճղներ ճըլրըստալէն, սարկաւագներն է։
Էն միջի հաստաղերան, տեսէք թէ էն ո՞րն է.
Էն միջի հաստաղերանն, թագաւորի հէրն է։
Էն քուլա բամբակն ի ծակ, տեսէք թէ էն ո՞րն է.
Էն քուլա բամբակն ի ծակ, թագաւորի մէրն է։
Էն զօհալ ասող եռեանց, տեսէք թէ էն ո՞րն է.
Էն զօհալ ասող եռեանց, էն թագուհին է։
Ցախ աւել եռև դրան, տեսէք թէ էն ո՞րն է.
Ցախ աւել եռև դրան, էն մըշկիներն է։
Շունն եկաւ պարկն ի բերան, տեսէք թէ էն ո՞րն է.
Շունն եկաւ պարկն ի բերան, գեղի գըղիրն է։
Մուկն եկաւ ալրրթաթախ, տեսէք թէ էն ո՞րն է.
Մուկն եկաւ ալրրթաթախ, էն ջաղցրպանն է։

Գովեցինք, հա՛յ թամամեցինք, հա՛յ թամամեցինք,
Զխաչն ի վերէն բազմեցուցինք։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ Հաւաքածներէն

Դ. ՄԱՍ

ՊԱՐԵՐԳՆԵՐ և ԽՄԲԵՐԳՆԵՐ

ԾԱՆՕԹ. — Պարերգ և Խմբերգ, երկուքն ալ կ'երգուին խմբովին. այս տարբերութեամբ որ Պարերգը պար կամ կովանոց քաշելու համար կ'երգուի, մինչ Խմբերգը կաքաւելու. յաճախ Թրքական Շարգիի կամ Գանթօի եղանակներով:

❖ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԳՆԵՐ ❖

Սոյն մասին մէջ զետեղուած Պարերգներն (շատ քիչ բացառելով) ՍՈՒՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ և ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻ հաւաքածոյներէն առնուած են:

ՆՈՐ է բացուել բարի լուս,
Մէկ տեղ կ'երթանք դար ի դուս:
Բոքիկ մի՛ քեզէ, փուռ է,
Սի՛ռունիկ, պագդ անուռ է:
Էս ձորն ի վեր ձընեբակ,
Դու նըմանիս արեգակ:
Հով կը փըչէ սարն ի վեր,
Արտուտ կ'ելնէ դարն ի վեր:

Ա՛ղջի, անուշի՛կ Նազեր,
Խելքըս տարաւ քու մազեր:
Երկնից կամար ունքերըդ,
Ինձի վառեց քու սէրըդ:
Մատաղ լինեմ սև աչին,
Ես կարօտ եմ քու պաչին:
Բոքիկ մի՛ քեզէ, փուռ է,
Սի՛ռունիկ, պագդ անուռ է:

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:

Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր.
Ա՛յ գիւղում կանչող աղջիկ,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Զէնդը ծըվվըալիս ա:
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:
Կանաչ տեղը՝ բաղում ես,
Պարի մէջին խաղում ես.

Կաքաւի պէս սորալով,
Տըղաներին դաղում ես:
Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը.
Ե՞րբ կը տաքնան աղջըկերք, —
Վարդավառի պասումը:
Հա՛յ, ասի նա, ասի նա,
Կարմիր գինին թասին ա.
Տըղէք երբ կը կոտորուին, —
Հորթաթոզի պասին ա:
Սիրո՛ւն աղջիկ, նազ ունիս,
Շահ զադայի սազ ունիս.
Հողեմ շահ զադի գըլուխ,
Դու իմ հոգուն հազ ունիս:

ՁԱ՛Ն, ա՛ղբէր, ջա՛ն ա՛ղբէր,
Ձա՛ն, եա՛րօ, ջա՛ն,
Ձա՛ն, եա՛րօ, ջա՛ն, եա՛րօ,
Ձա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն:
Սարերը ման եմ եկել,
Դաշտերը բան եմ եկել.
Ասին՝ աղբէրդ եկել ա,
Գըժի նըման եմ եկել:
Ձա՛ն, ա՛ղբէր, ևն.:

Գարունը նոր ա բացուել
Վարդը կոկոն ա դարձել.
Աղաչանքըս չ'իր լըսում,
Իմ սիրտըս մոմ ա դարձել
Շըլինքըս ծուռն 'իր թողել
Օտարի դուռն 'իր թողել.
Ինձ էնպէս 'իր մոռացել,
Սարի էն կուռն 'իր թողել
Ձա՛ն, ա՛ղբէր, ևն.

ԱՐԱԶԸ հեշտացել ա, եա՛ր.
Ճամբէքը կոշտացել ա, եա՛ր.
Խարա՛ր տարէք իմ եարին, եա՛ր.
Առնողը չատացել ա: եա՛ր:
Իմ սէրը սուր ա դառել,
Կըրակ ու ջուր ա դառել.
Եա՛ր, քեզ սըրտով սիրելը
Ինձ թուք ու մուր ա դառել:

Էլի դալն եմ խմացել,
Աչքըս ճամբիդ մընացել.
Քեզ համար գիշեր, ցերեկ
Միտք անելով եմ կացել:
Բախտը զարկեց սրտիս նէ
Արտասուքըս եղաւ գետ.
Թէ Աստուածըդ կը սիրես,
Եա՛ր, ինձ արի՛, տա՛ր քեզ հետ:

Հօ՛յ եար, հօ՛յ եար,
Ա՛զիզ եար ջան, դուռը բաց.
Հօ՛յ եար, հօ՛յ եար,
Ոտներս, ոտներս ցրտուն գնաց:
Հօ՛յ եար, հօ՛յ եար,
Պաղ ես ձըմեռուայ սառից,
Ամուր ես դու լեռ քարից.
Եռևէդ ինձ քաշ տալով
Տարար դըցեցիր սարից:
Հօ՛յ եար, հօ՛յ եար, ևն.:

Ջիւն ա գալի վերևից,
Ջուր ա կաթում տերևից.
Իմ պարզ օրըս ամպել ա
Անբախտ եարի երեսից:
Հօ՛յ եար- հօ՛յ եար, ևն.:
Ճերմակեց գետին ձընից,
Ա՛ղջի, դուրս արի տընից.
Ջեռովըդ էրուած սրտիս
Կամ դեղ արա, կամ ջուր լից
Հօ՛յ եար, հօ՛յ եար, և

(Մասանի կամ Մայա)ի Եղանակով

Անուշ ու սգաւոր մեր մայր Հայաստան,
Մի՛ լար, ո՛հ, մի՛ ողբար, մենք ետ պիտի
Գանք և բազում ոսկի բերենք քեզ նուէր
Եւ քեզ բերենք նուէր մեր սիրտն ու մեր սէր:

Տէր. Ս. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՇՈՂԵՐ

ԱՄՊԵԼ ա, ձուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի գալի.
Շողե՛ր ջան.
Դու շորորա՛, դուն օրօրա՛.
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կ'երևայ,
Շողե՛ր ջան.
Սիրաբս կըրակով լըցուած,
Շողե՛ր ջան,
Աչքերիս քուն չի գալի:
Շողե՛ր ջան.
Դու շորորա՛, դուն օրօրա՛,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կ'երևայ,
Շողե՛ր ջան:
Հուրք ա թափում վերիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,
Շողե՛ր ջան.
Շէկլիկ եարըս տուն եկաւ,
Շողե՛ր ջան.
Ուն կ'երևայ, ձուն կ'երևայ,
Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կ'երևայ,
Շողե՛ր ջան.
Դեռ մուրազիս չը հասած,
Շողե՛ր ջան.
Վըրէս խորունկ քուն եկաւ:
Շողե՛ր ջան:
Ուն կ'երևայ, ձուն կ'երևայ,
Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կ'երևայ,
Շողե՛ր ջան:
Աչունն եկաւ սարիցը,
Տերև թափեց ծառիցը.
Շողոն դարդով լըցուել ա, —
Հեռացել ա եարիցը:

ԶՈՒԼՕ

ՀԱՒԱ՛Ր Զուլօ, մադա՛ք Զուլօ,
Քեզի տեսայ, վառայ, Զո՛ւլօ,
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,
Բացուի՛ր, իմ վարդ Զուլօ:
Ես Ալեքն եմ Մասսարեցի,
Սիրուն, արի՛, ձեր տուն կեցի,
Դէմ աղօթքան եկեղեցի:
Հաւա՛ր Զուլօ, մադա՛ք Զուլօ,
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,
Բացուի՛ր, իմ վարդ Զուլօ:
Արևն ելաւ կամար կամար,
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Ես կը մեռնիմ քեզի համար:

Արևն ընկաւ ամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին
Ես քեզ սիրեմ, թող դիս քերթին:
Դու դաշտ կուգաս հուլա հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա,
Աչքըս տեսաւ, սիրտըս կուլայ:
Մեր ջուխտ գուլթան դաշտ կու բանի,
Զուլօ խաթուն հաց կու տանի,
Աչքով ունքով մարդ կու սպանի:
Հելե՛լ-վելե՛լ, մըսրու դոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ,
Զուլօն եղնի ինձի փեշքէշ:

ՇԱՔԱՐԻՑ ՀԱՄՈՎ ԱՂՋԻԿ

Ա՛յ աղջիկ ծամո՞վ աղջիկ,
Վա՛յ, ծամո՞վ աղջիկ,
Շաքարից համով աղջիկ.
Ընջաւոր, փնջաւոր, ա՛յ ծամո՞վ աղջիկ
Կարնիկ կուրնիկ վա՛յ համով աղջիկ:
Ունքերըդ խեղբըս տարաւ,
Վա՛յ, խեղբըս տարաւ,
Թուխ աչքերըդ ծով աղջիկ:
Ընջաւոր, փնջաւոր, ա՛յ, ծամո՞վ աղջիկ
Կարնիկ կուրնիկ վա՛յ համով աղջիկ:
Կապել ես քիրման գօտիկ,
Վա՛յ, քիրման գօտիկ,
Մարդ չես թողնում քեզ մօտիկ.
Տեսքով ես համով, հոտով,
Վա՛յ, համով, հոտով.
Քան ըղծաղիկ խորոտիկ:
Գըլուխըդ բարձր բըռնի,
Վա՛յ, բարձր բըռնի,
Շէկ տըղէն քեզի մեռնի.
Ինձի տան արար աշխարհք,
Վա՛յ, արար աշխարհք.
Ես ուրիշին չեմ առնի:

ՍԱՓՈՐԸՆ ուսիս դըրի,
Զա՞ն, եարո՞ ջան.
Երթամ աղբիւրը ջըրի.
Զա՞ն, եարո՞ ջան.
Ինչ փուչ դայ իմ առջևը,
Զա՞ն, եարո՞ ջան.
Զար աչքի սըրտով խըրի:
Զա՞ն եարո՞ ջան, ջա՞ն եարո՞ ջան.
Ես սիրեցի, ես առայ:

Արևը մէրը մըտաւ,
Սիրունը տէրը դտաւ.
Օտարի վատ խօսքերը
Իրանց սըրտի մէջ փըտաւ:
Աչխարհի մէջ տէր ունիմ,
Եարիս վըրայ սէր ունիմ.
Ճակատը բաց՝ խօսքի տէր,
Ինձի պահող հէր ունիմ:

ՀՈ՛Վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։ —
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։
Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զո՛վ արէք,
Վարար անձրև թափէք, ծո՛վ արէք։
Դէջ մարդու օր-արևը
Սև հողի տակով արէք։
Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։ —
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։
Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրնե՛ր,
Մի վեր կացէ՛ք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սրբոի ցաւերը։
Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։ —
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

ԿԱՔԲՎՆԵՐ

ԿԱՔԲՎՆԵՐ, կաքբվներ,
Ելէք երթանք ճաղցըներ։
Ճաղցի առուն ջուր կուկէր,
Ախջիկ լաճուն տիւր կուկէր։
Ճաղցի առուն կանաչ էր,
Ախջիկ լաճուն ճանաչ էր։
Ճաղցի տանիսը փոս էր,
Քեար կը թալիմ կը սոսէր՝
Սեռիկն իլին եղ էր,
Իմ եար թուխ աչք, թուխ պեխէր։
Ճաղցի առուն աւազ էր,
Ախջիկ լաճուն կավազ էր։
Իմ ծոցի կութին թուճ էր,
Իմ եարոջ երես պուճ էր։
Սարերն իլին ասեղ էր,
Իմ եար կէս նոր խասեր էր։
Սարերն իլին ալաչ էր,
Իմ եար ալաչ քալաչ էր։
Դարի տակի պաբտուն,
Իմ եար քեանց քեռն խովտուն։
Կաքբվներ, կաքբվներ,
Շիլայ չապիկ ծալ արէք։
Կարմիր երես խալ արէք։
Ձեր պաղ ծի խալալ արէք։
Պառձի տակն խոտ կուկէր,
Տեղն խակիցի փոնթ կուկէր։
Կաքբվներ կաքբվներ,
Ելէք երթանք ճաղցըներ։

ՀԱՐԲԵԼ եմ ու չեմ գինով,
կայրիմ ու չեմ կբրակով։
Հաղել եմ սիրու չապիկ,
ուորի դուռը կայնելու։
Դուռն ալ ներսէն ի դուրս,
ցը լի կարմիր խընձորով։
Ասի՝ թէ հատ մի առնեմ,
Թունդ ելաւ թուխ աչքը լալով։
Լացաւ ու լալով ասաւ.
«Ե՞ր, ինձ խաղք արիր ցերեկով։
«Բրոնեցիր զօռով ճօռով,
Պաղ արիր հազար նազերով.
«Այն մէկ ցերեկուան պաղը,
Որ կ՝արժէ հազար գիշերուան»։

Ս առուն ջուր է դալի,
տեսէք — ո՞ւր է գալի.
ՀԷ՛յ, գալիս է, հէ՛յ, սէր անէ։
Ինին մահանա արել,
եարին հիւր է գալի։
ՀԷ՛յ, գալիս է, հէ՛յ սէր անէ։
Վարդ եմ քաղել մաղերով,
Վէր եմ դբրել չաղերով.
Արի, իմ սիրելկան եար,
Առաջ դամ քեզ տաղերով։
Տանը տակին կայ նըռնի,
Ես բարձ քերեմ դռ կըռնի,
Ես դռ մի բաղում պիտենք,
Դռ չինարի, ես նըռնի։

Հօ՛դալըլօ, ջա՞ն, հօ՛դալլօ, ջա՞ն հօ՛դալլօ
Աղջի՞կ, սիրուն աղջի՞կ, անուշ դալըլօ՞։
Կայնել ես աղբերակին,
Հօ՛դալլօ, ջա՞ն, հօ՛դալլօ.
Շող կը տաս արեգակին.
Դա՛լալլօ, ջան, դա՛լալլօ.
Քո շող երեսին մեռնեմ,
Հօ՛դալլօ, ջա՞ն, հօ՛դալլօ.
Ունքերիդ աղեղնակին։
Դա՛լալլօ, ջա՞ն, դա՛լալլօ։
Մազերդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա.
Երկ՝օր ա, չէի տեսել,
Իմ սիրտը մոլորել ա։
Փող ես ուզում, քեզ փող տամ,
Ոսկի տամ, ո՛չ թէ հող տամ.
Թէ դբրան էլ հաւան չես,
Հոգիս հանեմ, քեզ փոխ տամ։

ԿԱՊՈՅՏ ԱԶՈՒԻ ԱՂՋԻԿ

ԿԱՅՆԵԼ ես վարդի հովին,
Վարդի հովին, հովին.
Քամին տալ կըրծքիդ մովին,
Կըրծքիդ մովին, կըրծքիդ մովին.
Երեսդդ շողին մեռնեմ,
Շողին մեռնեմ, մեռնեմ.
Աչքերուդ կապուտ ծովին:
Կապուտ ծովին, կապուտ ծովին:

Իրար հետ ծաղիկ քաղենք,
Ծաղիկ քաղենք, քաղենք.
Թըշնամու սիրտը դաղենք.
Սիրտը դաղենք, սիրտը դաղենք.
Մէկ մէկու խօսքէ չելնենք,
Խօսքէ չելնենք, չելնենք.
Աչխարհքում քանի սաղ ենք:
Քանի սաղ ենք, քանի սաղ ենք:

Առնեմ, երթամ էն սարը,
Առնեմ, երթամ էն սարը,
Առնեմ, երթամ էն սարը,
Սէր անելով իմ եարը:
Վըրան եմ զարկել դարին,
Պաշման եմ դըրել տարին.
Տարին թող դայ լըրանայ,
Հեարը բերէ իր բարին:
Առնեմ երթամ, ևն.:

Հէնց որ ծաղկի արևը,
Քեզի դըրկեմ բարևը.
Իմանամ դու իմ եարն ես,
Առնեմ, ելնեմ վերևը:
Քարի տակին պաղ աղբիւր,
Արծաթի թաս, ոսկի ջուր.
Ես կը վառիմ քո սիրուն,
Մի թաս ուզեմ, երկուս տուր:
Առնեմ երթամ1 ևն.:

ԱՐԱԶ

(Արազ Արաքս Գետի Պարսկերէն Անունն է)

ԿԱՊՈՒՏ քուռակ հեծել եմ,
Արազին ծառեցել եմ.
Ա՛խ, ջա՛ն Արազ.
Վա՛խ, եամա՛ն Արազ.
Արազ, ինձ մի ճամբայ տուր, —
Իմ եարին կարօտցել եմ:
Մի ճամբայ տուր,
Երթամ եարիս հիւր:
Արազը չունի գեամին,
Կըրծքիս ա տալի քամին.
Ես մի զարիր ջան ունիմ,
Զըհասանե՞մ Ոսկէծամին:

Ա՛խ, Արազ, Արազ, Խա՛ն Արազ,
Բինգեօլից բըղխան Արազ.
Ընկել եմ ես քու ծոցը,
Մի՛ տար մանի մանի Արա՛զ:
Խոր գետը ծով դառել ա,
Ինձ էլ հետը տարել ա.
Խեղճ աղջիկն այնպէս գիտէ,
Սէրս իրենից սառել ա:
Ա՛խ, Արազն է շատ վարար,
Դուրս ելնելու չունիմ ճար.
Եա՛ր, ոսկի ծամըդ բաց թող,
Քաշէ՛ ինձի, քեզ մօտ տար:

ՎԱՐԴԻ ՋՐՈՎ, եար, մաղերդ,
Շաղէ նազերով նազերով.
Ճղէ եօթանասուն պէօլիւկ,
Հիւսէ նազերով նազերով:
Եարս քընէն ե՞րբ է զարթեր,
Ծով ծով աչերդ մի թարթեր.
Արի՛ պարտէզ կարմիր վարդեր,
Քաղէ նազերով նազերով.

Խելքս առաւ երեսիդ դոյնը,
Հատցուցիր աչերուս քունը.
Եար, սիրովդ սրտիս տունը
Տաղէ նազերով նազերով:
Թիւրապ տատին տէրտէրն է ծով
Քու սէւտատ եղաւ ինձի հով.
Ման կուգամ կ՚ընկնիմ քովէ քով,
Վառէ նազերով նազերով:

ՆԱԶԱՆ

ՀՕ՛Յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Զա՞ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ.
Նա՛զան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.
Նա՛զան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօ՛յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Ինձ համար աղունիկ ես.
Զա՞ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ.

Գըլխիս վըրով պըտոյտ տուր,
Հօ՛յ, Նազան իմ, Նազան իմ.
Նախշուն-թև թիթեռնիկ ես:
Զա՞ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ:

ՍԻՐԱԾ ԵԱՐ

Եա՛ր ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.
Եա՞ր ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար:

Ճամբայ տուէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աչխարհ ալամ:
Սա՛բեր- ճո՛բեր, յետ կացէ՛ք,
Իմ եարի ճամբէն բացէ՛ք.
Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, լսացէ՛ք:
Նըշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանէկ էն աղջըկան՝
Սիրած եարին թուշ կըլնի:

ՇԵԿ ՏՂԱՅ

ԿՈՒԺՆ անուշ, ելայ սարը,
Զըգըստայ Ֆիդան եարը.
Ֆիդան եարը ինձ տուէք,
Զըքաշեմ ահ ու զարը:
Մեծ սարի հովին մեռնեմ,
Շէկ տըղի բոյին մեռնեմ.

Մի տարի ա չեմ տեսել, —
Տեսնողի աչքին մեռնեմ:
Բըլբուլը դարի վերայ,
Խընձորը ծառի վերայ.
Սիրած սիրածի տալին,
Զոր գեանչ՝ քարի վերայ:

ԼՈՐԻԿ

ԳԱՑԻ արտեր, բըռն՝ի լոր,
Աղջիկ տեսայ եայլի ձոր,
Նըման էր կարմիր խընձոր։
Լո՛րիկ, գարնան ֆարեր
Դու վարդ արիր, լո՛րիկ։
Նըման էր կարմիր խընձոր.
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ
Լո՛րիկ, գարնան ֆարեր
Դու վարդ արիր, լո՛րիկ։

Արև դիպաւ սարերուն,
Կաքաւ թըռաւ քարերուն,
Լորիկ կայնե՝ վեր դարուն։
Ջուր կուգայ գոչգոչալէն,
Գըլխուդ ես գըցե վալէն,
Լո՛ր, չես հարցնե իմ հալէն։
Քար մի թալի մեր գըշին,
Թող գայ նըստի քու թըշին,
Կըրակ տու զարիր փըշին։

ԵՐԿԻՆՔԸՆ ԱՄՊԵԼ Է

ԵՐԿԻՆՔԸՆ ամպել է,
Ի՞նչ անուշ թոն է.
Գամ գըռնէն անցնեմ՝
Հոգեակըս հոն է։
Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է.
Եարըս քընել է,
Երեսը բաց է։
Երկինքըն ամպել է,
Ի՞նչ անուշ երակ.
Սըրտիս մէջ լըցաւ
Մի բուռը կըրակ։

Երկինքըն ամպել է,
Գետին չաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով։
Երկինքըն ամպել է,
Գետինը մութ է.
Ես քեզ ուզել եմ,
Թո՛ղ ասեն՝ սուտ է։
Շորո՞ր գու, չէկիկ եար,
Տեսնեմ՝ գու ո՞ւմն ես.
Իրաւ եմ ասում՝
Դու իմ սըրտումն ես։

Աղջիկ եմ տանը գըրած,
Արծաթ եմ ոսկեջըրած.
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ.
Հօրն ու մօրըս ի՞նչ ասեմ, —
Ճակատիս էս ա գըրած։
Սիրել եմ, առնում եմ սիրատէրըս,
Առնում եմ, չի տալիս անսիրտ մէրըս։
Սիրել եմ սիրեկանըս,
Սիրել, մընացել տանըս.

Ա՛հ արա, երկիւղ արա,
Մի՛ էրի ջիւան ջանըս։
Մի ծառ ունիմ ծիրանի,
Քամին տերև կը տանի.
Քամի, ինձնից արի, տա՛ր,
Անուշ եարիս մատանի։
Մատանի ոսկեջըրած, —
Ա՛յ տըղայ, դու ինձ գըրած,
Պատճառին ի՞նչ մեղք ունի,
Ես քո սիրով չըղթայած։

Ա՛խ, մա՛րալ ջան,
ԿՈԿՈՆԸՍ թոռած մնաց,
Ջա՛ն, գեա՛րալ ջան.
Սիրտըս կըրակած մընաց.
Ա՛խ, մա՛րալ ջան,
Ի՞նչ անեմ իմ ապրելը,
Ջա՛ն, գեա՛րալ ջան.
Իմ աչքերը թաց մընաց։

Կամար ունքըդ գովեցիր,
Սիրել էիր՝ ատեցիր.
Ինձ պէս ուժով կըտրիճին
Դու անդանակ մորթեցիր։
Ջահիլ եմ, ընկեր չունիմ,
Ընկել եմ ես, տէր չունիմ,
Ոչ լաւ ասէք, ոչ էլ վատ, —
Հարըստութեան սէր չունիմ։

ՄԱՏՆԻՒԲԸ մատովըս չէր,
Ա՛խ.
Սիրածը սըրտովըս չէր։
Ա՛խ.
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ։
Դերձիկ մատներդ կոտրի,
Մինթանէն բոյովըս չէր։
Ջարդեար թեւերըդ կոտրի,
Քամարը մէջքովըս չէր։
Սիրածի հէրը մեռնի,
Սիրածը սըրտովըս չէր։

Ա՛խ կ՝անեմ, արուն կու գայ.
Սև սըրտիս զարուն կու գայ.
Կորուցել եմ իմ եարը,
Ո՞վ գիտէ երբ տուն կու գայ։
Արևը դիպաւ պատին,
Ո՛չ ողորմի իմ տատին.
Էս լէն արձակ աշխարհը —
Ինձի տուաւ աղքատին։
Սարերին զարուն կու գայ,
Սև սըրտիս արուն կու գայ.
Ի՞նչ անեմ այնպէս եարը, —
Պըտըտուի տարուն կու գայ։

ՍԱՐԵՐԻ վըրով գընաց,
Եա՞ր, եա՞ր.
Արօտով, արօտով.
Եարիս կարօտով.
Իմ եարը խրատով գընաց.
Եա՞ր, եա՞ր.
Մընացիր, մընացիր,
Ջինուոր գընացիր։
Աղջիկ էր հոտով-մոտով,
Եկաւ, անցաւ իմ ծոտով.
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,
Ու մընացի կարօտով։
Շէկ եարիս գըրի ճամբան,
Ափսո՞ս, չասի իրան բան.
Ճամբին օգնական չունի, —
Սուրբ Կարապետ պահապան։

Զեռնէս թըռնելով գընաց։
Եա՞ր, եա՞ր.
Մընացիր, մընացիր,
Ջինուոր գընացիր։
Ծաղիկ էր հոտով-մոտով,
Եկաւ, անցաւ իմ ծոտով.
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,
Ու մընացի կարօտով։
Շէկ եարիս գըրի ճամբան,
Ափսո՞ս, չասի իրան բան.
Ճամբին օգնական չունի, —
Սուրբ Կարապետ պահապան։

ԶԱԽԲԱԿ ՄԱՆՈՂ

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

ՈՍՏԱՆԱՑ պալաք սարեր,
Զեմ կանայ ջախրակ մաներ։
Ջախրկի ոան կէս ուռ էր.
— Ջախրակ մանող կէս ծուռ էր։
Ջախրկի ոան կէս բարտ էր.
—Ջախրակ մանող նամարտ էր։
Ջախրկի ոան կէս փուչ էր.
—Ջախրակ մանող պիւսիւչ էր։
Ջախրկի ոան կէս տանձ ի.
—Ջախրակ մանող կուտան ծի։
Ջախրկի ոան կէս նուչ էր.
—Ջախրակ մանող անուչ էր։

Ջախրկի ոան կէս նուռ ի.
Կարմիր աղջիկ ծուռ մուռ ի։

ԱՐԵ քէ տանեմ Ոստան,
Քէ կըտրեմ ճանֆաս ֆիստան,
Արե քէ տանիմ Սըվաղ,
Քէ առնեմ օխկէմ կիլաղ։
Արե քէ տանեմ Իղին,
Ռակի չարեմ քս ճակտին.
Արե քէ առնեմ քեամար,
Քէ կ՝առնեմ սրտիս խամար։

ՄԱՅՐՍ մանէ մանածս,
Ինա քաղէ ցանածս.
Պապս Հարոնիք է բռներ,
Զեմ ճանչնար նշանածս։
Ամպը լեցուեր ձիւն կուգայ,
Իրիկուն կ՝ըլլայ տուն չի գայ,
Այսպէս չոր քար բարձին վրայ,
Առանց եարի քուն չի կայ։

Այս ինչ բարձրկեկ լեռ է,
Ջուրը հիւանդին դեղ է.
Սիրածը սիրածին չէն տար,
Այս ի՞նչ տնաւեր տեղ է։
Թռչունի նման ըլլայի,
Թռչէի քովդ գայի.
Բարձիդ վրայ կանգնէի,
Սոխակի պէս խօսէի։

Սէրն ի՞նչ է, սիրուելն ի՞նչ է,
Կարիճ քու սէվտան ինչ է.
Ծառը բարձր, պտուղը քաղցր է,
Ձեռք չի հասնիր, ֆայտան ի՞նչ է։

ԲԱՍԵՆՑՈՒ ԽԱՂ

ՏԸ մանչ, էզման խելառ բաներ էնել մի՛,
Քու ճախը մի առնու ուրիշի դաւին.
Ձըլլի՞ օրըմ նատիս գու սատանի ձի,
Էրթաս քչս ըսես զրկըցի հաւին։

Մէկ պուտմ ջուր խմէ գու խելքի ծովէն,
Ջոկնուի անլիզու եզէն ու կովէն,
Գէշ մարդուն քրֆեն կը, փախնին կը քովէն
Ղուլ ու զաւրպան գըլլին ամենքն էլ լաւին։

Ես աչըդ Սրափն եմ, տարիս է քառասուն,
Անճախ վասըկել եմ մի քիչըմ անուն.
Անճալ կը մեռնիմ Աստըծու սիրուն,
Յարունքը մի մանի բրտուճըմ կաւին։

ԵՐԳ

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

ԵԼԷՔ, տեսէք, վո՞վն ի կերե մեր Թուփ,
— Ուլն ի կերե մեր Թուփ.
Ուլն էր թփան,
Թուփն էր իգիւն,
Իգ վարագայ
Տակնա կիւգայ,
Ինչ որ ասես վըրէս կիւգեայ.
Հալալ էր, վա՞յ ջալալ էր,
Ի՞նչ բարի տարիկ մ՝էր եկաւ վեր մե,
Գէօ վեր մե, գէօ վեր մե,
Գէօ վեր մե, գէօ վեր մե։
Ո՛ւ։

Ելէք, տեսէք վո՞վն ի կերե մեր ուլ,
— Գէլն ի կերե մեր ուլ.
Գէլն էր ուլուն,
Ուլն էր թփան,
Թուփն էր իգիւն,
Իգ վարագայ, ևն.։

(Սոյն երգը կը շարունակուի «Ելէք, տեսէք, ևն.» հարցումը կրկնելով վերջին ուտուածին վրայ. և հետևեալներէն մին, շուն, արջ, խոզ, օձ, խաւէ, թրռաֆանֆ, ժանգ, իւղ, մուկ, կատու, փէտ, հուր, ջուր պաղ, արև, ամպ, հով, աւելցնելով իրը ուտող. և յորդորակին մէջ նոր աւելցուածին հետ բոլոր նախորդները կրկնելով։)

Ելէք, տեսէք վո՞վն ի կերել մեր հով,
Ելանք տեսանք հովն է փախել գնացեր։
Վերջինն ասենք, պըրծընենք,
Մէկ մէկ դաւաթ էլ կոնծենք։

ՀՈ՛Վ, հո՛վ, հո՛վ լինի,
Եարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Եարքս համարով լինի
Դէ, թըռէ՛ֆ, թըռէ՛ֆ, հողը հանենք,
Մեր թըռնամու դողը հանենք։

Ծաղիկ ես ծաղկանց մէջին,
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես աղջկանց մէջին.
Եարիս տունը ծո՛վ լինի.
Եա՛ր, ինձ պարգևես արա,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Իմ ընկեր մարդկանց մէջին։
Եարիս համարով լինի,
Դէ՛, թըռէ՛ֆ, թըռէ՛ֆ, հողը հանենք,
Մեր թըռնամու դողը հանենք։

Արի մի վաթսար խաղանք,
Տընկող մընանք, չը կաղանք.
Հարսանիքիդ ալիւրը
Մուղնու ուխտից վաղ աղանք։
Իրար հետ բաղը գընանք,
Ուտենք, խըմենք, լիանանք.
Թըշնամու աչքը հանենք,

Պարտէզ ունիմ դըրախտ ա,
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա.
Գէշ աղջիկ, սիրուն տըղայ, —
Էս էլ մի ուրիշ բախտ ա։
Ոսկէ մատանիք մատներիս,
Շողքըն ընկաւ երեսիս.
Աքլոր չուտով մի կանչի,
Անքուն կանես իմ եարիս։
Սիրտս արնով լըցեցիր,
Կըրակով խորովեցիր.
Աչքըդ դուս դայ, ա՛յ աքլոր,
Ի՞նչ չուտ ձէնըդ դըցեցիր։

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Ձիւնն եկեր, գետին նախշեր,
Ո՞վ է տեսել սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ երկու աչքով կուրանայ։
Աչքըդ դէմ արա՝ պաչեմ,
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Կեռ ունքեր, կարմիր թըշեր։
Ո՞վ է տեսել սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ, երկու աչքով կուրանայ։
Ա՛յ գիշեր, դարձիր տարի,
Հացըս թող լինի դարի,
Մենակ եարըս ինձ համար
Սըրտով խօսքը կատարի։
Ա՛ղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրըդ հաւան կանեմ։

ԵԱ՛Ր.

Ա՛յ, հեա՛, հեա՛, սիրտըս,
Վա՛յ, եա՛ր, լէ՛.
Ճընճըղկան թեւ ա սիրտըս.
Եա՛ր.
Քան պուտը կարմիր չը կայ, —
Վա՛յ, եա՛ր, լէ՛.
Բաց անեմ՝ սև ա սիրտըս։
Պարտէզ եմ՝ չափար չունիմ,
Ի՛սկ կըտրիճ եմ՝ եար չունիմ.
Գընաց ձեռնէս իմ կեանքը, —
Զահրիլ եմ՝ խարար չունիմ։
Ուռի ծառին բար չի՛ընի,
Տակը քար ա, վար չի՛ընի.
Էն Աստուածն ու երկինքը
Սիրատէրին ճար չի՛ընի։

ԼՈՒՍՆԱԿԸ *սարի տակին,*
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.
Մամուռը քարի տակին.
Եա՛ր.
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛.
Ես իմ եարին կարօտ եմ,
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.
Քան վարդ ու մանուշակին։
Եա՛ր.
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛.
Աչքըս դըցել եմ սարին,
Ոտքըս տուել լեռ քարին.
Երթայ ու էլ ետ չը դայ,
Քեզ զինուոր դըրած տարին։
Կանգնեմ քարին ու սարին,
Գիր դըրեմ զարիր եարին.
Արցունքով դըրեմ, կանչեմ, —
Աղու կըտրի՝ սէնց տարին։

ՍԻՐՈ՛ՒՆ ջան, սիրո՛ւն ջան,
Սիրո՛ւն ջան, սիրտդ մի՛ բանա,
Նըշանած զինուոր եմ,
Ես չե՛մ դիմանայ։
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան,

Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի՝ ալ-վալայ ա.
Հեռու տեղ մի եար ունիմ՝
Նըրան հատիկ, լալայ ա։
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան, ևն.։

Էս գիշեր ես դուս ելայ,
Թաթախ ձընիկ թացել ա.
Կը կաթէր մարմար քարին,
Եարիս աչքն ա՝ լացել ա։

Լուսնակը բակ ա գըցել,
Քեզ ամպի տակ ա գըցել.
Իմ կուրացած բախտն էլ
Ինձի մենակ ա գըցել։

Ամպել ա կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Դու ուրիշ միտք մի՛ անի,
Մի ջան ունիմ քեզ համար։

ԼԷ՛, ԼԷ՛, ԵԱՄԱՆ ԵԱՄԱՆ ԿՈԼԷ

Արե՛, էրթանք մեր խաս պախչէն.
Ես վարդ քեաղեմ, դիւ ալուչէն։
Ես վուռնջ անեմ դիւ զարկ մախչէն։

Արե՛, էրթանք սարն ի սէյրան,
Կարմրիներես պըղտակա բերան։
Քո տարողի տընիկ վերան։

Արևն առե վէր խոր ծովուն,
Ես քե սիրեմ աչքան խովուն,
Ջուրն ի փըսթե կուգեայ սարէն։
Կուգեայ կաթի մարմար քարէն։

Էրևանայ բերած խամեմ
Լեզուդ դիր մէջ բերնիս ծամեմ,
Քո սիրտ մէջ իմ սրտին քեամեմ։

Վարդ կանաչ ի, քաղել չի դայ,
Եար պըղտիկ ի, սիրել չի դայ։
Շատ խօրօտ ի, թողնել չի դայ։

Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նըմանակ ես։
Մէջ իմ սրտին անանակ ես։
Լէ՛, լէ՛, եամանն, եամա՛ն, Կոլէ՛,

ԵՍ աղջիկ եմ, հէր չունիմ,
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ, լէ՛.
Մի սըրտացաւ տէր չունիմ.
Վա՛յ, լո, լո, լո՛, լո,
լո, լո՛, լո, լո՛.
Հօրից մօրից զըրկուած՝
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ, լէ՛.
Աչխատող ապրէր չունիմ:
Վա՛յ, լո, լո, լո՛, լո,
լո, լո՛, լո, լո՛:
Ղարիբ հաւքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի.
Ինձ նըման սևաբախտը
Աչխարհքումըս ի՞նչ ունի:
Ծագեց արևը սարէն,
Կանչեց կաքաւը քարէն.
Սիրածս էլ ա ինձ տուէք,
Լաւանայ սըրտիս եարէն:

ՊԷՕՇ պազըրկեան եկեր ի,
Թօփով պասմա պերեր ի,
Մեր կալատեղն իջեր ի.
Էն ալ եարոջ լաեղ ի:

Խօրօտ եազմա պերեր ի,
Ատլաս չապիկ պերեր ի.
Զարպաֆ իշլիկ պերեր ի,
Կուլթնի զըպուն պերեր ի:

Ոսկի քեամար պերեր է,
Ծաղկուն տալմայ պերեր ի.
Դեղին թայլիկ պերեր ի,
Նիշուն թաթեր պերեր ի,
Կարմիր սօլեր պերեր ի,
Ալմաս մատանիկ պերեր ի:

ՏՈՒՆ մ'եմ չինե գեսի բերան,
Վերէն թալե ջուխտ մ'գէրան.
Մէկն ի խոխէ, մէկն ի ծիրան,
Ծիրան փթխաւ եարոջ պէրան:
Էլայ տանիս թափ քէլիցի,
Կարմիր խնձոր կըլորիցի.
Լանգեով զարկի, էրտիս բացի,
Կդվայ վերէն իրիշկիցի:
Թոնէրն ընցաւ ձայն չըթալիցի,
Կաթը եռաց չըմէրեցի.
Տղէն ի լաց չօրօրիցի,
Իմ եար տուն չէր նստայ լացի:

Ա՛խ ու ալուան ես հազել,
Կարմիր լալա ես դառել.
Ինձ ասա քեզի մատաղ,
Իշլեկըդ ո՞վ է կարել:
Աղբէր ջան, քեզ զուրպան,
Դուն ես դու մեր գիւման:
Զեռքըդ թիւֆանք ես առել,
Տուշմանի դէմ ես կանգնել.
Կոլորակ բարակ մէջքդ
Փամփուշտներով ես ծածկել:
Աղբէր ջան, քեզ զուրպան,
Դուն ես դու մեր գիւման:
Մէջքըդ կապել ես խանչալ,
Տօսթին նախշածն է խալխալ.
Գոտիկիդ խանչալին մատաղ,
Կերածըդ կաթը քեզ հալալ:
Աղբէր ջան, քեզ զուրպան,
Դուն ես դու մեր գիւման:
Ախուծի պէս կանգնել ես,
Պէխերդ ոլորել ես,
Սև ու թուխ պեխիդ մատ ղ,
Յաղթանակը տարել ես,
Աղբէր ջան, քեզ զուրպան, ան

«Օղլան պէնի չայտան կէչիր» ի հետևողութեամբ
(վասպուրականի Գաւառաբարբառով)

ԻՄ գլխու ֆութէն կիտամ. (կրկ.)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողւորի մէկ լէ ես եմ,
Զեմ խանա ծամթելն ի ծովէն:
Իմ գլխու շամբար կիտամ, (կրկ.)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողւորի մէկ լէ ես եմ,
Զեմ խանա ծամթելն ի ծովէն:
(Այս վերջին երեք տողերը կրկնելու է հետևեալներէն ամեն մէկ նոր առարկայի կիտամը երգելէ վերջ)
Իմ խաքի չապիկ կիտամ, (կրկ.)
Իմ գօշի սրանոց կիտամ,
Իմ թեւի թեւնոց կիտամ,
Իմ վզի վզնոց կիտամ,
Իմ երեսի ճրթիկ կիտամ,
Իմ սերսուի ծամեր կիտամ,
Իմ մէյտան ճակատ կիտամ,
Իմ կամար ունքեր կիտամ,
Իմ ֆինջան աչքեր կիտամ,
Իմ մեղրիկ բերան կիտամ,
Իմ բոլոր յերես կիտամ,
Իմ չարմաղ ձեռքեր կիտամ,
Իմ սիվատակ գօշ քե կիտ...մ,
Իմ պօյն ու պուս լէ կիտամ,
Իմ ծամի ծանտրութ՛ի՛ն,
Ծամթելս կարե ինկե իծով.
Իմ ծամթելն խան տուր իգիս,
Քու ճրհէլ արևն ապով:
Իմ ջուխտակ աչից վրայ,
Ծամթելդ հանիմ խամ քըզի,
Ե՞ր կիտայ էն օրն Աստուած
Օր երանիկ խան մզի:

ԶԻ՞ՆՁ ու զի՞նչ տամ լողուորչուն:—
Զոմա զոմա էր:
Զիմ լաչակ տամ լողուորչուն:
Քոմա քոմա էր:
Ոչ էստ, ոչ հանեցաւ,
Զոմա զոմա էր:
Ոչ եհան ծամկալը. ի ծովէն:
Քոմա քոմա էր:
(Շարունակութիւնը վերի երգին պէս է. ամեն մէկ հարցին պատասխանելով իմ մէջկապ, իմ շապիկ, իմ աչքեր և. մնացածը կրկնելով)
Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն:—
Լուսնակ գիշեր պագ մի տուի:
Հետ էստ, հետ հանեցաւ,
Յետ եհան ծամկալն ի ծովէն:

ԱԼԱԳԵԱԶ — ԷՋՄԻԱԾԻՆ

ԱԼԱԳԵԱԶ բարձր տեղ ա եար
Ջուրը հիւանդի դեղ ա եար.
Էս սիրեցի, վայ խալիսը տարաւ իմ սիրած եարը,
Թէ որ չառնեմ վայ ես կը մեռնեմ իմ անուշ եարը:
Քեզի մեռնեմ էջմիածին,
Ազատ անող Աստուածածին
Նանէ՛, նանէ, նանէ, նանէ ջան:
Նանու զարդեր սարերով է,
Էրուում եմ, վառուում եմ,
Զեմ գնայ նանէ ջան,
Նանէ՛, նանէ ջան:
Նանէ՛, նանէ, նանէ, նանէ ջան:

ՁԻՆԱՐ ես, կեռանա՛լ մի,
Եա՛ր, եա՛ր.
Մեր դըռնէն հեռանա՛լ մի,
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
նա՛յ, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ.
Եա՛ր, քո Աստուած կը սիրես,
Եա՛ր, եա՛ր.
Հեռու ես, մոռանա՛լ մի:
Եա՛ր, եա՛ր,
Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ
նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:
Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներըս չաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերըս լիքը լաց ա:
Էս գիշեր երազ տեսայ,
Հերկերըս վարած տեսայ.
Ամո՛թ քեզի, ա՛յ տըղայ,
Քո եարը տարած տեսայ:

ԱՂՋԻ դու հուր ես — մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
Էս Համբարձման գիշերը
Քեզ ման կը դամ, դու ո՞ւր ես:
Խընձորը գլորել եմ,
Ճամբիցը մոլորել եմ.
Երեք տարի միալար
Քեզ վըրայ սովորել եմ:
Ամպաչող լուսնի նըման
Խաղ ասելով կը դաս ման.
Իմ պայմանը քեզ հետ է,
Դու ե՞րբ կը տաս քու պայման:
Սաղն առնեմ ձեռըս քոքեմ,
Գամ ձեր դըռանը չոքեմ.
Ըլնի թէ ես հընարքով,
Քեզ էնտեղից ես պոկեմ:

ԳՈՒԹԱՆԸ հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տե՛ս քեզ ո՛րքան եմ սիրում, —
Զուկը տապկած եմ բերում:
Էս օր գութանը մերն ա,
Մաճ բըռնողը իմ հէրն ա.
Եգնարած չէկլիկ տըղէն՝
Աչխարհ գիտէ՝ իմ տէրն ա:
Վեր կացած հաւախօսին՝
Գութանն ա վարում փոսին.
Բարկ արևը երկընքում՝
Շողն ա դիպել ակօսին:
Հա՛ւքեր- թևանի արէք,
Եարիս հովանի արէք.
Թո՛ղ բարակ քամին փըչի,
Հեռն էլ դուք նանի արէք:

ԽԸՆՁՈՐ ունիմ կըծած ա,
Զորս բոլորն արծաթած ա,
Ավներում մեխակած ա,
Մէջը ոսկով լըցած ա:
Մէրիկս ուզեց, չը տուի,
Հէրիկս ուզեց, չը տուի,
Աղբէրս ուզեց, չը տուի, —
Անուշ եարի ղըրկած ա:

ԱՆՁՐԵԻՆ եկաւ չաղալէն,
Ուռի տերև դողալէն.
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Հըրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակին խաղալէն:
Վա՛յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛:
Դէմ աղօթքան խաչ անեմ,
Թըշնամու դէմ չանչ անեմ.
Ձեռըս դըցեմ վըզովը,
Մի երեսը պաչ անեմ:
Խալիչէքը փըռել եմ,
Նախչուն բարձեր դըրել եմ.
Թաւլան ջան, քեզ ուտելու
Սեր, կարագ հազըրել եմ:
Տապկած հաւի ճուտ բերեմ,
Ոչխարի մածուն մերեմ.
Որ գիտենաս, անո՛ւշ ջան,
Թէ քեզ սըրտով կը սիրեմ:
Ղուշ մի՛ դառնա թեւաւոր.
Դու խաղ կանչի ձեւաւոր.
Եարաբ, կ՚ըլնի՞ էն օրը,
Որ դաս մեր տուն թապաւոր:

ԳՕՇՄԱ

Երկնից անցաւ ճէօշ դաղը,
Ուստան չալեց իր սազը, վա՛յ լէ՛.
Շան տղայ, հերիք խօսաս,
Ձեմ կարայ քաշի նազը. վա՛յ լէ՛:
Ուռիդ տակին երկու դօշ,
Մինը փինջած, մինը ոչ. վա՛յ լէ՛.
Աստուած դիւանիդ մեռնիմ,
Մինին կտաս, մինին ոչ. վա՛յ լէ՛:
Ծամեր ունիմ ծիրանի,
Քամին թերթեր կը տանի. վա՛յ լէ՛
Տանին դնեն դիւանի,
Ում դսմաթը կը տանի. վա՛յ լէ՛:
Սև գիտես կարմիր գիտես,
Մեր բաղի քարեր գիտես. վա՛յ լէ՛
Հարիւր մանէթ մուչտուլուղ,
Իմ եարի տեղը գիտես. վա՛յ լէ՛:
Բարտի ծառը բարձր ա,
Սիրած եարը քաղցր ա. վա՛յ լէ՛.
Գընա հօրը հարցընա,
Թէ որ չտայ փախցրա. վա՛յ լէ՛:
Կաքաւը տարի վերայ,
Կտուցը քարի վրայ. վա՛յ լէ՛.
Մի այլուղ վարդ եմ քաղել,
Իմ սիրած եարի վրայ. վա՛յ լէ՛:
Զայտան բերէք չայ անենք,
Մեր դիւժինին փայ անենք. վա՛յ լէ՛
Մեր դիւժինը սաղ ըլնի,
Հայոց թագաւոր ըլնի. վա՛յ լէ՛:
Ես կայնել եմ կարմնջին,
Ոսկէ դնդեր ակնջին. վա՛յ լէ՛.
Խարար տարէք զոքանչին,
Աղջիկ թող տայ կարճին. վա՛յ լէ՛:
Զաղցի առուն լողացայ,
Գիւլլի այլուղ դողացայ. վա՛յ լէ՛.
Եօթը տարի հիւանդացայ,
Եարս տեսայ լաւացայ. վա՛յ լէ՛:
Աղջիկ անունդ ասա,
Գլխիդ այլուղը խաս ա. վա՛յ լէ՛.
Ալ տղայ սիպտակ աղջիկ,
Բոներ էք իրար եախա. վա՛յ լէ՛:
Զրի ձէջը դոչ պիտի,
Իմ եօրտէքը սաղ պիտի. վա՛յ լէ՛.
Ինչ եմ անում թոլընկի,
Իմ եարս չահի տաղ պտի. վա՛յ լէ՛:

ՓՈԽ ԱՌ ՓՈԽ

ԱՂՋԿԵՐՔ, պա՛ր բռնեցէք,
Արմիկի երես գովեցէ՛ք,
Ա՛յ երես, չարմաղ երես,
Դու մեզ չթողնես սևերես։
«Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լլայ։
Ա՛յ երես, արև երես,
Քո չափաղով մեր սիրտ կ՚էրես։
— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէ՛ք։
Ա՛յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պէս վայլուն աչեր։
«Արմիկի աչերն արեղակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ։
Ա՛յ աչեր, վառ վառ աչեր,
Մանուշակի թառ թառ աչեր։
— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի կոներ գովեցէ՛ք։
Ա՛յ կոներ, ուժեղ կոներ,
Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ։
(Արևամանուկից)

«Արմիկի կոներն է գերան,
Կը պատառի վագրի բերան։
Ա՛յ կոներ, գթոտ կոներ,
Դուք կը բանաք մեր փակ դռներ։
— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի հասակ գովեցէ՛ք։
Ա՛յ հասակ, բարձր հասակ,
Քեզ վայել է կաղնի պսակ։
«Արմիկի հասակն է սօսի,
Շուքը մեզանից չը պակասի։
Ա՛յ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չիտար քեզ թաղ ու պսակ։
(Միասին և Թուչկոտելով)
Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան։ Հա՛յ
Վագրի բերան — ահա՛ այսքան —
Ժանիքները մէկ մէկ գերան։ Հա՛յ
Ժանիքները մէկ մէկ գերան։
Ապրի Արմիկ, ապրի շատ օր։
Իր թշնամին ընկնի գլոր։ Հա՛յ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԽՈՒՄԱՐ պառկէ երեսբաց,
Հա՛պ, հա՛պ, հապպըտա՛, դրմբա՛։
Դեղին կարպետ, բըմբուլ բարձ։
Հա՛պ, հա՛պ, հապպըտա՛, դրմբա՛,
Հէ՛յ հէ՛յ, լա՛ւն է, հէ՛յ հէ՛յ լաւն է,
Հէ՛յ հէ՛յ, լա՛ւն է, հէ՛յ հէ՛յ լաւն է։
Անուշ քընե երես բաց,
Սահակն եկաւ խելք գընաց։
Հաջոնց բակն էր զալդըրմա,
Աչնան թոխլին զաւուրմա։
Խաբար տարէք ըռեսին,
Գեաղէք թափան վեր մըսին։

Հէրօն ուտէր, գիրանար,
Մըկօն խըմէր, ուրխանար։
Հաջոնց կալը բոլորպար,
Խումար մէջը կը խաղար։
Ծամեր թալուկ իւր յետև,
Կը թըռվըռէր շատ թեթև։
«Հասա՛տ մընայ մեր Հաջին,
Որ պահէ մեր նոր փեսին»։
Գարնան բացուեց նոր լալա,
Խումար բերեց ջուխտ բալա։
Աչքըդ լոյս, Հաջի աղա,
Թոռներուդ հալաւ արա։

ՍԻՐԵՑԻՐ ՁԱՌԱՐ, ԿԸՐԱԿԻԱՐ ՎԱՌԱՐ

ՁԱՏԻՐ եմ տուել սարին,
Նա նայ, նա նայ։
Վաստայ եմ կարել տարին։
Սիրեցիր չառաբ, կրակւաբ վառաբ։
Էնքան քեզ խետ չեմ խօսի,
Նա նայ, նա նայ։
Բարով էլնենք եայլըղին։
Սիրեցիր չառաբ, էն։
Բամպակ եմ ցանել խոզայ,
Լէ, լէ, լէ,
Մի եար եմ բռնել թազա։
Սիրեցիր չառաբ, էն։
Դէզ եմ դրել հաւան չեմ, նա նայ։
Ես իմ գըլխին տիւան չեմ։
Սիրեցիր չառաբ, էն։
Ինձ կաքուայ մորթ արէք, լէ լէ։
Ես էն գեատին հաւան չեմ։
Սիրեցիր չառաբ, էն։
Գնացի գետը լուացք, նա նայ։
Սապոնս էր ոսկեջրած։
Սիրեցիր չառաբ, էն։
Ի՞նչ անայ հէրս ու մէրս, լէ լէ։
Ճակատիս էն էր գրած։
Սիրեցիր չառաբ, էն։
Աղջիկ անունդ Մահի, նա նայ։
Ճակատդ բոլոր Շահի։
Սիրեցիր չառաբ, էն։
Մի պաղ կ՚ուզեմ երկու տուր, լէ լէ։
Ասուած աղբերդ պահի։
Սիրեցիր չառաբ, էն։

Բերդի գլխին էլ ունիմ, նա նայ։
Ըռանկ ըռանկ թել ունիմ։
Սիրեցիր, չառաբ, էն։
Թանչիկ մանչիկ սարկաւագ, լէ լէ։
Քեզնից խէհրի էլ ունիմ։
Սիրեցիր, չառաբ, էն։
Բերդի գըլխին մալա ա, նա նայ։
Ի՞նչի արիր ա՞խ ու վուխ։
Սիրեցիր, չառաբ, էն։
Հէնա եկաւ իմ աղբէր, լէ լէ։
Բեխեր սուրմայ, քեանքուլ թուխ։
Սիրեցիր, չառաբ, էն։
Կողբայ պատերը գրած, նա նայ։
Եարբս տակին էր քընած։
Սիրեցիր, չառաբ, էն։
Ձէն խառ, ձէնքս չառաւ, լէ լէ։
Էս ի՞նչ անուշ էր քընած։
Սիրեցիր, չառաբ, էն։
Բաղչի բոլոր խամիչ էր, նա նայ։
Բաղչէնը լիք եմիչ էր։
Սիրեցիր, չառաբ, էն։
Ա՛յ, նանի ջան, մեզ մի դիր, լէ լէ։
Սըրտի սիրածն անուշ էր։
Սիրեցիր, չառաբ, էն։
Էս բաղչէնը քարով էր, նա նայ։
Իմ սէր քո սէր տարով էր։
Սիրեցիր, չառաբ, էն։
Ի՞նչ անեմ գոմով տաւար, լէ լէ։
Ես կ՚երթամ եարիս համար։
Սիրեցիր, չառաբ, էն։

ՄԸՆԻՐ (Մարիամի Աղաւաղածն է)(Տիգ. կերտի Գաւառաբարբառով)

Ո՛ւյ Մընիր, Մընիր, Մընիր,
Հերու պըլպուլ կըլմընիր,
Էս տարի լալ իս էղիր։

ԴԷ՛ ԳՆԱ՛ ԿՈՒԳԵԱՄ

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

ԴԷ ԳՆԱ՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ չուտ կիգամ,
Նըխշուն միզարս առնեմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Խօրոտ բըճերս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛, կիգամ, չուտ կիգամ։
Գլխուս լաչին առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Թափալիկներս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Ապըռջաններս առնիմ իգամ չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Միզրիս կապերն առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Էրեսնոցներս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Դեղ ու դեղդիրս առնեմ իգամ, չուտ կիգամ։

ՎԻՃԱԿ

Վիճակ նստե վեր իշուն,
Վիճակի փեշերն ի նիշուն,
Ագաբ լաճեր վիճակի շուն,
Ջան վիճակ, ջան, ջան։
Վիճակ նստե պով կանի,
Վարդն երեսին խով կանի·
Ջան վիճակ, ջան ջան։
Կէս լեանդառի վարդ եմ ես,
Եարոջ խատար պացվայ ես·
Ջան վիճակ, ջան ջան։
Վիճակ նստե կար կանի,
Ասեղ կոտրաւ վըշ կանի·
Կեսուր մեռաւ թըշ կանի,
Ջան վիճակ ջան ջան։

Վիճակ արե քի տանեմ,
Տանսէ տանիս քի նանեմ·
Լէն անթարով քի պախեմ,
Ջան վիճակ ջան ջան։
Տեսէք վիճակն ի՞նչ կանի,
Սրտի ուզածն ի՞նչ կուզի·
Խորերով ցորեն կուզի,
Արտերով գարի կուզի·
Ջան վիճակ ջան ջան։
Վիճակն ինկեր ի գերի,
Ագաբ լաճերաց ձեռ ի·
Տուն երկու ձու կը ժողվեմ,
Քե գերութինից կը խանեմ։
Ջան, ջան, վիճակ ջան։

Վիճակ վիճակ տիւս ելաւ,
Վիճակի վերէ՝ լոս իջաւ·
Իմ նազուս եարոջ խաթրին,
Էն ի՞նչ աղէկ բաղդ եկաւ։

ՀԱԲԸՐԻԱՆ

Տղայ Հա՛բըրբա՛ն
Աղջիկ Ջա՛նէ ջա՛ն·
Տղայ Սիրել եմ՝ սէրն երեսին,
Անթառամ թերն երեսին·
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Ատածու կերն երեսին։

Աղջիկ Հա՛բըրբա՛ն
Տղայ Ջա՛նէ ջա՛ն·

Աղջիկ
Սարի թըրթընջուկ թազա,
Մեղր ու շաքար քեզ ծազա·
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սազայ։

Տղայ
Պըզտի՛կ աղջիկ· համ ունիս,
Զորեքդիմաց ծամ ունիս,
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,
Ինձ առնելու կամ ունիս։

Աղջիկ
Գուլթանըդ հոլա՛, հոլա՛,
Գուլթանիդ տակը քոլ ա,
Քանի գըժութիւն անես,
Քեզի առնողը տոլ ա։

Տղայ
Ձեր տան տակին վար կանեմ,
Ձար ագռաւին քար կանեմ,
Թող իմ սիրածն ինձի տան·
Գըժութիւնըս թարկ անեմ։

Աղջիկ
Ջուրը իր ճամբով կ՝երթայ,
Ցօղածը վարդի թերթ ա,
Ինձ սիրող կարիճ տըղէն՝
Հազարի մէջ մի բերդ ա։

Տղայ
Բուսել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին·
Գիշեր ցորեկ միալար,
Դու ես իմ խաղի միջին։

Աղջիկ
Աշուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս տաղ ասա,
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

ԿՈՒԼԷ

ԿՈՒԼԷՆ էլի կերթայ կանդալ,
Կուլէ հօյնար, հօյնար, հօյնար·
Ծամերն եաւ խանկեալ խանկեալ,
Կուլէ հօյնար հօյնար, հօյնար։
Կուլէն կուդայ պերատեսլէն,
Ուր կը փոխի չօրօրալէն·
Կուլէն էլի կերթայ խաչեր,
Ճըռվըռուն սօլեր ի ոտներ։
Կուլէ էլի նստի քեռամին,
Կիրիչկա վեր ամկու տարին·
Կուլէն նստե վեր պանցր քարին,
Զղզըղալէն կուկէր քամին·
Կուլէն նստէ դէմ աղօթրան,
Նըշանց կուտայ ջուխտ մ՝չամամ։

ՊԱՐԵՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԵԱՑ

Խումբն ամբողջ

ԳԱՐՈՒՆՆ եկաւ զուարթ դէմքով,
Լեցուց դաշտերն հազար բերքով.
Գարի, վարսակ, ցորեն ունինք,
Ալ ի՞նչ կ՚ուզենք, պէտք է հերճուինք։

Այծ ու ոչխար, հաւ, սագ և բաղ,
Գիրուկ կովեր որ տան մեզ կաթ.
Մեր տարեկան պարէնն ունինք,
Ալ ի՞նչ կ՚ուզենք, պէտք է հերճուինք։

Ձմրան համար տաք հանդերձանք,
Կ՚ելլան մեզի բուրդն ու բամպակ.
Շերամ, մետաքս, զարդեր ունինք,
Ալ ի՞չ կ՚ուզենք, պէտք է հերճուինք։

Աշխոյժ տղայք, կարմրուկ աղջիկք
Պարգևած է մեզի երկինք.
Երբ ըզգացում, սիրտ, սէր ունինք,
Ալ պէտք է որ սիրենք, սիրուինք։

Դերասանք

Եկէ՛ք տղայք, մէկ խօսքով՝
Շարուինք զոյգ զոյգ քովէ քով.
Սրբտերնուս ուզածն առնենք,
Մինչ առտու խընդանք, պարենք։

Դերասանուհիք

Ահա գըտանք ընկերնիս,
Երթանք շարուինք տեղերնիս.
Գրկենք զիրար և պարենք,
Սուրբ սիրով զիրար սիրենք։

Գիւղացի մը

Նըստենք սեղան մեր գեղջկական,
Ուտենք համով հացն ու չաման.
Մարսենք ինչ որ պատրաստ ունինք,
Կարագ, մածուն և թարմ հաւկիթ։

Զը խմենք գինին առանց ջրի,
Ու չըզարկած գաւաթ բաժկի.
(Թռաք թռիք թռաք.)

Զի առանց ջրոյ թոյն է գինին,
Ու մեծ վնաս ըստամոքսին։

Դերասանք

Հերճուինք, տըղայք, այս ալ օր մ՚է,
Զի կարճ կեանքին մահն յաջորդէ.
Ապրինք ուրախ, չըլլանք մոլի,
Գէշ ախտերէն ըլլանք հեռի։

Դերասանուհիք

Քաղաքացւոց սէրը պիղծ է,
Մէկ համբոյրնին մահը կ՚արժէ.
Հեռի ըլլանք զեղխութենէ,
Որ աղջկանց գերեզման է։

Խումբն ամբողջ

Սիրենք, բայց միշտ.
Սիրենք զիրար, չըլլանք մոլի,
Գէշ ախտերէն ըլլանք հեռի.
Կեցցէ՛, կեցցէ՛ մեր գիւղապետ,
Օրհնութիւններս այս ըլլայ դէմ։

(Պար)

Խումբն ամբողջ

Երթանք, տղայք, զի վաղն ՚ի դաշտ
Մեզ կը սպասէ ցորենի սանդ.
Անուշ զեփիւռն առաւօտուն,
Կ՚ուզէ ըլլալ մեզ միշտ արթուն։
Ծեծենք, մանրենք, մաղենք մենք անդադար,
Ցորեանն, գարին, վարսակն, բրինձն ու հաճար.
Երթանք, երթանք, լաւ քընանանք,
Որ վաղն առտու կանուխ ելլանք։

Գ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

ՍԱՐԷՆ կուգայ ձիաւոր,
Վայ լէ, լէ, լէ, լէ,
Մեր տունը չարտախաւոր։
Ինջիլիկ, փինջըլիկ նը չարտախաւոր։
Եար, եար, կարճըլիկ եար, եար,
Ինջիլիկ, փընջըլիկ, կարճըլիկ, եար
Եար եար եար եար եար եար եար եար։

ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ

ՍԱՐԵՐԸ ման եմ եկել, եարնայ . . . նանի ջան,
Սիրած եարիս ծաղիկ քաղել, եարնայ, նանի ջան . . .

Ծաղիկ, վարդ իրար հիւսել, եարնայ . . . նանի ջան,
Դարգլու բալիս մի փունջ կապել, եարնայ, նանի ջան:

Բլբլուլը կանգ է առել, եարնայ, նանի ջան,
Ալ վարդերուն աչք է առել, եարնայ, նանի ջան:

Արիւն է սիրտը կապել, եարնայ, նանի ջան,
Շաղ ու ջավհար արցունք թափել, եարնայ, նանի ջան:

ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ Ձայնագրածներէն

ԵՍ աղջիկ եմ եար կ'ուզեմ, եաման ճան.
Մէջքիս չալէ ճառ կ'ուզեմ, եաման ճան.
Որ տունն որ հարս երթամ, եաման ճան.
Ոսկին սարեսար կ'ուզեմ, եաման ճան:
Հորթը կովուն կապեցի, եաման ճան.
Նստայ տակը կթեցի, եաման ճան.
Մեղր ու կարագ, կաթ ու իւղ, եաման ճան.
Ազիզ եարիս ղրկեցի, եաման ճան:
Պրլպուլ եմ վարդ մ'կուզեմ, եաման ճան.
Ձիս սիրող եար մ'կուզեմ, եաման ճան.
Թէև վարդ դեռ չէ բացուած, եաման ճան.
Ես գիրկդ հանգչիլ կ'ուզեմ, եաման ճան:
Ա՜խ, մի հալեր մի մաշեր եաման ճան.
Եւ իմ դարտս մի մարեր, եաման ճան.
Պիտի տեսնես գիս չուտով, եաման ճան.
Ես եարդ եմ շատ դուխով, եաման ճան:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

Իմ եար բարձրագնայ լուսին, յո՞ւր կ'երթաս գիշերդ անհուն,
Շատ չերդիք է վար հայիս, կու տեսնես շատ կիւզէլ է քուն,
Եւ զկոճիկս ալ արձակ արեր, լոյս դիպեր է մէջ ծըծերուն,
Շառաւիղ չերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Վայ լէ լէ, լէ լէ, լէ լէ,
Վայ լէ լէ, լէ լէ, լէ լէ:
ԵՐԵՒԱՆԱՑ սարիցն եմ,
Մեծ բաղի խնձորիցն եմ, վայ լէ..
Քամին տուեց թալ արեց,
Վաթանս մորաբ արեց:
Վայ լէ լէ, ևն.:
Այգը հեշտացել ա,
Ծամրէքը կոշտացել ա. վայ լէ...

Ի՞նչ անեմ հօրս ու մօրս,
Դարտերս չատացել ա:
Վայ լէ լէ, ևն.:
Առուի վրի ճիչ խոտը,
Շան ոգի անուշ հոտը.
Վայ լէ...
Բխով ելաւ ոտքս ինկաւ,
Մեխակ եղաւ ծոցս ինկաւ:
Վայ լէ լէ, ևն.:

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

Ածու մ'եմ ցանի, սատա նարգիզ ի,
Իմ եարոջ մեռնեմ, ազիզ մազիզ ի.

Ածու մ'եմ ցանի, սատա պիպէր ի,
Իմ եարոջ մեռնեմ, թազա նուպարի

Ածու մ'եմ ցանի, սոխերն ասմա ի,
Իմ եարոջ մեռնեմ, պօյը չինար ի.

Ածու մ'եմ ցանի, սատա սխտոր ի,
Իմ եարոջ մեռնեմ, սրտիկ պղտոր ի

Էլեր ես իգին, խնձոր կը քաղես,
Ինոր չորս բուլոր կանաֆիլ չարես
Արե՛, եար, արէ՛, խոով մի՛ մնա,
Սուտ փուճ աստնուոր ձիկ քե չիմնա

Ցորեն եմ ցանե խետ գիւթնի ական
Ճողերն ի թալե խետ արեգական.
Քեաղելու էլայ, ծիկ դամաթ չեղաւ,
Իմ եարոջ սրտիկ վէր ծիկ խուն էլաւ:

Ես նռան գինի, գիւ անուշ քեասա,
Գիւ լից, գիւ խմի, քէօ դարտ ծիկ ասա
Արե, տօստ, արե, խոով մի մնա,
Ասանուորիս մալ ծիկ քե չի մնա:

ԳՕՇՄԱ (Ցարմարցուած)

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

«Զան գիլում»ի եղանակով

Ա՛յ տղայ, բաղի միջին,
Ոտներըդ չաղի միջին.
Կանչ՛ի, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո խաղի միջին:
Ես աղջիկ եմ, ալ կ՚ուզեմ
Բողչէս ծալէծալ կ՚ուզեմ.
Երբոր եարի տուն երթամ,
Գօտիս քիրման չալ կ՚ուզեմ:
Ա՛յ աղջի, ասա՛ մասա՛,
Ծամերիդ ծէրը խաս ա.
Թուշըդ դէս արա պաչեմ,
Վազի, գնա մօրդ ասա:
Արխալուղըս կարել եմ,
Ոսկէ կոճակ չարել եմ.
Նանի ջան, տարա մի անիր,
Ես սիրածըս ճարել եմ:
Կանգնել ես բարձրը հովին,
Փըսիրուում ախչիդ մովին.
Էրնէկ ծոցիդ քընողին,
Շամամ ծրծերըդ բրնողին:
Ես լուսատաղ եմ երկնքին,
Շողքըս տուած գետինքին.
Դեռ շատ կարօտ ման կը դաս
Էս իմ չալ աչք, կեռ ունքին:
Քանքուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ.
Լըսել եմ կարդացուր ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ:
Ծառի տակը հով քամի,
Քանքուլըդ քամին տանի.
Բա դու սարում ու ձորում,
Իմ քունը ո՞նց կը տանի:

Քաղել եմ ծիրան ու նուշ,
Մեր պաղչիցն էլ վարդ անիուշ.
Փունջ կապեմ, ախպօրըս տամ,
Պաչ անեմ իր կարմիր թուշ:
Զիթ եմ հագել, սաղով ա,
Գըրիխս մազը գազով ա.
Հալրաթ ես էլ նազ կ՚անեմ,
Երբ իմ եարը նազով ա:
Սարերի սինձ ի՞նչ կ՚անեմ,
Կաթով բրինձ ի՞նչ կ՚անեմ.
Թող իմ սիրած ինձի տան,
Ոսկի, արծաթ ի՞նչ կ՚անեմ:
Սարերումը տուն ունեմ,
Միջին ոսկի սիւն ունեմ.
Ա՛յ, չան տղայ, քիչ խօսա՛,
Քեզ պէս հազար չուն ունեմ:
Ամպել ա ամպի տակին,
Ծունկըս ծնկանըդ տակին,
Ես քեզ ո՞բաեզ սիրեցի,
— Խնձորի ծառի տակին:
Ա՛յ, տղայ, դու հէր իս, մէր իս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս.
Տեղումըս քեզ տեղ չկայ,
Գըլուխըդ դիր կըռներիս:
Ճըրաղ դընեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քու մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:
Գիւլում, գիւլում, գիւլ, չիչակ,
Ես, դու մանենք մի դօչակ.
Մինչև լոյսը քըչփըչանք,
Լոյսից յետոյ կըչկըչանք:

ԶՈՒԼՕ

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

Գօշմա — Ցարմարցուած

Ես Զուլօն եմ Մաստարեցի,
Հօ՛յ նայ, ջանըմ նայ,
Հինգ օր արի մեր տուն մնացի.
Հօ՛յ նայ, ջանըմ նայ.
Դէմ աղօթքան եկեղեցի,
Հօ՛յ նայ, ջանըմ նայ:
Մեր տան խաւ արտ մը եօնջայ,
Թըխեմ դաթայ, ճամբեմ խօնչայ.
Անունեմ Զուլօն, ման դամ Գեանջայ:
Մեր տան խաւ ջուխտ մը գերան,
Բուլոր երես, պըստիկ բերան.
Քե սիրողին տնիկ վէրան:
Դու կայնել ես մէջ ամրոցին,
Ջուխտակ չամամ մէջ քու ծոցին.
Դու կը խաղաս խետ վըզնոցին:
Դու կայնել ես տարկեահի դուռ
Մէջքըդ նմանի խանչէլի բուռ.
Ձիկ ըրեցիր սէվտալի ծուռ:
Տընէն ելար հալա հուլա,
Ծիծուէրդ նմանի բամպկի քուլա,
Աչքերս տեսան, սիրտըս կ՚ուլայ:
Դու կը քելես եանայ, եանայ,
Մէրիկանդ ասի դուռը բանայ.
Իրար սիրենք, մարդ չիմանայ:
Առաւրտման բարի լիսուն,
Քէօ կոճկըներ խարիւր խուն.
Ես կուրպան եմ էդ քէօ տիսուն:

Մեր տան խաւ քառասուն կարաս,
Քառասուն կարսի գինին էր խաս.
Ոսկի գիւգում, արծըթէ թաս,
Ամեն թասին պաչիկ մը տաս:
Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Դուն կապել ես կարմիր գօտիկ.
Երթանք քաղենք կանանչ խոտիկ,
Տեանանք վի՞ր եարն է խօրոտիկ:

(ԹԷՖԷՐԼԷՄԷ)

ԱԼԱԳԵԱԶ սարն ամպել ա,
Վա՛յ, լէ՛, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ, լէ՛.
Աղբէր իր ձին թամբել ա:
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:
Աղբէր իր ձին թամբել ա,
Եարոջ դռնէն անցել ա:
Եարոջ դռնէն անցել ա,
Ելե դաշտը՝ խաղցել ա:
Ելե դաշտը՝ խաղցել ա,
Անձրև եկե, թըրջել ա:
Անձրև եկե, թըրջել ա,
Արև զարկե՝ չորցել ա:
Արև զարկե՝ չորցել ա,
Քան կարմիր վարդ բացուել ա:

ՍԻՐՈՑ ՏԱՂԵՐ

Աչերդ է ծովէն առած, ու յօնքերըդի թուխ ի ամպէն.
Այդ քո պատկերքըդ և սուրաթըդ 'ի վարդին կարմիր տերևէն.
Ուր որ դու կանգնած լինիս՝ չէ պատեհ վառել մոմեղէն.
Ծոցուդ լոյսն դուրս ծագէ, դէմ ելնէ մեռելն 'ի հողէն:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԱՌԱՒՕՏ լոր մտաւ արտ, վա՜խ
Աչքը առաւ, եղաւ դարդ, վա՜խ.
Կու նմանէր քաֆուր վարդ։ վա՜խ
Լո՛բիկ լոր, լո՛բիկ լոր,
լո՛բիկ լոր, լո՛բիկ,
Կանաչ լորիկ, կարմիր լորիկ,
Անուշ լորիկ, սիրուն լորիկ,
Վառ վառ լորիկ, լորիկ լորիկ.
Լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լոր,
լո՛ր իմ, լորիկ։

Առաւօտ բարի լուսուն,
Ես մայիլ եմ քո տեսուն.
Լո՛բիկ, դու իմ սըրտի սուն։
Առաւօտ բարի լուսուն,
Քո խալան հարիւր լիսուն.
Համբ՛ի դնի՛ վեր քուրսուն։

ՄԵՐ դըրանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան,
Ձեր դրան՝ը խընկի ծառ.
Գիւլո՛ւմ ջան.
Խընկենին ա բերել պար,
Գիւլո՛ւմ ջան,
Իմ խորոտիկ, պըզտիկ եար։
Գիւլո՛ւմ ջան։
Մեր դըրանը խնկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրէն թառ.
Երթար ու դար, չորոր տար.
Սիրուն եարին օրոր տար։
Մեր դըրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ.
Գընար ու դար, չըլին տար,
Անուշ եարի թևին տար։
Մեր դըրանը խնկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Ալուան ծաղիկ տանել տար։

«ԱՂՋԻ, արէ, քե ֆաս առնեմ,
Ցասի բոլոր ոսկի չարեմ։»
—Զեմ ուզի, դաղ, չեմ ուզի, բարի
Դարդիցը խաբար տուր, բարի։
«Աղջի, արի, դալմա առնեմ,
Դալմի բոլոր սուրմա բանեմ։»
—Զեմ ուզի, դաղ, չեմ ուզի, բարի
Դարդիցը խաբար տուր, բարի։
«Աղջի, արի, ջըզմա առնեմ,
Ջըզմի տակը նալչա զարնեմ։»
—Զեմ ուզի, դաղ, չեմ ուզի, բարի
Դարդիցը խաբար տուր, բարի։
«Աղջի, արի, քե տամ քաղաք,
Նըստես, կայնես դիւ խանըմնակ։»
—Զեմ ուզի, դաղ, չեմ ուզի, բարի
Դարդիցը խաբար տուր, բարի։
«Աղջի, արի, քե տամ Հալիւր,
Սև Յարօյին մաղես ալիւր։»

— Հա՜, դա՛դ, ջա՜ն, բա՛րի,
Դարդիցը խաբար տո՛ւր, բարի։
Տրա՜, նա, նա՜, գօ ես էլ կ'երթամ
Տրա՜, նա, նա՜, ողորմի ֆո հօր։

ԿԻՒԼԻԶԱՐ

Սամավարի կանթն է ոսկի,
Կիւլիզարը կը դայ խօսքի.
Մէկ բեռ բոշտին հազար ոսկի,
Թընկըլ մընկըլ չայ կը բերէ։
Այ ֆալէպօդ, ֆալէպօդ,
Խուչուչ մուչուչ կանէ կոր։

Պ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ
(Պատանեկան Յիշածներից)

❖ ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹՄԻԹԵՐԳՆԵՐ ❖

ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

(«Սօուf սու քաշընտայ»ի եղանակով)

ՊԱՂ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ,
Ձեռին սափոր, լցրած ջուրն էր անուշիկ.
Աչք ու ունքը դալմով քաշած, գեղեցիկ.
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։
Պաղ աղբիւրի մօտը պարտիզում նստած,
Ունէին լաւ գինի, դառի խորոված.
Երգում էին, պարում էին բոլորած,
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան.
Ման էր գալիս ընկերներով միասին,
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին.
Մազերը ոսկեգոյն, ճակատը լուսին.
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան.
Ցերեկը անդադար նորան եմ լիշում,
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում.
Տոչորուած մտն կուգամ խեղճ, մոլոր, տրտում
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան.
Ա՛խ երանի այն աւուր, չա՜տ երանի,
Տեսութեանը կրկին լինիմ արժանի,
Առանց նրան ես չեմ մնար կենդանի,
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան.

ԱՇԸԳ - ԶԻՎԱՆ

1883

(Եղանակ Հանըմ, սէնի տուլ կէօրտիմ)

ՍԻՐՈՒՆ տիկին, դուն նազելի, կեցի՛ր, գոհարը՛ս, կեցի՛ր,
Այրիացած քեզ տեսի. Սիրտս մի՛ վըշտացներ.
Ցրտաշունչ ձմերուան մէջ Կը յուսամ այրըդ մեռնի,
Այտերըդ վարդեր տեսի։ Քեզի ես այրի առնեմ։

(Թուրքերէնէ թարգմանեց) ԿԱՐԱՊԵՏ ՊԱՍՄԱՃԵԱՆ

ՏԵՍԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Եղանակ — Վայ քիւչիւք հանըմ)

Թէ իմ Հայրենեաց քընար սրգաւոր,
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վըշտաւոր
Խոսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:

Թէ Հայ մուսային սրտառուչ նուագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանիս սև բաղդին հաղագ
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն:

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ լըսի տըխուր՝ իմ ողբերս է այն:
Թէ լըռիկ մընչիկ հեծէ անշըշունչ,
Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարուան պարծանաց դարուն
Արձագանգ տուողն՝ աղաղակս է այն:

Եւ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սև սև թերթերուն էջ սրտակոտոր
Արտասուօք գրուած՝ իմ աղիքս է այն:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն.
Թ'աչքէ անցնես շամփրած նիզակներ
Մահահոտ ցըցուած՝ իմ թիկունքս է այն:

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է այն.
Թէ զէնք թէ զրահ թէ սուր թէ սուսեր
Փըշրած կոտորած՝ ոսկորներս է այն:

Թէ արեամբ ներկեն ակունք Եդեմին
Նըշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն:
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վըճիտ գետերն աղբերքն արծաթի
Լալիք առուակեն՝ երակներս է այն.

Թէ Տիգրիս, Դեհոն, Փիսոն մըրընչեն
Թէ պըղտոր գընան՝ իմ արիւնս է այն:

Թէ սառնամանիք ձըմրան բըքաբեր
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր
Ցըրտագին փըչեն՝ իմ շնչիկս է այն:

Թէ վըտակ վըտակ ցօղէ զլիչատակ
Զայս տըրտմավաստակ՝ աչքերս է այն.
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն:

Թէ մըթին խորշերն ու ձորեր լըռին
Սևերով ծածկին՝ մենաստանս է այն.
Թէ ողբ կը կարդան վայրերն Եդեմին՝
Ճընշած լերդերուս արձագանգն է այն:

Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ՝
Պինդ սիրով գըրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթոգին սըրտիւ՝
Ո՛հ, մայրակարօտ շըրթունքներս է այն:

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապաբաղդ՝ իմ ճակատս է այն.
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պըսակ
Դըրած սրգաւոր, գլուխիկս է այն:

Թէ կիսակործան տաճարն Հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է այն.
Ուր չիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նուաղ առ նուազ՝ իմ լոյսըս է այն:

Ուր տըխուր նըստեր մազերն են ծածկեր
Իւր սևուկ աչքեր՝ սիրականս է այն.
Ձեռքերն 'ի ճակատ՝ կըռնակն 'ի հողեր
Ցուսով կըռթըներ՝ Հայաստանս է այն:
— Դերեզմանս է այն:

Ուր երբ տեսանեմ զիմ հէքն Հայաստան
Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն.
Յայնժամ թող մեռնիմ չիւր ծոց մայրական,
Զ'իմ վերջին շընչոյս միակ ուխտս է այն:

Ս. Հ. ՓԷԼԷԿԵԱՆ

ԳՕՇՄԱՑ (Յարմարցուած)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

(Եղանակ — «Ագ գալտի պայրամ օլա»)

ՊԱՂՆ ի՞նչ է պաղչան ի՞նչ է,
Աղջիկ քու սէվտան ի՞նչ է.
Բանձրը ծառ քաղցրը պտուղ,
Զիմ հասնի, ֆայտան ի՞նչ է:

Պաղչան իջիր խօրոզէ,
Պաղչի քարէ լօլոզ է.
Կուղիմ համմալ մի սիրիմ,
Շրտիկ էլլայ քօլոզէ:

ԱՂՋԻԿ անուշդի կատար,
Էրեցիր սըրտիս քէտէր.
Ես քեզի շատ կը սիրիմ,
Մէնի էսի տարպէտար:
Աղջիկ անուշդի Լուսէ,
Էրիսդի լուսընկլուս է.
Էկո ընծի պաղ մի տուր,
Քեզի պըհէ Յիսուսէ:
Աղջիկ անուշդի Էղսա,
Քեզի չըպագէն տեսա,
Վառիս եօխիս կը ծախիմ,
Կեղնամ պատուդի փեսայ:
Աղջիկ անուշդի Սառայ,
Էրիսդի եառա վառա.
Էկո ընծի պաղ մի տուր.
Ճեպիդ ըլլամ ես փառայ:
Աղջիկ անուշդի Շուշան,
Կոտրեցիր սըրտիս շուշան.
Էկո ընծի պաղ մի տուր,
Քեզի պըհէ սըրը Նըշան:
Աղջիկ անուշդի Թումայ,
Ծուցիդ իկայ գումգումայ.
Էկո ընծի պաղ մի տուր,
Քեզի օրշնէ սըրը Թոմայ:

Ինչո՞ւ քընդեցիր շաչիս,
Զիմ խտայ հալիս, մաչիս,
Կ'երթամ պապուսի կ'ըսիմ,
Հերիք է հիտիս արչիս:
Քաչքէ ես ոսկի էղնենք,
Գըլխուդի զօվչիկ էղնենք.
Պըլլօո քիմի կեարտանիդ,
Ոսկի թօփ հապիր էղնենք:

ԷՍ գըշիր Համբարձում է,
Ադկեկներուն հարցում է.
Ըմըն ադկիկ պագ մի տայ,
Մակա՞ր աչխարհ անցնում է:
Էս գըշիր չառանք թուխուն
Իվլէ մընացինք մըթուն.
Էկո գըրկըտուինք ես դուն,
Օդորմի պապուդ հոդուն:
Ինչայ զարդամին մութ էր,
Մառնուս ակէ զըմրուխտ էր.
Ասարծու խըշմին իդաս,
Էս գըշիր կիրակմուաք էր:
Նըստիր է պատի տակէ,
Կը վեբայ մառնու ակէ.
Աչօք ընքօք կը կանչէ
Աթլաս ընկողնու տակէ:

Ա՛Ռ Էսի ճիուդ էտիւ, մալըմ,
Տար Էսի Եարիս Եուրտիրէ. հոգիս,
Հարցընինք Եարիս տարտիրէ:
Բերանդ շաքար, վարդ կը բուրէ,
մեղր կը ծորէ, սէր սիրոյ մատադ:
Օրտակէ ջուրէ կը լողայ, մալըմ,
Քէօչէկէ քուչան կը խաղայ. հոգիս,
Իմ Եարիս գուրպաթ կը զաղայ:
Բերանդ շաքար, և.:

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

(Մայայի կամ Մաանիի Շարգի)

Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ,
ՆՈՒՐ տուքընններու քարիրէ,
Սիւ աչքէ քաչիր ծարիրէ.
Խիլքիսի գլխէս տարիրէ,
Աղջիկ պալամի, պալամի եար,
Քեզ սիրողին, քեզ գրկողին
Երանի՜:

Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ,
Նուր տուքընններու խողիրէ,
Անկաջէ գըրիր օղիրէ.
Գըշիր հարզի լուս լողիրէ,
Աղջիկ պալամի, և.:

Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ,
Նուր տուքընններու տառապան,
Տարտիս չի քաչի առապան.
Եսի թապլած ին խարապան.
Աղջիկ պալամի, և.:

Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ,
Նուր տուքընններու սալիրէ,
Քու սէրիդ սիրտիս տաղիրէ.
Զիս պիթուն քէպապ էրիրէ.
Աղջիկ պալամի, և.:

Ո՛ւյ, ո՛ւյ ո՛ւյ, ո՛ւյ,
Միր նուր տներու մաղիրէ,
Քում հիտիդ էրթէնք պաղիրէ.
Ըսենք ու կանչենք խաղիրէ.
Աղջիկ պալամի, և.:

Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ,
Միր նուր տներու հաֆչիրէ,
Ճիկարսի փորէս քաչիր է.
Սիրտիս ուղուրէ մաչիր է:
Աղջիկ պալամի, և.:

Կ. ՊԱՍՄԱՃԵԱՆԻ Հաւաքածներէն

(Հիւսէյնի Շարգի)

(Թարգմանութիւն և Եղանակ — «Վե՛ր, հա՛նըմ, էվայի վե՛ր,»

ՏՈ՛ՒՐ, տիկին, խընձորը տո՛ւր,
Ի սէր գեղոյդ.
Խնձորին տէրը ո՞ւր կը կաքաւէ.
Խնձորին 'նուշ համէն ոչ ոք լիանայ,
Կ'առնէ խարէութեամբ,
անդամ մ'ալ չի տայ:
(Սոյն տողերը կը կրկնուին. ամեն անդամին հետևեալ պտուղներէն մին փոխանցելով. այդ տանձը, այդ նուռը, այդ շուշման, այդ նուշը, այդ կաղնին, այդ պիստակը, այդ ծիրանը, այդ բոդկը, և.)

(ՈՍԿԵՐՁԵԱՆ ԵՂԲԱՐՑ երգածէն)

Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Հանընման մոմերով եկայ.
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Կարմիր սօլերով եկայ,
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Էրկէն քօլոզով եկայ,
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Կա-միր չալուարով եկայ,
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Գացի պարպար տուքան տնկուայ,
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,
Գացի բաղնիք թակնուայ,
Դուռ բաց, տիկին, դուռ բաց,

ՆԱՌԷ

Նառէ, իջայ չայի քինարէ,
Նառէ, տեսայ աչքէ խումար է,
Նառէ, աչօք ընքօք կը կանչէ,
Նառէ, աթլաս ընկողնի տակէ,
Զգիտցայ ընչու հըմար է:

ԳՕՇՄԱՅ (Յարմարցուած)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

(Սապայի Շարգի)

ՏԱՒՄԱՆ հագիր էրիսն ալ է,
Ծըծուընիրէ փորթոգալ է.
Հարսէ՞ սիրիմ, եօխսէ տալէ,
Իլահմ տալէ, իլահմ տալէ:
Աղջիկ, դուն խաիս, դուն խաիս,
Կրլոր մրլոր էկո fովիս.
Պագնիմ, սիրիմ, հիամ ո՞վիս:
Տէնիր օլրրասդէ վո՞վ է,
Զիթ մընտիլէ տարիր է հովէ.
Էն ի՞նչ ադկիկ աչք ունքով է,
Պաղնենք խամդաներու քովէ:
Աղջիկ, դուն խաիս, ևն.:

Գիտցի կիդամ էնդու թաղուն,
Էրիսդի խեթիր է մեղուն.
Բաց խափանկէ, մեռայ պաղուն
Տաքցու դուն սիրտիս դողդըղդուն:
Աղջիկ, դուն խաիս, ևն.:
Եուսկէն կիդաս ուշիկ ուշիկ,
Ձիվիդ մըտիր մանտըր փուշիկ.
Դուն պըճըլիկ, պաղդ անուշիկ:
Էն բերանդի անուշ նըշիկ,
Աղջիկ, դուն խաիս, դուն խաիս,
Կլոր մրլոր էկո fովիս,
Պագնիմ, սիրիմ, հիամ վո՞վ իս:

Ո՞ւյ, ջանըմ, ջանըմ, ջանըմ,
Ո՞ւյ, ջանըմ, ջանըմ, ջանըմ,
Իմանամ որ իմ եարն ես,
Առնեմ, եկեմ էն սարը:

Սև ունքըդ կամար, կամար,
Ես կ՝ապրիմ քեզի համար.
Եօթը տարի սև հագայ,
Քու անուշ խաթրին համար:
Ո՞ւյ, ջանըմ, ջանըմ, ևն.:

Տալուորիկ երես երես,
Պաղըրկեան Աստուածդ սիրես,
Երբոր Հալէպէն դառնաս,
Իմ եարս հետդ բերես:
Ո՞ւյ, ջանըմ, ջանըմ, ևն.:

Տալուորիկը լեռ սար է,
Զորս բոլորը դալար է.
Կարար տուէք իմ եարին
Դարգուելուս տարին է:
Ո՞ւյ, ջանըմ, ջանըմ, ևն.:

Էն օր Շաբթօր է, վաղէ Կիրակէ,
Սիրտիս ընկիր է կէծ ու կըրակէ.
Հերիք է մաշիմ, սիրտիս բարակ է,
Աղջիկ, դուն անցու սրտիս կրակէ:
Մալիս մալարիս խառվ մի մնար,
Աշխարհս անցաւոր մըզի էի մնար:
Փոլքան հագիր է, թաւիրէ խարճ է,
Ցանի տիւնեա է, էօմրերնիս կարճ է.
Էկո պառըշինք, խառվ մի մնար,
Աշխարհքի մալէ աշխարհս մըն մնայ
Նստիր մէկ քօշան, արագի շուշան,
Կ՝ըլայ, կը խմէ, էի համպրի փաշան
Էկո պառըշինք, ևն.:

Թ. ՈՍԿԵՐՉԵԱՆԻ Հաւաքածոյներէն

Լ,Օ, լօ, խըռիանի,
Զալէ ջուրէ էի տանի.
Մամիս ճախրակ էի մանի.
Պապիս տուքան էի բանի.
Շօրպան տաք է էի պաղի.
Ես քըղցած իմ, էիմ կայնի:

ԵՐԳ

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ

(Հինգզի Շարգի)

ՀԱԶԱՐ ափսո՞ս քեզ, Ներսէ՛ս Խարախան,
Անխիղճ մառնութեան զոհ եղար դացիր.
Հովի՛ւդ անմնուէր, ոգիդ ախալեան,
Հայ սրտերն ամեն ցաւօք լեցուցիր,
Բոցով վառեցիր:
Վառեր ես բոցով Տարօն* ու Աղձնիք,
Գոռան Սանոյ սարք, Թնթաց Տալուորիկ.
Սուգ հագեր Գլակ**, Եփրատ դրախտաջուր
Համր հառաչներով կ՝արտասուէ տխուր,
Կ՝ընթանայ լուռ լուռ:
Լուռ սրտերու մէջ, կրակներ վառած,
Կը կանչեն Ներսէս, անունդ անմոռաց.
Թշնամին ի զուր կ՝սպառնայ բանտ հուր,
Պիտ՝ փրչրեն օր մ՝ալ շղթաներդ կուռ կուռ
Մեր հրացանն ու սուր:
Հրացան սուսերով տանք բիւր հարուածներ,
Իլնան չան ատատակ Թիւրք, Զէրքէզ, Քիւրտեր.
Պիտ՝ տեսնէ աշխարհ Հայոց քաջութիւն,
Գայ ազատութիւն, նոր օր, նոր գարուն,
Փառք զարդարուն:
Փառք զարդարուին Մասիսն***, Վարագ,
Ցընծա ալեւոր Մառեաց սարն աւագ.
Հոն Ներսէսներու խմբի վեհ կաճառ
Գոչեն փրկուեցաւ Հայաստան աշխարհ,
Ապրի դարէ դար:

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՒԱԹՃԵԱՆ

ՎԱՀԱՆ ՏԷՊԱՂԵԱՆԻ Հաւաքածներէն

---

* Տարօն, Մըշոյ նահանգը. Աղձնիք, Տիգրանակերտի հին բդեշխութիւնը:

** Գլակ, Մշոյ Ս. Կարապետի վանքը:

*** Մասիսն, Գարաճառաղ ըսուած լեռները:

ՅԱՂԹԱՆԱԿ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

(Եղանակ — Գալէնը իւսքիւնտէ աֆալլար տառի)

ՄԻՆՉԴԵՌ դիշերոյ խաղաղ թագուհին՝
Յարծաթեայ կառացն ժըպտէր զուարթագին.
Ի բարձանց Երկնից սիրոյ հրեշտակներ
Մեզ կը սըփռէին զավնեայ պսակներ։
Բանդուունքն երգէին զվեհն Ազատութիւն,
Որ մեզի բերէր փըրկութեան ողջոյն.
Պըճնէին ծաղկամբք դամբանքըն լըռին,
Ուր Հայ դիւցազանց ոսկերքըն հանգչին։
Երկինքէն ժպտին պլսոպլըղուն աստղեր,
Երբ կը ծածանին Հայոց դրօշակներ.
Ազատ Մասիսի լերանց ծայրերէն,
Հայրենահրաւէր ձայներ կը հնչեն։
Դրժոխոց դըռներըն խորտակելով,
Վարդան և Մեսրոպ ի վեր վազելով.
Կանգնեն յաղթանակ պերճ Ազատութեան,
Վերանորոգեն փառքեր Հայութեան։
Ո՜հ, ի՜նչպէս հըրճուին Հայոց զաւակներ՝
Մինչդեռ կը տեսնեն նախնեաց հին փառքեր,
Լուռ կըրնա՞ յ մնալ մեր սիրուն քընար,
Մինչդեռ Ատաղն Հայկայ չողայ լուսավառ։

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ

(Եղանակ — Տուռնամ կէլըր գաչա գաչա)

ՄԵՐ Հայրենեաց փափուկ հողեր,

(Տեսնել Ա. Հատորի ,79րդ երեսը)

ՎԸՇՏԻ ԽՈՅ

ԲԸԺԻ՛ՇԿ, երբ դու իմ երակը կը նայիս՝
Եւ ըմբռնես ապրիւրը իմ ցաւերիս,
Մ՚բսեր երբէք իմ դաղտնիքը բընաւ անոնց,
Որոնց սիրտը ունեցած չէ վըշտի խոց։

ՖԸԶՈՒԼԻ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

(Եղանակ — Հալիմանըն սէմանլըգ տիր սէրայի)

Ո՜վ, սուրբ վայրեր, անհոգ ժամեր իմ կենաց,
Որ մտաց մէջ քաղցր լիշատակ մ՚էք թողած.
Քսէ՛ք ինձի չ՞է կարելի եւ դառնաք,
Այրած սըրտիկս զովացնել դալ փութաք։

Ի՜նչ քաղցր է սէր դպրոցական ընկերաց,
Որով մարդիկ մանկութենէ հետ միմեանց.
Գաղափարաց սերտ կապով մը կը կապուին,
Եւ այդ կապով միմեանց եղբարք կը լինին։

Բարեկամաց մէջ ամենէն քաղցրներն,
Են՝ դպրոցի, պատերազմի ընկերներն.
Որոց սիրուն լիշատակներն քան զալոց,
Թողուն ի սիրտ՝ կարօտոյ հուր, բոց և խոց։

Ո՜հ, երջանիկ էք դուք, մանկունք դպրոցաց,
Որ ձեր անմեղ ժամերն ուսման նուիրած.
Մեղուի մը պէս ծաղիկներէն մեղր քաղէք,
Եւ աշխարհիս ո՛չ հոգն, ո՛չ վիշտն կը կրէք։

Կար ատեն մ՚որ ես ալ ձեզ պէս երջանիկ,
Դպրոցին մէջ աշխարհն ու իմ հայրենիք՝
Մի ուրիշ կերպ կ՚երազէի և չէի
Գիտէր թէ ի՜նչ մեծ ցաւ սըրտիս տան պիտի։

Բայց երբ անձամբ ի Հայաստան դիմեցի,
Եւ հայրենի այս թշուառութիւնք դիտեցի.
Ուրախութիւնն հեռացաւ ալ սրտէս,
Հառաչանքով միշտ «ա՜հ» լըսուի արդ բերնէս։

Ա՜հ, հայրենիքս ինչո՞ւ այդպէս կաս թշուառ,
Զը մնաց մէկն որ հոգայ դտնել քեզ մէկ ճար.
Ա՜հ, ամենքն ալ կը տեսնեմ որ անզդայ,
Անգութ դարձեր, ողբերդ լըսող մ՚ալ չը կայ։

Երանի՜ թէ ես ալ մանուկ մ՚ի դպրոց՝
Եւ կամ աղայ մ՚որ դեռ հանգչի իր մօր ծոց
Բլլայի և չզդայի այս բիւր ցաւեր,
Մինչ հայրենեաց այսպէս անկար եմ օգնել։

Մ. ՓՈՐԹՈՒԴԱԼԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

(*Եղանակ* — «Տամտէ կէօրտիւմ պիր կիւզել տամըն էքրաֆի կէզէր
Ույ նանըմ, ույ նանըմ, նանըմ, նանըմ, կէլ կիքմա գատան ալըմ»)

ՆՈՒԱՂԵԱԼ *կենաց իբրև յոյս,*
Մութ և տխուր ես, ո՛ կոյս.
Ե՛լ, ե՛լ, լուսին, ո՛հ, և դուն,
Սիրտ մի ունիս զգայուն.
Ազգ մի՝ թշուառ հայրենիք,
Որ քոյ առեր ես զամպիկ:
Բնութիւն գեղոյդ երաժիշտ,
Քեզ աստեղաց հոյլք նաժիշտ.
Խանհուն սիրուն ժըպիտ մի,
Կարգեց դէմոյ զքեզ երկնի.
Ցոդէ՛ նըշոյդ տխրանոյշ,
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ:
Ո՛հ, փչրեցան սիրտս ու քնար,
Ես ալ քեզի պէս զաշխարհ
Պանդուխտ քայլով չափեցի,
Ծաղկունք ծըլին սոսկ քեզի.
Զեկաւ զեփիւռ մ՝անուշիկ,
Շոչել իմ դէմքս յուսալիք:
Հող մ՝ունէի Հայրենի,
Դրախտ չքեղ աշխարհի.
Աւերակացն արդ պահպան,
Քիւրտն և անոր հրացանն.
Ցուցո՛ւր ժանտից, ո՛ լուսին,
Զաղիր ոսկերք Վասակին:
Ազգ մ՝ունէի այն Հայն էր,
Որ երկրիս վրայ տարուբեր,
Կ՝ելթար օտար ազգերէն
Մուրալ լեզու և օրէն.
Լուսին, ցուցո՛ւր դու Հայուն,
Փառքն իւր նախնեաց չիրմերուն;
Սիրտ մ՝ունէի, ան կոյսն էր,
Որ իմ հոգիս էր գրաւէր.
Ծաղկէ հասակ, ծաղկի դէմք,
Հուր աչքն առին չիրմաց վէմք.
Մեր պանդուխտին ալ, լուսին,
Դու այցելու ե՛լ չիրմին:

Ս. ՀԷՔԻՄԵԱՆ

ԱՅՐԱԾ ՄԸՐԿԱԾ ՍԻՐԱՀԱՐԸ

Եղանակ — «Գայալբղրն եօլի տբր»

ԶՈՒՆԻՄ *խելք միտք իմ դլխում,*
Շուարած եմ օրն ի բուն.
Ըսէ՛ք ինծի ես ի՞նչ ընեմ:
Բան մ՝ըսէ՛ք, տէ՛ր և տիա՛րք,
Լաւ ճանչցէք զիս քորք ՝ւեղբարք,
Այրած մրկած սիրահարն եմ:
Սիրահար եմ տեսնելու
Հայը ազատ շնչելու,
Հայ ապրելու, Հայ մեռնելու:
Սիրահար եմ տեսնելու
Հայի կրօն ու լեզու
Տիրող մինչ իսկ օտարներու:
Սիրահար եմ տեսնելու
Իմ հայրենեաց խեղճ զահուն
Վրայ չքեղ մի պետութիւն:
Ցանկամ քաջեր տեսնելու
Իմ հայրենիք փըրկելու.
Պիտ՝ լինի՞ այս իմ ցանկութիւն:

Պ. Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

Ե. ՄԱՍ

ԸՅԼ ԵՒ ԸՅԼ ԵՐԳԻՆ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՑԱՆԱԾ, *ցրուած մազերդ առջև ցուրտ հովերուն,*
Թափած ոսկի թելերդ, շաղուած ի տիղմերուն.
Թուխ թուխ աչերդ հոսին պղտոր ջուրից ցընթաց,
Եւ վեր հայել չուզես զինչ կոյս մի մերժուած:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Անզարդ գլխուդ մատաղ, ո՞ւր է քո թագ, պսակ:
Շատ մայրեր տեսած եմ, քեզ պէս թշուառ չըկայ.
Շատ վէրքեր տեսած եմ, այլ քոյդ նման չըկայ.
Երբ «ա՜հ որդիք» կանչած փռուիս գետնի վրայ,
Բոլոր մարմնդ որդւոցդ յարիւն կը լողանայ:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Անտէր գլխուդ մատաղ, ի՞նչու կաս միայնակ:
Որդիքդ իքո ծոցէն խումբ խումբ կը հեռանան,
Վիրացդ վրայ ակնարկ մը ձգել չուզեն անդամ.
Շատերն անուանդ հնչեն, զի նորութիւն է ան,
Շատերն անկէ զզուին, զի հարքըն չասացին զայն:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Լքուած գլխուդ մատաղ, ո՞ւր են քու վեհ սպայք:
Բաժնին գրկէդ հազարն և կէսն հազիւ դառնան,
Դառնան բայց ո՜հ, ինչպէս — Հայու մի ուրուական.
Երկուքն ինոցանէ հազիւ քեզ ողջոյն տան,
Եւ այլք իբրև անբան՝ լռիկ անցնին գնան:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Ծռած վզիդ մատաղ, ո՞ւր են քու հարազատք
Ա՜հ, քու որդւոց շատերն, իբր այր մի անպատկառ,
Բանտ, շղթայ, նախատինք իբրու թէ չեն զդար.
Ազնուական զաւակ, առողջ անձնեայ և ժիր,
Բայց այլոց փշրանքով լիանալու յօժար:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Պատկառ դէմքիդ մատաղ, ո՞ւր է քու լի բաժակ:

Ո՛ փարթամք, որ գիտէք զայս իմ մայր ցաւագին,
Որ այժմ զուրկ շատ որդւոց՝ հեծէ ողորմագին.
Գէթ դուք ողորմեցէք իմ տառապեալ այս մօր,
Գէթ դուք բարձրացուցէք ճակատն ամօթաւոր:
Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ինչ զառն վիճակ,
Գիտեն այո՛ զքեզ, բայց ցաւոցդ անզգայ:
— Յարևմտից թռան հրաշատեսիլ թռչունք,
Որ փուշեր խլելով ցանեն ծաղկանց սերմունք.
Ասեն թէ այն ծաղկունք դեղ են քու խոցերուդ,
Ասեն թէ այն ծաղկունք զարդ են քեզ անկապուտ:
Դու յուսոյ այս գինւով թմրիր առ սակաւիկ,
Մի՛ ասեր թէ յոյսեր, ո՛չ չեն միշտ խաբուսիկ:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԶԱՆԵԱՆ

ԻՄ ՍՈԽԱԿԻՆ

ՍՈԽԱԿ՝ ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգն երգելից,
Բանի՞ դու միտքս բերիր իմ առարկան ցանկալին.

Այն չիշատակն անուշ էր ինչպէս երազ վաղանցիկ
Որ գէթ վայրկեան մը թշուառին դարձնում էր երջանիկ.

Համակ աշխարհ մոռացած, քո ձէնին ունկըս յառած,
Մըտքով թըռչում էի ես իմ հայրենիքն կարօտած.

Ո՞վ կը տայ ինձ թև թըռչնի որ խոյանան, սրլանան,
Օդն ու ամպերը ճեղքեն ու տանին ինձ Հայաստան.

Գիտեմ, դու էլ ես կարօտ մըշտազարուն այն դրախտին,
Որից հեռու մեզ չըկայ քաղցր ժըպիտ մեր բազդին.

Թէ նըրա օդը չնչեմ, այն կենսատու սուրբ օդից —
Գիտեմ, փրկուելու եմ անբուժելի իմ ցաւից . . .

Գարունն անցաւ, ա՜խ սոխակ, խօսուն լեզուիդ կապ դրաւ,
Ու խեղճ վարդի թերթիկի հետ շարականըդ էլ տարաւ:

Կ՝բանամ դուռը վանդակիդ, ազատութիւն քեզ կը տամ,
Բայց աղաչում եմ քեզի, թռի՛ր դէպի Հայաստան.

Վարդ ես ուզում՝ այն տեղ է, անամպ երկինք, մեղմ հովեր,
Ճաճանչափայլ արեգակ, կարկաչասահ առուներ:

Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,
Մէջ, մառախուղ, հեղձուկ օդն հալեց, մաշեց իմ հոգին.
Փըչեց հողմը Հիւսիսին՝ փոշին երկինք բարձրացուց,
Կուռբի վրայից ազռաւը խրոպոտ ձէնը հնչեցուց.
Ահա՛ Հիւսիսի սոխակն, ահա՛ Հիւսիսի այեր . . .
Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, ա՛յ խելացնոր խեղճ Հայեր:
Ա՛խ, ես ատել եմ նորա կեանք և վայելք պատիր,
Տուէ՛ք օդը իմ երկրին; դալար դաշտն ու վարդ կարմիր:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՍԷՄԱՅԻ

ԱՆՈՅԾ, ճմրան արև դարձաւ վառարանը Հայոց բախտին.
Ձիւնով ծածկուած տարի պէս է տեսարանը Հայոց բախտին.
Մի կողմից սառնաշունչ հողմը, մի կողմից խորշակը անգութ,
Բերանը բաց նայում է խոր դերեզմանը Հայոց բախտին:
Շարունակ սրտաճմլիկ վէրք ու ցաւ է պտուղը գրչին,
Տխուր տրտում ու թախծոտ է վիպասանը Հայոց բախտին.
Լռել է քաղցրախօս հաւը, չի երգում անուշիկ երգը,
Սգոյ օթևան է դարձել բուրաստանը Հայոց բախտին:
Տալիս է ոյժ, զօրութիւն նեղ օրերում այդ ժողովրդին.
Հզօր է ամենաարձրեալ ապաստանը Հայոց բախտին.
Ձիւանի, խաչի հետ լուսնին դատաւորը պիտի կանչէ.
Մօտիկ է, շուտ լինելու է դատաստանը Հայոց բախտին:

1902 ՈՒՐԱԽ ԵՐԳ ԱՇԸԳ - ԶԻԻԱՆ

ԱՐԵՒՆ ելաւ, փախէք առտլեր մի անկիւնում թաղ կացէք,
Սև սև ամպեր հալածուեցէք, ճանապարհից հեռացէք.
Օդը պարզ է, մոլորակներ, հորիզոնում ամպ չըկայ
Արեգակի շորս բոլորը պար բռնեցէք, խաղացէք:
Ցնծա՛ տխուր իմ Հայրենիք, ցուրտ ձմեռը անցկացաւ.
Զուարճալի խնդում բերող նոր գարունը մօտեցաւ,
Հա՛յ աղջիկներ, ձեր տխրութեան ժամանակը լրացաւ
Սրտով սիրած փեսաներով ուրախացէք, խնդացէք:
Արդարութեան արեգակը եկաւ, բերեց նոր զտիկ.
Ճնշուած, ընկած տխուր ազգեր ահա նոր լուր, աւետիք.
Տօն է այսօր ձեզի համար, սոխակ, թութակ, արտուտիկ
Մայիսն եկաւ, վարդը բացուեց, երգեցէք, ճառ կարդացէք:

ՍԷՄԱՅԻ

ՀԱՄԸՆԹԱՑ կեանքիս յարմար, ո՛վ սիրելիս, ինձ մխիթար չես,
Հակառակ կերպով ես վարվում, դու ակըմբի կառավար չես.
Դնա՛, ինձնից հեռացի՛ր, ո՛վ անիրաւ ամբարիշտ անդութ,
Գիտեմ անշուշտ, որ անբարեսէր ես և ինձի յարմար չես:
Խենէշ կերպարանքդ, բարքդ դրեմ, տամ քեզի, դու կարդա՛,
Կիմանաս դու սխալմունքդ, գիտեմ այնքան էլ յիմար չես՝
Նախանձոտ, վատասիրտ օձի նման միշտ խայթում ես այլոց,
Որ ունիս աչդպիսի արատ, քեզ կը կարծես թէ վատթար չես:
Ցերեկը մինչ երեկոյ բամբասելով մեր կուռաս մարդկանց,
Դիշերը միամիտ պառկած տեղդ անդամ դու դադար չես:
Ջիւանի երգիչը ամեն մի կերպով քեզի լաւ փորձեց,
Նկատեց վարք ու բարքդ, լաւ տեսաւ անկեղծ ու արդար չես:
1876

ԴԻՒԱՆԻ

ԱՄՆՆԱՍԱՍՏԻԿ ցաւերը ինձ վրայ խնդիր տուին.
Տխրութեան մեծ դատաւորին, ողջ ձեռագիր տուին,
Խմբերով բազոք բացին՝ դնալ դէպի իրաւարան,
Մեղքերս Հաստատեցին, փաստերը լիալիր տուին:
Ինձ վրայ մեղքեր դատան իբր՝ ցաւոց իշխանները,
Ամենը վա՜յ կրկնելով՝ դլխիս հոդ ու մոխիր տուին.
Լսելով իմ մաերիմ ուրախակից եղբայրներս՝
Խաբեայ ցաւապետի խորհուրդը ցանուցիր տուին:
Կանդնեցան տէր՝ Ջիւանուս ուրախութեան դիւցազները
Վերջն ազատութեան վճիռս արդար ու ընտիր տուին:
1872

ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ

ՇԱՏ քնեցար, սիրելի, լոյսը կտուրից անցկացաւ,
Մայրը մտաւ լուսինը դէմի բլուրից անցկացաւ.
Քթոցը այսուհետև էլ չի կարող պատսպարել,
Մի ահագին աչդ դառաւ, ուլը մտուրից անցկացաւ:
Այ՛ի, անբուն, խեղճ հաւի ձագերը մէկ-մէկ որսալով,
Կեղծաւոր նենդ աղուէսը հաստատ ուրուրից անցկացաւ,
Դէպի ծովը հասնելով շտապով արագ վազելով,
Մայր Արաքսը խենդացաւ, ահռելի Քուռից անցկացաւ:
Լուսաւոր ժամանակ է, փոքրը մեծին չի հաւանում,
Տե՛ս, Ջիւան, զարդացումով՝ հարսը կեսուրից անցկացաւ:

ՄԱՏՌՈՒԱԿ

ՀՈԳԻԴ սիրեմ, մատռուակ, բե՛ր, գինու սրուակը բե՛ր.
Աժիր մի հատ, տուր խմեմ, թէյի մեծ բաժակը բեր.
Ցանկանում եմ այս գիշեր մոռանալ հոգս ու ցաւը,
Վրաստանի իշխանաց գինու ախորժակը բեր:
Դուն էլ արի մեր մօտը, համ խմենք, համ երգ ասենք.
Թառը տուր քաջ ընկերիս, ինձ էլ իմ ջութակը բեր.
Ընտիր գոհարներիցը կարդա՛, լսենք, մատռուակ,
Շուտով, Սայեաթ-Նովայի երգերու տետրակը բեր:
Մի քանի չամփուր սիրուն, համով խորոված չինէ,
Վառիր կրակարանը, շուտ արա, կրակը բեր.
Կանաչ մանր վարունդներ եթէ կայ, տուր տասը հատ,
Աղը և թարմ կանաչին, բողկուկը, դանակը բեր:
Կարմիր-և սպիտակ գինու չիչերը դարսիր վրան,
Տուր մի սիրուն երեկոյթ դու սեղանատախտակը բեր.
Գեղեցիկը, մատռուակ, աչքի համար լաւ է, լաւ,
Կատիպսէի կղզիից վայելչահասակը բեր:
Թող ժլատը հոգս անէ, մտածէ ոսկու համար,
Իմ քսակի մէջ եղած դու բոլոր ստակը բեր.
Բոլոր կեբակուբներու թագուհի պանիրը, շուտ,
Ջիւանու սրտով սիրած յարգելի խորակը բեր:
1899

ՐՈՒՊԱՅԻ ԴԻՒԱՆԻ

ԻՆՁՈ՞ՒՑ է՝ բան հասկացող մարդոցը միշտ բամբասում են,
Մականուններ կնքելով՝ կարդէն մոլորեալ դասում են.
Եղուիտ ու ցածրահոգի անխիղճները հարուած տալով,
Զգայուն թարմ սրտերը ամեն միջոց վնասում են:
Ովքե՞ր են, բամբասում են ազնիւ խոհեմ գիտուններուն,
Մանաւանդ ազգի համար զոհուող խելօք արթուններուն.
Խաբուելով եղուիտական կարդէն եղած բարբուներուն,
Զարդացած, մտքով խելօք մարդուն անիրաւ ասում են:
Ո՛վ Ջիւան, մեր երկրի վրայ խաւար, մութն է սիրում,
Մարդ չըկայ Քրիստոսին լսող թէ ի՞նչ է պատուիրում.
Քաջ լուսաւորեալներից պառաւներին շատ են սիրում,
Նետ դնել տալով նրանց, մեծ մեծ բաներ են սպասում:
1876

ՊԱՐԱՊ ՄՆԱԼՈՒՑ ԼԱՒ Է

Պիտի գովեմ մայր հողը, քանին, ջուրը անձրևը,
Պիտի չիշեմ ամպերը, լուսնակը, արևը.
Նկարագրեմ պիտի սարեր, ձորեր, դաշտ անկեղծ,
Որ իմ դատաւորիս մօտ ներկայանամ բանաստեղծ:
Սև-սպիտակ ամպերը բամպակի քուլի նման,
Պիտի գղեմ անեղով, դուրս բերեմ թել ու դերձան.
Պիտի գործեմ լաւ գուլպայ, պաճիճներ խայտաբղէտ,
Ինքնակոչ քննադատս որ ճանաչէ ինձ պօէտ:
Նազելի կոյս աղջկան պիտի շատ գովաբանեմ,
Աչքերուն ու ունքերուն լոյս ու կամար անուանեմ.
Անունս էլ պիտի փոխեմ ու դնեմ Նոր Հոմերոս,
Որ տեսնի քննիչս, ճանաչէ պլվեսիկոս:
Միտք շատ պէտք չէ երգի մէջ, բառերը առատ լինին,
Դրուատել պէտք է յատուկ սիրունը, սէրը, դինին.
Խրատ, բարոյական երգ, համարուում են հին զգեստ,
Պարզ բառեր գործածողը չի համարուիլ գեղարուեստ:

1901 ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ՅԱՆԴԻՄԱՆԱՆՔ

Ո՛վ գոռող մարդ, բաւ չէ՞ այդքան անխոհեմ չիմար մնաս,
Յաւ չէ՞ քեզ — լոյն աշխարհը միշտ աղքատ ու անճար մնաս.
Մի՞թէ Աստուած քեզ կ'ուզէ որ վատ դրութեան մէջ մնաս,
Ինչո՞ւ այդպէս երեսանկ'ալ, ամենավատթար մնաս:
Աշխատանքդ թէ մէկ է, ծախքդ նրա պէս երկուս է,
Գործերդ քեզ չի երեայ, արածդ խելքից դուս է,
Տե՛ս, քո այդ շռայլութեանդ տրտմողը իսկ Յիսուս է,
Դուն կուզես արդէն նրանով աշխարհը արդար մնաս:
Բաւական է մոլութիւնը, ո՛վ ազէտ, քեզի տիրէ,
Աշխատի՛ր վատ գործերից փախիր քանի անձդ ժիր է,
Ինքն Աստուած բարի է, գիտցի՛ր, բարութիւն կը սիրէ,
Զղջա՛, ո՛վ մարդ, սխալմունդ, քանի՞ մէկ դու չար մնաս:
Ե՛կ, Ջիւանուս ասածը դոնէ խրատ ընդունէ քեզ,
Դուն Հայի դաղաթ ունիս, ամօթ չէ՞ որ մնաս դու եզ,
Հասկացի՛ր մարդկութիւնը, Լցի՛ր համեստ և բարի հեզ,
Աշխարհը լոյս, աչքերդ կապ, ինչո՞ւ միշտ խաւար մնաս:

1873 ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ՊԱՑՏ

Մի առաւօտ ես տանից շուտ դուրս ելայ միայնակ,
Գնում էի փողոցը, տեսայ մի լաւ օրինակ —
Տեսայ մի երիտասարդ, հեծած ձին էր սպիտակ,
Ուզում էր մի պայտ իշի՝ հանելով փողի քսակ,
Հարցնելով տղային՝ ասի այդ ի՞նչ նպատակ,
Մի պայտով չի՛ պայտուի չորսոտանի աւանակ:
Տղան դարձաւ դէպի ինձ, ասաւ՝ ով իմ բարեկամ.
Այս պայտը պիտի տանիմ մեր գիւղի տէրտէրին տամ,
Այնտեղ կուզեմ մի աղջիկ, որի անունն է Մարիամ,
Ես նրան շատ եմ սիրում, նա երբէք չունի խնամ,
Մեր տէրտէրը կախարդ է. ասաց, ինչպէս մի խախամ,
Շատ գործեր է կատարում պայտով ամեն մի տեսակ:
Ասի՝ եր պայտը տանիս, ի՞նչ կանէ տէր-Հայրիկը,
Ասաւ՝ վերան դնում է կախարդական ծաղիկը,
Կրակարանի մօտը թաղում է այս պայտիկը,
Որքան տաքանայ պայտը՝ կը տաքանայ աղջիկը,
Այնուհետև սիրուհիս կուզարկէ իւր մատնիքը,
Այլ չի՛ մնալ նա ինձ հետ երբէք սիրով հակառակ:
Կրկին առաջարկեցի ես տղային գիւղական,
Ասի ճիշտ կը հաւատա՞ս, որ լինի այդպիսի բան.
Տղան քիչ մտածելով տուեց այսպէս պատասխան —
Թէ ես սիրոյ ձեռքիցը եղած եմ թափառական.
Ինչ ասեն կը հաւատամ, գուցէ տան ցաւիս դարման,
Ընկել է սրտիս մէջը, ասաց, մի անշէջ կրակ:
Տղային ափսոսալով՝ տուի այսպէս մի խրատ,
Թէ, եղբա՛յր, դրանք սուտ են, անմիտ բան են, անհաստատ,
Տէրտէրը քեզ խաբել է, դու մի ընծայի հաւատ,
Նա ինքն էլ չի հասկանում արածը լաւ է թէ վատ,
Արի՛, եղբայր, հեռացիր, այդ վտանգից լեր ազատ,
Քեզ այդ բանին դրկողը է ստութեանց հեղինակ:
Ինձ թողնելով՝ հեռացաւ, գնաց տղան իւր գեղը,
Մտքովս ասի՝ չա՛տ ափսո՛ս, խաբուել է խեղճ անմեղը,
Նա կարծում էր՝ թէ տարաւ ունեցած ցաւի դեղը.
Հիմա դուք լաւ կշռեցէ՛ք այս տէրտէրի ուղեղը.
Երանի ժողովրդին, որ սա է հանճարեղը,
Ո՛վ, Ջիւան, էլ Հայերը ինչո՞ւ կերթան ճկոթակ:

1876

ԻՄԱՍՏՆԵՐ

ԿԱԿՈՒՂ փուչը ձեռ չի ծակիլ, արիւն կառնէ կամացուկ.
Խաղաղ ջուրը ձայն չի հանիլ, մարդ կը խեղդէ միշտ ծածուկ
Հաչող շունը ձա՛յն է տալիս որ գալիս է քեզ վերայ.
Դու այն դամբռից երկիւղ կրէ՝ որ չի հանել ձայն ու ձուք։

Առաւօտուն թէ ամպերը կարմրած չեն՝ վախ չկայ.
Հորիզոնը սև էլ լինի, այն օրը անձրև չի գայ.
Թէ սազերը գրգռուած չեն, կարկուտից մի վախենայ.
Հազարաւոր տարիներուց փորձուած բան է յատուկ։

Ստախօսը երդուել գիտէ, գողը կեղծ արդարանալ,
Քամոտ ամպի բնութիւնն է առանց անձրև որոտալ.
Լիք կարասը լուռ կը մնայ, ամենևին ձայն չի տալ,
Զանգակի պէս զօղանչում է՝ ուր որ կայ դատարկ պուտուկ

Երկու երեսանի մարդը, Զիւանի, սրուած քար է.
Երկու սէր մէկ սրտի մէջ պահելը անհնար է.
Երկու մեծ գործ մէկի ձեռքով կառավարել դժուար է.
Մի ձեռքում չի տեղաւորուի երկու մեծկակ ձմերուկ։

1899

ՅԱՒ ՉԷ ԻՆՉ

ՉԱՐԱԽՆԴԱՑ, չար մարդիկը թող վերջանան, ցաւ չէ ինձ.
Թող կորնչին բոլորովին, անհետանան, ցաւ չէ ինձ.
Աշխարհաւեր, անիրաւ, անխիղճները կերուկ ցաւ են,
Սուրբ օրէնքի զօրութեամբ մեռնին, չքանան, ցաւ չէ ինձ։

Բռնակալ, արիւն քամող, տզրուկի պէս հարուստները,
Վաղահաս կործանումով աղքատ կը մնան, ցաւ չէ ինձ.
Զը խրատուող, ծնողաց զայրացնող զաւակները,
Տաժանակիր բանտերում աքսոր կը դնան, ցաւ չէ ինձ։

Ժողովուրդը բարութեան ճանապարհից չեղողները,
Տարուայ մէջ տասը հատը, եթէ մահանան, ցաւ չէ ինձ.
Բարոյապէս ընկնելու վրայ են, ափսո՞ս, Հայերը,
Ինքն իրանց կորտեանը ճամբայ կը բանան, ցաւ է ինձ։

1887

ՅՈՅՍ

ԱՌԱՒՕՏԸ չա՛տ մօտ է, լոյսը շողալուն քիչ մնաց.
Խաւարը ընկաւ գետին, արևը գալուն քիչ մնաց.
Համբերանքդ ծով արա, յոյս ու հաւատդ պինդ պահիր
Ո՛վ դիշերից ձանձրացող, բախտիդ խաղալուն քիչ մնաց

Լուսինի պաղ երեսից, շուտով կազատուիս, մթնակեաց,
Ջերմ ու կարմիր արփենուն, կայծը եռալուն քիչ մնաց.
Յերեկը եկաւ տիրեց դիշերային ամրոցներուն,
Խաւարը հոգուոյն հետ է, իւր կեանքը տալուն քիչ մնաց։

Լուսաբերը մթութեան թագուհու տեղ դահ բարձրացաւ
Ցնծութեան երգեհոններու որոտալուն քիչ մնաց.
Մարտի տասն է, Զիւանի, սխտոր ունիս շուտ վերջացուր,
Գարուն է արդէն, գիտենք, ամպը գոռալուն քիչ մնաց։

1889

ՉԵՄ ՍԻՐԵՐ

ԵՍ կուզեմ ճշմարտութիւն, սխալ գաղափար չեմ սիրեր.
Ուղղութեան կեա՛նքս կուտամ, խարեբայ հանճար չեմ սիրի
Իմ խելացս ոյժի չափ որքան կարող եմ՝ կաշխատեմ,
Ակներև ես տգէտ եմ, բայց՝ կրկին յիմար չեմ սիրեր։

Ընդհանուր մարդկութիւնը, պատուիրած է սիրել մեզ
Պարզապէս, այլազգերը իմոյս հաւասար չեմ սիրեր.
Մասնաւոր լոյսի ճաշակ առած կը համարեմ հոգիս,
Վասն այն ազգեցութեան ներհակ է, խաւար չեմ սիրեր։

Ազգութեան, Հայ ազգութեան իբր մի անդամն էլ ես եմ,
Ազգի չափ համարէ թէ՝ յակինթ ու գոհար չեմ սիրեր.
Միութեան կապը խզող իմաստունը անդէտ է միշտ,
Այնպէսը իմաստակ է, խելքից է տկար, չեմ սիրեր։

Ընկերին նախանձելով վնաս տուող մարդը յատուկ,
Աստուծոյ թշնամին է, և նա է Բելիար՝ չեմ սիրեր.
Ես Հայոց ռամիկներուն մխիթարող մի երգիչ եմ,
Իմ քնարիս պէս խօսող չըլինի քնար՝ չեմ սիրեր։

Հայ ազգ, Հայոց սիրուն աղջիկներուն սիրտ ընծայէ.
Այլ անց աղջիկներուն սիրող սիրահար չեմ սիրեր.
Ես Զիւանի երգիչն եմ գիտուններուն գովեստ տուող,
Եւ նորանցից առնելով՝ անդէտ խելագար չեմ սիրեր։

1870

ՄՈՒԽԵՄՄԷՍ

Ո՛Վ անիրաւ անխղճմտանք, մարիս քնարը քանդեցիր,
Փափուկ սրտիս նուրբ ապակին, գցելով քարը քանդեցիր,
Սիրտ կոտրելով, լա՛ւ իմացիր, Տիրոջ տաճարը քանդեցիր,
Տնաքանդ ես. մէկ իմս չէ, որքա՞ն հազարը քանդեցիր,
Որտեղ մի Հին կոթող տեսար, ելար կատարը քանդեցիր,
Գաղտնի ականներ փորելով, համարեա սարը քանդեցիր:

Իշխան էի, հովիւ դառայ, մի քանի ոչխար ճարեցի,
Թողի բեհէզն ու ծիրանին, թաղիքէ հանդերձ կարեցի,
Գեղջուկ հովուի բիրդ մահակը ինձ դայիսոն համարեցի.
Փափկութիւնից ձեռք վերուցի, չինականի կեանք վարեցի,
Շալակովս քար կրելով ձեռքովս պարիսպ շարեցի,
Հոտս մնաց բաց օդի մէջ, փարախ պատուարը քանդեցիր:

Վանառատունս փակեցիր, ես մնացի անմխիթար,
Ման եմ դալիս դժուածի պէս ձեռս ծոցս, խեղճ ու շուար,
Բեղանից քեզ դանդատ ունիմ, կարծրուած անդին բարերար,
Խլեցիր հացս ձեռիցս, վարուեցար խիստ անխղճաբար,
Բանալով պս պիս կապոցը միջից անդին ակը տարար,
Անձեռնմխելի պահուած կնքած ծրարը քանդեցիր:

ԱՇԸԳ - ԶԻՎԱՆ

ԴԻՒԱՆԻ

ԻՆՁՈ՞Ի համար ինձ բանտի մէջ արգելում են դուր տեղ,
Ի՞նչ եմ արել, Տէր իմ Աստուած, ի՞նչ է արդեօք իմ մեղը.
Դեռ մանուկ հասակումս զրկուել եմ հայրենիքից,
Նրա կարօտը քաշելով հալուել է սրտիս եղը:
Փչոտ է, քարքարոտ է ճշմարտութեան ճանապարհը,
Բայց կարող է անցկենալ առանց վնասի արդարը.
Թող նորից ծաղկի զօրանայ Վասպուրական աշխարհը,
Վառ պահէ անմահ Արարիչ հայրենիքիս կանթեղը:
Տէր, մի թողնիլ տարագիր Զիւանու բախտի դուռը փակ,
Ազատէ ինձ, հերիք է մնամ խաւարի լծի տակ.
Երկնային Բժշկապետ, բարձրեալ բարերար սուրբ էակ
Աղաչում եմ հասցրու Հիւանդ հոգուս ճարն ու դեղը:

1902

ԴԻՒԱՆԻ

Մարդկային ցեղի սկիզբը, վախճանը Աստուած գիտէ.
Լայնածաւալ տիեզերքի տահմանը Աստուած գիտէ.
Գիտնականները բնաւ եզրակացութեան չեն հասել.
Անբեւեալ գերբնական խորանը Աստուած գիտէ:
Շինողը ինքն է իմանում իւր շինածի գաղտնիքը,
Թեփի մէջ է խելահաս գիտուններու նոր կարծիքը.
Ուրտեղ է մաքուր սրբերու, արդարոց հայրենիքը,
Պահուած է, մարդ չգիտէ սուրբ կայանը Աստուած գիտէ:
Որդին՝ հօրը, թոռը՝ պապի իրաւունքն է պաշտպանում,
Բնական է, որ զաւակը մօր պէս է արտասանում.
Ամենայն ազգ ինքը իրան ուղղափառ է անուանում,
Մինչ չը մեռնի չի յայտնուի, այդ բանը Աստուած գիտէ:

1902

ԽԱՉԱՏՈՒՐ ԿՆՏԵՂՑԵԱՆՑԻ ՍԻՐԱԾ ԵՐԳԸ

Տգէտ բամբասողները անծանօթ լուր կը սպասեն,
Կամ փարմասոն, կամ լօթրան՝ պատրաստ են որ քեզ ասեն.
Ողջ այնպիսի մարդիկը խելքերիցը պակաս են, —
Իրանց փորը անօթի ուրիշին կալ կը կասեն:
Պարապ ու անաշխատանք, անուսում ցանցառները,
Մտքերովը չափում են չատ տեղի անտառները.
Իրը գաղան կը ծախեն խեղճ անուշիկ դառները,
Իրանց դատողութեամբը նրանց շարքում կը դասեն:
Կրոնը տեսնին կը ցընծան, մատներն իրար կը քսեն,
Ուզում են այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն.
Ուրիշներին որկրամոլ, հաւատից դառած կասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պատեն:
Ճշմարիտ խօսողները նրանց գերի են դառել,
Ազգութիւնից հեռացած կարծես վերի են դառել,
Հաւատից դայթակղուած, չատուկ թերի են դառել,
Վերջի՛ւ եալ մարդիկը մեր ազգին չատ վնաս են:
Ջիւա՛ն, չատաջ մի՛ խաղար, քար կը խփեն քո թևին,
Նրանք այնպէս մարդիկ են՝ խաւար կասեն արևին,
Արդարութիւնը ի՞նչ է, չեն գիտեր ամենևին,
Բարութեան միշտ հակառակ, չարութեան մակարդ մաս են:

1870

ՄԻԻՇՏԷԶԷՏ

ՎԱՐԴԻՆ սոխակից հեռացնող, ո՛վ անիրաւ փուչ,
Կեանքերու զրաւ փուչ.
Ցուսամ կը լինիս վառ կրակին մի օր զրաւ փուչ,
Ձեռ ճարի թաթաւ փուչ.
Մինչ ե՞րբ ասա, անմեղ ծաղիկներուն խաբես անցնիս
Կայծով լափես անցնիս.
Ո՛վ անպիտան արմատ՝ի բընէ, այտերդ սեաւ փուչ,
Պատճառում ես դաւ, փուչ.
Ո՜հ, որպիսի՞ անխիղճ թունալից խայթ կայ քու մօտդ
Զորանայ արօտդ.
Որքա՞ն նորահաս սրտերու ընծայում ես ցաւ, փուչ,
Արիւն ու շարաւ փուչ.
Թրթուրը, ճճին քեզանից խղճով են, ով անդութ,
Սակայն դու սև ու մութ.
Տարին քանի՞ հատ բերում ես սոխակ ու կաքաւ փուչ
Զոհուած, դուռդխաւ փուչ.
Վերջդ Զիւանս քաջ գիտէ, որ չորանում ես շուտ,
Անվարձ ու անօգուտ.
Ներգործութիւնդ անց չի կենայ էլ քու, պառաւ փուչ
Այրի՛ դու ծարաւ փո՛ւչ։

1879

ՊԻՏԻ ՀԱՍՆԻ

ԽՆԴԱ՛ սիրուհիս, քեզ բարի վիճակ պիտի հասնի.
Մեծ Բարերարից պարգև ու պսակ պիտի հասնի.
Սրտիդ սիրածը, հոգ մի անիլ, յետ կը դայ անշուշտ,
Մօտիկ օրերս բաղձալի նամակ պիտի հասնի։

Փափուկ քնարի ձայնովը հոգիդ պիտի հրճուի
Գողթան մուսաներէն սիրոյ երգակ պիտի հասնի.
Աներկբայ եղիր փեսայի գալուն, սիրելի կոյս,
Երկնից ուղիով օդի սուրհանդակ պիտի հասնի։

Քո տխրութիւնդ ձմրայ նման փոխուելով յանկարծ,
Զուարճալի օր, քաղցր եղանակ պիտի հասնի.
Ինչպէս Սառային, Աբրահամին խնդացուց Աստուած,
Քոյր իմ, քեզի էլ այնպիսի զաւակ պիտի հասնի։

Մեծ Բարերարը արծուի թևերու վերայ նստած,
Եղբայրներովդ քեզի օժանդակ պիտի հասնի.
Դժոխքը, Զիւանի, էլի դրախտ պիտի դառնայ,
Զար դևի տեղակ, բարի հրեշտակ պիտի հասնի։

ՂՕՇՄԱՅ

ՄԻՆՉԵՒ կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ,
Ո՛վ իմ ծննդավայր սրբազան երկիր.
Ես մի չոր կեանք ունիմ, թող քեզ նուիրեմ,
Ինձ կեանք չնորհող մայր, աննման երկիր։
Շատ ունիս անձնազոհ, եռանդոտ մշակ,
Քեզ սիրում են որպէս հարազատ զաւակ.
Աղատ չունչ կը քաշես կուզայ ժամանակ,
Սպասէ և յուսա՛, պատուական երկիր։
Դո՛ւ ես աղգայնութեան հրահանգ տուող
Սրտիս մխիթարանք, սփոփանք տուող.
Նախնիքներուս սնունդ տուող, կեանք տուող,
Իմ բնիկ հայրենիք, բնական երկիր։
Զիւանին ե՞րբ պիտի տօնէ զատիկդ.
Ապրիլ ամսում արև դարձած մահիկդ.
Փոխուած տեսնէի քո կրակէ չապիկդ,
Հաղնէիր նոր տեսակ պատմուճան, երկիր։

ՂՕՇՄԱՅ

Ո՛Վ ԱՆԶԳԱՅ, անխիղճ, կեղտոտ, խմաստակ,
Մինչ ե՞րբ վիրաւորես անմեղ սրտերը,
Ո՛վ Նեռի կարապետ, հոգւոյ աւազակ,
Ինչո՞ւ կը պղտորես չքեղ սրտերը։
Հողմերից հալածուած ամպերի նման,
Թափառիս անդադար միշտ ատանդական,
Դարձեալ քեզի դու կանուանես գիտնական,
Միթէ կը համոզուի՞ն ուժեղ սրտերը։
Զիւա՛ն, թափի՛ր աչքիդ մարգարիտները,
Աստուած կուզէ հոգւով ճշմարիտները,
Կը պահէ անվնաս միամիտները,
Չի՛ թողներ անբժիշկ, անդեղ սրտերը։

1876-1877

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԵՄՈՒՏԻՆ

ԲՈԼՈՐ ծաղկունները բացուին, գեղեցիկ վարդարան դառնան.
Աղա՛ռ երգեն սոխակները, ծառերը երգարան դառնան.
Խոպան այգիները ծաղկեն, նորոգուած տեսարան դառնան.
Յամաքած ձորերը կրկին ջրերու աւազան դառնան.
Հարազատ տէրերը իրանց հողերուն պահապան դառնան.
Սարերն ու դաշտերը մէկ-մէկ հացի չափարան դառնան:
Վերին դերբնական Զեռքովը նորոգուի հին տունը շատ շուտ.
Փառաւորուի, բաղմի այն տեղ թագուհի սիրունը շատ շուտ.
Տարածուի աշխարհէ աշխարհ հատընտիր անունը շատ շուտ.
Զմեռը վերջանայ կորչի, ժամանէ գարունը շատ շուտ.
Շուտով ծիծեռնակը հասնի նորոգէ իւր բունը շատ շուտ.
Կանաչ կարմիր ու սպիտակ սարերը ողջ վրան դառնան:
Դու փայլուն քանդերորդ դար, արի դարնան աւետիք տուր,
Նորածին վարելի մանուկ, գեղեցկադէմ, քաջագանգուր,
Մօրդ պէս մի լինիր անդութ, տկարին անօգուտ, խղուր,
Զորացած, ծարաւի ծաղկանց խղճա, շուտով սրսկէ ջուր,
Տարածէ ամենայն երկիր բարի համբաւ, աւետեաց լուր,
Մարդասէր գործերդ շատ տեղ քեզանից թող նշան դառնան:
Արի խաղաղութեան հոգի, կռիւները վերանան թող,
Իրանց գործած սխալները մարդիկ զարթնին, իմանան թող,
Տկարները մեծ ոյժ կազմեն, իրարու հետ միանան թող.
Ուղիղ ճամբով գէպի առաջ շարունակեն ու գնան թող,
Լուսամիտ մարդասէր մարդիկ օրըստօրէ զօրանան թող.
Նոցա խօսք ու քարոզները տարածուին պատուիրան դառնան:
Ամենայն մի տառապեալ մարդ թող հանգիստ օթեւան գտնի,
Հողաշատ աշխարհի մէջը իրան պատսպարան գտնի,
Առանց գործ մեռած է մարդը, լաւ է հանգստարան գտնի.
Ապրել ուզող, ցանկացողը մտածէ գործ ու բան գտնի,
Ջիւան մեր հին բուրաստանը մի հմուտ բուսաբան գտնի,
Հրաչքով փչերը փոխուին, նորոգ վարդ ու շուշան դառնան:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ Սիրոյ Տաղերից

Աղուր, քեզ Աստուած է ստեղծել, մայրդ օրհնեալ, որ քեզ բերել է.
Ոչ լուս կայ 'ի քեզ նըման, ոչ արև, որ դեռ կու ծագէ.
Արուսեակ աստղին դու նըման, որ ամեն առաւօտ կ'ելնէ,
Կ'երթայ 'ի Հոռումքն ի վար, լուսն 'ի մութն 'ի հոն բաժանէ:

ՖԷՍԸ

Էլ չեմ սիրում, ասեցի, կարմիր ռանգ ալ ֆէսը
Ահագին աղմուկ հանեց արաւ դալմաղալ ֆէսը.
Իմ եղբարցս արիւնով ներկուած ծալծալ ֆէսը,
Չեմ կարող գլխիս դնել մեղքերու ջուալ ֆէսը:
Թեթեւ բրդից յօրինուած հինգ տասը մսխալ ֆէսը,
Դարձաւ ծանր, ահագին երկաթէ կոպալ ֆէսը:
Գիտեմ շուտով կը փայլէ քառաթեւ արեգակը,
Աստղերու հետ կը կորչի մեծամիտ լուսնիակը.
Էլ ոչ ոքից չի սիրուի արիւնաներկ գտակը,
Շուտով կը սնանկանայ հնարող հեղինակը.
Կատր-բրդում կը դառնայ ոչխարաց ոտի տակը,
Արիւնարբու թունաւոր օձ ու ոխակալ ֆէսը:
Զուր տեղը գոյն են ղրկում ներկելու Եւրոպայից
Նա ամեն օր ներկւում է արիւնով Ասիայից —
Մէկ ժամանակ կարմիր փայլ կառնէր Բուլղարիայից,
Այժմ թողեց այն տեղը, սկսեց առնել Հայից.
Հարիւր տարի չի քաշել դուրս կը նետուի մօտայից,
Դարձել է բիւր-ծականի ցնցոտի, հին չալ ֆէսը:
Մեծամտաւ, լայնացաւ, հպարտութիւն սովորեց,
Անմեղ արեան գոյներով սիրուն գոյնը պղտորեց.
Զէ ու կաղապար առուղ վարպետներուն աքսորեց
Որոնց էլ բանտերու մէջ ճիճուի նման տրորեց.
Իրեն յարգող և սիրող ժողովրդին կոտորեց,
Մնաց անմարդ, անծածկող, գործեց մեծ սխալ ֆէսը:
Իմ թանգագին գլխարկիս կը մնամ հաւատարիմ
Ամենևին չը փոխել հաւատս, ուխտս է իմ,
Իմ երկրի դտակը, սեբտ բարեկամ, մտերիմ,
Նրան չը հաւատողը թշնամիս է ոխերիմ,
Ողջ աշխարհից յարգուած գլխիս շլեապա ունիմ
Ի՞նչ եմ անում հնացած անկար, անշուքլալ ֆէսը:

1897

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ Սիրոյ Տաղերից

Մէկ մարդ մի գիրքատան ունի, և գլարդին տակն կու փորէ.
Պըլպուլն 'ի վարդին սիրուն գիր վըզիկն դէմ կու բերէ.
Վարդն ալ 'ի թըփին մէջին սուտ 'ի քուն ու զայն կու լը սէ,
Իսկոյն պատասխան խաւր — Քո աղէկն Աստուած վըճարէ:

ԴԱՍԹԱՆ

ԱՅՆՔԱՆ ինձպէս չեղար, դու անխղճմտանք,
Որ ինձ արիր քեզի նման, դրացի·
Երկուքս էլ մէկ տեսակ դրութեան հասանք,
Ինչ ունէինք առան, տարան, դրացի։
Աստուած երկնքից մեր սրտին նայեց,
Մեր մեղքին համեմատ Նա մեզի պատժեց·
Ինձ էլ քու ընկածդ հորի մէջ ձգեց,
Իրար գտանք մենք անբաժան, դրացի։
Այսուհետև կուզես ինդա, կուզես լաց,
Ընկանք անդունդի մէջ — ոչ ջուր կայ, ոչ հաց,
Թէ քու դուռդ փակ էր, իմ դուռս էր բաց,
Մերթ լինում էր քեզ իջևան, դրացի։
Խնդրեմ ասա, քեզ ի՞նչ օգուտ այս բանից,
Որ ինձ էլ զրկեցին իմ օթևանից,
Ոչ ոք գոհ չէ ոչ ինձնից ոչ քեզանից,
Որ չեղանք մէկ-մէկու պաշտպան, դրացի։
Խելքիցդ դուրս յարձակուեցիր ինձ վրայ,
Նախատեցիր, հայհոյեցիր անխնայ·
Ես ի՞նչ անեմ որ սարերից հեղեղ դայ,
Սրբէ տանի ամեն մի բան, դրացի։
Ինքդ էլ չիմացար թէ ինչ մտածեցիր,
Էլը թողած համեստը հարուածեցիր·
Իզուր տեղը չարութիւն սերմանեցիր,
Եղար դու մեծ որոմնացան, դրացի։
Մեր ձեռքով մեր կեանքը կը համառօտենք,
Դեռ մեռած չենք, բայց մեռնելու չատ մօտ ենք·
Տներուս մէջ աւուր հայի կարօտ ենք·
Ես փերեզակ, դու մուրացկան, դրացի։
Այժմ երկուսիս էլ մուխը մարեցին·
Լեռ քարերով դռներս վեր չարեցին·
Մէկ կտորից պատանքներս կարեցին,
Պատրաստեցին խոր գերեզման, դրացի։
Ոտքերս չղթայած, ձեռքերս կապած,
Լուռ ու մունջ նստել ենք, անխօս, կարկամած·
Վերև նայենք մաղից մէկ սուր է կախուած,
Վար նայենք մեծ վիշապներ կան, դրացի։

Ի՞նչ հնար մտածենք, որ չը մահանանք,
Կամ թէ վիշապներուն մենք կուլ չը գնանք·
Պէտք է իրար սիրենք, իրար հասկնանք·
Այս է ելքը իմ սիրական, դրացի։
Աշխատենք մեր ճանապարհից չը սահենք,
Ուժեղ բարեկամաց սրտերը չահենք·
Այնքան աշխատենք որ մենք մեզի պահենք,
Տեսնենք ինչ է մեր ապագան, դրացի։
Ինձանից քեզ դու վատութիւն մի յուսայ,
Ինչպէս դու քեզ և քու անձիդ՝ հաւատայ·
Դու էլ ինձի չարութիւն մի կամենայ,
Իմ բարեկամ, իմ պատուական դրացի։
Մեր մէջ դժուար, չը լուծուելու վէճ չունինք,
Որ իրար հակառակ, թշնամի լինինք·
Իզուր չէ՞ մէկ-մէկուց լսենք նախատինք,
Լիննենք անպէտք ու անարժան դրացի։
Լաւ զտենք հին ու նոր դաղափարները,
Լաւն առնենք, դէն քցենք մենք վատթարները·
Թէ՛ ձեր, թէ մեր նախնեաց հին տաճարները
Մնան մինչ ե՞րբ կիսակործան, դրացի։
Մեր պապերը իրար եղբայր են եղել,
Միշտ իրարու բարութիւն են կամեցել·
Մենք ևս սկսենք իրարու դովել,
Ջիւանս խնդրում եմ այսքան, դրացի։
1898

ԴԻՒՐԷԻԹ

ԱԶԳ իմ, որքան նկուն մնաս,
Սիրաս քեզանից չի զատուի·
Հազար տեսակ չարչարանք տաս
Սիրաս քեզանից չի զատուի։
Քեզ չեմ մոռանայ յաւիտեան
Հարազատ մա՛յր իմ Հայաստան.
Թէկուզ դրախտն էլ ինձի տան՝
Սիրաս քեզանից չի զատուի։
Քեզանով եմ ես երջանիկ
Իմ սիրելի, իմ անուշիկ·
Ծոցիդ մէջը հանդչիմ, մայրիկ,
Սիրաս քեզանից չի զատուի։
Ջիւանին եմ, քեզ բարեկամ
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրաս քեզանից չի զատուի։
1879

ՄԱՅՐԻԿ

ԶՈՒԽՏԱԿ շամանները դրախտ ծոցիդ մէջ,
Կաթնաղբիւր են եղել ինձ համար, մայրիկ.
Տատրակի պէս շատ եմ արել ելէջ,
Կրծքիդ վրայ մաքուր, սուրբ տաճար, մայրիկ։
Ինձ համար հոյակապ կաղմդ ես մաշել,
Հրճուել, ուրախացել, վրաս ես աշել,
Մինչև մեծանալս ինչե՞ր ես քաշել,
Մնացել ես անքուն, անդադար, մայրիկ։
Փոխարէնը ես քեզ ոչինչ չեմ արել,
Մօտդ չեմ մնացել, չեմ մխիթարել.
Քու սուրբ պատուէրներդ ճիշդ չեմ կատարել,
Թողեր եմ իղձերդ անկատար, մայրիկ։
Ջիւանին եմ, սխալմունքս զգում եմ,
Ես քու հոգուդ համար միշտ աղօթում եմ.
Ներիր քու մեղաւոր որդուդ, խնդրում եմ,
Եղիր երկնքումը ինձ սատար, մայրիկ։

1899

ԽՐԱՏ ԸՆԿԵՐԻՍ

ԻՄ ճախորդութեանս մի խնդայ, ընկեր,
Քեզ էլ կը պատահի այս բանը մէկ օր.
Դու վարը կը նստիս, ինձ կը կանչեն վեր,
Բախտերս կը փոխէ շրջանը մէկ օր։
Փողի վրայ ցոյս մի դներ յաւիտեան.
Ցոնի ու դուրս կուգայ շատ մարդու դրպան,
Բախտի բերմամբ ծառան կը լինի իշխան,
Իսկ ծառայ կը դառնայ իշխանը մէկ օր։
Փնտռես ու չես գտնիլ մի խեղճ աւանակ,
Քու զարդարուած նժոյգ ձիուդ փոխանակ,
Ամեն անդամ ձիդ չի տանի ոտքանակ,
Ուրիշին կը մնայ մէկտանը մէկ օր։
Քու ընկեր Ջիւանուդ խօսքերը միշտ լուր,
Առաքինութիւնը պինդ բռնէ ամուր.
Մեռնելիս կը դառնաս հողին կերակուր,
Մտնելով սև մահի ուռկանը մէկ օր։

1897

ԹԱՄԱՆԱԿԻՍ ԲԱՐՔԵՐԻՑ

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻ դրութիւնը ինչո՞ւ այսպէս վատացաւ,
Անմաքրութեան գարշահոտ պտուղը խիստ առատացաւ.
Բռնակալ, անմարդասէր, անխիղճ ազահի ձեռքիցը,
Առատասիրտ ողորմածը կգկրթաւ, աղքատացաւ։
Կարելի է թէ փոխուել ենք, մենք կրում ենք ջոկ արիւն,
Արդարութեան շինութեան մէջ մեզքն է դրել հիմք ու սիւն.
Համեստութիւնը վերացաւ տեղը եկաւ ցոփութիւն
Նրա համար մարդկութեան մէջ հոգսն ու ցաւը շատացաւ։
Քաշուել են յետ, Ջիւանի, հոկայ, ուժեղ, պարթևները,
Հիմա մեծ դեր են խաղում թզուկները, թերթևները.
Ափրոդիտեան թագուհին բաժանում է պարգևները
Սրբութեան վեհազնուհին նուէր չի տալ, ժլատացաւ։

ԽՐԱՏ ԱԳՌԱԻԻՆ

ՏԳԵՂ ագռաւ, նոր փետուրներ դնելով,
Իզուր մի աշխատիր, սոխակ չես դառնալ,
Սիրուն թռչնոց երամի մէջ մտնելով,
Ջես փոփոխուիլ, նոյնն ես, տատրակ չես դառնալ։

Հանդերձը խելք չի տար, դարձեալ դու խև ես,
Ձայնդ տաղտկալի է, կերպով տգեղ ես,
Նրա ոտքերն է սև, դու ամբողջ սև ես,
Սիրամարդին անդամ մշակ չես դառնալ։

Թէ ուզում ես հազիր լուսեղէն հալաւ,
Ձայնդ քեզ մատնելով, ասում են ագռաւ,
Կաղ 'ի կաղ քայլելով չես լինիր կաքաւ,
Քեզ կը ծաղրեն, լաւ օրինակ չես դառնալ։

Դու ճնռան խօսնակ ես, հազիր տաք մուչտակ,
Խոպոտ ձայնով բարձրացրու աղաղակ,
Հոգիդ խարդախ, արդարութեան հակառակ,
Դևի սեռ ես, դու հրեշտակ չես դառնալ։

Ջիւանուս հետ կասեն թռչուններն համայն,
Սոխակի շնորհիւ ապրում ես միայն,
Ոչ նուագել ունիս և ոչ քաղցր ձայն,
Մնում, տրաքիս, որ երգակ չես դառնալ։

1884

ՍԵՒ ՆԱԽԱՆՁ

ՁԿԱՄ, մաղձոտ սրտից ծնած օձաձև,
Էոյսին խաւար ասել տուող, սև նախանձ.
Հոգիդ սև է և քու կերպարանքդ սև,
Բուստին ճաւար ասել տուող, սև նախանձ:
Անգութ անզգայ ես, քո խիղճդ մեռած,
Անստուեր մարմին ես անկիւնում ընկած,
Լեզուդ թունաւոր է և սիրտդ նեխուած,
Մարդուն տաւար ասել տուող, սև նախանձ:
Չիւա՛ն, նախանձ մարդը չի լինիլ ուրախ,
Նրա կերած հացն է արիւն ու թարախ,
Ազնիւ հանքարանին դարձնող խարդախ,
Ոսկուն կապար ասել տուող, սև նախանձ:

1890

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆԶԳԱՄ ու անխիղճ մարդու դրպանից
Երբ պակասեց փողը — կըդառնայ դաղան,
Կուտէ ինքն իրան.
Դուրս կըգայ գայլի պէս իւր օթևանից,
Կըխածէ ամենին կատղած չան նման,
Պէտք է դաւազան:
Այդ անբարոյական, անդրամ մարդը,
Թշնամի կըկարծէ բարեկամ մարդը.
Մանաւանդ որ խմեց անզգամ մարդը,
Այլ նա չի ակնարկեր ծանօթ, ազգական,
Կուտէ ամեն բան:
Հոգու զգացումից չուզելով բաժին,
Կըդառնայ անասուն, անհոգի մարմին.
Կըկողոպտէ իւր ընկերը, դրացին,
Աչքին չի երևայ Սուրբ Աւետարան,
Եւ ոչ դատաստան:
Մերկ դաշոյնը ձեռին դուրս կուգայ փողոց
Կըլափէ չատերին որպէս վառ հնոց.
Կը հարուածէ հանդիպողին, կուտայ խոց.
Մէկին էլ կենացը նա տալով վախճան,
Ղրկեց գերեզման:

Տարածուելով ճայնը ամենայն մի տեղ,
Մինչ կիմանայ լուրը ատեանը ահեղ.
Կալանաւորելու գաղանը ուժեղ,
Կառավարութիւնից կը գայ ոստիկան,
Կըբռնէ նրան:

1885

ՑԵՑԵՐ

ՑԵՑԵՐԸ, թրթուրները չըլինէին պարտէզը,
Ծառերու արմատները չըլիզէր յարալէզը,
Բախտախնդիր, հացկատակ, փոքրոգի մարդիկները,
Երանի չըմտնէին գիտութեան ասպարէզը:
Աղտեղի բնութիւնով, մեղրի համը փոխելով,
Քանդում է մեղուի տունը անպիտան մէկ ըզէլը.
Խելօք թռուկը լաւ է թեթևամիտ հսկայից,
Ինչո՞ւ է պէտք անօգուտ բլուրը՝ մսաղէզը:
Շատացել են գայլախեղդ, իշու նահատակները,
Իւր յարդը կորցրել է ճշմարիտ ողջակէզը.
Բարձրամիտ իմաստակը մի ղրօ էլ չէ այնտեղ,
Եթէ գիտնայ քննել նա գիտութեան քարտէզը:
Նոր հաւերը մի տեսակ խատուտիկ հաւկիթ կ՝ածեն,
Կարծես, ամեն մէկի մէջ բուն է դրել մոզէզը:
Անհմուտ խոհարարի կերակուրը ուտելուց,
Չիւա՛ն, լաւ է ամեն ժամ վայելել վայրի սէզը:

ՊԱՏԻՒ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն,
Եւրոպայի ձևով հալաւ ունեցիր.
Թէ կը ցանկաս պատիւդ լաւ պահպանեն,
Շինծու դիպլոմ, շինծու համբաւ ունեցիր:
Ժողովրդի կամքը, բերանը շինէ,
Չի հասկանալ, նորա համար դիվ մին է,
Այն որ Հիմա հաստ ու բարակ մի զին է,
Անվնաս է, խելք էլ սակաւ ունեցիր:
Այնքան որ ունեցիր մի վկայական,
Կասեն, որ մտել ես դու համալսարան.
Վախենաս թէ հազարներով քեզ չըտա՞ն,
Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր:

ԽԵԼՔԻ ԱՇԵՑԷՔ

ԱՆՄԻՏ ճնճղուկը բազէի ճանկից
Ուզում է որս խլել, խելքի աչեցէք,
Կարծես ճանճրացել է գլխից ու դանկից,
Պատերազմ է մտել, խելքի աչեցէք։
Խելքին զօր տալով է հիմա ամեն բան,
Ցիմարն էլ իմաստուն կարծում է իրան,
Նիհար հաւը, պարարտ մեծ սագի նման
Ուզում է ձու ածել, խելքի աչեցէք։
Աղնիւ մարդը անարդւում է դէշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարուայ հորթը ցուլ դոմէշի հետ
Բերել, կամ են լծել, խելքի աչեցէք։
Գայլը վրան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան հսկող է դառած,
Աքլորը քարոզչի վիրարկու հագած
Ամբիոն է ելել, խելքի աչեցէք։
Ուղտը մետաքսագործ, եղը նաւավար,
Գայլը հովիւ դառած, կ'արածէ ոչխար·
Աղուէսը հաւնոցի դրանն յուշարար,
Ի՞նչ հսկող են դտել, խելքի աչեցէք։
Փափուկ ճէնդլմէն է հաստ դռեհիկը,
Ամբոխի գիտունն է խելքից բոբիկը,
Կենացը մէջ ծառ չըտեսած ռամիկը
Այգեպան է եղել, խելքի աչեցէք։
Երեխան ձեռն առած փթած հին լարը,
Բռնել կամի դարձող ջաղացի քարը·
Գաճաճ մուկը չրջել կուզէ մեծ սարը,
Կողքը դէմ է տուել, խելքի աչեցէք։
Ուրացողը խիղճ չունի ամենևին,
Զըզգալով, սպիտակ ասում է սևին,
Կոյրը չըտեսնելով լոյսը արևին,
Աշխատում է ստել, խելքի աչեցէք։
Աւել հոգսը վնաս կուտայ իւր անձին,
Ուրիշի ցաւերը առնելով վզին,
Գայլը յօշոտել է մարդացեց մէկին,
Խենթը սև է հագել, խելքի աչեցէք։

Գորտը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,
Դուրս ելաւ, բաժինն է վիշապի փորին,
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,
Էշը մէջ է ընկել, խելքի աչեցէք։
Ժլատն աշխատելու է շատ ընդունակ
Իւր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձը զրկելով դիզել է ստակ,
Ուրիշն է վայելել, խելքի աչեցէք։
Ցանցաւոր հարուստը ուրախ խնդալով,
Մեղքից աղատուել է մեծ դումար տալով,
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով,
Բանտի մէջն է փթել, խելքի աչեցէք։
Մարդ կայ դերդաստանը պահում է ցամաք,
Կերթայ, դուրսը կուտէ մեղը ու սեր, կարագ,
Այլոց համար կ'անէ ճանով պատարագ,
Իրան ժամ չի անել, խելքի աչեցէք։
Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,
Բնակիչները Հայ մօտ քսանհազար,
Իրանք սնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աչեցէք։
Ինչ կենդանի ուղէ լինիլ շանսատակ,
Կերթայ ու կը մտնի ծանր բեռի տակ,
Նապաստակը առիւծի դէմ համարձակ
Կռիւ է սկսել, խելքի աչեցէք։
Ցորենը մի անգամ լինելով տկար,
Այնպէս բոյս չեն գտել, որ անեն նշխար·
Կորեկ հացը իրան կարծելով յարմար,
Սեղան է բարձրացել, խելքի աչեցէք։
Ո՛չ մի գիտուն չի հասել իւր փափաքին,
Սպառելով լոյսը կենաց ճրագին·
Խենթի մէկը հազար տարուայ քաղաքին
Կուզէ նոր կարգ դնել, խելքի աչեցէք։
Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբակներուն են թողած,
Ջիւանն էլ կաղ իշով կարաւան մտած
Բանաստեղծ է դարձել, խելքի աչեցէք։

1883

ԱՂՕԹՔ

ԵՐԵՍԱՆԿԵԱԼ աղաչում եմ, Տէր Յոտուած,
Նախանձոտ, վատ հարեւանից փրկէ ինձ.
Անկիրթ, անբարտաւան, լիրբ, աներկիւղած,
Անունով մարդ, գործով շանից փրկէ ինձ:
Ո՛հ չեմ ցանկալ լիրբ բերանից նախատուիլ,
Նրա տուած վէրքը շուտ չի փարատուիլ,
Արջից, գայլից կարելի է ազատուիլ,
Անդուսպ հարբած մարդ-գազանից փրկէ ինձ:
Ջիւանի, չարերը, նեռ օրինազանց,
Մարդ բռնելու համար պատրաստում են ցանց.
Քսու, մատնիչ, Յուդայի պէս վատ մարդկանց
Անելուոյթ մութ դարանից փրկէ ինձ: 1990

ԵՐԵՔ ՁԱՅՆ

ԵՐԵՔ ձայն կայ շատ է սիրում ականջս,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն.
Այդ երեքն են մշտական իմ պահանջս,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:
Ջուրը կեանք է, ոսկին զօրաւոր, յաղթող,
Սիրունից կը լսես կենսատու ներբող.
Արդեօք մարդ կա՞յ այդ երեքը չը սիրող,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:
Գրպանդ ունենաս ոսկով լի քսակ.
Մօտդ մի չքնաղ կոյս, դիմացդ գետակ.
Երեքն էլ լսես գիշեր ժամանակ,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն: ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ԱՆՀԱՒԱՆԸ

ԱՆԿԻՐԹ մարդը իւր բանը չըգիտնալով՝
Կատարեալի լաւ վիճակին չի հասնի.
Իրան մէջը մէկ գիտութեան յուսալով՝
Վարժապետի օրինակին չի հասնի:
Կատուից կը խնայէ մէկ կտոր չոր հաց,
Ամեն օր ծեծ, կնոջ աչքերումը լաց,
Մէկ նոր հագուստ չունի՝ ողջ մարմինը բաց՝
Մեծատանը ժամանակին չի հասնի:

Մէկ տուն ունի անլոյս, խաւար, կեանք մաշող,
Խնդութիւնից զրկող, ստամոքս խաշող,
Զորթանէ ապուրի միշտ կարօտ քաշող՝
Արքայի մաքուր խորակին չի հասնի:
Բոլորովին թողած իւր գործը, բանը,
Փորն անօթի, քաց մնացած բերանը,
Հինգ հատ պղինձ դրամ չունի գրպանը՝
Ոսկով լեցուն դանձանակին չի հասնի:
1885 ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ

ԽԱՂԱՂ, առանց ցաւի, երջանիկ մարդիկ
Գտնել կուզես, դերեզմանոցը գնա.
Մարդիկը թշուառ են, չըկայ երջանիկ.
Կուզես քաղաք, կուզես ամրոցը գնա:
Մարդիկ առհասարակ թշուառական են.
Լոկ ապրուստի համար, ինչ ասես կանեն.
Մէկ ծայր հացի համար, իրար կսպանեն,
Տանից դուրս եկ դու մէկ՝ փողոցը գնա:
Ո՛վ Ջիւանի, դու մի ամիս գարուն ես.
Զգա՛, շուտով կանցնիս, թէ որ արթուն ես.
Կը յարգեն, կը պատուեն, քանի սիրուն ես,
Երբ ծերանաս, գրողի ծոցը գնա: 1886

1890 ԾԱՂԻԿ ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ԳԱՐՈՒՆԴ անցել է, աշնան պտուղ ես,
Բայց նոր ես երևում, դեռ լաւ ես ծաղիկ,
Միամիտ հենց գիտէ գարնան պտուղ ես,
Չէ հասկացել ներկած կտաւ ես, ծաղիկ:
Պարտիզպանը միշտ մօտդ հարկաւոր է,
Որ քեզ հսկէ, բնութեանդ սովոր է.
Թէև գոյնդ լաւ է, տերևդ չոր է,
Ձեռք դիպաւ, կը փըշրիս, պառաւ ես, ծաղիկ:
Թարմութիւնդ վաճառել ես, սև երես,
Ի՞նչպէս քեզի առնեմ, սրտով սիրեմ ես,
Ինձ ասում ես վա՛ղն եմ, բայց դու վարդը չես,
Հոտ չունիս, առնողիդ մեծ ցաւ ես, ծաղիկ:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

ԱՆԴՈՐԾ-ՊԱՐԱՊ ման եկողը
Անմիտ, խելագար չէ՝ ի՞նչ է,
Միշտ մոլութեան հետևողը
Բնութեամբ տկար չէ՝ ի՞նչ է։

Օրէնքներէն պատառուածը,
Իրան խօսքով յամառուածը,
Անօթեւան թափառածը
Բուին հաւասար չէ՝ ի՞նչ է։

Գլխին աւնողը մութ քողը,
Ըստեսնող բարեբեր ցօղը,
Անկիրթ, անուսում մեծցողը
Անտաշ, կոպիտ քար չէ ի՞նչ է։

Իրան արդար մարդ դասողը-
Աստուծանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը
Միշտ հոգւով խաւար չէ ի՞նչ է

Բնական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկութեան շարքից ելնողը
Անասուն, չինար չէ՝ ի՞նչ է։

Ըստպահող իւր բերնի սանձը,
Ծուռ մտքով նայող կանանցը,
Միշտ պղծութիւն սիրող անձը
Գաղանից վատթար չէ՝ ի՞նչ է։

Կենդանութեան կաթն ու կոգին
Թողած՝ սիրէ աննիւթ շոգին,
Պատուիրանազանցի հոգին
Բելիարին աւար չէ՝ ի՞նչ է։

Անունը թանգ չունեցողին,
Բարութեան ջանք չունեցողին,
Երջանիկ կեանք չունեցողին
Աշխարհը օտար չէ՝ ի՞նչ է։

Գործը շատ ցրիւ է թոյլին,
Հաստագլուխ մտքով գոյլին.
Տեղից չը շարժուող ծոյլին
Դիւրինը դժուար չէ՝ ի՞նչ է։

Ո՞ւմ տայ իւր ընծայ նուէրը,
Ո՞ւմով աւելանայ սէրը,
Անզաւակ դրամատէրը
Իսկ անմխիթար չէ՝ ի՞նչ է։

Զի՛ սիրուի թառամած վարդը,
Քամուն ճաշակ կընի յարդը,
Փթած ծառի նման մարդը
Կրակի պաշար չէ՝ ի՞նչ է։

Սառել է սրտի եռանդը,
Զունի ողջութեան աւանդը.
Անբժշկելի հիւանդը
Մեռնելուն յօժար չէ՝ ի՞նչ է։

Ցուսահատն է արմատախիլ,
Նրա բոյսը չունի նոր ծիլ,
Անյուսալի բանը գտնիլ
Բերելը անկար չէ՝ ի՞նչ է։

Բարկացող յուսահատներուն,
Անզուսպ և անխրատներուն,
Երկմիտ թերահաւատներուն,
Խելքն անկատար չէ՝ ի՞նչ է։

Զունեցող վարժապետ ազգը՝
Սէր չունի իրար հետ ազգը,
Անօգնական անպետ ազգը
Անհովիւ ոչխար չէ՝ ի՞նչ է։

Զիւան, ցաւին ճար չըգիտցող
Ապրելու հնար չըգիտցող,
Պանդուխտ ճանապարհ չըգիտցող
Զինուորը չուար չէ՝ ի՞նչ է։

1870

ԽԵԼՔՆ Է, ՈՅԺՆ Է, յետոյ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՐԱԳՆՏԻ տէրը, երրորդութիւնը
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը.
Աշխարհի պինտ պահող հոյակապ սիւնը
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը։
Հին Աստուածը դրքերու մէջն է հիմա
Կամ երկինքն է, մեզնից հեռու, բացակայ.
Երկրագնտի վրայ ուրիշ Աստուած կայ,
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը։
Որտեղ մի լաւ գիւտ կայ, խելօքն է գտել.
Անառիկ բերդի մէջ ուժեղն է մտել.
Նոր երրորդութիւնը չես կարող ստել.
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը։

ԻՐԱՒՈՒՆՔ

ԹՈՂ ես մշա՛կ լինիմ, դու եղիր իշխան —
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի.
Թէ կուզես հաշտ ապրինք, բարի հարևան,
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի։
Անհատական իրաւունքս է ամեն ժամ,
Իմ պարտքն է աշխատեմ ոչ ոքի չը տամ.
Թէ կուզես իրար հետ մնանք բարեկամ,
Պատուիս ու կրօնիս հացիս մի դիպչի։
Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ
Պատիւ չեղած տեղը հաց չըկայ առատ.
Կը ցանկաս որ չտնեմ քեզանից զանգատ
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի։
Բնաւ չեմ նախանձի քու ճոխ սեղանին
Քու ոսկուն, արծաթին, քու գանձարանին.
Այս երեքով կապրի Աշըղ-Ջիւանին
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի։

ԱՆՄԻՏԸ

ՍԽԱԼՈՒԵՑԱՑ տեղիք տուի անմտին,
Երես առաւ, ելաւ նստաւ իմ ուսին.
Ես նրան իմ բարև տալս զղջացի,
Որովհետև շատ ու շատ ցաւ զգացի.

Յետոյ դարձայ ես ինձ ու ինձ ասացի —
Անմիտ մարդուն պատիւ զուր է գլխովին։
«Իւր չափը չը ճանաչողից հեռու կաց» —
Ինձի ասաւ մի պատուելի բանիմաց
Անմիտ մարդը թէ լինի էլ սրբակեաց,
Դի բա՛ց վանէ դու քեզանից, միշտ 'ի բաց,
Նեղը ընկաւ, մօտդ կանէ լաց ու թաց,
Միտքը այլ է — մի՛ խղճար ամենևին։
Անմիտ մէկին եթէ տուիր գովասան,
Մեծ մարդու տեղ նա կը դնէ ինքն իրան,
Կը սկսէ հպարտանալ բաւական,
Ուռիլ, փքուիլ հնդու աքլորի նման,
Կեղծ գովեստը համարելով իսկական,
Կը մոռանայ դրութիւնը առաջին։
Նա սիրում է ակումբներում լինել շատ,
Այլոց դիմին անչափ խմել, միշտ առատ.
Խօսելու մէջ չի՛ որոշեր լաւ ու վատ,
Անմտածել վեր կը վարէ անընդհատ.
Փեթակի մէջ, իշխամեղուին համեմատ,
Կը վնասէ բջիջները թանկագին։
Ձիւա՛ն, չըմտածող մարդն է անզգայ,
Կարծես մէջը ամօթ, պատկառանք չըկայ,
Թէ որ մէկի տունը խնճոյքի գնայ,
Անպատճառ այն տանը մէկ վնաս կուտայ.
Ով որ նրան հրաւիրեց կը զղջայ,
Ուրեղ մտաւ, վէճ կը բանայ ահագին։
1885

ԲԱՆ ՉԻ ԼԻՆԻ

Գոմէշ մորթէ արիւն դուրս գայ
Ճնճղուկից բան չի լինի,
Ծաղիկ ժողվէ որ մեղը տայ.
Իշկաթնուկից բան չի լինի։
Պատերազմի դաշտի վրայ
Ե՞րբ են ուղարկում երեխայ,
Գտի՛ր, ընտրէ՛ հզօր հսկայ,
Խեղճ լամուկից բան չի լինի։

Վախկոտները տղամարդ չեն,
Նրանք կանանց հաշուի մէջ են,
Ազատ մեծացած քաջեր պէտք են,
Խեղճ տարուկից բան չի լինի։
Ձիւա՛ն, մարդը անօգնական,
Խեղճ կը մնայ միշտ յաւիտեան.
Թէ չունենայ հզօր պաշտպան,
Ոչը մանուկից բան չի լինի։

ԳԻՏՈՒՆՆ ՈՒ ՏԳԷՏԸ

Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ,
Տգէտի հետ մեղը ուտելը դժուար է,
Գիտունը կը ճարէ վերջն իրան հանգիստ,
Բայց տգէտը նորէն էլի չիմար է։
Ո՞վ կասէ բնական իմաստուն ծնայ,
Ուսում չըգիտցողը անկիրթ կը մնայ,
Ժողը ցեխը տեսաւ՝ անշուշտ կը գնայ.
Թէկուզ վիզը հարիւր մարգարիտ շարէ։
Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծովից ոտով կերթայ առանց նաւավար,
Բայց տգէտը չունի ուղիղ դաղափար,
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է։
Ձիւա՛ն, մարդկութեան մէջ խեղճ է չիմարը,
Ցառաջադէմ է լեզուագէտ, ճարտարը,
Թէ կուզես որոնէ ամբողջ աշխարհը,
Իմաստունի ճօտ տգէտը տկար է։
1869

ՏԳԷՏԸ

Գիշերի գէս կ՝անցկացնէ իւր տիւը,
Տգէտ մարդը շատ դգայուն չի՛ լինի,
Անզգամը չի գիտեր իւր պատիւը,
Նրա մօտը բարի անուն չի՛ լինի։
Սարերում մեծացած քրդի իշխանը
Չի հասկանայ քաղաքական պայմանը,
Հարիւր տարի կրթես անիսելք անբանը,
Զըսպասես — նա իմաստուն չի՛ լինի։
Ադամանդ չի՛ լինի սև քարն անարժան,
Հաղար գոյն տաս՝ դարձեալ նա է անվիտան.
Գեղեցիկը գեղեցիկ է բնական,
Տգեղը հանդերձով սիրուն չի՛ լինի։
Երբէք խոշհուրդ մի տար մարդուն խաբեբայ,
Միշտ որոնէ ճշմարտօրէն առարկայ.
Ձիւա՛ն, հիմ մի՛ ձգեր աւազի վրայ,
Կ՝ասէ Տէրն, թէ այնտեղ տուն չի՛ լինի։
1876

ԴԱՍԹԱՆ

ԻՆՉ կենդանի փոքրին կուլ տալ է ուզում,
Զրկի փուչ կը լինի, կը խրի բուկը.
Թէ ոստայնը ճանճեր որսալ է ուզում,
Բթիցը մանելով կուտեն ծծուկը:
Ո՞ւր է լաւ կենդանի առիւծի նման,
Ուժեղի զէմ կանգնող, տկարին պաշտպան.
Իւր ցեղի մեծ մկներ դալով օգնութեան,
Կատուից կազատուի խեղճ փոքրիկ մուկը:
Կանցնին այս օրերը դառը և ճախորդ,
Ցաջող տեղ կը հասնի ամենայն ճամբորդ.
Կուգայ ժամը կըլնի արթուն պահանորդ,
Գայլը չի գողանալ հօտից գառնուկը:
Բնից կարթնանալ ծովը ովկիան,
Իւր միջի կենդանեաց կուտայ զէնք, վահան.
Ոչ կարթի կը անցնի, ոչ կընկնի ուռկան,
Բնական մահովը կը մեռնի ձուկը:
Բլուրն էլ կը դառնայ մէկ օր բարձր սար,
Պատիւ կառնէ մեծ սարերուն հաւասար.
Էլ չի ծաղրիլ ծառը հասակով երկար,
Պատուով կը մեծանայ կանաչ թզուկը:
Պարարտ ոչխարները, կովերը կթու,
Կըստանան խոտաւէտ տեղեր կենսատու.
Էլ չեն թողնել նրան արիւն ծծելու,
Կանհետանայ վողոցային ագռուկը:
Ով վախկոտ է, նա միշտ ոտից կոխան է,
Անեն անդամ ստրկութեան արժան է,
Ահեղի վիշապի օր սև կանէ,
Իւր անձը պաշտպանող խելօք խոզուկը:
Զրիակերներուն ի՞նչ են պարտական,
Մարդիկ առանց գործի նրանց սնունդ տան.
Փեթակը կիմանայ տէրը խակական,
Անեն ոք չի տանիլ մեղրի պուտուկը:
Էլ գիւղացին եղին թակել չի կարող,
Կալի մէջ բերանը փակել չի կարող.
Գող ուրուրը յափշտակել չի կարող,
Արծուի թևի տակ մտաւ ճնճղուկը:

Խուլը ձայն կը լսէ երկնից ահարկու,
Մունջը ճառ կը կարդայ, կըստանայ լեզու.
Օրօրքիցը մէկ օր կը նստի ձիու,
Բալուլով փաթաթած անխօս մանուկը:
Արդար հզօր պետը խելքով թանկագին,
Գայլ ու ոչխար կ'ապրեցնէ միասին.
Ոսկին աւազակաց չի լինի բաժին,
Պատսպարում է երկաթէ սնտուկը:
Էլ քամի չի վռնտիլ հին տալիկը,
Կրթեցին, մարդ չեղաւ անպոչ կապիկը.
Առասպել դուրս եկաւ ծովի աղջիկը,
Անց չի կենալ թասի նայող վհուկը:
Ողջ կենդանիք պիտանի են, լեր, ծ:
Անեն մէկը մէկ-մէկ բանի ընդունակ,
Բանի որ աղաւնին դարձաւ սուրհանդակ,
Մէկ օր էլ կը հնչէ հաւի թմբուկը:
Գարնան կը փոխարկուի ձմեռը երկար,
Կանցնի աղջամուղջը, դիշերը խաւար,
Նոր սանտրեր կը շինուին հին գլխի համար,
Կը մաքրուի Արևելեան թնջուկը:
Տեղ կայ, համբերելով գործ կը կատարուի,
Տեղ կայ, շտապելը շատ կը յարմարուի.
Մինչև որ ձիթենին հաղնի, զարդարուի,
Որդին կը նշանէ խև խրխնտուկը:
Մարդ կուզեմ որ դարի պահանջն իմանայ,
Զը յապաղի, շուտով իւր դործը գիտնայ,
Մինչև որ թրթուրը թիթեռ կը դառնայ,
Պարտիզից կը վերնայ կանաչ բաղուկը:
Զինուորի պարծանքն է պսպղուն սուրը,
Նա կը սիրէ զէնքի լաւը, մաքուրը.
Գուլթնի խոփ կը դառնայ բթացած թուրը,
Կարէ կանցնի կերթայ խորը, կտրուկը:
Կայ այնպէս կենդանի թէպէտ յաղթանդամ,
Բայց առանց տէր նա չի ապրիլ ոչ ժամ.
Էշից և ոչխարից բարձր է շատ անդամ,
Գոյութեան կռուի մէջ խելօք ծժղուկը:

Ջիւանի, նոր մարդը նո՛ր բաղձանք ունի,
Դժուար առաջ գնալու ճիգ ու ջանք ունի.
Նրա թոռը գովէ որ դեռ կեանք ունի
Չի մանկանալ հին զառամեալ ծերուկը։ 1901

ՂՕՇՄԱՑ

ԳԻՏՈՒՆԸ ազգի բանից չի ցաւիր,
Խելագարի գործը հաշիւ չի լինիր,
Սիրահարը սիրականից չի ցաւիր,
Սիրոյ ասպարէզը կռիւ չի լինիր։
Գիտութեան ճրագը յաբաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կը պատճառէ.
Ի՛նչ ասմանդը հասկացողին վաճառէ.
Ը չի՝ տներու մօտը պատիւ չի լինիր։
Ամենից կարդ չի կարող լինել բաղդաւոր՝
Թէկուզ լինի ճիշդ դահակալ, թագաւոր,
Պայազատը բնական է հարկաւոր,
Ցինարը կարգալով ազնիւ չի լինիր։
Ջիւա՛ն, զուր է ցուցամոլներու ջանքը.
Իրանց օգուտ չի տար զուր գովասանքը,
Մօտն է ձայնը, քայլքը իւր կերպարանքը,
Ագռաւը գովուելով արծիւ չի լինիր։
1870

ԿԱՍ ՉԿԱՍ՝ ՄԷԿ Է

Ո՞ՒՄ համար կը մաշուիս, անբախտ հեղինակ,
Դու քու ազգիդ համար կաս, չկաս՝ մէկ է.
Իրենը սիրելու նա չէ ընդունակ,
Կուզես եղիր հանճար, կաս, չկաս՝ մէկ է։
Հայի համար այլոց սարեակը սագ է,
Իւր սագը իւր աչքին մէկ հաւի ձագ է,
Հայ երաժիշտ, ինչ կամենաս նուագէ,
Նա կուզէ սազանդար, կաս, չըկաս՝ մէկ է։
Ջիւան, Թո՛ւրք լինէիր սիրուն հագնուած,
Հայ ազգը չէ սիրում Հային երգասաց.
Հայ աշուղ ես, պիտի մեռնիս դու քաղցած
Իբրև աղքատ Ղազար կաս՝ չըկաս — մէկ է։

ԸՆԿԵՐԱՏԵԱՑ

ՍՐՏԻԴ՝ չարութիւնը երեսիդ վրայ,
Հոգերանը միշտ կարդում է, ով նախանձ.
Ասածիս ապացոյց գործերդ ահա,
Կենացդ մէջ միշտ եղել ես մարդախանձ։
Կմախքով լի, փայլուն մի գերեզման ես,
Անհոգի ման գալող, մարդու արձան ես.
Ամեն մի վատութիւն ցածութիւն կանես,
Աշխարհումս միայն թէ տան քեզի դանձ։
Արտաքին տեսքովդ որպէս մի սուրբ մարդ,
Պըղտոր ջրում ձուկ կըորսաս, ունիս կարթ,
Կեղծաւոր, մանկանենդ, խորամանկ, կախարդ,
Լեզուդ երկսայրի սուր, խօսքերդ անսանձ։
Ջիւանուս յայտնի ես դու վաղուցուանից,
Դուրս ես եկել սադայէլեան շրջանից,
Բազում մարդիկ ձանձրացել են քեզանից,
Անտեղի չարունակ միշտ ունիս թախանձ։
1884-1885

ԵՍ ԵՎ ԵՐԿԻՆՔԸ

Ի՞ՆՉ ես քիթդ կախել ու տրամել երկինք,
Իմ սիրտս քեզանից ամպոտ է այսօր.
Դու ձիւն-անձրև ես թափում, ես արիւն-քրտինք,
Իմ դէմքս քու դէմքից մթոտ է այսօր։
Քու արևդ է ամպերու տակ տառապում,
Իմ էլ հոգիս հոգսերու մէջ ճնշըւում.
Քու կայծակն ամպերդ չեն որոտում,
Իմ էլ գործս կաղ է, անոտ է այսօր։
Դու մայիսն ես լիշում, գարնան սիրահար.
Ես էլ մտածում եմ հայրենեացս համար.
Եթէ քու օրումդ արևդ է խաւար,
Իմ էլ հոգիս տխուր, ժանդոտ է այսօր։
Եթէ դու աստղերու համար կը հոգաս,
Ես ալ որդիք ունիմ վեց հատ նորահաս.
Եթէ դու ցուրտ ձմրան ձեռքիցը կուլաս,
Ջիւանին էլ նոյնպէս խոցոտ է այսօր։

ԵՂԱԾ ՉԵՂԱԾ ՄԷԿ ՀԱՇԻՒ Է

Ծոյլ անպիտան անդործ մարդը
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է.
Ինչպէս անգոյն, անհոտ վարդը
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Ի՞նչ պէտք է թոյլ գլխաւորը,
Որ միակ լցնում է փորը.
Տգէտ, մոլի կարգաւորը,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Լաւ մարդու ոտացն է կացին,
Թէ որ վատ է իւր դրացին.
Հօրը համար անպէտք որդին,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Ինքն է իւր քսակի դողը
Տանը վրայ մաղող հողը,
Շռայլ մարդու համար փողը,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Ներքինիին ի՞նչ պէտք է կին,
Շքեղ սեռից չունի բաժին.
Կոյրի համար արև, լուսին,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Անասունին տուր գովասանք.
Նա ի՞նչ գիտէ այդպիսի կեանք.
Անզգամին պատիւ, յարգանք,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Մօտ է այնպէսի կորուստը,
Զորս չափ կտաւ է հագուստը.
Ժլատ անօգուտ հարուստը,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Կենդանի մարչուն է արժան,
Պատիւ, յարգանք, չքանչան.
Մեռած մարդու համար արձան
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Խելօք հմուտ գիտնականը,
Հինքը ամուր կանէ տանը.
Կիսատ պռատ շինուած բանը,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։

Առողջ ոգին տուր երիվար,
Որ թռչի երթայ տարէսար.
Անոտք մարդուն հարթ ճանա-
պարհ,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Նրանք չունին չնորհք ու չէնք,
Գանգատուիլն է նրանց օրէնք.
Երկչոտներուն զրահ ու զէնք,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Կարիճ ազգն է ինքնին հնոց
Միշտ կ՝արձակէ կրակ ու բոց,
Փախչող զօրքին բերդ ու ամրոց
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Սկզբէն է հարկաւոր ջանք,
Քանի որ հիւանդն ունի կեանք.
Հոգեվարքին դեղ ու դեղբանք,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Խեղճին ի՞նչ օգուտ իշխանը,
Որ չի հասնի նեղութեանը.
Անտարբեր պաղ ազգականը,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Երբ որ տեղը դայ ճշմարիտ,
Հարկաւոր չէ լինել կրկիտ.
Զատկից յետոյ կարմիր հաւկիթ
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Ուրախութեան օրը յատուկ,
Կ՝ուրախանան ծեր ու մանուկ.
Հարսանիքից վերջը թմբուկ,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։
Ջիւա՛ն, բարեսիրան է յարմար
Լսել սիրով երգ ու քնար,
Զար ու դաժան մարդկանց հա-
մար,
Եղած՝ չեղած — մէկ հաշիւ է։

1880

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅ ՊԱՆԴԽՏԻ

(Տիգրանակերտէն Պաղտատ մեկնելուն առթիւ գրած)

ՀԱՅՐԵՆԻՔ սիրուն վայր նուիրական,
Տիգրանայ մեծի երկիր աննման,
Զքեզ ի յետ կոյս թողուցած կ՝երթամ,
Պանդուխտ տարագիր յաշխարհ Բաբելեան։
Հայրենի օդն անոյշ է,
Հայրենի հողն քնքոյշ է,
Օտարութիւնն վարդ լինի,
Նա վարդ չէ այլ սուր փուշ է։
Յաղթական պարիսպքդ յամպերն են հասեր,
Կարծես մարգարիտ, գոհար են շարուեր.
Հոյակապ գմբեթքդ փայլ տան փայլ առնուն,
Միոյն տեղ հազար արև են վառեր։
Հայրենեաց տեսքն անոյշ է, ևն.։
Յրաչունչ հողմիկն Մասիսի սարէն,
Փչեց թափթփեց սաղարթներ վերէն.
Կարծես թէ սրտիս չէնքն էր փուլ կը դար,
Օտարութեան մէջ մնալու անչէն։
Հայրենեաց չունչն, ևն.։
Կաց, դուշեցի ես պահ մ՝արագ անցորդ,
Արդեօք Բաբելեան խորշակն ես տապար,
Ինչո՞ւ կոծերովդ խռովես հոգիս,
Տո՛ւր ինձ պատասխան, մի՛ վազեր չուտ չուտ։
Հայրենեաց օդն, ևն.։
Զեմ ես տօթակէզ չունչն անապատի,
Այլ Հայ աշխարհի հծծիւնն հարազատ,
Գուշեց սարսռեց, սար, լեռ ու նոճի,
Զոր տալ ժպրհիս դու ընդ օտարի։
Հայրենեաց օդն, ևն.։
Օտար երկրի մէջ ճշմարիտ Հայուն,
Զկայ ատող մի որ փողփողի սիրուն.
Ոչ դրախտատունկ վարդեր կարմրերփեան,
Փթթին անդ ծաղկունք, փայլին գոյնզգոյն։
Հայրենեաց օդն, ևն.։
Զկան յիշատակք Հայոց Տիգրանայ,
Որք անհուն սիրոյդ դարձան առարկայ.

Այլ սակաւաթիւ խումբ մի ազգային,
Հայրենի երկրէն գաղթած տարակայ։
Հայրենեաց օդն, ևն.։

Այդ քեզ, Մխիթար, թող լինի որդեակ,
Գնայ քեզ պաշտպան, Հայոց հրեշտակ,
Քրանի գօտեպինդ քո ազգին համար,
Մղէ Հայ մանկտին ի սուրբ նպատակ։
Հայրենեաց օդն, ևն.։

Թէ ատելութեան ոգին չարանենդ,
Մոչ կանգնի ոտիցդ արհամարհէ զայն.
Թէ հայրենազերկ մաշիս կարօտով,
Բոցավառ սրտէդ գոչէ Հայաստա՛ն։
Հայրենեաց օդն, ևն.։

Ասաց մոլեգին, թափ տուաւ վերէն,
Ցուզեցաւ Տիգրիս փրփրաց տակէն,
Ալիքներն ոլոր մոլոր խաղացին,
Լաստիկս քնց կայծակ հեռացաւ դարէն։
Հայրենեաց օդն, ևն.։

Կարծես ադ բոպէ կենացս թել խզեց,
Մթագին ամպեր անցան աչերէս,
Իբր արձան անշարժ կանգնած անկթիթ,
Տուի վերջին բարևս սուրբ եղարց։
Հայրենեաց օդն, ևն.։

Եղերք անմոռաց հայրենի երկրիս,
Բարձեալ կրէիք հատորներ սրտիս.
Բարեկամք, սանունք, որդիք, ամուսին,
Հեռի գնացին, տրտում է հոգիս։
Հայրենեաց օդն, ևն.։

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ԱՂԲԻՐ ԻՆՁՈՒԴ ՊԷՏՔ

ՄԵՐ ժամանակուայ խօսքն է լմաստուն,
Միշտ գործիդ նայէ, աղբէր, ինչո՞ւդ պէտք
Թէ կամիս լինել մարդկանց հաճելի,
Ամենու կարծիքն յարգէ, ինչո՞ւդ պէտք։

Թէ այլոց խրատ տալ կամիս բարի,
Երեսպաշտ է, կ՝ասեն սուտ կանի,
Թէ պաշտպան կանգնիս մի խեղճ աղքատի,
Հարկաւ շահ մ՝ունի կասեն, ինչո՞ւդ պէտք։
Թէ շրջահայեաց լինիս խոհական,
Մտօքդ չափես կշռես ապաղան,
Կ՝ասեն երկչոտ է ջղջիկի նման,
Երեսդ չեն նայեր, աղբէր, ինչո՞ւդ պէտք։
Թէ սրտովդ լինիս քաջ նշանաւոր,
Սամսոնի նման չաղթող, մեծազօր,
Բաժինդ է խոր բանտ, հալածանք, աքսոր,
Մեռցուր քո սիրտը, աղբէր ինչո՞ւդ պէտք։
Թէ ջանաս բարիք մ՝անել քո ազգիդ,
Իսկոյն սև մրեր դրօշմեն ճակտիդ,
Անխեղճ հարուածներ կ՝սպասեն սրտիդ,
Մոռցիր քո ազգը, աղբէր, ինչո՞ւդ պէտք։
Թէ ուսումնական լինիլ կը ցանկաս,
Օր մ՝ալ գտնէ դուռ պիտ՝ շրջիս մուրաս,
Գիտուն չէ կ՝ըսեն երբ փող չունենաս,
Անարծաթ կեանքը, աղբէր, ինչո՞ւդ պէտք։
Ինչքէդ բաժին հան, մ՝ըսեր ոչ ոքի,
Զկայ բարեսիրտ, ազգասէր ոգի,
Դու ալ այլոց պէս միշտ շահդ խորհի,
Այս է քեզ օգուտ, աղբէր, ինչո՞ւդ պէտք։
Առ, տուր ու ծախէ, կշռէ ու չափէ,
Արդար, անարդար միշտ ոսկի դիզէ,
Խեղճ բարոյական ո՞վ կը հարցնէ,
Լոկ բառ են դոքա, աղբէր, ի՞նչուդ պէտք։
Հարուստ եղիր, միշտ սնտուկներդ լեցուն,
Պալատներդ չքեղ ոսկեզօծ ձեղուն,
Աղքատին ոչ ոք չ՝ըսեր ո՞վ ես դուն,
Այս խիստ դէշ բան է, աղբէր, ինչո՞ւդ պէտք։
Խրատ տամ քեզի, ուշ դիր, Մխիթար,
Գնայ այն ճամբէն ուր կ՝երթայ աշխարհ,
Ոսկի մի՛ վնտռեր դու բարի կամ չար,
Միշտ գործիդ նայէ, աղբէր, ինչո՞ւդ պէտք։

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

ԳԱՐՈՒՆ

ՁՔՏԱԲԵՐ ձմրան ամիսներն անցան,
Եկան գեղեցիկ օրերը գարնան,
Բնութիւնն խոր քունէն արթնցաւ տակաւ,
Մայիս զուարթաղէմ բարևներ տուաւ:
Հագեր են լեռ դաշտ կանաչներ գալար,
Ծլեր ու ծաղկեր ծաղկունք բիւր հազար:
Անթէմ, նունուֆար, յափրուկ, վարդ, շուշան,
Փռուած են գոյն գոյն, գորգերու նման:
Ամեն տեղ կարծես զմրուխտ է ցանուէր,
Ցակինթ, շափիղայ, մարգարիտ շարուէր:
Մարդ, արօտ, մարմանդ ծուի տան ծովանան,
Մինչ չնչէ հեզիկ սիւքն առաւօտեան:
Եղրևենուոյն հոծ խամբուլներ մեղուչ,
Կախուէր ու բացուէր յասմիկն ալ քնքոյշ:
Սառ սառ վտակներ արծաթի հետքով,
Սողան յայսկոյս յայն՝ խուլ կարկաչներով:
Սոխակն քաղցրաձայն ծառոց բարձունքէն,
Կ'երգէ, հիանան հրեշտակներ վերէն:
Ճռուողէ ծիծառն բիւր անցուդարձով,
Շինէ կարկատէ իւր բոյն քուրց քով:
Արագիլն անխոնջ կափկափներ ձգած,
Կ'աւետէ վերէն, գարունն է եկած:
Եկած է գարուն եղանակ սիրուն,
Նոր արև նոր կեանք բերեր ամենուն:
Մեղուք մեղանոյշ մեղեդիներով,
Մեղրահիւթ ժողվել կ'երթան ծաղկանց քով:
Խաչինք խոտաշատ դաշտերն ցան ու ցիր,
Արածեն մկթան ուլ, գառնուկ ժիր ժիր:
Ճռնչէ արօր, գութան ատա և անդ,
Տալ բերրի հողոյն, հացհատիկն աւանդ:
Հովուական սրինդ ձայնէ տխրանոյշ,
Մինչ հօտն վարէ գոմ և գայ վերջալոյս:
Դաշտեր գիւղաշաբ անդարդ տներով,
Քան պալատ զուարթ փայլին քովէ քով:
Արդեօք գեղաշար բջի՞ջք են մեղուաց,
Գեղով զօշոտեն չաչս տեսողաց:

Ո՛հ, անմեղութեան դա՞րն է ոսկեղէն,
Զոր երգեց Վիրգիլ խանդիւն հրեղէն:
Բարդ բա՞րդ վերանայ ծուխն երեկոյեան,
Մինչ ժիր գեղջկուհին եփէ ոսպնաթան:
Երդաձայնք անոյշ, քանի՛ սրտաթունթ,
Բարձրանան յերկինս երբ դառնան դունդ դունդ:
Լծվարք, անդիտաք, խոնջ ու վաստակած,
Հանդիստն վայելելու ընտանի գրկաց:
Ամենուրեք կեանք, սփռած է անհուն,
Խայտան ցնծալով, մարդիկ, անասուն:
Միթ՝ արարչական շունչն է կենսաձիր,
Որ դայ զարդարել զերկին և զերկիր:
Փառք ստեղծողին, տուր սրտովդ հազար,
Լռէ հիացմամբ դու հէք Մխիթար:

1891 ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՀԱՅԻ ԹՈՅԼ ԿՈՂՄԸ

ՀԱՅԸ Հայլն կը վնասէ,
Օտարք երբէք մեղաւոր չեն.
Հայերու սէրը պակաս է,
Իրար սիրելու սովոր չեն:
Հայերը այս բանով վատ են,
Իրարու ծուռ կը նկատեն.
Մէկ-մէկու այնպէս կ'ատեն,
Կարծես իրար հարկաւոր չեն:
Օտարին կը գովաբանեն,
Բայց իրար միշտ դաւաճանեն,
Պապերէս մնացած բան են,
Այս ցաւերը մեզի նոր չեն:
Ջիւանս կասեմ անկասկած,
Մենք ենք տուել մեզի հարուած,
Օտարին մեզի հասուցած,
Բառած վէրքերը շատ խոր չեն:

ՄԷԿԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՅՍ դրի կարողութեան,
Խենթը առայ կնութեան.
Կարողութիւնը գնաց,
Խենթը մնաց անբաժան:
Դարձաւ մէկ թունաւոր իժ,
Ծոցս մտաւ ինչպէս գիժ,
Բերած օժիտը մաշուեց,
Ինքը մնաց ինձ պատիժ:
Փողը կարծեցի ես կեանք.
Ո՛չ թէ կինը սփոփանք,
Կուրացայ փողի համար,
Իմ գլխիս բերի փորձանք:
Իբր թէ ես կին առայ,
Ոչ թէ կին պատիժ գտայ,
Մինչև ի մահ նրանից,
Երբէք ազատուել չըկայ:

ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՂՋԿԱՆ ԵՐԱԶԸ

ՀՊԱՐՏ աղջիկ, Հայու աղջիկ,
Որո՞ւն համար կըսպասես.
Վարդ երեսներդ ա՛լ կը խամրին.
Կեանքդ ի զուր կը մաշես:

Դու կ'երազես քաջ կարիճ՝ մը՝
Տարիք քսան, քսան հինգ՝
Հասակ երկայն դէմք վայելուչ
Կրթեալ, գիտուն ըլլայ ինք:

Դու կ'երազես որ վիտուածդ
Գործ մ'ունենայ շահաբեր,
Առատ ստակ, տուն ու կալուած,
Բարձր դիրք մ'ալ պատուաբեր:

Իր աչքերէն կրակ ցայտեն,
Այտերն կարմիր իբրև վարդ,
Ազուամազով պատած ծնօտ,
Սև գանգուրներ դէմքին զարդ:

Երբ նա անցնի հէգ աղջիկներ
Յապուշ կրթին և կենան.
Անոր գեղոյն վառին սիրով,
Զմայլին ու արբենան:

Դու կ'երազես որ քու շքնաղ
Երիտասարդն ի տիպ
Գերի ըլլայ սիրոյդ համար,
Անձը զոհէ, մեռնի ալ:

Եւ երբեմն զայն սուտ մերժես
Նազանքներով յանցաւոր.
Զայն չարչարես՝ որ քու առջև
Հալի, մաշի ամեն օր:

Դու կ'երազես որ ամեն մարդ
Երանի տայ քո անձին.
Ընկերներդ բաղդիդ համար
Այրին, տապին, նախանձին:

Եւ վերջապէս օր մը հաճիս
Բաղդդ, ձեռքդ տալ անոր,
Խեղճին վրայ իշխան դառնալ՝
Թագուհի մը բռնաւոր:

Կը նախընտրես նա Հայ չըլլայ՝
«Ոհ, Հայերը անկիրթ են»,
Կը փափաքիս որ օտարներ
Սիրոդ գերեն՝ կախարդեն:

Բայց, սիրելիս մի սպասեր
Ի զուր տեղը այդ անձին,
Երազները իրական չեն,
Անոնք կուգան ու կանցնին:

Հայու աղջիկ, անփորձ աղջիկ,
Ի զուր տեղը կըսպասես.
Վարդ այտերդ տես, խամրած են,
Սիրոդ քո մէջ կը մաշես:

Երբ տարիքդ երսունն անցնի՝
Ճերմակն իջնայ մազիդ մէջ.
Պիտի զգաս մեծ սխալդ,
Պիտ՝ լաս անշուշտ անկէ վերջ:

Քանի որ դեռ ուշ չէ արդէն
Ընտրէ սէրդ, մ'ուզեր զոհ,
Իտէալդ թող նա ըլլայ,
Զանա իրմով ըլլալ զոհ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ.

ԻՄ ԵՐԳԸ

ՀԵՌԱՑԵԼ եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատուած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մինակ բլուած ծաղկի նման դաշտումը:

Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգող դարուն ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնուում է միշտ այսօր:

Աստարէզիս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»:

—Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես...
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ
Քանի՞ բոպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ:

Հա՛, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը,
Յանկարծ փրչեց անաւժելի հիւսիսին,
Թառամեցաւ վարդ մանիշակ Մալիսին:

Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը.
Ա՛խ, մօտեցիր օրհասական, օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ գերեզման:

Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանրը քարէ վրէս ծածկած վերմակը.
Բայց ա՛խ, երբոր կ'անցնի ամիս ու տարի,
Կը մոռնամ գերեզմանը այն քարի:

Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ կը կորչին.
Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մնար ամուր անկործան:

Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.
Միթէ այնքան անգո՞ւթ կը լինի Լեռա գետ,
Որ անունս անգամ կ'անէ նա անհետ:

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՕՏԱՐ ԵՄ ՕՏԱՐ ՀԵՌԱՒՈՐ ԱՇԽԱՐՀ

ՀԱԶԱՐ և բիւր պէրանքով,
Եկաւ գարուն գեղեցիկ,
Փթթեց կիտրոն ու նարինջ,
Ծիլ տուին արմաւենիք։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ,
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Գարուն գեղեցիկ չէ սրտիս համար

Տեսայ ծիծառն տարագնաց,
Դարձաւ զգուել իւր պրշակ,
Սոխակն վարդին սիրատենջ,
Երգեց կանանչ թփոց տակ։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ,
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Սոխակն ու ծիծառ չեն սրտիս համար։

Տեսայ Տիգրիս դրախտահոս,
Զուրկ հարսնագեղ նազանքից,
Ամեհաբար կընթանար
Խառնուած խորթ գետակից։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ,
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Տիգրիս խառնալուր չէ սրտիս համար։

Տեսայ չէնքերն յայս կոյս յայն,
Զքնաղ Վոսփոր՝ Պաղտատեան,
Ոսկեգմբեթ մինարէք,
Փայլ կ'տան արեգական։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Պաղտատ ճոխապանծ չէ սրտիս համար։

Տեսայ անամպ չուրջ երկինքն,
Բաբելական աշխարհին, . .
Ուր յոյլ ի յոյլ կը փայլին,
Աստեղք, լուսին անմթին։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ,
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Աստեղք և լուսին չեն սրտիս համար։

Տեսայ դաշտերն սիզաւէտ,
Մարգ ու մարմանդ քաջարօտ,
Անդ հովիւներ արաբեկ,
Կ'արածէին խաշանց հօտ։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ,
Հայրենիքէ զուրկ չունիմ մխիթար.
Օտար եմ օտար անծանօթ աշխարհ
Դաշտերն մարգաշատ չեն սրտիս համար։

Տեսայ զեփիւռն հեզաշունչ,
Մասիսնեան սարերէն.
Փչեց հեզիկ տատանեց,
Դալար, թուփ, ծառ դէս ու դէն։

Օտար եմ օտար հեռաւոր աշխարհ
Մինչ զեփիւռն Հայոց տայ ինձ մխիթար.

Օտար չեմ օտար թէ հայրենի չունչ
Փչէ ինձ համար .... :

ԹՈՎՄԱՍ ԶԱՒԶԱՎԱԹՃԵԱՆ

Հաւաքեց անտիպ ձեռագրներից ՍՏԵՓԱՆ Ա. ԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԳ

Փթած ու բորբսնած, մքլած ապրանքդ,
Նորի տեղ չի անցնիլ, նպարավաճառ,
Անմեղ մի դորդոռալ զուր կանցնի ջանքդ,
Շատ ենք լսել այդպէս կեղծուպատիր ճառ
Հին ապրանք կայ երկու հազար տարեկան
Բայց նորից էլ նոր է, անփուտ յառիտեան,
Ինչպէս ոսկին աղամանդը պատուական,
Քանի աշխարհը կայ չեն մաշուիլ իսպառ։
Ծախած ապրանքներդ իրաւի նոր են,
Բայց լիկած ու մքլած սոխ ու սխտոր են.
Այժմ կերակուրի անհարկաւոր են,
Ո՞վ փող կուտայ կառնի, կըլինի ցանցառ։
Նորութիւն կայ յարգելու է ճշմարիտ,
Ինչպէս զտուած դահար անգին մարգարիտ
Բայց կայ նորութիւն էլ, անհոգ է վտիտ,
Որպէս որ տառուցի վրայ գրուած տառ։
Երկուսի մէջն էլ կայ յարգելի խոտան,
Իսկապէս հնութեան և թէ նորութեան,
Երկուսիցն էլ լաւը ընտրել իսկական,
Այդպէս պէտք է մեզի անել անպատճառ։
Ջիւանի՛, տառանց հիմ երբէք տուն չըկայ,
Որպէս առանց ծնող չի ծնիր տղայ,
Ինչքան որ պտղատու ճիւղեր ունենայ,
Ծառը իրան արմատովն է կոչւում ծառ։
1894

ՀԱՅՐԵՆԻՔ

ԵՐԲՈՐ լինի դարնանամուտ նոր գարուն,
Կ՝ բաղմանան վտակներդ, հայրենիք.
Շար իշար ցնծութեամբ երգով դուարթուն,
Շարժուում են բանակներդ, հայրենիք։

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն,
Պէս պէս դունով ծաղիկներդ գաշարուն.
Ձեն դադարիր աշխատելուց օրն ի բուն,
Քու հարազատ մշակներդ, հայրենիք։

Դու դրախտն ես, քեզի սուրբ դիրքը վկայ,
Քո մինչեւ դեղեցիկ անմահութեան հոտ կուգայ,
Հաղար ափսոս լուսաւորուած չեն հիմա,
Ժողովուրդդ, զաւակներդ, հայրենիք:

ԱՇԸԳ - ՋԻՒԱՆ

ԱՆՓՈՐՁԸ

ՄԻԱՄԻՏ ու անփորձ երիտասարդը
Կանանց մինչի հաշմ ծերուկին հաւանեց.
Թողեց բալասանը, մեխակը, վարդը,
Ծաղկոց մտաւ իշկաթնուկին հաւանեց:

Միամիտը խաբուեց, օձն առաւ ծոցը,
Թունաւորուեց կրծքում բացուեցաւ խոցը
Անճաշակը մտաւ բանջարանոցը,
Ադրճպանքին, խրխնտուկին հաւանեց:

Ջիւանի՛, խեղճ քուրդը չտեսած երկիր,
Խնձոր կարծեց, կերաւ պղպեղը կարմիր.
Երեխային ասին մերդ ջոկէ ընտիր,
Հոտած, փխրած ճմերուկին հաւանեց:

1888

ԱՌ ԽՕՍԵՑԵԱԼՆ ԻՄ
(Յաւուր Նշանտուութեան)

ԱՐԴԵՕՔ ի՞նչ բերեմ Մարի քեզ նուէր,
Թանկագին ակե՞ր, սակեհուռ զարդե՞ր
Բայց ինքդ ես արդէն գոհարիկ մ'անգին՝
Ըզքեզ խանդավառ սիրողին աչքին:
Վարդ, շուշան, յասմիկ, սիրուն ծաղիկներ
Զեմ կարծեր Քեզի արժանի նուէր,
Զի ինքդ ես արդէն, Ազնի՛ւ Մարիամ,
Սրախս խընկաբոյր ծաղիկն անթառամ:
Բայց քեզ արժանի հարուստ մէկ նուէր
Ունիմ սրտիս մէջ «մինչտ վառ ու Սուրբ սէր»:
Կուտամ քեզ զուարթ, ա՛ռ զայն սրտիս հետ,
Տո՛ւր դու ալ, աղէ՛, Քու սրտիկդ ինձ ետ:

Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՅԱՒԱԼԻ ՄԱՀ

ՎԵՆԵՏԻԿԻ Սուրբ Ղազարու կղզիէն,
Հեռագիրը մի լուր բերեց տխրագին.
Հայոց ազգի համակրած այդիէն,
Մի կաղնի ծառ մահը տապալեց գետին:
Ծերունազարդ, փառաւորուած, փառահեղ,
Ճանաչափայլ մի մեծ աստղ էր շատ գունեղ,
Բազմավաստակ, բազմապտուղ, հանճարեղ,
Մեռաւ Հայոց նահապետը թանգագին:
Հայոց սարեր, դաշտեր, ձորեր, ողբացէք,
Ձեր սոխակը մահացել է, սգացէք,
Հին հին վանքեր, աւերակներ դուք լացէք,
Զրկայ Ղեւոնդ Ալիշանը մաքրածին:
Երկրորդ Մովսէս Խորենացին գիտնական,
Երկինք դնաց քաջ Եղիշէն պատմաբան.
Հիմքը խախտեց Հայոց գրականութեան,
Ամուր կերտուած պատը բլաւ աղդային:
Համոզմունքով թէև պապին համակամ,
Ազգութիւնից չէր սառնացել ոչ մի ժամ.
Հոգեղէնը նրան մնաց անթառամ,
Թառամեցաւ նիւթեղէնը երկրային:
Ջիւան ո՞ւր է մեծ բանաստեղծ երգակը,
Խլեց մեզնից անգութ մահը գնտակը.
Թռաւ չուէտ Աւարայրի խօսնակը,
Քեզ ո՞վ պիտի խօսեցնէ ո՛վ լուսին:

1901

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱՅԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՈՂԲԱՅԷՔ, ով Արամեանք, ձեր բարձր մուսան չըկայ,
Հայերուս մեծ բանաստեղծ, Գամառ Քաթիպան չկայ.
Մեր ազգի Հոմերոսը, աննման Հսկան չըկայ.
Ուրախութեան լուր տուող, ցնծութեան վիճան չըկայ.
Հայոց գրականութեան անդին չափիւզան չըկայ.
Աշխարհական վարդապետ, ընտիր արեղան չըկայ:

Հարազատ Հայի զաւակ Ռափայէլ Պատկանեան,
Իւր քնարի ձայնովը բազում մարդիկ կեանք առան.

Զնաչխահիկ բանաստեղծ, հոգի կրթող վիպասան,
Աբգասաւոր գրիչը եռանդ տուող կայծհան։
Կռուելով խաւարի դէմ մեռաւ Հերոսի նման,
Ազիողորմ լալիս է Նուարդը Արան չըկայ։

Մայր Արաքս երգի գրող հեղինակին ողբացէք,
Քաղցրահնչիւն քաղցրախօս Հայ սոխակին ողբացէք,
Մեր մտաւոր աշխարհի արեգակին ողբացէք։
Աբփիափայլ, լուսատու աշտանակին ողբացէք։
Զունեցող համանման անգին ակին ողբացէք,
Տարաւ ծեր Կոռնոսը՝ ազնիւ անթիւքան չըկայ։

Թէ մտքով, թէ մարմնով յատուկ ծնող թանկագին,
Ինն երեխայի հայր, նահապետ բոլորովին։
Լրիւ քառասուն տարի ծառայել է իւր ազգին։
Մի տեսակ ուղղութիւնով չէ փոխել զոյնը, հոգին։
Իւր բանաստեղծ պապերը, հայրը երկինք կանչեցին։
Հայ քերթողաց կաճառի հայրը և արբան չըկայ։

Զիւան, ո՞ւր է երգիչը, բարութիւնը հռչակող։
Ճշմարտութեան ջատագով, ստութիւնը մարակող։
Իւր գրչի սուր չանթերով մոլիներին ապտակող,
Առանց վախի մարդկութեան ցեցերին խայտառակող
Ժողովրդին յոյս տուող և ապագան գուշակող,
Հայերու մեծ մարգարէն, Հայոց Եղիան չըկայ։

1892

ՍԵՒ ՀՈԳԻ

Սեւ հօրից, սև մօրից ծնուել ես հաստատ,
Սիրտդ սև է, բախտդ սև է, գոյնդ սև,
Վիշապազուն ես ծագումիդ հարազատ,
Փոփոխուելով ստացել ես Հայի ձև։

Քու լեզուդ Հայի է, սիրտդ օտարի,
Մխամխանները քեզ կարծում են բարի։
Ինքդ դայլ ես, մորթիդ նման ոչխարի,
Քեզ չըճանաչողը կոյր է, կամ թէ խև։

Դու մինչև ե՞րբ մեր վարախի մէջ մնաս,
Մեր հօտը պառակտես հասցնես վնաս,

Գայլի հետ կը խնդաս հովուի հետ կուլաս,
Գիշատիչ թռչուն ես խօսուն առանց թև։
Աբամաղգի սիրելին ես առաջին,
Պատիւդ կ՝աւելնայ կրկին ու կրկին,
Քեզ չըզիպաւ դաժան մահի գերանդին,
Մեր բախտից ունեցար չատ երկար արև։

Սև ես, էլ կը սևնաս դու դատաստանին,
Հոգիդ պիտի սատանաները տանին,
Ինչ խօսք որ քու մասին ասաց Զիւանին,
Սխալ չըկայ, դու այնպէս ես արդարև։

1885

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՞լ խօսենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ,
Ուրիշ բան չունենք, բայց իրար դաւել։
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ոխտը ոտքով կոխել ենք։
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից հազարով մնաց,
Մինչ մնացել էր Պարսից լոկ Մատեան
Գունդը՝ մեր վաթսուն հազարի դիմաց,
Երբ մեր վատութեամբ ո՞ղջ կորուսել ենք։
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ օտարից չատ,
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում։
Մոխրատնով լցրինք Դուին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն։
Երբ այս ամենը մենք կատարել ենք։
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ հրապարակում,
Պարսիկը առակ արել է Հային։
«Եթէ ասորու նման աշխարհում,
Չկայ մի վատ ազգ, բայց քան Ասորին,
Էլ-վատ է, Հայը»։ մենք այս տանո՞ւմ ենք։
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ խշխանութիւն
Ծախում է անարդ հացկատակներին.
Մինչ սարուկ մարդիկ նստան մեր գլխին,
Ու մեզ կարծում են հող իրենց ոտքին.
Ու մենք՝ մեզ կոխող ոտքը լիզո՛ւմ ենք.
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թևերը կտրած,
Անարգ պարսիկը այս ու այն թեմի,
Կարգում է տեսուչ ըստ իւր չար կամաց.
Ու մենք դեռ «կեցցէ՛ արին» գոռում ենք.
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին.
Որ դրան չուն են. և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատուում ենք.
Հիմի է՞լ խօսենք:

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ, թէ չե՛նք ուզում հողից հող կորչել՝
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի, փրկե՛նք, ազատենք.
Ապա թէ խօսենք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՎԱԶԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՅԴՈՒԿ, մի վախնար քրդի գնդակից,
Նա մահաբեր չէ քաջերիդ համար.
Քո «Ջան—Ֆէտայի» ահեղ անունից,
Քիւրդը սոսկում է, ինչպէս դիւահար:

Առէք հրացան ու ելէք հանդէս,
Տանջանքի մէջ է ձեր մայր հայրենիք.
Մի թէ՞ չէք լսում, նա կանչում է ձեզ, —
«Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք» . . .

Ձեր հրացանը վրէժով լցրէք,
Ջարդէք թշնամուն, թշնամուն գազան.
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,
Միայն թէ կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան . . .

ՊԵՏՐՈՍ—ՍԱՄՈՒԷԼ

ՁՕՆ ԱՌ ՆԷ

ՔՆՔՈՒՇ պլպուլին հեշտալուր երգեր
Սիրաս չէր գերեր,
Եթէ արձագանդը չը լինէին
Քո քաղցր ձայնին:

Բուրմամբ հոգեզմայլ վարդին վառ ի վառ
Չէր սիրաս արբենար,
Եթէ չըլինէր բուրումն այն անուշ
Քո շընչոյն նըմոյշ:

Լուսնեկին մահիկ ի կապոյտն Եվեր
Չէի ես դիտեր,
Թէ չը լինէր այն ճակտիդ պազպազուն
Պատկերը փայլուն:

Աչքերս բնաւ չէին խըտրըվեր
Երկընքի աստղեր,
Թէ չ՝լինէին քո՛ւ աղու աչքերուն
Ցոլքերը փայլուն:

Չ՝էի ըզմայլիր ես դեղձանիկին
Խոպոպիքներին
Թէ չըվառէին ոսկեթել մազիդ
Նըման ճըշդըրիտ:

Կը պաշտէի՞ ես զԱստուած բարերար,
Եթէ չունենար
Մի գըլուխ գործոց քեզ պէս գեղանի
Ձեռքին արժանի:

Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ՁԿԱՑ ՕՐ ՀԱՆԳԻՍՏ

(Ռաադ)

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Ի՞ՆՉ կը ֆքրիս մարդ Աստծու, աշխարհ չկայ օր հանդիստ,
Մեր պապիրէ տարտով մեռան ինչիրս Աղամն ու Եւան.
Էն անէծքէ սկզբաննէն էրաց իրանց Եհովան,
Հէչ զան մէնի ըսուած բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

Էռոլուընէ ըսուիր է քի «պէտք է քաշիս մեղքիդ է»
Ալ էր պէտք է ֆքրիս սատայ աշխարհ չկայ օր հանդիստ.
Օր մի քաղցած օր մի հիւանդ, անպակաս են տարտ ու վիշտ,
Հէչ զան մ'էնի ըսուած բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

Ի՞նչ կը ֆքրիս մարդ Աստուծոյ Աղամէն է մնացեր,
Ճըվըլներով էղնայ մըղըլ հաշրաթաք պէտք է տանիս,
Գահըր իշուածք կըմէկտղուին կընիկ չէ քի թէղ թարկիս,
Հէչ զան մ'էնի ըսուած բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

Դեռ քու միտքիդ չունի կամք գործի մի տէր էղնալու,
Լնովէ քի էրթաս էռաջ քու ապրուստիդ հանելու,
Մունքիւնսուզէ խաղաղ կեանքով տան տեղի տէր դառնալու.
Հէչ զան մ'էնի ըսուած բաղդէ օր մի հանդիստ ժպտայ երեսիդ:

Կ'ուզես դուն կուռք տէյի պաշտէ խօրօտիկ զաւակներիդ,
Օր մի յանկարծ մահէ կ'առնէ կը կոտրէ թէզմի մէջքիդ.
Կը մթնի աշխարհէ վրադ կը դառնայ խաւար աչքիդ,
Հէչ զան մ'էնի ըսուած բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

Ունիս դայեաթ կին գեղեցիկ մուլք ու չենքեր շատ փառա,
Ցագաթ կնիկդի կը դարձընէ քու տունիդ տակնուվրայ,
Խռովութին սաստիկ կռիւ կ'եղնայ սըրտիդ տարտ եառայ,
Հէչ զան մ'էնի ըսուած բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

Ճարահնիմ ես, սրտիս արդէն ծանրացեր է էս կեանքէ,
Բայց ինչ օգուտ զաթան աշխարհ ողբով սուգով լցուած է.
Մըն աշխատիս դուն չարաչար տանելով ցաւոտ լուծէ,
Զունքըմ չկայ էն լաւ բաղդէ օր մի ժպտայ երեսիդ:

(ԵՂԻՇԷ Գ. ԶԷՐՉԵՆԻ Հաւաքածներէն)

ԶՈՒԽ—ԿԵԱՏՈՒԿ

Ելէք երթանք Զուխա—կեատուկ, Արնոտ խալաւ քաղաքքերին,
Խըտ մի տանինք ջուխտ մ'սնտուկ. Փաշի ասրից վար կախեցին.
Մըր ախպրներն են ահա պառկուկ Խայու սրտիկ խօրովեցին,
Գրկենք, պաքենք, դնենք սնտուկ: Ջիգեարը փորին կտրտեցին:

Զուխա—կեատուկ չաւիր չիման, Ա՛խ, իմ ախպէր, ես քի կուրպան,
Ջուխտ մ'կտրիմ ընտեղ մեռան. Տաճի՞կն էրաւ քի էտա բան.
Մէկն Օհաննէս, մէկն ի Վարդան, Տաճի՛կ, Տաճի՛կ տիւ սատանայ,
Հայու սրտիկն արին-վէրան: Մըր մուլք կըտես քե ծեռ չըտայ:

Աստղերն հլան չարան չարան, Տաճի՛կ, Տաճի՛կ, էրա՛, էրա՛,
Զուխա—կեատուկայ վրէն կայնան. Աստուած տեսնայ քեկ փուճ տ'էնայ.
Վախէն սարեր կարմրցեր են, Իմ Խայ ախպօր տիւ խեղճ էրիր,
Էրկնուց աստղեր չիվարեր են: Ես էլ տեսնի՛, տիւ խեղճ էլնիր:

ՎԱՉԳԷՆ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ Սիրոյ Տաղերից

Ինձ աւետեցին մահճի մէջ լալիս.
«Քո սիրած եարը քեզ այց է գալիս»:
Վերկենամ մահճից, խեղդեմ իմ հառաչ,
Ուրախ երեսով դուրս գամ ընդառաջ:

Պաչեմ այն դէմքը խանդաղատագին,
Որի մօտ աշխարհ չունի ոչ մի դին.
Նրա ոտի փուշին հաւաքեմ մէկ տեղ-
Վայից կուրացող աչքերիս տամ դեղ:

Հէյ սոնը մարդիկ, թէ կ'ուզէք կրակ,
Եկէ՛ք իմ սրտից տարէ՛ք, վառեցէ՛ք-
Ինչ թէ իմ ցաւին տալ կ'ուզէք ճարակ.
Ինձ ամբողջ առէ՛ք կրակում այրեցէ՛ք:

«Հեռացի՛ր, զնա՛, - ինձ կրկնում էլի,
Գուցէ մեղմանայ սրտիդ հընոցը»,
Բայց որքան հեռու հեռանում էլի,
Ուժգին և ուժգին բորբոքուեց բոցը:

(Տիգրանակերտի
Գաւառաբարբառով)

ԻՄ աղջկաս խաս ձևեցէք,
Իր մամուն աթլաս.
Իր պապուն քրդու չուխա,
Թևիր լէ վալաս:
Իմ աղջկաս նուշ կոտրեցէք,
Իր մամուն պնտուկ.
Իր պապուն չորցուկ չամիչ,
Պոչիկ լէ վրան:
Իմ աղջկաս գազ տապկեցէք
Իր մամուն օրտակ.
Իր պապուն փոթօ հաւիկ,
Պըտիկ լէ չեղնայ:
Իմ աղջկաս ձիան բերեցէք,
Իր մամուն ւ.աւար.
Իր պապուն ցածկուկ իշուկ,
Ճըլիկ լէ չեղնայ:
Իմ աղջկաս քէօշք չինեցէք,
Իր մամուն սալայ.
Իր պապուն ցածկուկ ախոռ,
Շըսպաք լէ չեղնայ:

Իմ Մեծ Մօր
Տիկին ՍԱՌԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
Երգածներէն

ՄԱՅՐԻԿԻՆ եաղմա բերին,
Քոյրիկին փուչի.
Հայրիկին փոստէ փափախ,
Կատար չունենայ:
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն:
Մաեիկո՛վ աղջիկ,
Կօշիկո՛վ աղջիկ.
Քու դէյրէն կարն է,
Շէկ տըղի խարն է:
Մայրիկին խաս կըտրեցին,
Քոյրիկին խըրխա.
Հայրիկին սալդաթի շոր,
Թևեր չունենայ:
Մայրիկին կօշիկ բերին,
Քոյրիկին տուֆլի.
Հայրիկին ջուխտակ չալուխ,
Տակ էլ չունենայ:
Մայրիկին ֆայտոն բերին,
Քոյրիկին կառետ.
Հայրիկին Տլոտի կաչկայ,
Ակեր չունենայ:

ԿՈՄԻՏԱՍ Վ.ի և Մ. ԱԲԵՂԵԱՆԻ
Հաւաքածներէն

(Վասպուրականի Գաւառաբարբառով)

Լաճու մօր ալ կտրեցէք, թիվքերը կումաչ,
Աղջկայ մօր չալ կտրեցէք, թիվքերը պակաս:
Էսա լաճուն տուն չինեցէք, խօրն ի դարպաս,
Էն աղջկան տուն չինեցէք, առիք պակաս.
Էսա լաճուն ձին թամբեցէք, խօրն ի ջորի,
Էն աղջկան գըռոտ իշուկ նալեր պակաս:
Էսա լաճուն ոսկէ մզրաղ, ծէրն մարգրիտ,
Էն աղջկան սև սև անթրոց, ծէրն ի պակաս.

Էսա լաճուն ճզմա պերէք, խօրն եամանի,
Էն աղջկան կտոր մ՚լակաշ, իրես պակաս:
Էսա լաճուն գեաթայ պիրէք, խաւ խորոված,
Էն աղջկան ակռավակօ սև գեարէ խաց:
Լաճու մօր կուժն ի լալա, կանթ փէօրէօզա,
Մշկով իլին վարդ վէր պէրնին.
Աղջկայ մօր կուժն ի կաւէ, կանթն ի կուլէ,
Կիտր մ՚անլուայ պիւրդն ի պէրնին:

Ո՞Վ Է ՀԱՅԸ

Ո՞վ է Հայը. միթէ ա՞ն է,
Որ կը շրջուի «պամօտ»,
Անհրաժեշտ պէտք կը սեպէ
Հագնիլ անշուշտ ռէտինկօտ:

Որ փողոցը լուռ կը քալէ,
Ոչ թէ համր է կամ նազլու.
Այլ դրացին չի կռահէ
Թէ ինք ծնունդ է Հայու:

Որ կը փոխէ Հայ անունը,
Ճէօրն կը դնէ կամ Հարտինկ.
Կոտրտուելով կը հարցնէ
«Իդ իզ փրրբթի, տօն՚չ եու թիինք»

Ո՞վ է Հայը. միթէ ա՞ն է,
Որ մեղք սեպէ մահացու,
Թէ չունենայ պանֆային մէջ
Հաղար կանաչ միշտ պահցու:

Որ անտարբեր ծով ցաւերուն,
Բամպակ թիւէ ականջը.
Որ չըլլայ թէ իրեն հասնի,
Սոված որբին սուր կանչը...:

Որ ժամ կ՚երթայ ամեն իրկուն,
Ծնկան չոքած խաչ կը հանէ,
Մոմ կը վառէ մօրը հոգւոյն,
Որ Տէրն իր գործն չաջողէ:

Ո՞վ է Հայը. միթէ ա՞ն է,
Որ երկրորդ օրը հոս գալուն,
Մօրուքին հետ պեխն ալ կ՚ածէ,
Որ նմանի տեղացւոյն:

Որ կը մոռնայ Հայի լեզուն,
Անշուշտ տգեղ ու կոչտ է.
Պըդըր, մըդըր, մըսդըր, չրսդըր,
Միւզիքի պէս կը հնչէ:

Ու օր մըն ալ սիրտը կուտայ
Այրիսի մը աղջկան.
Կը կարդուի, տուն տեղ կ՚ըլլայ,
Խէրը տեսնի .... Ամ՚րիկան...

Ո՞վ է Հայը. — Հայը ան է,
Որ պինդ կպած մայր—երկրին,
Արիւն ու կեանք զոհ կը բերէ
Ազատութեան սուրբ գործին:

Անդրանիկն է, Սերոբն է ան,
Ան Դեւեանն է ու Վազգէն.
Ան Մարտիկն է, Աւետիսեան,
Եէմէրճեանն է ու Գուրգէն:

Ա. ՑՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՅ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Ո՞Վ է Հայը. մի՞թէ նա է, որ խօսում է Հայ լեզուով,
Եւ կամ որի մականունը յանդում է «եան» մասնիկով.
Որ ուտում է ամենայն օր ճաշին տօլմա ու փիլաւ,
Կամ պարծանօք միշտ հագնում է Հայի դգակ ու հալաւ:
Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ գնում է Հայի ժամ,
Ու տարուայ հաղորդուում է խիստ սակաւից չորս անգամ.
Որ կ՚անքուսը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նոյնպէս,
Յօրանջելիս խաչ է կնքում բաց բերանն ու երես:
Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ տեսնելիս տէրտէրին,
«Օրհնեա ի տէր» պատրաստ ունի ամեն բոպէ իր բերանին.
Որի համար մեծ ամօթ է- նաև մեղք է մահացու,
Թէ Զատիկի թաթախմանը չուտէ թերխաչ կարմիր ձու:
Զէ, սիրելիս, ազգութիւնը չէ արտաքին արարմունք,
Հայ ծնելդ անդամ չի տալ քեզ Հայութեան իրաւունք.
«Ով» և կամ «եան» մականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձուով կամ թէ անձու կատարում ես Զատիկը:
Քալա—փաչա կամ թէ բրօշ է ամեն օրուայ կերածդ,
Սէդրուկ, պալտօ կամ թէ չուխա է վրայի հագածդ.
Ողջը մին է, ծէսով չես տալ ազգիդ վնաս կամ օգուտ,
Տեղը մնայ ազգութիւնը, այդ նաև վարձ չէ հոգուդ:
Թէ դու Հայ ես, Հայութիւնդ պիտի յարդես անպատճառ,
Հայատատանը պիտի լինի յուսոյ աստղ քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց դու Հայի օգուտները միշտ վեր դասէ ամենէն:
Աբուեստ, ուսում, չքեղարուեստ տարածէ՛ Հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացո՛ւր նրա մէջէն կրօնի վէճ.
Բեզ ի՞նչ շահ է, թէ դու կ՚ասես Հոգին բղխել է Հօրից,
Կամ թէ Որդին՝ Հոգւով Սրբով անսերմ ծնունդ է Մօրից . . . . :
Թո՛ղ, սիրելի, այդ խնդիրքը, աչքդ դարձո՛ւր դէպ հարաւ
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դրա պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը մնացել է անվճիռ,
Թայլ խելքո՞վդ աշխատում ես քակել անքակ այդ կնճիռ:
Սիրէ՛ ազգդ ոչ լոկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քո անձը,
Նրա օգտին թէ պէտք լինի, զոհէ բոլոր քո դանձը.
Մի՛ խնայիլ կեանքդ անդամ, արիւնդ բե՛ր նրան զոհ,
Ոչ այն յոյսով, որ քու ազգը իսկոյն անէ քեզի զոհ:

Իստակ սէրը չի պահանջում ամենևին տրիտուր,
Թէ տուածը ետ առնուի՛ դրան կ՚ասեն առուտուր.
Բայց վա՜յ նրանց որ անզգայ են իրանց ազգի վիճակին,
Հազար անէծք նրանց վրայ, երնէ՞կ չան պէս սատակին:
Թէ դու Հայ ես՝ դիտե՞ս արդեօք ո՞վ էր ազգիդ նախահայրը-
Ո՞ր տեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգին համար Հայ աշխարհ
Քանի՞ տարի անկախ մնաց Հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկաւ իր առաջուայ փառքերից:
Ո՞ւր ցրուեցաւ քու խեղճ Հայը, ունի՞ այժմ օգնական,
Կա՞յ մի հնար, մի՞ջոց կամ յոյս նրա կրկին նորոգման.
Թէ կայ հնա՛ր՝ դու պատրաստ ես անձդ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտրանք, սաստիկ տանջանք, սով ու ծարաւ միշտ տանել:
Դու պատրաստ ես թողնել կայքդ, ծնողք, եղբարք, սիրական,
Սիբեւոյդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահաւոր հրացան.
Դու պատրաստ ես անվախ երթալ թշնամի սուրի դէմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադէմ:
Այդ ժամանակ քեզ Հայ կ՚ասեմ . . . . . .
. . . . . .
Բայց թէ փորդ տօլմաներից, կամ փիլաւից տրոաքի-
Հաւատացի՛ր՝ ուտելովդ օգուտ բերել չես ազգիդ:

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ Սիրոյ Տաղերից

ՍԻՐՏԸՍ դարձել է մի մանուկ լալկան,
Զուր եմ խաբխաբում նրան չաքարով.
Նա լալիս է միշտ, անո՛ւշ սիրելիս,
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով:
Ես նրան ի՞նչ ճար անեմ:
Ինչքան աշխարհում սիրուններ որ կան,
Ցոյց տուի աչքիս, զուր եմ համոզում.
Քեզանից բացի, անո՛ւշ սիրելիս,
Նա ուրիշ ոչոք, ոչոք չէ ուզում:
Ես նրան ի՞նչ ճար անեմ:

Գունատել եմ խնկի նման, դեղնել եմ ինչպէս զաֆրան
Արդեօք քո սէ՞րն ինձ այդ արաւ, թէ՞ հասաւ օրըս մահուան:
Դու ես, որ դեղը ունես. տո՛ւր ինձ, որ կենդանանամ.
Ապա թէ ոչ կը մեռնեմ, քեզ կ՚անուանեն «մարդասպան»:

ԽՐԱՏ

(ԹԷՖԷՂԼԷՄԷ)

ԵՂԲԱՐՔ, այս աշխարհին ումուտ մի՛ կապէք,
Անցաւոր աշխարհ է՝ չուստ կ՚անցնի վրաղ,
ինչպէս մի երաղ։

Երազն ի՞նչ է՝ որ ումուտ կապենք հաւատանք,
Ե՛կ դու, այդ խիստ մըտքերդ արա վաղ,
միշտ և հանապազ։

Հանապազ Աստուծոյ երկիրպագանել,
Քեզմէն ողորմութիւն տալը չի հատնել.
Քո հալալ քիսիցըն մէկ բաժին հանել,
Աստուծոյ ճամբին մէկ ծաղիկ նիստ,
Աստուած կ՚անի հաղ։

Հաղ կ՚անի Աստուած՝ յատուկ իմացի՛ր,
Երկու ձեռք ու սիրտդ լաւ առատ բացի՛ր,
Զափում, քար կըշիռքում ճշմարիտ կացի՛ր,
Մի՛ լինիր խաբեբայ՝ դալպ ու հիլլէպազ.
մի՛ անիր խարազ։

Խարազ անող մարդու՝ն Աստուած կու ատէ,
Լըսել էք տեսել էք վոքր ի շատէ.
Հոգիդ մխքըդ բե՛ր՝ մահ գրանըդ մօտ է,
Անցել է օրերըդ՝ կեանքըդ է նուազ,
ինչպէս բարակ մաղ։

Մաղէ կարմունջ կ՚ասեն՝ մէկ ուրիշ ձևի,
Թուրինջ, գուր անմեղ հոգիդ մի՛ սևի.
Ով բարին մոռանայ՝ չարին հետևի,
Վեր կ՚ընկնի բարձրիցը՝ կը լինի պէմուրազ.
ինչպէս հոզ աւազ։

ԱՇԸՂ—ԹՈՒՐԻՆՋ

ՀԱՅ ԱՂՋԻԿ

(Հինգ կամ թէնիս)

ՍԵՒ աչերուդ, ազեղ յօնքերուդ մատաղ,
Մեղրից ու շաքարից անուշ Հայ աղջիկ.
Կարմրագոյն այտերըդ միշտ դեղաձիծաղ,
Քայլդ կաքաւի նման, քնքուշ Հայ աղջիկ։

Ինչի՞ է պարանոցիդ ոսկեղէն զարդը,
Քանի Անահիտն է քու մասդ մակարդը.
Պատկերըդ տեսնող երիտասարդը
Կը լինի խելագար, ապուշ. Հայ աղջիկ։

Գրաւիչ խօսքերով՝ ո՛վ իմ հոգեհան,
Բռնի սիրել կուտաս քեզ, ո՛վ դու անմոան.
Պըտոյտ տալըդ անմեղ աղաւնու նըման,
Շարժուածքըդ խոհեմ, զգոյշ Հայ աղջիկ։

Գօշմա — Յարմարցուած

(Տիգրանակերտի Գաւառաբարբառով)

Աման աղջիկ, եուսկէն կիդաս էրերուն,
Ես զարկուկիմ ճատկընոցիդ քովերուն.
Ի՞նչ քաշիր է մամիդ քեզի բերելուն,
Գըշիր քուն չէ քընիր օրանդի օրելուն.

Աղկիկ աղջիկ, շատ սիրիրիմ պօյիդի,
Բարակ մէջքիդ, շատ հաւնիրիմ խուլիդի.
Օղուլ կ՚ուզիմ մէսքեան յարիմ, իգամ քովիդի,
Ա՛տունիր վրաս հատտար ին էղած։

Կէս գիշերուն զրուցելնին կ՚ինցուի,
Քէյֆիր կ՚էնին հարդի լուսէ կը ցացուի.
Աչքիս կը տըսնայ, սիրտիս արին կը լցուի,
Մահ կը փնտռիմ, չկայ առնիմ արէմով։

ԽՕՐՕՏԻԿ

Աման աղջիկ, ես զարկուկ իմ մազերուդ
Իշուաներուդ, ճիլուաներուդ, նազերուդ.
Վարդ էրեսիդ, մանաֆչա զամզաներուդ,
Սէրվի պօյիդ հայրան կ՚էղնամ, խօրօտիկ։

Օղուլ, էրնի՞կ էն օրիրէ պաղչի վրան խնկինք,
Մէկզմէկու նիյազ առանք, տուեցինք. խօրօտիկ
Զաթան աղկիկ մի եուր իկայ Աստուած տուիր խաւերուն,
Քեզի մնակ իմ ճակտիսի գրիր, խօրօտիկ։

Պ. ՊՈՒՐՈՒՃԵԱՆԻ Հաւաքածներէն

ԻՄ ԱՍՏՂԻԿԻՆ

ԳԻՏԵՄ հաստատ որ անդուրթ չես, սիրելիս, չատ ողորմած ես.
Յամենայն ժամ սիրահարիդ մասին ցաւիս, կը մտածես:
Բոլոր սիրուններէն աղէտ, պարկեշտ, խոհեմ, ամօթխած ես.
Բերանդը կայ կենաց աղբիւր, թէև ինքդդ արարած ես:
Զայնդ քնքուշ՝ սոխակի պէս, ջուրթակ, քնար ալ ի՞նչ պէտք է,
Բանաստեղծից գովաբանուած, գինի նեկտար ալ ի՞նչ պէտք է:

Ուսուցիչ ՌՈՒԲԷՆ ՆԵՐՍԷՍԵԱՆԻ երգածներէն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ աւետարեր, ո՛վ դու կռունկ, ձայնդ անուշիկ.
Գնա՛, ըսէ՛ Հայ զաւակաց, թէ ձեր եղբարք յօտար աշխարհ
Կը թափառին, բայց չեն մոռցած 'րենց սիրելեաց, ազգականաց:
Ո՛հ, հայրենեաց կռունկ սիրուն,
Ուրախ լուրեր տար Հայերուն:
Այն տեղ կանաչ մարգագետին, ուր կաքաւեն Հայ օրիորդք,

(Անկատար)

ԾԱՆՕԹ. — Սոյն երգը՝ որ մեզ համար երգեց Օրիորդ Վ. ՆԵՐՍԷՍԵԱՆ, թանկագին նշխար մ'է երգի մը, որոյ երգողները, Հայ ուսուցիչ մը և իր ընկերները, լոկ երգած ըլլալու յանցանքով, Համիտական կառավարութենէն՝ իբր յեղափոխականներ ձերբակալուելով, տաժանակիր բանտարկութեան դատապարտուեցան:

Դժնեայ գիշերն անցաւ, ու լոյսն արևուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն.
Ո՛հ, դուք, անգութ սև հողեր,
Սիրելիքս ծոցդ ես առեր:
Երկի՛նք, գթա՛, ինձ տա՛ր ի ծոց սիրելեաց,
Եւ կամ նոցա ցոյց տուր դամբանք սգազգեաց:

Օրիորդ Վ. ՆԵՐՍԷՍԵԱՆԻ երգածներէն

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

ԵՍ քընած էի. խաղաղ ու յստակ
Գիշերն էր լռած.
Սոխակը երգեց և սիրաս թիք-թաք
Ցանկարծ թրթռաց: —

Ինձ թւաց թէ նա բերանն էր դնելել
Իմ եարի լեզուն. —
Այն օտար թռչնին ո՞վ էր թելադրել
Փափաքս անխօսուն:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Զ. ՄԱՍ

ՉԱՐԻՆՀՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԶԻՆՈՒՈՐԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Ա՛Ս ի՞նչ կորուստ, ինչ մեծ ցաւ,
Բանթէլոնիս կոճակը՝
Կոճկելնիքէն բըրթեցաւ,
Գնաց մտաւ ո՛ր ծակը:
Ա՛հ, կ'աղաչեմ պարոններ,
Թէ որ տեսաք նէ տեղ մը,
Իմացուցէք ո՛ր ծակն է,
Երթամ հանեմ դայն շուտ մը:
Ոչ պզտիկ էր ոչ մեծ էր,
Զափաւոր ալ չէր ըսուէր.
Ինչ գոյն ըլլալն ալ մոռցայ,
Կարմիր էր թէ սևի վրայ:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ,
Այս կորուստս քիչ բան չէ.
Յիսնապետս իմանայ նէ,
Վերջը բանիկս բուռած է:
Գըտէք գըտէք,
Կոճակիս գըտէք.
Գըտէք գըտէք,
Կամ տաս վարա տուէք:
Միտքս կուգայ թէ վրան
Արծիւ մը կար խոշորկէկ.
Եւ կորուսեալ այս կոճակս
Գամուած էր հոս ամուրկէկ:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ, ԱՆ:
Եւրոպայէն չեն բերէր.
Խանութները չեն ծախեր,
Այս անիրաւ կոճակին
Ծառն ու արմատն է չորցեր:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ, ԱՆ:
Բրուսիացւոց կուիւը
Իմ գլխուս ալ պայթեցաւ.
Քանզի Լօրէն ու Ազգաս,
Կոճակիս հետ մէջ խաղաց:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ, ԱՆ:
Զինավորձին տաեղը,
Կը դիտեն մեր չորս կողմը.
Ոտքէս բռնէ մինչև վեր,
Կը խառնեն՝ տեղ չեն ձգեր:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ, ԱՆ:
Կուտան ձեռքըս հրացան,
Շալկէ կ'ըսեն ուսիդ վրայ.
Ի՞նչպէս կայնիմ, դուք ըսէ՛ք,
Բանթէլոնըս վար կ'իյնայ:
Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ, ԱՆ:
Բարեկամացս հանդիպիմ նէ,
